# ԳՐԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔ

տարեգիրք

4

891.981
877750

A 100462

# ԳՐԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔ

## 4

*Տարեգրքում օգտագործվել են*
*Ասպուր Պզտիկյանի նկարները*

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**
Նախագահ՝ Ավետիք Իսահակյան
Գլխավոր խմբագիր՝ Հրաչյա Սարիբեկյան
Խմբագիրներ՝ Արքմենիկ Նիկողոսյան
Արմեն Ավանեսյան

ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

A 100 462

# ԳՐԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔ
(Տարեգիրք)

Թիվ 4

ԵՐԵՎԱՆ - 2014

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՏԴ 891.981:891.981.0
ԳՄԴ 84Հ + 83.3Հ
Գ 870

Գ 870 Գրական սփյուռք: Տարեգիրք թիվ 4. 2013 / ՀՀ Սփյուռքի նախարարություն.- Եր.: ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, 2014. - 304 էջ:

Սփյուռքահայ տարեգրքի չորրորդ ժողովածուն է, որտեղ ներառված են աշխարհասփյուռ հայ գրողների բանաստեղծությունները, արձակ երկերը, մեկ թատերգություն և գրականագիտական հոդվածներ սփյուռքահայ հեղինակների և Սփյուռքի գրականության մասին:

ՀՏԴ 891.981:891.981.0
ԳՄԴ 84Հ + 83.3Հ

ISBN 978-99941-2-959-1

© ՀՀ Սփյուռքի նախարարություն, 2013
© ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, 2013

# ՊՈԵԶԻԱ

## ՎԱՀԵ ԳՈԴԵԼ

(ԾՎԵՅՑԱՐԻԱ)



## Խորքերի լեզուն

*Ինչո՞ւ օազիսներ չկան ժամանակի մեջ,*
*ինչպես պարաժության մեջ են լինում:*

***Գյուպպավ Ռու***

## Լորենիների բույրը այս երեկո

*Ֆեռնան Վերհեզենին*

Լորենիների բույրը այս երեկո
ինձ մեղմորեն դեպի դարավանդներն է տանում
ուր գեղեցիկ մի օր
իմ առաջին բայերն եմ արել

կատվային աստծո հայացքի ներքո
տոհմն ընդարձակ մի օղակ էր գծել կավճով
հանց երերուն մի կուռք ես քայլում էի
ջրերի վրայով
իմ մայրը երիտասարդ օտարական էր
արդյոք նորից կգտնե՞մ
բացվածքը վերքի և ցռուկը տապանի
ամեն մի հիմնաքար պահում է
թռչունի մի դիակ
լորենիներն անշարժ են
պատանները շարունակում են մխալ
վերաներկված հին նստարանների տակ

## աքսորի կրակման

աքսորի կրակման
ավերակներն այնտեղ
ոսկրերի պես ճերմակ են
պապը թքում է վարդենու վրա
նամակները տեղ չեն հասնում
կեսգիշերն անց տատը
մորեմերկ իջնում է հովիտ
այսպես այլևս չի կարող շարունակվել
կրակը մարում է
մորաքույրը սանրվում է փայտե պատառաքաղով
այնտեղ հանց մի նոճի
կղզու ծայրին
քեռին աչքերը փակելով
արքայական քաղաքի ծայրամասն է տեսնում
այստեղ հայրս ցուրտը հալածելու համար
գայլի արյուն է խմեցնում ինձ
պապը փշրվում է
երեկոյան քամին պոկում է նրա
եղունգներն ու ատամները
բազկաթոռի ճարճատյուն
բլրի կատարից մայրս ինձ ներկայացնում է
գետային պահակազորին
արքոնտները վերընձյուղում են
մենք պահպանում ենք տապանի միակ բեկորը

մենք մոխիր ենք ցանում պողոտայում
մայրս ծռում է մեջքը աներևույթ ցախակույտի
ծանրության տակ
երբ երեխաները կարողանան մատով դիպչել
կամարի միջնաքարին
մի թռչուն կընկնի
մի անցք կբացվի
երբ նրանց ճակատը սևացած լինի
անասնաքոչի փոշուց
երբ հայրս արշալույսին
աղբյուրներին հասնի
դռան մոտ
ես կմնամ ոտքի
որպես մի դատարկ զգեստակալ
կամ մոռացված հովանոց

## մի սենյակից մյուսը

Երբ երեկոյան քամիներն են փչում
ես տեսնում եմ, թե ինչպես մի փակ սենյակ
սահում է երկու ջրերի միջև
սակայն փետուրներով թագադրված երեխան
դարան է մտել որպեսզի որսա
երկու ստվերների միջև հայտնվող լույսի նշույլը
մեկ առ մեկ պոկվում են թեփուկներն էբենոսի
նախապապի տրորված կրունկների միջև
տանտիրոջ ծակոտկեն ծունկերի միջև
ծեր հնդկացու ածխացած երանկների միջև
այս ճոճվող սև կամարի տակ որի գագաթնաքարը
ոչ այլ ինչ է, քան ֆալլոսյան նշան
բրածո անդամի մնացորդ յուրատեսակ ստալակտիտ
որ իրերի բերումով կախված է
ամենափոքր ժառանգորդի ողնաշարին
բայց երեխան չի հապաղում հրակնատում
և անաղմուկ մագլցում է դեպի կենտրոն
ես տեսնում եմ, թե ինչպես է մտնում
տաք հովիտներ
տակնուվրա անում գետերի մահիճը
խռովություն սերմանում
լեռնաշղթաների կարմիր ու լայնատարած
գորգերի մեջ
որոնց մաշվածությունը և անկարգ վիճակը

վկայում է աներևույթ հորդաների անցքը
երկու սահուն ջրերի միջև
մեկ սենյակից մյուսը
երեկոյան քամիների մեջ
երբ իմ առջև բացվում է խորքերի լեզուն

## տատը երազում է Վենետիկի մասին

տատը երազում է Վենետիկի մասին
բաժակի խորքում տեսնում է բացվող երկինք
նա կառչում է հայելու արտացոլումներից
դռների բաշից
նրա որովայնը լցված է չոր քարերով
նա իր շուրջն է հավաքում բոլոր աթոռները
որպեսզի պարապի մեջ չմնա
նրա արմատախիլ ձեռքերը
ջանում են մի բացատ պահել
տատը կիսաբաց է անում խուփը
նա հիշում է զարդարված ճամփաները
նրա զգեստը ծածկում է կապարե մի գուղձ
պատի և ծառի միջև դնդնում է բլուրը
հիվանդանոցն այրվում է
տատը փակում է աչքերը
ամեն օր անաղմուկ բարձրանում է
ածխի պահեստից քարշ տալով
թելից կապված
վերջին փարավոնի հարդով լցված դիակը

## մայրական ճյուղը

*Նիկոլա Բուվիեին*

Ճյուղերը փխրուն են
և այնքան ցանցառ
որ ոչ մի ստվեր գցել չեն կարող
և չորս կանայք՝ արևի տակ կուրացած
մեջքով՝ ծովին հայացքով՝ մեզ
իսկ երկուսը նրանցից
ոտքի վրա են կանգնած. ձախ կողմինը
հագուստն ամբողջ ճեփ-ճերմակ (մետաքս թիկնոց և
մի գլխարկ փետրազարդ) ասես թռչուն՝ իր թևերը տարածած -
դա իմ մայրն է
իսկ աջից՝ գորշ զգեստով
քամուց խառնված մազերով մի կին կա որը
կարծես մեծ քույր կգա իմ մորը -
մորս մայրն է
նրանց միջև երկու պառավ կան
նստած՝ ոտքից գլուխ սև հագած -
փոքր-մոքր - երկվորյակներ կարծես
լինեն երկուսն էլ - և այն
մեկը որի ափերն ասես երկինք են նայում
- մեծ մայրիկն է մայրիկիս
- իսկ մյուսը
- ապումամս է - մի քիչ ծռված

դեմքն անհստակ և ժպիտով քիչ թոշնած
(իսկ ծնկներին այդ կանանց
մի երեխա՝ մորե մերկ թավալգլոր է
տալիս և աչքերն է տրորում
այդ ես եմ):

## լուսաբացին

լուսաբացին երբ սենյակն էին հավաքում
բոլոր փականքները պահել էին իրենց շունչը
արյունոտ բոլոր բծերը կարծես արյունում էին
- նատյուրմորտ էր դա թե կենդանի պատկեր -
լապտերներն ասես ուզում էին
բացել բոլոր բերանները կարված
ժամացույցներն ու կակտուսներն ասես
սպասում էին և պահարանն էր սպասում
և (թռչուններով զարդարված)
չինական շիրման
և ամենաէականը մնում էր աննկատ.
այդ բացվածքը այդ մարմնագույն
մետաքսյա գետնուղին երախը բացած
այդ կետ ձուկը այդ հսկայական արգանդը
որտեղով վազում էի ոտաբոբիկ
մինչև որ լուսաբացը կկլաներ ինձ...

ի՞նչ էի նշմարում այդ ժամանակ
փետուրների տակ ինչպիսի՞ նշաններ
ի՞նչ բուրմունք ի՞նչ կրակ ի՞նչ նշանաբան
- երբ սենյակն էին հավաքում և երբ
(հաղթանակ կամ սուգ մնացուկ կամ սկիզբ)
կանացի աներևույթ սպիտակեղեն էր
կուտակվում շեմին

## հավաքված սեղան

սեղանը հավաքված է
ես բնակվում էի այնտեղ
մերթ տակը անաղմուկ խավարի մեջ
ձկան պես սահելով
սեղանակիցների ոտքերի միջով
մերթ վրան նույնքան անմռունչ
նույնպիսի խավարում ծնկաչոք չափում էի
աշխարհի տանիքը - մինչև մթնելը
մինչև տանտիրոջ վերադարձը -
ես շոյում էի փայտը
պղնձյա սպասքի հայացքի ներքո

A100462

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

## մթնեցրած լապտերներ

*Աքսորը մեծ զարմանք է*
***Արմեն Լյուբեն***

լապտերները մթնեցրած մայրս
- նա ուրիշ լապտերներ էր տեսել -
մատների ծայրերը մոտեցնում էր
ժանյակ հյուսողի իր աչքերին
որպեսզի ասեղը գտնի
(միակ ասեղը)

ակունքների լեզվում
պատանի ընդերքում
մայրս ստվերի մեջ
- մի ստվեր առանց պատռվածքի -
մաքուր ձայնով շարունակում էր պատմել

ամպրոպը նախազգալով մայրս
- որը չընկավ վերջին անձրևից -
հանկարծ պատանդի իր բերանին էր դնում
մի պայծառ մատ - միակը -
(պատերն ականջ ունեն)

կուրորեն
դռնից դուռ անցնելով

և ասեղ թելելով
հանելով իր միջից աքսորի
բոլոր ամենասև հետքերը
մայրս լուսավորվում էր

## Նավարկություն

*Բենյամին*

Նկուղի պատի միջով
հազարամյա մի ծառ եմ տեսնում
որի ճյուղերն անսահմանն են գրկում
ծառի կապույտ ասես լաքապատ բնի
միջով մարմարի երակներով ծածկված
իբիս թռչնի և ալբատրոսի դիակներով
ծածկված ծովի կենտրոնում
ես մի ճաղատ կղզի եմ տեսնում
ծակոտկեն ու ցից ժայռերով
որի ճերմակությունն ինձ շլացնում է
ցնցում (պատկերացրեք ալեբաստրե
մի հսկա տերմիտանոց ծովափրփուրի մի ջունգլի
կամ թե արևի ավերակված մի տաճար
ձյան տակ) այդ եզակի ցնորքի միջով
փայտե մի հինավուրց ձի եմ տեսնում
բալաստին կանգնած
նա ոչ բաշ ունի ոչ պոչ
և թափվում է նրա երկնագույն ջնարակը

և դրա միջով
աչքերս թարթելով ճերմակազգեստ
ուսերը բաց մի կին եմ տեսնում

դաշնամուրի առջև նստած
ձվաձև սենյակի կենտրոնում
որտեղ մյուս կարասիները ծածկված են
կապտորակ պաստառով - նա
պիտի որ զգա իմ հայացքը իմ ներկայությունը
և ասես ճանաչում է ինձ քանզի
մատներն առանց ստեղներից կտրելու
ահա գլուխը մեղմորեն դարձնում է ինձ
և ժպտում

## սիրելի բարեկամ, այժմ...

*Ժան Էրկուրին, ի հիշատակ*

սիրելի բարեկամ
այժմ երբ դու չկաս
ես ուրիշ աչքով եմ
դիտում փողոցը

ես թեթևակի դողում եմ
երբ մի անցորդ հեռվից
նմանվում է քեզ
երբ գլուխը բարձր ձեռքերը դատարկ
իջնում է դեպի լիճը

ես քայլում եմ եկածս ճամփով
կանչում պատասխանում
նամակ եմ գրում քեզ
որը դու չես կարդա

մի որոր է օրորվում
աշխարհի տանիքին

այս աղաղակը
այս կորությունը
այս վաղանցուկ ճերմակությունը

արդյոք գրկո՞ւմ է դեռ
քո ապակյա սև անապատը

դու վախենում էիր ստվերից
քամուց
կտրուկ առավոտից

դու սիրում էիր քարը
ուղղահայաց
անպաճույճ

դու վախենում էիր
աներևույթ ասեղներից

դու սիրում էիր
ձկների լռություն

## մենք կույրերս

*Պերիկլես Պատրոքիին, ի հիշատակ*

մենք կույրերս
քայլեցինք
աղբյուրի փողոցով
փնտրելով կարվածքը
մարմնի և հոգու միջև
տրորելով կիրը
և մխացող ասֆալտը
մենք կույրերս
նկուղներ թալանողներս
մենք թուփ տնկեցինք
քամու կատարին

## անշտակելին

*Անագե զինվորներին կռվեցնելիս, նա նկատեց, որ այդ մեսրաղը փափուկ է, կերպարանափոխվող, հեշտությամբ ծռվող և հարաբերականորեն հնազանդ: Մի օր, ուշ աշնանը, երբ սև ու կարող քամին վերջնականապես պոկում է թիկիների լուսավոր վարագույրները և երբ ճայերի երամները պտտվում են ցածր (կապարե) երկնքի տակ, հանկարծ մի ցանկություն ունեցավ հալեցնել, ֆուլել իր բանակի ամենաբարդրասրինան հրամանատարին: Նա բացառիկ ուշադրությամբ զննում է փոքրիկ կաթսայի բովանդակությունը, որի տակ հոսում ու վառվում է մանուշակագույն գեղեցիկ ասպողը, գազայրոցի հոյակապ թագը. կապույտ, կարմիր և ոսկեգույն ջնարակն անմիջապես թափվեց, լուծվեց, հալվեց, զինվորական կեպին խառնվեց գանգի հետ, երեսը դատարկեց, երկարեց... մարմնի անդամները թուլացան, ծռմռվեցին, հոսեցին, իսկ մարմինն ամբողջությամբ կքեց, անհետացավ, և շուրով ամանի հատակին մի մեծ կաթիլ հայտնվեց՝ փայլուն, ողորկ: Նա մարեց: Այրող հեղուկը լցնում է շերեփի մեջ: Այն ճթճթում է, դողում, անմիջապես կծկվում, քարանում և վերածվում ցից-ցից, պչև, ուռուցիկ մի առարկայի. մանրակերտ պտերոդակտիլի փայլփլուն կմախք... Նա նույնքան զարմացավ, երբ, ասես պատահական, կոտրեց տան ջերմաչափը և անապատելիորեն հայտնագործեց մեկ ուրիշ մեսրաղի հատկությունները, որն իրոք արժանի էր իր «սնդիկ» անունին. աշնան տերևների գույնն ունեցող մաշած գորգի վրա թրթռում է մանրիկ կաթիլների մի տերողորմյա, զարմանալիորեն կլոր, իրոմի նման փայլուն ու ողորկ: Մատներն սկսում են դրանց հետ մուկն ու կատու խաղալ: Յուրաքանչյուր կաթիլին դիպչելուն պես, քանդվում է, վերածվում անթիվ ու անհամար մանրիկ ու գրեթե անտեսանելի կաթիլների, որոնք ամենաչնչին ճնշումից բայ-*

*բայվում են իրենց հերթին և գլորվում բոլոր ուղղություններով, փափուկական, փայլուն, անհնազանդ կաթիլներ, որ խուսափում են բոլոր որոգայթներից, որ ոչ մի կերպ չեն բռնվում... Քանդել, դիահերձել, ծուլել, խափրել, կերպարանափոխել: Փոքրիկ փորձառություններ: Շշմեցնող հիասթափություններ: Բայց ոչ մի բան գուցե այդ աստիճան չհարուցեց անշրկելիի զգացումը, որքան արևելցի ճանապարհորդի ավիրած փառահեղ տիկնիկը: Նրա հագին ծիրանի էր ու ոսկի, դա մի արաբայադուստր էր հախճապակե մարմնով, կապույտ աչքերով, կեռասագույն բերանը թեթևակի բացված, մազերը՝ սև, երկար ու փայլուն: Օրորում էր նրան, շոյում, զգեստները հանում, պառկեցնում, նորից հագցնում, հանում գրուանքի, և այս ամենն անում էր այնպիսի մի նրբանկատությամբ, որն առանձնապես հատուկ չէր նրան: Բայց մի առավոտ, երբ անթիվ ու անհամար ծիծեռնակները իլացնում էին տարածքը և անսահմանը թելակապում, նա տիկնիկի վիզը բռնեց, նստեց նրա ծնկներին, մի ձեռքով նրա մազերը պահեց, իսկ մյուսով, առանց դույզն ինչ վարանումի, առանց մի չնչին կասկածի, սկսեց արմատից կտրել այն հին մկրատով, որ մայրը պահում էր ժանյակներով ու ձեռագործով լցված դարակում: Գործն անում էր անշտապ և առանց ընդհատելու, և շատ քիչ էր մնացել ավարտին, երբ հանկարծ հասկացավ, որ փոքրիկ թագուհին այստեղ ճաղատ է լինելու, ընդմիշտ զրկված իր ամենագեղեցիկ զարդից:*

## սոսին

*Մի քանի հարյուրամյա այս հսկա սոսիի սրվերի տակ է անցել մեր մանկության ամենաապայծառ օրերը, լույսի այս զարմանահրաշ խաղը, մշտապես բացված և անկշռելի ֆեռքերի այդ առատությունը, որ որսում են ամենաանշան շունչը, մինչև որ ուժասպառ, ուշ աշնան ընթացքում, ի վերջո թողնեին, որ ամեն տեսակի կարծրացումը, խավարը և մեռուկացումները նրանց քաղեին... և մինչ ճյուղերն իրենց սաղարթը կկորցնեին և մի դավաճան մառախուղ նրանց կկլաներ ամբողջությամբ, մեր մագիլները մոլեգնում էին մկանուր ու բծավորված հսկայական ծառաբնի վրա՝ երկար կեղևներ պոկելով, շատացնելով պատկերները (ուրվականներ, գիշերահավեր, անկլավներ, արիսիպելագներ...) կամաց-կամաց խոպան ու ընդարձակ պարածքներ հայտնագործելով: Անթափանց կնճիռներով ծածկված թաղանթի ներքո, արևից հանկարծակիի եկած պայծառ կրծքի պես, կանաչ ֆիթապտղի գույնն ունեցող այդ մաշկի ողորկությունը, թարմությունը մեզ հրավիրում էր շոյել... ծակուրված կեղևները գործածում էինք դիմակի տեղ՝ որքան տրաբորինակ, նույնքան բնական, այնպես որ աչքի առաջ կերպարանափոխվում էինք... այնուհետև այդ փիրուն բեկորները երեսներիս հագցրած, պարում էինք՝ կռնչոցների, տրտունջների, խեղդված ծիծաղների ուղեկցությամբ, պարում էինք անդադար, բոլորով միասին շուրջպար բռնում՝ մի փոքրիկ ամպամածություն ստեղծելով... ամբողջ աշխարհն էր դառնում ծառի շուրջը՝ այս անզուգական սոսին, որը մեզ թվում էր, թե որքան երկնի ճերմակության մեջ է արմատ ձգել, նույնքան էլ մթին հողում, որտեղ տերևներն են փտում՝ մեր ոտքերի տակ տրորվելով... Մառախուղն իջնում էր մինչև հատ ճյուղերը, բոլոր դիմակները ջարդվում էին, կեղևների փշուրներն ու թափված տերևները կազմում էին մի բա-*

*բակ, լպրծուն շերտ, որ շուրով ծածկվում էր առաջին ցյան տակ, երբ մի երեկո հանկարծ տեսնդորեն մտածեցինք պահվել մեր սուտի տակ, նրա ամենախորունկ արմատների միջև (գուցե այն պատճառով, որ չէինք կարող կատարին հասնել). ականջ չդնելով տատիկի կրկնվող կանչերին, բթացնելով պարտիզպանի զգոնությունը, գիշերվա մեջ ցրվելուց առաջ խնամքով թաքցնելով բացված անցքը, մի ամբողջ շաբաթ ամեն երեկո փորում էինք, շարունակ փորում՝ օգտվելով խավարից ու մշուշից, ի հեռուկս արգելքների, մենք կարողացանք դժվարությամբ խորանալ դեղնավուն կավի մեջ մինչև մեր ուրքերի կոճերը, մինչև ծնկները, մինչև գոտկատեղը, մինչև ուսերը... յոթերորդ օրը միայն մեզնից ամենաերկարի գլուխն էր բարձրանում փոսից: Այսպիսով, փոսի հատակին փռված գորգին նստած, իրար սեղմված, միավորված, իրար խառնված, մենք երկար մնում էինք այդպես՝ ականջ դնելով խորություններին, վայելելով ջերմությունը, արքայական թավիշը, մեր ամենաթաքուն բաբախումները խառնելով արմատներին և քարերին՝ ամենևին չկասկածելով, որ գետնի մակերեսին, քիչ հեռվում, թշնամին պատրաստվում է մեզ հայտնաբերել և որ ցյունը (դեկտեմբերի մանր փաթիլները) սկսել է թափվել... մեզ պիտի բռնացնեին (խայտառակեին), չնայած անարատ ճերմակությունն արդեն քողարկել էր պարտեզի խորդուբորդ, սառած դեմքը - քանզի ամեն ինչ շղթայվում է, ամեն ինչ բռնվում է, ամեն ինչ կապված է...*

## *այս մարմինները*

*այս մարմինները, այս բոլոր մարմինները, այս բոլոր մենությունները, այս բոլոր խորհուրդները, այս բոլոր շարունակական ապաստարանները, առավել ժամանակավոր, քիչ թե շատ պնևական, և ամենից առաջ այս մեկը՝ իմը, հիմա և այստեղ, փակված հյուրանոցի այս սենյակում, այս մերկ աթոռին նստած, այս կլոր սեղանին հակված, այս արմունկը ծալած, այս ձեռքը հանած վերարկուի թևքից, որ քիչ առաջ հագավ (ջեռուցման մարտկոցն այս առավոտ գրեթե սառն էր, հավանաբար փչացել է, դուրսը ձյուն է գալիս), այս ձեռքը, որ հնազանդ գրում է իմ թելադրությամբ, իմ հայացքի ներքո... այս աչքերը, այս ճակատը, այս գանգը, այս քերանը, որն առանց հայելու չեմ կարող տեսնել, այս մարմինը, որ միշտ հավատարիմ է եղել ինձ, որի հետ ես միշտ համերաշխ եմ եղել, այս մարմինը, որի մեջ ապրում էի, մինչև որ այն կպոկեին իմ մորից...* մորս ծփուն, լուսավոր մարմինը, այդ ճերմակագեղ, հիացնող, դիեցնող, բայց դեռ կուսական շնչով լցված այդ մարմինը, այդ շոնդալից, շլացնող, այրող, լուսավոր մարմինը, որն ինձ այս աշխարհի բերելով, աստիճանաբար կորչում էր իմ տեսադաշտից. իր կրծքերի ամառնային նվիրաբերումից, միասին ընդունած լոգանքներից հետո, ոսկե մատանուց, մանկական խաղերի ժամանակից հետո, երբ մայրս ոչինչ բանի համար ինձ թաքցնում էր փեշի տակ, նա սկսեց քողարկվել, խամրել, տարօրինակ զրահներ հագնել, առավոտվանից, իմ մոտենալուն պես թաքնվել՝ ինձ երևալով միայն փոքրիկ բացատներում, խաբեպատիր հեռաստաններում, շնորհիվ զգեստի մի բացվածքի կամ դռան ճեղքի*(ծնունդից մինչև մահ, մարմինը երբեք ձեզ չի արտաքսում, եթե չենք կարող, եթե անմիջապես չպիտի թափանցենք մեկ ուրիշ մարմնի մեջ, որ մշտապես պարագիր, վիրավորված, մեկնած,*

*մշտապես վերանորոգված. մարմնից մարմին, բնակարանից բնակարան, այսպիսին է կյանքը, գուցեև մահը...), իմ երեխա մարմինը, իմ սիրեկան մարմինը, իմ պարիս, իմ մարդասպան, իմ աքսորական մարմինը...* չհաշված իմ ծննդավայր քաղաքի մարմինը՝ այդքան խաղաղ, այդքան տխուր, տեղադրված գետերից ամենակատաղիի ոլորապտույտի մոտ... աշնանից գետն էլ ավելի կատաղի է դառնում՝ անկուշտ ճայերի երամներով, որոնց ծղրտոցները գուշակում են ջրի մակերեսի աննախադեպ բարձրացումը... այս մթագին ծեր մարմինը, խոժոռ, անձնատուր, որի ծալքերում աննկատ հավաքվում է խարտվածքը, մուրն ու տաշեղը, այս մաշված մարմինը, ուր տիրում է աղյուսը, չուգունը, կակուղ քարը, թիթեղը, որի բոլոր կենսական կենտրոնները, զարմանալիորեն, ծառերի, ծաղիկների և տարաշխարհիկ թռչունների անուններ են կրում. Արմավենիների փողոց (որտեղ ընդամենը մի տկար թխկի է կանգնած), Կուսածաղկի անցում (սղոցարանի և վառելիքի պահեստի միջև), կինոթատրոն «Կոնդոր» (մի նախկին կրկես, որի գմբեթի տակ հաստատված ճնճղուկները ցուցադրման ընթացքում, երբեմն-երբեմն, տեղից-տեղ էին թռչում, երբեմն նույնիսկ մի փոքրիկ, խուսափուկ ստվեր էր անցնում լույսի թրթռացող խրձի միջով, մինչդեռ էկրանի տակ հսկայական մարտկոցներն էին վժժում, և անդադար ծխում էին. ընդմիջումը հնարավորություն էր տալիս, առանց շտապելու, երկու պտույտ անել բոստրագույն ճեմասրահում՝ հայելու մեջ ուզածիդ չափ նայելով, ազդապատկերները վայելելով, որտեղ ոճրային հմայքով զարդարված մարմիններ էին բոցավառվում), Վարդենիների դպրոց (գերեզմանոցային մի փակ տարածք, ասֆալտի մի անապատ, որտեղից թանաքի, մեզի և ռետինի հոտ էր գալիս), Կարապի հրապարակ (ամենաքոստոտ աղավնիների ժամադրավայր), Մեղվաթագի քարափ (որտեղ ճանկավոր բեկորներն էին խորտակվում). *չհաշված, վերջապես, հենց այդ վայրի մար-*

*մինը, այդ քաղաքի, այդ հյուրանոցի մարմինը (որի ճարտարապետությունը ոչ միայն...), այս փակ, մերկ, ցուրտ սենյակի մարմինը, որտեղ լույսը նվազում է (և որի միակ պատուհանը...), այս տեքստի մարմինը, այդ մարմնի տեքստը, այս մարմինն այս սենյակում, այս սեղանի առջև նստած, սառած, դողահար, աղքատ, սելավի բերանն ընկած, իմ մարմինը, իմ խուսքը, իմ խորհուրդը, իմ մենությունը, իմ լայնաբաց հիշողությունը, իմ ծարավը, իմ տանջանքի անիվը, իմ գայլային քաղցը, իմ մարմինը, այստեղ, իմ մարմինը այս երեկո - իմ վերջին ապաստանը...*

## ԷՍԹԵՐ ԴԱՎԻԹՅԱՆ

(ՔՄՆ)

## ՊԱՐՈՒՀԻՆ

Ի՞նչ է սա արդյոք, մարմի՞ն, թե՞ ոգի,
կախա՞րդ է արդյոք իր դիմաց պարող...
խորհում էր կինը համակված ահով...
Նման բան կինը չէր տեսել մինչ այդ,
գալարուն մարմին պարին հանձնված,
այնպես նրբագեղ ու այնքան անսանձ...
Ուզում էր աչքը կտրել պարուհուց,
բայց շարունակում, նայում էր խանդոտ,
սիրտը հրդեհված, աչքը արցունքոտ...
Օ՜, պարը կնոջ պաշտամունքն էր հին,
անթեղված մորմոք հոգու մեջ ապրող,
չիրականացած սիրո պես այրող...
Պարը տարերքն էր մանուկ հասակից,

սակայն զոհն եղավ ամոթխածության՝
պարեց առաջին ու վերջին անգամ...
Ու այդ օրվանից՝ երկչոտ, ամաչկոտ,
փակվեց, չբացվեց ոչ մեկի դիմաց,
մինչդեռ նա պարի՞ համար էր ծնված...
Չպարեց երբեք, չհամարձակվե՞ց,
ուրիշին դիտեց միայն նախանձոտ
ու լուռ տառապեց՝ ի՞ր պարին կարոտ...
Ճիշտ ինչպես հիմա, երբ նա՝ ապշահար,
այդ արարածի պարին հետևում՝
սահմռկում էր ու անզուսպ հեկեկում...
Նա երբեք նման պարող չէր տեսել.
ի՞նչ ազատություն՝ անսանձ ու կրքոտ,
մերթ հանդարտ, քնքուշ, մերթ խև՝ կրակոտ...
Թե համարձակվեր, թե ի՞նքը պարեր,
ինչպիսի՞ հույզեր պիտի արթնացներ,
այդ կնոջ նման պիտի խենթացներ...
Սակայն նախ պիտի խենթացներ իրե՞ն՝
կամավոր բանտից պարուհուն փրկեր,
աշխարհը պարի՞ թևերով գրկեր...
Մարմինն ու հոգին հանձներ իր պարին՝
ողբա՞ր, քըրքըջա՞ր, դատարկվե՞ր, մեռնե՞ր,
պարի հաճույքից վերստին հառներ...
...Կինը հոգնել էր, բայց պարում էր դեռ,
դանդաղում մի պահ, բորբոքվում հանկարծ,
նորից շարժվում էր մերթ մեղմ, մերթ անսանձ...
Օ՞, նա այլևս ինքն իր տերը չէր,
իրեն մոռացել, տրվել էր պահին՝

անէացել էր, ձուլվել իր պարին...
Կինը չէր պարում, կարո՞տն էր պարում,
անթեղված ցավը հոգու մեջ ապրող,
չիրականացած սիրո պես այրող...
...Կինը պարում էր հայելու՞ դիմաց...

# ՌՈՒՄԻ՜, ՊՏՏՎՈՂ ԴԵՐՎԻՇ...

Երբ ծարավդ էիր հագեցնում մի օր՝
խոկումիդ պահին զույգ աչքերդ փակ,
հանկարծ հասկացար, որ դու և՛ սափոր,
և՛ այդ սափորի ջուրն ես սառնորակ...
Գուցե ա՜յդ պահին հասկացար և այն,
չգիտեմ, աչքդ դեռ փա՞կ էր, թե՞ բաց,
որ դու հայելին ու միանգամայն
դեմքդ ես հայելում այդ արտացոլված...
Ու դա խոկումիդ պահն էր ոգեղեն,
երբ դու՝ անսովո՜ր, պտտվո՜ղ դերվիշ,
քո մարմնից վերև, վե՜ր, աննյութեղեն,
սավառնում էիր անցավ ու անվիշտ...
Օ՜, չէիր ուզի կրկին դառնալ նյութ,
բայց չէ՞ որ դա է գոյի պայմանը՝
մարմինն է մարդու և՛ ցավը անգութ,
և՛ ցավը բուժող դեղն ու դարմանը..

# ՄՈՏԱՎՈՐԱՊԵՍ...

Իմաստնությունը թելադրում է մեզ
յոթն անգամ չափել, կտրել մեկ անգամ,
կյանքին չնայել մոտավորապես,
չբախել դուռը դառը փորձության...
Իսկ թե զանց առանք իմաստնությունը,
կտրեցինք առանց չափումն անելու,
պատահակա՞ն է հաջողությունը՝
գուցե մե՞կ անգամ... չի՞ կրկնվելու...
Պատկերացնու՞մ եք, բժիշկը առներ,
հիվանդին բուժեր մոտավորապես,
երիտասարդը սեր խոստովաներ՝
ընտանիք կազմեր մոտավորապես...
Մոտավորապես սիրեին իրար,
մոտավորապես հարսը հղանար...
ու, Աստվա՞ծ չանի, եթե պատահեր,
մոտավորապե՞ս երկունք ունենար...
Չեմ ասում՝ նման բան կպատահի,
ուզում եմ սակայն լինել անաչառ,
զի մարդ պիտի որ անբարո լինի
մոտավորապես ապրելու համար...

# ԻՄ ՀՈՒՅՍԻՆ

Ես ուշ հասկացա, որ մենք միասին
ձևավորվեցինք, գոյություն առանք
ու աշխարհ մտանք որպես մեկ մարմին,
ես՝ միս ու արյուն, դու՝ լույս երկնառաք...
Դու՞ բաց արեցիր դուռը իմ դիմաց,
առաջնորդեցիր, որ չմոլորվեմ,
ինձ վաղուց սպասող թևերի մեջ բաց՝
մայրական գրկում ապաստան գտնեմ...
Անծանոթ կյանք ու աշխարհին համայն
մանկիկ էի դեռ, անմեղ մի էակ,
որ գիտեր ուտել ու քնել միայն,
քո գոյությանը այնժամ անտեղյակ...
Երբ հասունացա, երբ չարն ու բարին
լաց ու ծիծաղով ես ճանաչեցի,
հասկացա նաև, ի՞մ հավատարիմ,
չունեմ ապավեն քեզանից բացի...
Արդ գիտեմ, քանի շնչում եմ ու կամ,
պիտի անբաժան լինենք իրարից,
մինչև աչքերս փակեմ ու գնամ,
դու վերջին լույսով ճանապարհես ինձ...
Բաց անես դուռը իմ հոգու՞ դիմաց
ու առաջնորդես, որ չմոլորվեմ,
որ կապու՞յտ, կապու՞յտ թևերի մեջ բաց
հավիտենական ապաստան գտնեմ...

# ...ՈՒ ՀԱՎՔԸ ԴԱՐՁԱՎ ՎԱՆԴԱԿԻ ԳԵՐԻՆ

Նախշուն թռչուններ Աստված արարեց
ու բիլ երկինքը նվիրեց նրանց,
այսքանով սակայն չբավարարվեց,
ծառ-թուփ արարեց ու հանձնեց սրտանց,
որ երբ հոգնեին, երկնից իջնեին,
ճյուղերի վրա մի քիչ հանգչեին...
Աստված սիրու՞մ էր նախշուն հավքերին...
Աստված սիրում էր երկնի հավքերին,
մարդիկ էլ նրանց սիրեցին նույնքան,
ու ականջալուր նրանց երգերին,
իրենց հոգսերը մի պահ մոռացան,
նվեր վանդակներ շինեցին սրտանց
ու ճաղերի մեջ բանտեցին նրանց...
Մարդիկ սիրու՞մ են նախշուն հավքերին...

# ՔԱՆԻ ՈՒԾ ՉԷ...

Ոչ թե աշխարհը, դու՞ ես պատճառը,
որ կյանքդ այսօր դատարկ է ու սին,
դու թողած հոգու պտղատու ծառը,
գերին ես ոտքի տակի տատասկին...
Չփորձես մեղքը քեզանից վանել,
փնտրել ուրիշ տեղ կամ ուրիշի մեջ,
աշխատիր խորհել ու խոստովանել,
թե կորցրե՞լ ես քո տարերքը պերճ...
Թե այլևս չե՞ս սիրահարը այն,
որ տիեզերքի տրոփն էր հոգում,
երկնի կապույտին հայելով միայն,
ամբողջ աշխարհը ուներ իր գրկում...
Երբ հայացք ուներ հատու, թափանցող
ու անհրապույր թափոնում անգամ
միշտ մի անսովոր, միշտ մի զարմացնող
երանգ էր տեսնում ոչ սովորական...
Երբ լսողություն ուներ գերսրված՝
ծյուղն ընձյուղվելիս շիվ տա՞լն էր լսում,
իր զուգընկերոջ սիրով հմայված՝
հավքի սրտիկի տրոփն էր որսում...
Չէ՞, աշխարհը չէ, դու՞ ես պատճառը,
քո կյանքի այգին դու՞ ես չորացրել,
գարնան շնչից է արթնանում ծառը,
խելքի՞ եկ, քանի չես ամայացել...

## ԱՆԶՐԵՎԻ ԿԱԹԻ՞Լ, ԹԵ՞ ԶՅՈՒՆԻ ՓԱԹԻԼ...

Արկած որոնող աղջիկների պես,
որ փողոցներում սիրում են շրջել,
դու անցորդներին, հենց որ հանդիպես,
քո թաց համբույրով սիրում ես թրջել...
Քեզ ո՞վ չգիտե: Դու աղջիկն ես այն,
որին սիրում են, կարոտում, կանչում,
բայց հենց որ եկար, զարմանալի՜ բան,
քեզանից թաքչում՝ տներն են փախչում...
Դու շվարում ես... սակայն ի՞նչ անես,
կամ դու էլ թողնում, փախչում ես անձայն,
կամ լացում լքված երեխայի պես՝
ընկերներիդ ես կանչում օգնության...
Երկչո՜տ ես, մենակ չես կարող գործել,
ա՜յն ժամանակ ես դառնում համարձակ
ու արդեն պատրաստ՝ խաղերդ փորձել,
երբ ընկերներիդ հետ ես սանձարձակ...
Քո ընկերնե՜րը... կաթիլներ բազում,
մերկ-ոտաբոբիկ ու փարված իրար,
առանց հոգնելու պարու՜մ են, վազում
արդեն դատարկված փողոցներն ի վար...
Քոնն է աշխարհը այդ պահին կարծես,
երբ ընկերներիդ հետ ես խելագար,
երբ փողոցներում անհանդիսատես
պարահանդե՜ս է, բայց լոկ ձե՜զ համար...
Իսկ գիտե՞ս արդյոք, որ փողոցներից

երբ մարդիկ փախչում ու մտնում են տուն,
նրանք ժամերո՞վ պատուհաններից
ձեր անսանձ ու խենթ պարե՞րն են դիտում...
Ձեր պարախումբը կոչում են անձրև
ու քեզ՝ պարուհուդ, հոլանի կաթիլ,
տաք օրերին միշտ մերկ ու միաձև,
ցրտին՝ զարդարուն, բազմաձև փաթիլ...
Օ՜, ձմռանը դու փոխվում ես հանկարծ
ու լրջանում ես վերջնականապես,
դու ասեղնագործ հանդերձներ հագած
ուրի՞շ աղջիկ ես դառնում պարզապես...
Հիմա դու զուսպ ես, ամոթխած ու հեզ
հարսիկի՞ նման, որ տակից քողի
իր հմայքներն է սփռում սիրակեզ,
արկած չի փնտրում էլ գաղտագողի...
Հիմա դու ճերմակ, փայլուն շորերով
ձմռան դստրիկն ես՝ սառցե՞ գեղուհի,
որ երկնից երկիր արծաթ թելերով
հեքիաթ է հյուսում հրաշքներով լի...
Դու, նախշուն փաթիլ, մնջիկ-անշշունջ
պարում ես օդում, հանդա՞րտ սահում ցած,
ձյուն դարձած անձրև, մեղեդի անհունչ,
Ձմռան օրերին այնքա՞ն սպասված..



## ԳՐԻՇ ԴԱՎԹՅԱՆ

(ՔՄՆ)

## ՀԵՇՏԱԹՈՎ

Հասուն են լույս ծոցիդ նռները,
Գուլինար շուրթերիդ բերքերը,
Իմ սրտի ուզածը թող քամեմ,
Որ բաշխեմ քո ուզած դողերը...

Իմ սիրած գգվանքի տաքուկը,
Շուրթերիդ վարդագույն մեղրուկը,
Քաղցր ու տաք քո գրկի ծփանքում
Պահում եմ իմ սրտի գաղտուկը:

Արևը ընկնում է իմ բռան,
Ծեփում եմ ողորկին քո վառման.
Հորդում է հուզմունքս ափեափ,
Սահում ես շրշյունով խելահան:

Աստղեր են պեծկլտում... աստղերը
Ընկել են աչքերիդ ծովերը...
Աչքերիդ խորքերում պատկերս...
Խորքերդ... նվաղուն տարփերը...

Ալիքը տանում է, լափունցում,
Ինձ քո շոգ հեշտանքի մեջ գցում...
Սուզվում եմ, գրկիդ մեջ ձուլվում եմ,
Իմ սիրով քո սերը հատուցում:

Հարբած եմ... և ուշքս գնում է...
Քամված եմ ու քունս տանում է...
Ասուպը հասնում է ափունքին...
Քո գրկի ջերմոցը թովում է...

## ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՇՈՒՐՋՊԱՐ

Այս հասարակությունը թավալվում է
տենչանքի, ձգտումի, նպատակի և հավատքի
տեղատվությամբ,
ու բավարարվում է ինքնախաբեությամբ,
որ կարճատև է ու շփոթեցնող,
հաջորդական վիհը ավելի խոր բացող:
Նորից գահավիժում է անձկության վիհը
ու նորից կարկառվում
նույն նպատակին ու ձգտումին,
տենչանքի ու հավատքի ներդրումով:
Բայց ահա
հայտնաբերում է իր նույն անկարությունը,
հոգնեցնող, ջլատող ու անփութացնող...
Սակայն բնազդով մղվում է
ապրելու իր վճռականությանը,
որ ներքին պահանջ է,
որ անխուսափելի է:
Այդպիսով է շարունակվում այդ շուրջպարը,
որ ծփում է աններդաշնակ հանգով,
մասնակիցների համոզեն հոգնությամբ,
մղումազուրկ, մեքենայական,
անհամ անտարբերությամբ բարոյալքող...
Եվ ահա զինվորագրյալ մի,
հիմնականում՝ հայր ու աշխատավոր,
հայրենասեր, սփյուռքասեր, համայնքասեր,
մասնաժամով կուսակցական,

ու ղեկավար ըստ ամենայնի.
հայ գիր ու գրականությունը,
հայապահպանումը տարածելում
աշխատունակ,
մամուլում երբեմն, կամ մասնաժամով խմբագիր,
այլև հոդվածագիր,
թղթակից կամ բանաստեղծ,
անխարդավան նվիրումով,
բարոյական նկարագրի տեր,
որ քանդակում է հայոց պատմությունը
հրապարակում,
հասարակության սրտի մեջ,
և գրական ստեղծագործություններում,
որպես հանապազօրյա խոսք ու քաջալերանք
մատաղ սերունդին,
այլև որպես պատգամ գալիքների համար.
որ առաջադրում է
մեր արդար ու պատմական պահանջները
առ ի գիտություն
և առ ի գործադրություն
երբեմն, կամ երբեմնակի, կամ ժամանակին...
Եվ ահա լռությունը խզվում է
լոզունգներով...
(ինքնախաբեության հեշտանվագ շեփորներ)
հանձնառության, տոկունության,
իրա՛վ նվիրվածության,
քաղաքականացումի... և այլն...
Ու դարիվ է տալիս շուրջպարը

մի շրջան ևս,
մի շրջան ևս,
աննեղդաշնակ հանգով,
չպարագծվող կշռույթով,
շփոթվող շարքով տատամսաքայլ,
ու մասնակիցների համորեն հոգնությամբ...
Կա՛ հանձնառությունը,
կա՛ տոկունությունը,
կա՛ նվիրվածությունը,
սակայն... չի՞ քաղաքականանում...
ու ամեն ինչ ցնդում է ի բաց...
Ո՞րտեղ ի՞նչ պիտի անել...
մտահոգությունը համընդհանուր է:
Եվ ահա պատանյակ մի,
որպես թարմ ուժի ներդիր,
որպես շարքերը երիտասարդացնող
պատվաստ,
գողտրիկ ձայնով
ու ծանծաղ գիտակցությամբ,
ընթերցանության մեջ անվարժ
ու կակազող,
առաջադրում է հառաջագունե վավերագրված
բարեմիտ,
թեև մեծախոս.
ձգտումով,
թեև ընդհանրական ու անորոշ.
երազունակությամբ գործնականամերժ.
լեզվական վթարներով

և մտածողության
կաթվածահար ընդհատումներով...
հանձնառությամբ՝ խոստացող,
թեև չփորձված.
որակով՝ զիջող,
թեև տքնված.
տոկունությամբ՝ մատղաշ.
նվիրվածությամբ՝ անգրավական,
թեև բարեհուսությամբ հավատալի.
քաղաքականացումով՝
կարոտագինս պնդող,
այլ չքաղաքականացված
է
խոսքային բովանդակությունը
հրովարտակի... կոնդակի...
պատանեկան ներդրումով փառազրկված...
Ողբերգականությունը չի՞ գիտակցվում.
ապավինվում է ինքնախաբեությա՞ն.
ամրացվում է
անձնապաստանության պատվարը,
որպես ինքնապաշտպանության պատյա՞ն...
Եվ ահա նվիրյալ մի,
գլուխը գմբեթավոր,
որպես սրբագույն վանքերը մեր քարակոփ,
աղոթառաք ու շարականաղողանջ,
հաշտում է պատարագ ու հոգեհանգիստ
ի հիշատակ
Բյուրավոր Նահատակաց Հայոց,

հընթացս Ցեղասպանության թրքագործյալ,
խնկաբույր ու սրբազան մարտիրոսների
ու հերոսների,
որոնք թարթում են,
առկայծում են ու պլպլալում
մոմերի հարալեզուներով
մեր աչքերի մեջ ու մեր սրտերում,
ամենաազնիվ ոգեկոչումներով
պատշաճական...
Որտեղ ի՞նչ պիտի անել...
մտատանջությունը փարատվում է
սրտերի բաբախյունով,
որ անլսանելի է աշխարհքին:
Եվ շարունակվում է շուրջպարը
մասնակիցների համորեն հոգնությամբ,
անհամ իներցիայով բարոյալքող,
ինքնաբեկությամբ իսկ
շուրջպարը շարունակելու բնազդով...
Որտեղ ի՞նչ է դեռ զարկում...
Զարկում է...
Կա՛ հանձնառությունը,
կա՛ տոկունությունը,
կա՛ նվիրվածությունը, .
սակայն... չի՛ քաղաքականանում...
ու ամեն ինչ ցնդում է ի բաց...
Որտեղ ի՞նչ պիտի անել...
ընդհանուր մտատանջությունը
քաոս է արդեն...

Անկարելի է լինում տաքացնել շրջանակը
բազում կոչեցյալների խճողումով,
ոգեզուրկ լոզունգների վայնասունով,
պոռոտախոսությամբ անհանձնառու,
անհավատների հավատախոսությամբ...
հա՛վախոսությամբ...
Մինչդեռ,
մինչդեռ քաղաքականացումը
պիտի առաջանա
ուժի՛ց.
և քաղաքական ուժը պիտի ծնվի
բռունցքի՛ց:
Այդ ուսողությունը լուծելու մոլությամբ,
և ճանաչելով.
«Սահման քաջաց զենն յուրյանց»,
պետք է դադարեցնել այս շուրջպարը
չարաբաստիկ,
պետք է դադարեցնե՛լ:
Պետք է սկզբնավորել մի ընթացապար,
ԸՆ՞ԹԱ՞ՑԱ՞ՊԱ՞Ր...
որ ունի մի սկիզբ,
որ ունի նպատակային ընթացք,
և ընթացապար է,
այլ՝ ո՛չ շուրջպար...
որ սկսելով մի սեմից՝ հասնի մի օթևանի,
որ օթևանում շունչ առնելով
շարունակի ուղին,
որ ի վերջո հասնի հանգրվանին...

Որ սկսելով Սփյուռքից... հասնի հայրենիք:
Եվ հայրենիքը չլինի որպես օթևան,
այլ լինի հանգրվան,
քաղաքական ուժի կռվան,
ոչ թե կռվախնձոր ու կական:

Այս շուրջպարը ընթացապարի հեղաշրջելու,
ընթացապարի հեղաշրջելու համար
թող թևքերը սոթտեն ընտրյալները
ի խնդիր փրկարար տեղաշարժի,
հանուն տենչանքի, ձգտումի, նպատակի
և հավատքի մակընթացության,
փարատելու ինքնախաբեության կոշմարը
իրատեսության առավոտլուսոյով,
առանց առհավական
տիրացուցականության ու մոլությունների,
բարձունքը նվաճելու
անխախտ խոյացումով միասնական,
ոգեշնչող ու ջլապինդ փույթով,
վճռականությամբ բանական,
անխուսափելի և անվրեպ:
Օ՛ն, ուրեմն,
ընտրյալներ, կոչումով ճակատագրված,
ախոյաններ մերկապարանոց ու համարձակ,
ցրելով փրկեք
հորձանուտում խեղդվող շուրջպարը...
կշռեք
ընթացապարի կշռույթով մտադիր...

նետվեք ուղին,
ճանապարհը նպատակագնաց...
Որ սկսելով Սփյուռքից... հասնի հայրենիք:
Որ սկսել է Սփյուռքից ու...
դժվարանում է հասնել հայրենիք...
Ինչու՞ է դժվարանում հասնել հայրենիք...
Չի՞ հասնում հայրենիք...
մոլություننե՞ր կան այստեղ,
և պատվարնե՞ր կան այնտեղ...
Բայց ամե՛ն, ամե՛ն, ամե՛ն գնով
պետք է հասնել հայրենիք...
Եվ ահա զինվորագրյալ մի նորագույն,
ազգընտիր ու ժողովրդազավակ,
քաղաքական տվյալներով շնորհատրված
ու քաղաքականացած ըստ ամենայնի,
հրդեհում է Սփյուռքը ու ողողում
հույսով, հավատքով ու սիրով...
բայց հանկարծ
պատռվում է դիմակը կեղծարարության,
ու պատռում է միասնականությունը
ատելությամբ ու բանսարկությամբ,
հերոսների բանտախցությամբ
ու հեռուստացուցային
կտտանքներով մեծիշխանական,
որ սրտախոցող է ու ազգավնաս,
որ խտրող է,
փեռեկտող ու պառակտող...
ազգային գաղափարախոսությունը հերքող,

ատելությունը մշտընջենավորող...
թշնամություն սերմանող...
և ավաղ... ավաղ
ազգընտրյալությունը կորցնող...
կորցրած...
բարեբախտաբար հեռացված ու փոխարինված...
Թող մոլորությունները փափկեն
բանականությամբ,
և պատվարները խոնարհվեն սիրով...
թող ոխերը ներողամտանան,
հայկազունները հասնեն համագործակցության...
այլապես
թող ոխերիմները սատկեն անժառանգ...
թող ընդառաջումը երկուստեք լինի,
այլ մրցանիշ չշահվի դիվանախաղությամբ...
մենք-առավել-հայրենասիրախաղությամբ...
որպեսզի հանձնառությունը արդյունավորվի
այլ՝ չմեծախոսվի.
որպեսզի տոկունությունը տա իր բողբոջը,
այլ չդառնա լոզունգ, կամ էշնահատակ.
որպեսզի նվիրվածությունը ճանաչվի,
այլ չմնա միակողմանի շնորհ.
որպեսզի քաղաքականացումը ապրվի
որպես ժողովրդի առօրյա·կյանք,
որպես քաղաքական ու պետական
ու ազգային պահանջատիրություն,
որպես ազգաբնակչության
աղ ու հաց ու ջուր,

այլ չդառնա զառանցանք,
փքուն նշանաբան,
հոխորտություն... և
կքում..

## ՅԱՐՈՒԹԻՒՆ ՆԱԳՈՒԼԵԱՆ

(ԱՄՆ)

## ՄԵՐ ՍՐԲԱՏԵՂԻՆ

### Ա.

Կար արդեօք մարդ մը հոգի մը գոնէ
Կտոր մը կսկիծ ունենար իր մէջ
Ի տես սպանդին
Ի տես այդ վիշտին ու տառապանքին
Տասնըհինգ թուի
Կար արդեօք մարդ մը
Կարեկցանքի
Արցունքի կաթիլ տեսնէր աչքին մէջ

Իր դիմացինին
Կտոր մը վիշտը զգար սրտին մէջ
Դիմացի հայուն
Չկար
Ոչ
Չկար
Եւ մինչեւ այսօր
Ուրացումի դաշտ
«Փեթրոլ»ի դաշտեր
Արցունքներու տեղ
Բոլոր ազգերուն խիղճին կիզակէտը
Հոգւոյն տեսադաշտը
«Փեթրոլ»ի վառարանն են
Նաւթահորե՞րը
Ազգի ճակատագիր
Հարիւր տարեկան հայկական ջարդը
Ուր մնաց մշակոյթը
Ուր մնաց Տա Վինչին
Նեֆերթիթիի քանդակագործը
Կօշիկ ներկողները դարերուն անցեալ
Բանակները Ճենկիզ խաներուն
Լենկթիմուրներուն
Եկան յաղթեցին
Եւ պատմութեան անիւը տարին
Զարիվարներուն
Յետադարձ վազքով

Դէպի անկումը
Ամէն տեսակի հին աստուածներուն
Նոր աստուածներուն
Եւ գալիքներուն

**Բ.**

Մենք աստղերու մարդ
Տիեզերական ազնիւ հոգիներ
«Ով չի խաբել մեզ
Ով չի մօտեցել մեր խորունկ վէրքին
Եւ ով իր անյաղ ոսկու ծարաւին
Չի տուել յաղուրդ մեր տաք արիւնով
Ով չի խաբել մեզ»...
Մնացէք բարով
Կը մեկնինք արդէն
Քանի չկրցանք ասֆալտել ճամբան
Նոր սերունդներուն
Ամէն տեղ կազի
«Փեթրոլ»ի դաշտեր
Մնացին որպէս աղօթարաններ
Եւ մատուռներ սրբեղէն...
Ոչ ծաղիկ մնաց
Ոչ որեւէ գոյն
Ոչ իսկ հրապոյրի քանի մը կաթիլ

Ուր պատսպարուէինք
Ո՞ի Աստուած իմ
Ամայութիւն է չորսդին
Երթանք-վերջանանք
Վերջ տանք
Բանաստեղծական խանդավառութեան
Քանի չենք հասած այն գաղափարին
Հին
Ճակատագրական
Ազգութիւններու նշանաբանին
«Մի մեծ Հայաստան բայց առանց հայի»
Անցեր ենք արդէն արիւնի ճամբէն
Յոյս չունինք եոբեք վերին ուժերէն
Որո՞ւ վստահինք այս երկրագունտի
Բիրտ աստուածներէն
Չէ Կեւարայի՞ն որ անցեալ դարուն
սուրբ պայքարով մտաւ ահեղ մարտ
Բայց աւարտեցաւ իբրեւ ոսոխ-մարդ
«Նայթքլապ»ներու վառող-չվառող
Լոյսերու խաղով
Չէ Կեւարայի երգով ու պարով
Եւ ցոփ հագուստներու յեղափոխութեամբ
Հարբեցան նաեւ մերինները պիղծ
«Հէյ ճան, Երեւան» երգելով գացին
Չէ Կեւարայի երգերէն անդին

## Գ.

Ծիծեռնակաբերդ
Ափ մը հողիդ համար
Սփիւռք մը ամբողջ իր կեանքը զոհեց
Բազում Թեհլիրեաններ
Տարբեր սերունդներու
Բայց եւ ոչ մէկը արժանի ըրիր
Չէ Կեւարային տրուած յարգանքին
Այս ինչ յաղթանակ մ'է
Ինծի պէս պանդուխտ
Մտքերով ցրուած
Բանաստեղծին համար
Ներեցէք ինծի
Պիտի չտեսնեմ Անին ու Կարսը
Պիտի չտեսնեմ Սարդարապատը
Դիմացը գերեզմանոցն է նոր հերոսներուն
Որոնք զոհեցին իրենց լաւագոյնը
Լոյսն իրենց աչքին
Տրոփը սրտին
Կեանքերը իրենց մատաղի
Քաջի
Որպէսզի մենք դառնօրէն չյուսալքուինք
Մեղք գործած կ'ըլլամ եթէ որոշեմ
Հրաժարիլ իմ հայութենէս
Դառնալ քաղաքացի

Սովորական մարդ
Ոչ տառապող ոչ պահանջող
Բայց այս է տեսակէտը մեր նոր դարու նոր մարդուն
«Ապրիլ ապրելու սիրոյն»
Ունենալ տուն եւ դրախտանման
Կտորիկ մը հող աշխարհի վրայ
Նիւթը դրամին լաւագոյն հայրենիքն է
Ա՛լ չեմ ուզեր ըսել աւելին
Սիրուն աղջիկներ կան օտար ափերուն
Քալէ՛ դէպի աչքերը անոնց
Քալէ՛ աչքերուն մէջէն տարբեր կրօնքներու
Հաւատա՛ չես հասնիր Երկնքի գաղտնիքին
Երկնքի գաղտնիքը հոգիիդ կարօտախտն է
Տիեզերքը նոյնքան անհուն է
Որքան աչքերը Վերոնիքային
Կարդացի Քօէլիոն
Քաֆքան բամբասեց սերունդ մը ամբողջ
Որպէսզի երիտասարդները ստեղծագործեն
Հրաշք էր Թոմըսը Վուտսթոքի մէջ
Եւ Պիթլզները Լիւրրփուլէն անդին
Դէպի երկրագունտի բոլոր եզրերը
Մինչեւ Աֆղանիստան
Ի՜նչ զարմանալի յեղափոխութիւն

## Դ.

Մտագարները բնակիչներն են խենթանոցին
Կը բացուին անպայման
Բայց դուրսը
Կեանքի մէջ
Բանաստեղծներն են
Գիտնականներն են
Նկարիչները
Մարդիկ որոնք աշխարհներ բացին
Մեր ներաշխարհին մէջ
Իմաստ տուին կեանքին
Եւ իրենց արձաններով գեղեցկացուցին
Բոլոր պարտէզները մեր երկրագունտին
Շոբէն
Պէթհովէն
... Յիսուս Քրիստոս
Վան Կոկ
Նաբոլէոն
Ժան Տ'արք
Օրսըն Ուէլզ
Տակաւին անոնք
Որոնց անունը չէ գրանցուած
Որոնք դեռ պիտի գան
Դեռ պիտի ծնին իմաստ տալու համար
Մեր երկրագունտին

## ՎԵՐՋԻՆ ՄԱՍ

Մենք հայ պատանքին ասեղնագործուած
Մեր ներաշխարհով
Կը մնանք տակաւին
Կեանքը գեղեցկացնող այս փաղանգին հետ
Այս փաղանգին ետին
Մեր Չարենցներով
Պարոյր Սեւակներով
Մեր Քոչարներով
Ու Մինասներով
Եւ Երեւանի փողոցներուն շաղուած
Գալիք երգերով
Սա մեր Երեւանն է
Սա մեր երկիրն է
Մեր սրբատեղին

## ԽԱՉԻԿ ՏԷՏԷԵԱՆ

(ԼԻԲԱՆԱՆ)

## ՏԱԳՆԱՊ ԵՒ ԽՌՈՎՔ

Քանի քանի անգամներ
Յանձնուեցանք քեզի ակամայ...
Դուն փայփայեցիր մեր մտերմութիւնը.
Եղար ընկեր հարազատ՝
Երբ ամայութիւն կը տիրէր չորսդին։
Պարտուողական ժամանակներ էին
ու ե՞ն տակաւին։
Անայգաբաց այդ գիշերներուն՝
Խցեցինք ականջներն մեր
Սոխակի երգին հոգեթրթիռ.
Փակեցինք պատուհանները աղմուկի.
Ու ականջ տուինք վրէժի կոչին. կռիւի երգին՝
Մեր հոգիներուն մէջ բոյն դրած։

Անէութեան պահին դէմ յանդիման,
Փակեցինք մեր հոգիները ժամանակի
փականով,
Դադրեցուցինք սլաքը ժամացոյցին՝
Մեր վիզերն ի վար կախուած,
Չլսելու բաբախումը մեր սրտերուն,
Չլսելու ոտնաձայները յամրաքայլ,
Ու մտանք խաբկանքի անձաւին մէջ
լուսաթաթախ,
Ինքնակամ:
Հաւատացինք, կորսուեցանք...
Ու բախեցին մեր դռները բիրտ հարուածներով
Քամիին սուլոցն ու որոտումի թաթերը կարծր,
Բերին հեռաւոր ափերու բարեւները կարօտի
Ու գինիները Մարսէյի դաշտերուն՝ փարչերով յորդուն,
Խմեցէ՞ք ըսին արեւմուտքի արեւահուր այգիներու
Եւ դեղձան կիներու ոտնակոխ խաղողէն զգլխիչ,
Խմեցէք ձեր ցաւերով յագեցած գինին լեղահամ,
Յանձնուեցէ՛ք մեր կամքին ինքնակամ,
Ընդունեցէ՛ք մեր ատելութիւնը՝ որպէս շնորհք ձեզի տրուած:
Մերժեցինք մեր խորերու դարպասները թակող՝
Կապտագոյն երազները մոլոր,
Հծծիւնը՝ գիշերային զեփիւռին,
Դարձանք օտարականներ մեր ինքնայոյզ խռովքին:
Քանի քանի անգամներ
Յանձնուեցանք քեզի ակամայ...
Ու դուն ծաղրեցիր մեր յիշողութիւնը,
Խլրտեցիր մեզ մեր էութենէն, արմատներէն՝
ցամքած...

# ԱԿՆԹԱՐԹ ՄԸ ՄԻԱՅՆ

Փակեցի աչքերս.
Դէմքդ իսկոյն պայծառացաւ իմ դիմաց.
Ուզեցի՝ գգուեմ զիս
Ու ես արտասուեմ գրկիդ մէջ, երկա՜ր:
Չհաւատացի՞ր՝ որքան
Փխրուն եմ դարձեր վերջերս. իսկ դուն՝
Անտարբեր կը թուէիր .
Մտքերդ ցրուած էին,
Հոգիդ՝ ալեկոծ,
Ու աչքերդ՝ միշտ հրավառ:
Առի ձեռքերդ ջերմ ու դրի զանոնք սրտիս վրան.
Սրտիս՝ որ տկարացած էր,
Վիրահատուած, տագնապներէն հիւծած,
Սպասումներէն եւ անձկութիւններէն ջլատուած,
Բիւր բեկումներով դարձած ալեւոր ու անկար:
Կ՚ուզէի՝ փարիս ինծի
Ու մեղմես տապը սրտիս
Կ՚ուզէի փակել աչքերս,
Մոռնալ ամէն բան,
Չլսել շշուկ ու ոտնաձայն,
Չտեսնել ոչ ոք, բացի քեզմէ,
Ու աչքերդ հեռասլաց.
Անտարբեր էիր ու թերահաւատ.
Հեռո՞ւ էիր կարծես.
Իսկ ես կ՚ուզէի արտասուել
Աղջամուղջի ցօղին նման,
Կ՚ուզէի՝ հաւատաս վերջապէս,
Որ ես ուրի՞շ անձ մ՚եմ հիմա,
Որ քե՞զ կը ցանկայ միայն:
Բացի աչքերս, աւա՜ղ չկայիր ալ...

## ԱՓՍՈՍԱՆՔ

Եւ եթէ հրայրքին մէջ այս խենթ
Ու կռիւին մէջ օրհասական,
Կ՚որոնենք հանճարներ մենք դեռ...
Ու տատանումին մէջ Նոյեան Տապանի
Տակաւին կան հաւատքի խիզախ մարտիկներ,
Բախտաւոր ենք յիրաւի.
Բայց ո՞ւր են անոնք, այլակերպուա՞ծ,
Պատեանին մէ՞ջ նեղ ժամանակի,
Թէ՞ անգոսնած հրաժեշտի փողերով անշունչ
Կ՚երթան երգել իրենց երգը տխրալուր,
Մինչ ոգիները անճիտուած, ձայները խռպոտած,
Կը սուրայ նաւը լազուր՝
Ուղեկորոյս ու անփոյթ...
Եթէ գրկած ժամանակի ոգին թեւաթափ,
Կ՚ուզենք հաւատալ, ու յարատեւել տակաւին,
Ի՞նչ վիթխարի կա՛մք ու հզօ՛ր ապացոյց
Հարկ է մարդուն, որ նետուի ծոցը մարտին բոցակէզ
Ու մերժէ պարտութիւնն այս ամօթաբեր,
Դառնայ ամբոխ ցնորած եւ ոչ՝ հօտ հլու,
Դառնայ ահեղ ամպրոպ՝ խոնաւ արշալոյսը ծնանող։
Եթէ ոչ հիմա, հապա ե՞րբ է ժամը զգաստութեան,
Ե՞րբ պիտի հնչէ ոգեշունչ կոչնակը բազմաձայն...

## ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

(ԼԻԲԱՆԱՆ)

## ԵՐԲ ԱՐԵԻՆԵՐ ԿԸ ԼԵՐԴԱՆԱՆ...
## ԿԸ ՏԻՐԷ ԿԱՄՔԸ ՄԱՀՈՒԱՆ

### Ա

Ամէն անգամ երբ կը փորձեմ
դուրս գալ վայրէն այս մահաստուեր
անաչք դէմքեր կ'երկարին տեսադաշտիս դէմ կրկին
եւ ոսկորներն ալ երկինքի կմախքներուն
աչքերուս մէջ փուլ կու գան
Մահուան ընծայ ուղիներն ու սեւ աստղը օրերուդ
— հաղորդակցութեան օ՜ գիծեր տարտամ —
սուր ճիչի մը պէս կ'ընդհատուին յանկարծ
եւ ես կը դառնամ մեռած օրերու

եւ տառապանքի շիրիմ չարակամ
քու չգոյութեան վախէս զզուելի

**Բ**

Ինչո՞ւ բոցը կը լափէ պայծառ դէմքդդ ամէն օր
երբոր հեռու եմ քեզմէ ու քու կանչէդ ալ բոսոր
երբոր հեռու եմ նոյնիսկ անօթեւան իմ սրտէս
եւ մանկութեան տաղերուն քաղցր արեւէն սիրակէզ
Ո՞ւր պիտի տանի ճանապարհն այս զիս
խաւարներ սուլող բորենիներուն ու գայլերուն հետ
խօսքն ընդհատող բրտութեան կրկէսէն զատ
ո՞ւր պիտի տանի նենգ բաւիղն այս զիս
ուր վարագոյրը մեծ ողբերգութեան
արդ կ'իջնէ հանդարտ
լոյծ ու անտարբեր

**Գ.**

Մէն մի տառի եւ բառի միջեւ
մէն մի խօսքի եւ արձագանգի միջեւ
մելանը որ արիւնն է գիրին եւ հոգին լոյսին
մելանը որ եղբայրն է հողին եւ տենդը տեսիլին
գիշեր-գիշեր օ՜ կ'երկարէ անաղարտ խօսքը մութին
որ յուշերու ջուրերուն մէջ կեանք լողացող շողերով
վեր կարկառեմ ժամանակը շարժումին
Բայց արեւները տակաւին կը լերդանան քարերուն
մողէզները կը դառնան դեսպանները շիրիմներուն

պահը կը կքի լռութեան ծաղկեպսակներուն
ձայները քար՝ քար կը կտրին օդին մէջ
նոճին կը յայտարարէ ժամը հանդիպման
եւ կը տիրէ կամքը մահուան

## Դ

Ինչպէս շրջանները կը հեռանան իրարմէ
այնպէս ալ կը տարանջատուին մարմինները մեր
կը տարակուսին ցերեկ ու գիշեր
կը տարագրուին արեւ ու բեւեռ
կը դառնան անյայտը խուզարկող աստղանաւեր
եւ իբր թէ կեանք կ'ապրին մահիճներուն խաւարի
Ինչպէս սիրածառը կ'արտասուէ
կարօտի կանչեր ու հրաժեշտի ողբեր՝
իր ծաղիկներուն ու աշնանային միրգերուն համար
այնպէս ալ կորուստները կը խտանան մանուկին դէմքին
որ զարմանէն իսկ առաջ փնտռեց միայն տաք ափեր
սայթաքեցաւ օրերու ծործորներուն մէջ մթաստուեր
եւ մնաց թափուր
եւ մնաց անտէր
Տէր իմ բարեգութ եւ ամենազօր
խօսքն իմ մեղաւոր դուն անշարժ պահեա՛
որովհետեւ ո՛չ զօրութիւնը կամաւոր աստղերուն
եւ ոչ ալ միգանոյշներն ու սատանաները վերին
կրնան մանուկին սուգը վերածել երկնային ովասիսի
իսկ հօր հոգիին հրդեհը՝ ազգային քայլերգի

## Ե

Ըսի ես քեզի
— դեռ կանուխ է հայր
ըսի ես քեզի
— դեռ շատ կանուխ է այս կատակին ծանր
ըսի տակաւին
— ինչո՞ւ շտապել ու մեկնիլ անդարձ
երբ դեռ նոյնիսկ չես քաղած պտուղները ծառերուդ՝
աւելի հասուն սիրոյ արեգակէն
աւելի շքեղ անմահական խնձորէն
եւ աշխարհներու ուժը ամբարող մրջիւնին սրտէն
Ինչե՞ր չըսի ես քեզի
բայց դուն արիւն իմ չարքաշ
քեզի վայել հպարտութեամբ մեկնեցար այս աշխարհէն
դառնալու սպարապետը քեզմէ գերիվեր ուժերու
կտակելով մեզի բոցը պայքարին
եւ յայսմաւուրքը մերժումին
Հիմա կ՚անցնիմ փողոցներէն ամայի
եւ քայլերուս յանդիման հպարտ երթըդ կը փնտռեմ
ապշանքիդ հետ կը մեծնամ հանելուկներն որդիիս
կը բարբառիմ քու հունչով եւ ծիծաղով անսահման
եւ կը փորձեմ աւարտել անհոգ պատկերդ անթերի
բայց դուն հայր իմ միշտ բարի՝ արեւէն իսկ աւելի
ըսէ ինչո՛ւ խոյս կու տաս օրերէն ու լոյսէն
եւ կը դառնաս մթին փոս

եւ լռութեան սեւ ակօս
զարմանքին մէջ թոռնիկիդ
եւ ապշահար իմ սրտիս

## Զ

Վերադարձար դուն հայր իմ
երբ վերադարձն ալ միայն տառապանքի սեւ վարդ էր
որ գիծերու մէջ մթին հազար յուշեր կը բարդէր
հազար վիշտեր կը թարթէր
եւ այլ երբեք չէր լռեր
Վերադարձար պատկեր իմ
թախիծներու թափանցիկ շողերուն հետ ու սուգին
երբ ափերուս տակաւին բիւր ուղիներ կ'երկարին
եւ կ'երկարեն անաւարտ ուղիները խաւարին
մինչ ճամբուս վրայ՝ կարօտի կանչեր
մինչ ճամբուս վրայ՝ կարօտի ճիչեր
կը կողոպտեն արիւնն իմ եւ բառերը քու վերջին
ինչպէս փոթորիկները՝ կալերը սրտին
տաղերը յոյսին
եւ խօսքը լոյսին

## Է

Ո՞վ մտերմութիւնը վարդին
եւ ճենճերումը թաց հողին
բոլորը անմեղ են վարդին արիւնէն
որ գարունը չբացուած խաղաղ—խաղաղ զենեցին

Ծիծեռնակները նոյնիսկ հիմա այդպէս կը կարծեն
բայց կը մոռնան որ արիւնը զենեցին
մինչեւ անեզրը մահուան անջրպետին
ուր ճակտի գիրը բաժանման կանգառ է պարզապէս
կամ հանդիպման ստապատիր խոստում կարծես
Ո՞վ բարեկամութիւնը վարդին
եւ խաչելութիւնը արեգակին
դուն օդն ես նամակներուն եւ դողը համբոյրներուն
որոնք անդադար կը դառնան իրենց հարսանիքներուն
եւ քար առ քար կը փշրուին վաղվաղակի
ողբերգութեանց սալին վրայ մեր կեանքի

## Ը

Փոշին եմ նստած շիրիմիդ վրայ
եւ լռութիւնն եմ քարին այլայլած
ուր իմ մահաշուք դէմքիս գիծերէն արիւն կը տեղայ
կեանքը կողոպտած դամբանիդ վրայ
Փոշին եմ նստած փոշիին վրայ
որ իր շարժումէն սաստիկ կը սոսկայ
սաստիկ կը սոսկայ

## Թ

Հայրը ծառ էր մշտադալար
հեքիաթ մը տաք ու անբարբառ
որուն այբուբենը պատուիրանն էր չարքաշութեան
իսկ քերականը՝ կողմնացոյցը համեստութեան

Բարեկամն էր ան ծառին ու ամպին
մտերիմն էր ան կապոյտ թռչունին
հարազատն էր ան զուարթ մանուկին
հոգեղբայրն էր ան սէր արեգակին
եւ տրիբունը՝ հայոց աշխարհին
Բայց մեկնեցաւ
ճիշդ հեքիաթի պարիկին պէս
եւ մենք դատապարտուեցանք անաւարտ գաղթէ մը
դէպի նոր գաղթի մը
որ չունէր սկիզբ
եւ չունի վախճան

## Ժ

Երկիրներու մէջ
ուր սպասումը սառցալեռն է մխիթարանքին
ուր մխիթարանքը կրկներեւոյթն է ժամանակին
ուր ժամանակը վախճանագիծն է անհեթեթին
ուր անհեթեթը վեջին խօսքն է ճակատագրին
ուր ճակատագիրը լուսապատճէնն է մեծ խաբկանքին
եւ ուր չենք կրնար զանազանել արեւը լուսինէն
եղայ տխրաղալուկ լուսինը ողբերգութեան
լուսնին վրայ հանգչեցաւ խաւարումը մահին
իսկ դէմքիս՝ եղերերգը չգոյութեան
որ հեռաւոր երկինքներէ դաւաճան
տխուր—տխուր հօրս դէմքը աւերեց
եւ կ'աւերէ ու կ'արիւնէ տակաւին

*Հալէպ. 27 Մարտ 1990*

## ԱՒԻԿ ԴԵՐԵՆՑ

Բոստոն

(ՔՄՆ)

## Ո՞Ր ԴԱՐՈՒՄ ԵՆՔ ՄԵՆՔ ԱՊՐՈՒՄ...

Մէկը ցոփութեան
Բաժակն է պարպում,
Միւսը յուսահատ
Արցունքներ թափում...
Մէկը թալանած
Գանձն է նժարում.
Միւսը ցաւերի
Բեռի տակ կքում...
Գուցէ եւ քարէ

Դարում ենք ապրում.
Ուր մարդը մարդու
Ստրուկն էր դառնում...
Օ, ոչ, բարեկամ, ինչեր եմ ասում.
21-րդ դարում ենք ապրում...

## ԲԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՒԱՏ

Աւա՜ղ յաղթում է խաւարը լոյսին.
Երկչոտ մարում է կանթեղը յոյսի.
Ոխն է եռեփւում ցասմամբ տմարդի.
Ո՞րն է սահմանը անբարիշտների:
Ուզում եմ աշխարհն նիրհից շուտ զարթնի.
Խղճի ցամաքած ծովը վարարի.
Բարձրեալի ուժով ամենակարող.
Չարի. նենգի դէմ՝ բարին չծնկի:
Ուզում եմ մարդկանց ես ի մի խմբել.
Նրանց սրտերում սէր. գութ բորբոքել.
Որ մաղձի ժահրը մէկընդմիշտ չքուի.
Ամեն Աստծոյ օր բարութեամբ բացուի:

## ՔԱՐԷ ՀԱՄԲԵՐԱՆՔ...

Իմ յոյսը հիմա
Մշուշն է միայն,
Սոսկումն է սոսկում իմ երակներում,
Չեմ տեսել երբեք
Այս սին աշխարհում,
Դատարկութիւնը այսքան լեփ-լեցուն:
Կոյրին ասում են
Աչքերդ գոցի՛ր,
Կաղ մարդուն ասում՝ դէ, արագ վազի՛ր,
Իսկ ես՝ նայում եմ
Նրանց ապշահար,
Ասում են եղբայր՝ մի քիչ համբերի՛ր:
Խուլի ականջին
Փսփսում են լոկ,
Համրին ասում են՝ խօսի՛ր անկաշկանդ,
Ասացէք խնդրեմ,
Որտեղի՞ց գտնեմ,
Քարէ խղճի դէմ քարէ համբերանք:

## ԱՆՈՐՈՇՈՒԹԻՒՆ

Քայլում եմ, քայլում
Առանց հանգրուան,
Ճամբան իմ կարծես հարթ է ու սահուն,
Բայց ես չգիտեմ
Իմ ոտքերի տակ,
Հողն ինձ չի՞ խաբում, դաւեր չի՞ սադրում...
Նայում եմ շուրջս
Խաղաղ է, անդորր,
Լուսինն է ինձ հետ միայն փողոցում,
Բայց տագնապում եմ՝
Այդ աղօտ լոյսով
Գիշերը դարձեալ ինձ ո՞ւր է տանում...
Քայլում եմ, քայլում
Առանց հանգրուան,
Յանկարծ ես հեռուից ձայներ եմ լսում,
Հրաւիրո՞ւմ են,
Թէ՞ ինձ սպառնում,
Ինչո՞ւ է յոյսն իմ այսքան երերուն...

## ՍՊԱՍՈՒՄ

Երկինքը այսօր
Թխպոտ է.
Ո՞ւր հեռացար
Անհոգութիւն:
Երգ է հնչում.
Թախծոտ մի երգ.
Ի՞նչ ես ուզում
Անյուսութիւն...
Լռութիւն է
Ու տագնապ է.
Որտե՞ղ ես դու
Երանութիւն...
Անհրապոյր
Սէգ. մշուշ է
Ո՞վ կը բերի
Լոյս. խնդութիւն:

# ԱՐՁԱԿ

## Պողոս Գուբելեան

(ԱՄՆ)

# Մեկենասը

Գրած նոր վէպին անտիպ մնալը, մղձաւանջը պիտի դառնար արձակագիր Գիրգորին: Անիկա համոզուած էր, թէ այս գործը կոչուած էր իր լաւագոյն ստեղծագործութիւնը դառնալու: Միթէ հինէն իվեր, ամէն գրող այդ երազն ու զառանցանքը չէր ապրած եւ այդպիսի հիւանդագին պատրանքներ չէր սնուցած:

Ի դէպ, երեկուան լակոտը ու միամիտը չէր գրող մեր բարեկամը: Սա կեանք կոչուածը իր լիութեամբ ապրած, լաւն ու վատը ճաշակած, չկար երեւոյթ մը կամ առանձգական դէպք մը զորս զգացումներու պրիսմակէն անցնելով խորաչափած չըլլար, դառնալով իր սերունդին հարազատ, հնչեղ ձայնը:

Եւ այժմ իբրեւ ինքնակամ զոհ՝ զինք խեղդամահ ընել փորձող

Ամերիկեան ջրապտոյտին, անկէ ելք կը փնտռէր, կարապի իր երգը՝ իմա իր նոր վէպը հրատարակել տալու եւ դեռ համեցող բուռ մը հաւատարիմ ընթերցողներուն հրամցնելու, առանց ինքնախաբէութեան ու պատռանքներու զոհ երթալու: Ժամանակակիցներուն կողմէ որպէս վաւերական գրիչ ճանցուած գրողը, չէր հաւակներ սփիւռքահայ արձակի բարձունքները յաղթահարած ըլլալ եւ իր այս նոր գործով ակոսել զայն: Թոշակաւորի ներկայ իրավիճակը կամ ալ քամ քաք տնտեսական վիճակը, զինք կը մղէր անգամ մը եւս փորձել, բերանէն ու դեղորայքէն կտրելով, նոր հատոր հրատարակելու սխրանք նահատակութիւնը:

Ներկայ պայմաններուն հայերէն վէպ հրատարակելը իրովի էշ-նահատակութիւն էր: Վերջին տասնամեակին, վիպագիր Գիրգորին այնքան համակրած իտէալացուցած կառոյցները, հայ ընթերցողին ճաշակը այլանդակելով, զայն կը մղէին ցեղասպանութեան թեման տղայական յաճախանքի վերածելու ու որպէս նախասիրուած գրական ժանր, ամբողջ սերունդի մը գեղագիտական ճաշակը տրորել-խաթարելու: Առ ի հետեւանք՝ ուծացած, շիշ-քէպապ բուրող հայերը տարասփիւռ իրենց հայրենակիցներուն աքիլեսեան կրունկի վերածուած ողբերգութիւն մը շահարկելով, մէկը միւսէն աղմկոտ ցեղասպանութեան տաղտկալի թեմայով վէպեր եւ յուշեր կը հրատարակէին եւ որպէս «Պէսթ Սէլլըր» կը կերցնէին նոր սերունդին: Կարծես Եղեռնի կողքին, սփիւռքահայը յուզող ուրիշ մարդկային տագնապներ գոյութիւն չունենային: Իսկ գեղագէտ հայ գրողներու քանի մը սերունդ, խաթարուած ճաշակներու հետեւանքը պիտի կրէր:

Վիպագիր Գիրգորին նման այլախոհներ, վարանումով մը կը փորձէին հոսանքին դէմ թիավարել ու նօսրացող հայ ընթերցողներուն իրաւ գրականութեան գեղագիտական ճաշակը փոխանցել,

անոր համն ու հոտը վերադարձնել: Անզուսպ հոսանքին դիմաց, անոնց փորձերը դատապարտուած էին ձախողումի:

Հայերէն գիրն ու գրականութիւնը, անկախ շօշափած իր համամարդկային թեմաներուն, դարձած էր չընթերցուող մահամերձ լեզու: «Ժամանակակիցներու մօտ տիրող մտաւորական բոպիկութիւնն ու ճաշակի խաթարումը արդար չէր գրողներուն ու մտքի մարդոց վերագրել», իր անկիւնէն կը խորհրդածէր Գիրգոր կոչեցեալ ըմբոստը, ծառանալով տիրող ընդհանուր անտարբերութեան դէմ:

Այսպիսի քայքայիչ ու վհատեցնո՛ղ մտորումներու յանձնուած պահերուն, վիպագիր Գիրգոր սկսած էր գլուխէն կերածի, ցնդածի տպաւորութիւն թողուլ շրջապատին վրայ, յաճախ անկումային մտքերու յորձանուտին տակ ջղային աւելորդ ու անհարկի տագնապումներու յանձնուելով: Ծուրջը տիրող դատարկութեան մէջ ոչ ոք կը փորձէր ու գէթ ճիգը յանձն կառնէր ցաւերը խորաչափելու, մորթի ծածկոյթին տակ մտնելով թաքուն խոհերուն թափանցելու:

Քառասուն տարիներու կողակից իր Աշխէնը, ականջ ու կարեւորութիւն չտալով ամուսնոյն տագնապումներուն, քիթին տակէն.

-Պիրէ մա՛րդ, նորէն քեզի ինչ կ՚ըլլայ կոր,- կը մրթմրթար ու ամուսնոյն «տէնկսիզութիւնը» կը վերագրէր գրողի անոր դիւրաբորբոք խառնուածքին եւ զայն զգաստութեան հրաւիրելու մտօք,- դուն ե՞րբ պիտի համոզուիս որ հայերէն գիրք կարդացող չկայ...

Ապագայ իր հատորին մեքենագրուած պատճէնը ամերիկահայ հրատարակիչին մօտէն շալկելով կործանուած տրամադրութեամբ տուն վերադարձաւ Գիրգոր: Սրտի տագնապ պիտի բերէր: Ջղային չոր շարժումով մը գրասեղանին մահոկանիէ փայլուն մակերեսը խփեց թուղթերու տրցակը, ինքն ալ հոգեպէս զգետնուած ստացած մերժողական քաղաքավարի պատասխանէն:

Չէր ալ կրնար այպանել հրատարակիչը:

Տասնամեակներով, հայ մշակոյթին ծառայած այս տղան եղած էր գիրքերու հրատարակիչն ու զինք խրախուսողը: Չար բախտէն, այժմ շուկայական պահանջներն ու տինամիզմը փոխուած էին: Երկլեզու բառարաններն ու խոհանոցային որկորի նուիրուած գիրքերը ի պատուի էին: Իրաւ գրականութեամբ հետաքրքրուող գրեթէ չկար, բացի դեռ բուռ մը յամառողներէն: Յուսահատելու տեղ, վիպագիրը սկսաւ հաւանական մեկենասներու եւ մշակութային միութիւններու ցանկը կազմել եւ ծանօթի ու անծանօթի միջոցաւ, գրաւոր ու բերանացի դիմումներ կատարել, ընթացքին՝ քօղարկուած ակնարկութիւններ շպրտելով իր նոր գործին արժանիքներու մասին եւ շեշտելով անոր բերելիք նորութիւնը սփիւռքահայ գրականութեան:

Դիմումները առհասարակ ապարդիւն մնացին կամ ալ խուսափողական ու երկդիմի պատասխանի արժացան: Շատերն ալ դրամական խոստումի փոխարէն՝ ձրի խելք կը բաժնէին անյուսութեան խորխորատը գլտորող տաղանդաւոր իրենց հայրենակիցին:

-Սասունցիին միջոցով միլիառատէր Գրգորին դիմեցէ՛ք... եղաւ ամենէն աւելի կրկնուող խորհուրդը:

-Կը թելադրենք որ... Վեհափառներուն գրէք, հեռաձայնի մէկ հարուածով մեկենաս կը ճառեն:

-Առաջնորդները անոնցմէ ետ չեն մնար: Շա՞տ է մը եթէ տաղանդաւոր հայ գրողի մը մէկ գործը հրատարակեն... անարիւն գործերուն մսխուած գումարներու կողքին:

-«Մելիտենցի» գրական մրցանակին դիմեցէ՛ք...

-Ռուսաստանի հայերո՛ւն, անոնց աչքը աւելի կուշտ է...

-«Ապրիլ գրատո՛ւն»... այդ տղուն Աստուածը ուրիշ է:

-Ռիթա Տէմիրճեանին հետ խորհրդակցի՛ր, հասկցող աղջիկ է:

-«Պերճ» գրատան մասին մտածեցի՞ք, ազնուական տղայ է:

-Հայրենակցական միութիւնները զօրաշարժի ենթարկեցէ՛ք:

-Մշակութային միութիւններուն գործը ի՞նչ է... թող յետոյքնին շարժեն քիչ մը...

-Հա, ճիշդ ճակատին զարկի՛ք... Հայ Դատին դիմեցէք: Ձեր ըրածն ալ, վերջին հաշուով գիր գրականութեան ճամբով ազգապահպանում է:

Բարեդէպ մտածողութենէ ու գնդակը դիմացինին դաշտը դրկելու ճարպիկ եւ ակնյայտ մարտավարութիւնէն հիասթափուած, վիպագիր Գիրգոր գրաւոր իր դիմումներուն տրուած վերացական ու երկդիմի այսինքն՝ -մեզի մի մօտենար ալ, *ճէհէնգէմ* եղի՛ր թուրքին կամ ազերիին քովը գնայ-ի նման պատասխաններ կարդալով, կամ հեռաձայնային տհաճ թելադրանքները տասերորդ անգամ լսելէ ետք, պահ մը լրջօրէն մտածեց հրկիզել, կամ բզիք բզիք ընել անտիպ գործը ու շնիկին վիզէն բռնած տանիլ եւ օր ցերեկով միզել տալ ազգայի՛ն կոչուած կառոյցներու անհիւրընկալ, վանողական ու հակամշակոյթ բուրող պարիսպները ու հրաժարիլ հայութենէն: Մոռնալ հայ ծնած ըլլալը: Տարբեր հարց, թէ մարդ ի՞նչպէս կրնայ արեան կապէն ու էութենէն հրաժարիլ:

Խենթութեան նոպաներուն ակնաղբիւրը անկումային իր քամ քաք հոգեվիճակէն կը բխէր, որուն ազդեցութեան տակ, ատակ էր ամէն ծայրայեղութեան: Իր ժողովուրդի ազգային դիմագիծը խաթարողները պատը շարելով կիւլլել: Դեռ ալ տէրորին գէշ անուանարկում տուած էին...

Սակայն, կոնծած քանի մը բաժակ աժանագին օղիով, ստամոքսի սուր ցաւերու ընդմէջէն, կը վերագտնէր անբուժելի

լաւատեսութիւնը եւ յոյսի լուսայեղ կամուրջներով կը կապուէր կեանքին, կը տիրէր զգացական աշխարհին:

Վիպագիր Գիրգորին յարափոփոխ հոգավիճակը, դիտողին վրայ ցնդածի եւ թոցուցածի տպաւորութիւն կը թողուր, մէկը որ գրող արուեստագէտի ուռած իր եսին գերին դառնալով, չտեսնելու կու գար ու կ՚անգիտանար ժամանակակիցներուն գիր գրականութեան հանդէպ ցուցաբերած անտարբերութիւնն ու մակերեսայնութիւնը:

Ձինք խենթի տեղ դնողներ ալ կային. «գի՛ժ Գիրգոր»: Ազգ ու բարեկամներ յանախ, անոր անմիջական ընտանիքի անդամներուն բազմիմաստ ակնարկութիւններ կ՚ընէին, թաքնուելով քաղաքավար տարազներու ետին, զինք գիժանոց սահեցնելու, կամ լաւագոյն պարագային՝ իրեն շնորհ ընելու պէս՝ անվնաս խենթերու անկեանո՛ց:

«Ծաքարը կարծես գլխուն զարկած է...» կ՚առարկէին անոնք, ընթացքին՝ բազմիմաստ ակնարկներ փոխանակելով:

«Այ մարդ, սա անկեանոց ըսուած տեղը դրէ՛ք, դուք ալ կը հանգչիք, ինքն ալ...» Կը շարունակէին անոնք սրտցաւ շեշտով:

Վիպագիր Գիրգորին հոգը չէր, գժանոցի տեղ, եթէ զինք դժո՛խք ու սատանի գիրկ ուղարկէին: Միայն՝... նոր վէպին հրատարակութենէն ետք: Արդէն ամէն առաւօտ նոր նոր ցաւերով կ՚արթննար ու օրը քաշկռտելով իրիկուն կ՚ընէր: Ֆիզիկական ամէն շարժում ցաւ ու տառապանք կը բերէր իր հետ:

Մարմինը՝ ցաւերու ամրո՛ց:

Խորքին մէջ, սա կեանք կոչուածէն համ-հոտ առած չունէր: Թաւալող փոշեթաթախ օրերը, իրենք իրենց մէջ տաղտկալի, աղմկալի, անհրապոյր դարձեր էին: Համատարած աղմուկ ու մտմտուկ: Ապրելու կիրքը կը վերագտնէր, շնչել կը սկսէր միայն

ստեղծագործելու պահուն, գեղեցիկին մատչելու եւ գրածը ամէն գոյնի մարդոց հետ կիսելու: Աչքերը չփակած նոր վէպը կը փորձէր իր հասցէին հասցնել: Մոռնալով որ հասցէատէրը՝ չկա՛ր, կամ ալ լաւագոյն պարագային, հոգեվարքի մատնուած անճանաչելի մէկը դարձեր էր: Բուն հոգեվարքը, հայ գրողը կ՚ապրէր, թեւին տակ՝ հայ գիրքը: Աչքերը յաւիտեան չփակած, թոյլ տային որ հայ օղլու հայ տպարանի մը մէջ հայատիպ թուղթի հոտով ռունգերը, թոքը լեցնէր, լիանա՛ր, հինէն հասնող կարօտի գգուանքով շոյէր լաթակազմ նոր հատորը որ պիտի ծնէր մամուլի տակէն, սեղմէր կուրծքին եւ գիշերը մէկ շունչով, օտարի աչքերո՛վ, անկողնի մէջ ընթերցէր զայն, ապա կոպերը ծանրանալէ ետք, անկողնակից սեղանիկին զետեղէր, լուսամփոփը խաւարելէն ետքն ալ գուր-գուրոտ ձեռքը անոր կպած պահելով, ի վերջոյ հանգիստ քունի մատչէր:

Ատկէ ետք հոգը չէր եթէ գիրքերը գրատուներու մէջ ծախուէր են, գրախօսականի արժանացէր են կամ ոչ: Թերեւս համեցող հին ընթերցողներէն մի քանի խենթեր, հայ գրքի կարօտով լեցուած, խուժէին «Սարդարապատ» կամ «Ապրիլ գրատուն», սրտերնին սեղմելու իր նոր հատորը, ու տագնապով բանային զայն, խորունկ շնչէին եւ տողերու ընդմէջէն փորձէին ընթերնել, հեղինակին հետ փոխադրուելու իրենց ապրած իրականութեան միւս կողմը, դէպի կեանքի եւ յաւերժութեան բոլորովին տարբեր շերտերն ու տարածքը:

Բարեդէպ մտածողութեամբ շրջանակուած իր պատկերաւոր սցենարները կոչուած էին զառանցանք ալ մնալու:

Ի վերջոյ, յոգնեցաւ վասն մեկենասի գլուխը պատէ պատ զարնելնրէն: Կիսամտաւորական ու թերթերու աշխատակից, իրեն ծանօթ Ճարպիկեանին դիմեց: Խնդրելու պէս պաղատեցաւ որ անտիպ վէպին մեկենաս ճառէր:

-Դուն ծանօթներ շատ ունիս, երեք չորս հազարի պիտի նային տպագրութեան ծախսերը...

-Մոռցի՛ր, հայ գիրքին դրամ տուող չկայ, խօսքը մէջերնիս հայերէն կարդացող ալ չմնաց...

-Արեանս երակները բացի այս գործը երկնած պահուս...

-Վախնամ, տիրող տնտեսատագնապի եւ ընթերցողներու չգոյութեան պատճառով, այսուհետեւ, հայ գրողը արեան իր երակէն աւելին ստիպուած է բանալ... ակնարկեց միջնորդ Ճարպիկեանը բազմիմաստ, զգուելի ժպիտով.

-Հերիք չէ՞, ողջ կեանքս զոհեցի հայ գիրին ու գրականութեան...

-Զգացական չդառնանք:

-Ուրախութենէս պիտի երգեմ...

-Սիրտդ ամուր պահէ, Գիրգոր ջան, տասերորդ հատորիդ հրատարակութիւնը ապահովուած համարէ:

-Ինչ ըսել կ՚ուզես...

-Բժիշկ բարեկամ մը կը խոստանայ մեկենաս կանգնիլ նոր հատորիդ, եթէ կարենաս բերանդ գոց պահել...

-Եղածը գրական գործի մը մեկենասութիւն է, պետական գաղտնիք չէ:

-Ամերիկա պատերն ալ ականջ ունին եւ ձեզի նման միամիտները նօթայով կը զրացնեն:

-Չեմ ուզեր վտանգաւոր գռիհներուն մոլորիլ...

-Ամէն բարերարութիւն իր գինը ունի... դուն քու առողջութենէդ լուր տուր, մեկենաս մեր բարեկամը ամէնէն առաջ քու առողջութեամբ հետաքրքրուած է: Ձինքը վստահեցուցի թէ հակառակ տարիքիդ դեռ *պոմպայի* պէս ես:

-Ո՛ղջ մնաս... պատասխանեց վիպագիրը, ու աւելցուց ,-

գիրքիս հրատարակութեամբ ցաւերս կ՚ամոքին... Ամէն ցաւ մարդուս հոգեկանին հետ կապուած է,- միամտօրէն փիլիսոփայեց վիպագիր Գիրգոր, -սակայն երբէն իվեր խեղճ գրողի մը առողջութեամբ սկսած են մտահոգուիլ նորին վսեմութեան մեկենա՛սք,- աւելցուց ան նեխածի հոտ առնելով:

-Բարեկա՛մ, ժամանակն է, որ հայ գրողներդ զգաստանաք եւ սկսիք դարուս արժեչափերով, ասանք քիչ մը առարկայականօրէն մտածել: Բժիշկ բարեկամս իր մեկենասութեան փոխարէն, ընկերային ապահովութեան հաշուոյն, վիրաբուժական անվնաս գործողութիւն մը պիտի կատարէ վրադ, այդ է փրկագինդ...

Վիպագիր Գիրգորին այլայլումը տեսնելով.

-Մի քանի օրէն տուն կը վերադառնաս ու կը սկսիս վայելել մեկենասութեան բարիքները...

Ճարպիկեանին խօսքերուն կառուցողական շեշտը ամրապնթեց վիպագիր Գիրգորին սիրտը: Յանկարծ թեթեւցած զգաց ան:

-Ալ վե՛րջ տուայտանքներու...,- մտածեց:

- - -

Վաղ առաւօտեան, խիստ գաղտնի միջավայրի մը մէջ տեղի ունեցաւ անյայտ հիւանդութեան վիրաբուժութիւնը:

Բժիշկ Մաֆիոզեան, վիպագիր իր զոհին օրկանիզմը նժդրակելով, ափսոսանքով նշմարեց զոյգ երիկամներէն մէկուն արդէն փճացած ըլլալը:

Չիմացաւ, ո՞րը արմատէն խլէր...

## ԿՈԼՅԱ ՏԵՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



(ԻՐԱՆ)

# ԻՄ ՎԱՏ ՕՐԸ

Վիրավոր շան պես լիզում եմ վերքերս: Օրը կես է դարձել: Դեմքս պատած է այտուցված կապտուկներով, մարմինս մղկտում է ցավից: Եթե ժամանակին զբաղված չլինեի սպորտով, հիմա երևի դժոխքում կլինեի. ո՞նց էին ծեծում շան տղերքը... Ես ձեր մերը... Ուժերի լարումով աստիճաններով բարձրանալիս՝ հիշեցի, որ երբ փոքր էի, սիրում էի չոփի ծայրով պատի վրա բարձրացող մրջյունին գետին գլորել, իսկ մրջյունը իրենից մեծ հատիկը ամուր բռնած բերանում, նորից համառորեն բարձրանում էր՝ վեր. վերջը ե՛ս էի հոգնում, նա բարձրանում, տեղ էր հասնում... Ես էլ բարձրանում էի՝ արյան կաթիլներ շաղ տալով աստիճանների վրա՝ բեռի փոխարեն կրելով ինքս ինձ... Չեմ կարծում՝ հարևանների մեջ գտնվի մեկը, որ վաղը, հետաքրքրված արյան լաքաներով, դրանց ուղեծիրը բռնած հասնի չորրորդ հարկի իմ բնա-

կարանն ու դուռը թակի: Մարդիկ այնքան անտարբեր են դարձել...

Հիմա միայն անտանելի ցավ եմ զգում մարմնիս տարբեր հատվածներում, բայց էլի կոպերս փակվում են: Երկու օր է՝ կարգին չեմ քնել: Նախանցյալ գիշեր, Սոնայի պատճառով մինչև լույս չքնեցի, խմեցի, հեռուստացույցը միացրի, կարդացի, նորից պառկեցի ու այն ժամանակ վեր կացա անկողնուց, երբ զարթուցիչը անտեղյակ իմ արթուն լինելուն՝ իր ողջ դաժանությամբ՝ բարձր ծղրտաց: Չգիտեմ առաջին անգամ ով է հնարել զարթուցիչը, բայց շատ էլ լավություն չի արել մարդկանց... Չէ՛, լավ չեմ...

Հիմա Սոնա անունը ամպերի տակ թաքնված լուսնի նման երբեմն դուրս է լողում գլուխս պատած մշուշի միջից ու առկայծում ուղեղիս մեջ, բայց, զարմանալի է, ոչինչ չեմ զգում, չկա սիրտս ծվատող մրմուռը, լոկ նրա անունն է մնացել: Ոչինչ չեմ զգում, երբ նույնիսկ կոշմարի պես աչքիս առաջ ցցվում են նրա մերկ սրունքներն ու Արտոյի մազմզոտ հետույքը, ջինս շալվարը կախ՝ ոտքերին: Դեմքը չէր երևում, բազմոցի թիկնակին տարածվել էր սև մազերի խուրձը: Իսկ ես մեխված՝ հայացքս հառել էի նրա կարմիր, բարձրակրունկ, «լիեժով» կոշիկներին: Չլինեին կոշիկները և վեր քաշված կարմրագույն շրջազգեստը՝ կմտածեի աղջիկը Արտոյի հերթական որսերից մեկն է: Նրանք այնքան էին տարված, որ ինձ չնկատեցին: Անաղմուկ փակեցի մեր զարդասենյակի դուռը, գլխապտույտ զգալով՝ հենվեցի միջանցքի պատին ու նայեցի այս ու այն կողմ: Ոչ ոք չկար, սրճարանը դատարկ էր, բոլորը գնացել էին, բայց ես չհեռացա, ակամա անցա պահակության, չէի ուզում մեկ ուրիշն էլ տեսներ այն, ինչ ես տեսա... Ասես, քաշվում էի նրանց փոխարեն:

Ճիշտ է, Սոնան ո՛չ իմ կինն է, ո՛չ էլ նշանածը, բայց Արտոյից

նման բան չէի սպասում: Ուղղակի նկատում էի, որ վերջերս գնահատող հայացքով է նայում Սոնայի բարեմասնություններին, սակայն մտքովս անգամ չէր անցնում, որ նա կշրջանցի ինձ: Դռան առջև սպասեցի այնքան, մինչև ներսից լսվեց Սոնայի բարձրակրունկների տկտկոցը մանրահատակի վրա. արագ հեռացա ու չհասկացա, թե ինչպես հասա տուն՝ մոռանալով խնջույքի հրավերը: Նրանք գիտեին, որ ես հրավիրված եմ ու կարծելով, որ գնացել եմ... Իսկ գուցե՞ դա առաջին անգամը չէր...

Հաջորդ օրը, տատանվում էի՝գնա՞լ, թե՞ մի պատրվակ հորինելով՝ մնալ տանը: Դառնացած ու ջարդված էի: Թարսի պես քույրս զանգեց ու էլի անիծեց իր բախտն ու ամուսնուն... Տան պատերը ճնշում էին, շնչահեղձ էի լինում: Ի վերջո, արկածախնդրությա՞ն, թե՞ պարտականության զգացումը հաղթեց: Ծրագրից առաջ, ամեն օրվա պես նստած էինք սրճարանի մեր սեղանի շուրջ ու գարեջուր էինք խմում: Բացի մեր երեքից, նվագող տղերքից էլ կային: Ինչքան փորձեցի անտարբեր ձևանալ՝ չստացվեց: Դա չվրիպեց Սոնայի ու Արտոյի հայացքից: Սոնան, ձեռքը փաղաքշաբար դնելով ուսիս ու իր խաժ աչքերի ողջ հրապույրով նայելով աչքերիս մեջ՝ հարցրեց.

-Մո՛ւշ, ինչի՞ ես թթվել:

Արտոն քննախույզ ու սպասողական աչքերը հառել էր դեմքիս: Ինչքան հեղհեղուկ են մարդկային հարաբերությունները. բավական է մի դիպված, ոմանց տեսանկյունից ոչ այնքան կարևոր ու հրատապ, որ ամեն բան հօդս ցնդի: Երեկ թվում էր, թե մեր ընկերությունը կգոյատևի դարեր... Բայց հիմա... Թեև այդ պահին, ստացածս հարվածից ու անքնությունից ուղեղս կարգին չէր աշխատում, բայց գիտակցում էի, որ շատ բան է կախված իմ պատասխանից: Չգիտեմ,

մեր աշխատանքի բնո՞ւյթն է այդպես, որ կառչած ենք մնում մեկս մյուսից, թե՞ իրոք ընկերական միացությունն է զորեղ. մի կերպ տիրապետելով ինձ՝ ժպտացի ու ասացի.

-Ոչինչ, լավ եմ, ինչի՞ եք էդպես աչքներդ չռել:

-Մո՛ւշ, երևում է, մի բան այն չի,- ասաց Արտոն:

Համոզված էի, որ այդ պահին նրան տանջում էր խիղճն ու կասկածը... Աղոտ կռահում էր, որ ես տեղյակ եմ իր ու Սոնայի միջև տեղի ունեցածին: Իսկ եթե իմանար, որ ականատես եմ եղել, տեսե՞լ եմ... Չգիտեմ ո՞նց կհակադարձեր, բայց մի բան պարզ էր, որ մեր տարիների ընկերությունը կխախտվեր մի... աղջկա պատճառով: Մի աղջկա՞: Բայց այդ աղջիկը նույնպես շատ թանկ էր ինձ համար: Ակամա հայացքս դարձրի դեպի Սոնան. նրա դեմքին դժվար էր որսալ մեղքի կամ դավաճանության նշույլ անգամ: Ոչնչով չէր տարբերվում երեկվանից: Չէ՞, կանայք կարողանում են վարպետորեն քողարկել իրենց զգացումները, կամ՝ պարզապես իրենց երջանիկ են զգում սիրո եռանկյունու մեջ հայտնվելիս, մանավանդ, եթե դրա մյուս անկյունները զբաղեցնում են երկու առնական տղամարդ: Զգում են բավարարվածություն, հպարտություն և սեր՝ թեկուզ անհավասար... Նրանք պատրաստ չեն ձեռքից բաց թողնել երկուսին էլ: Չգիտեի ինչ ասել. գլուխս խոնարհեցի, ու աչքս ընկավ Սոնայի բարետես ծնկներին ու կարմիր կոշիկներին: Գոնե կարմիր չլինեին... Կոշմարային տեսարանը նորից ցցվեց աչքերիս առջև ու արյունը գլուխս խփեց, այն էր, ուզում էի վեր կենալ ու բռնել Արտոյի օձիքը, բայց կարողացա՛, կարողացա զսպել ինձ: Գուցե թույլ ու անողնաշար մարդ եմ: Գուցե մեկ ուրիշը լիներ իմ փոխարեն՝ պահակություն չէր անի, ներս կմտներ, հանկարծակիի կբերեր ու շանսատակ կաներ երկուսին էլ:

Բայց ո՛չ, եթե թույլ լինեի՝ քաջություն չէի ունենա անծանոթ կնկան «բոզ» անվանել ու ծեծ ուտել... Ուղղակի խանդաղատանք եմ զգում Արտոյի նկատմամբ, իսկ Սոնային... Սոնան տարբեր է, առանց Սոնայի աշխարհը գրոշ չարժե...

-Առավոտյան քույրս էր զանգել, էլի կռվշտել է Գոռի հետ, հեռախոսի մեջ լացում էր,- ասացի գլուխս կախ,- երեխաները մեղք են:

-Երևի էլի խմած է եղել,- ասաց Սոնան:

-Հո չի՞ ծեծել,- հարցրեց Արտոն... հանգստացած: Երևում էր, որ կասկածները ցրվել են ու վերագտել է իրեն: Բայց էլի, ինչ-որ ծուռ ու հարցական էր նայում ինձ: Նա գիտեր, որ ես չեմ սիրում խոսել մեր ընտանեկան հարցերի շուրջ:

-Հա, խմած է եղել ու երեխաների աչքի առաջ ծեծել:

-Գոռը էդպիսին չէր,- ասաց Սոնան,- էս կյանքը բոլորին գժվեցրել է:

Արտոն լուռ էր:

-Դու ի՞նչ արեցիր,- հարցրեց Սոնան:

-Ինչ պիտի անեի, խոստացա, որ կխոսեմ Գոռի հետ:

-Ասես, չասես, մարդու տրամադրությունը փչանում է,- ասաց Արտոն ու էլի հարցական նայեց ինձ ու ավելացրեց:

-Երեկ ծխախոտն ու վառիչդ թողել էիր սենյակում:

-Հա, ուզում էի վերցնել, բայց փոշմանեցի:

-Խնջույքը ո՞նց անցավ,- ձեռք չէր քաշում նա:

-Չգնացի:

-Ո՞նց:

Սկսում էի բարկանալ. Ի՞նչ է, ուզում է գոռամ, որ եկա ծխախոտատուփս վերցնելու, դուռը բացեցի ու տեսա էդ տեսարա՞նը...

-Դե առանց սիգարի ո՞նց գնայի,- ասացի ծռված ժպիտով...

Արտոյի դեմքի վրայով մի ստվեր անցավ: Լավ է, Սոնան չլսեց մեր խոսակցությունը, որովհետև խոսքի էր բռնվել տղերքից մեկի հետ մի նոր երգի շուրջ: Արտոն լուռ վերցրեց կիթառն ու բարձրացավ բեմ...

Զանգում էին բջջայինիս: Նվագախմբի տղաներից էր՝ Սերժը:

-Մուշե՞ղ, քեզ ի՞նչ է պատահել, ծեծե՞լ են:

-Քեզ ո՞վ ասաց:

Ծեծ ուտելը հերոսություն չէ, հատկապես ինչ- որ անկանխատեսելի, ապուշ պատճառով: Ամոթ էի զգում. «Հիմա սաղ աշխարհը կիմանա», անցավ մտքովս ու տագնապեցի:

-Արամը՝ մեքենաների պահակը, - ասաց Սերժը, -ասում էր, որ մեքենադ չես տարել, ինքը օգնել է քեզ ու տաքսիով տուն ճանապարհել:

-Հա:

-Բայց ընդունիր, որ արածդ հիմարություն էր, շեֆը կատաղել է:

-Հա:

-Ասում էր՝ տեղն է, ծեծը քիչ էր. քո փոխարեն ինքը գետինն է մտել... Գալո՞ւ ես:

-Չէ,-ասացի ու անջատեցի կապը:

Շեֆն էլ արդեն տեղյակ է... Բոլորի բերանն եմ ընկնելու...

Նորից զանգ: Այս անգամ Սոնան էր. որոշեցի չպատասխանել, բայց չդիմացա:

-Մուշ, երեկ ինչի՞ չեկար մեզ հետ:

-Հավես չկար:

-Դե, շատ ես բարդացնում ամեն բան, ամուսիններ են, կռվել են, կհաշտվեն, մեջտեղում երեխա կա... սիրող ուրախ պահիր. բայց,

ապրե՛ս, երեկ գիշեր մեռա ծիծաղից, թույն ես, թույն... Շեֆը գլուխը կորցրել էր:

Ես լուռ էի: Տանել չեմ կարողանում կանանց մայրական հոգատարությունը:

-Մուշ, ինչի չե՞ս խոսում:

-Բերանս ցավում է:

-Բերա՞նդ... Ինչեր ես դուրս տալիս, հո չես գժվել:

-Դե, եսիմ:

-Մո՛ւշ... Մո՜ւշ, ինձ սիրո՞ւմ ես:

Նորից արյունը գլխիս խփեց, ուզում էի հայհոյել, ասել բերնիս եկածը, բայց շատ արագ փուքսս նստեց, տարօրինակ անտարբերություն ու դատարկություն զգացի: Չէ, ատելություն չէի զգում, սուտ է, ատելություն չկա, սիրում ես կամ դադարում ես սիրել՝ սիրելով հանդերձ... Զգացմունքներին անուն տալը մարդկային խենեշության ևս մի ապացույց է... դրանք անուն չունեն. տարբեր են, աննախադեպ և արտառոց: Տեսնես, նախամարդը գիտե՞ր, թե ինչ է սերը կամ ատելությունը... Չգիտեր, բայց ավելի լավ էր հասկանում դիմացինին իր ուժեղ բնազդով, մոտենում էր սիրած էակին, մռութը քսում, լիզում... ու դրանով ասում շատ բան... Հետո հայտնվեցին հոգեբաններն ու սկսվեց զգացմունքների տարանջատումն ու անվանակոչությունը՝ հացահատիկների պես... Մոգոնեցին զանազան տերմիններ, որոնք ոչ թե օգնում, այլ թելադրում են մարդուն կողմնորոշվել ըստ այնմ: Արդյունքում թուլացավ մարդու բնազդը, Սոնայի բնազդը... հիմա ասում են «սիրում եմ» ու ոմանց կարծիքով այդ երկու բառով շատ բան ես ասում, բայց ոչինչ էլ չեն ասում, խաբում են թե՛ իրենց, թե՛ դիմացինին...

-Մո՛ւշ, Մո՛ւշ, ասա՛, որ սիրում ես ինձ, կրկնեց նա:

Հասկացա, որ նա դեռ տեղյակ չէ գլխիս եկածին: Երբ ես խոսում էի շեֆի հետ, կամ ավելի ճիշտ շեֆը գոռում էր ինձ վրա, նրանք արդեն գնացել էին:

-Սիրում եմ...,- ասացի մեքենայաբար, ինչպես սովոր էի ասել նախկինում: Եվ չէի ստում, որովհետև այդ պահին մի տաք ալիք եկավ լցրեց հոգուս դատարկությունն ու չեզոքացրեց անտարբերությունս: Ուզում էի հավաստիացնել, որ նա ամեն ինչ է ինձ համար, բայց չկարողացա արտաբերել և ո՛չ մի բառ... Այդ տեսարանն իր ահավորությամբ ու դաժանությամբ, անկոչ հյուրի պես եկավ ու էլի ցայտուն ցցվեց աչքերիս առջև: Ինչքան կուզեի, որ դա չլիներ, որ դա լիներ մի վատ երազ... Պարզ է, դա այլևս ինձ հանգիստ չի տա և ոչ մի բան չի լինի նախկինի պես... Թերևս սա առաջին անգամն էր, որ անջատեցի կապն ու բջջայինը՝ առանց սովորական մնաս բարովի ու համբույրների փոխանակման: Գծի այն կողմում Սոնան էր, իմ Սոնան, երևի շշմած իմ արտառոց վերաբերմունքից, երևի Արտոյի պես՝ պաշարված կասկածներով ու կռահումներով...

Քանիերորդ անգամը լինելով մոտեցա հայելուն: Քթիս արյունը վաղուց էր լերդացել, բայց շրթունքիս և աջ աչքիս ուռուցքը չէր իջնում: Նման էի արհեստավարժ բռնցքամարտիկի:

Սոնան ինչո՞ւ էր ցանկանում հավաստիանալ, որ սիրում եմ իրեն և ինչի՞ն էր պետք իմ սերը, եթե նա տրվել էր Արտոյին... Զոհո՞ւմ էր արածի համար, հազիվ թե: Խելքին ավելի մոտ էր թվում՝ ինձնից խոսք քաշելու նրա ձգտումը. երևի նրան էլ Արտոյի պես տանջում էր մեղքի զգացումը... Չէ՞ որ բացի սիրուց կար նաև ընկերական մտերմությունը: Չէ, իմ սերը չէր, որ հետաքրքրում էր Սոնային. հավանա-

բար Արտոյի հետ կենակցելուց հետո տուփացած ու բավարարված էգի մոլուցքով, նա... բարությամբ էր տրամադրվել իմ նկատմամբ... Զուր չէր, որ երեկ գիշեր նրբանկատ գտնվեց ու կանխելով ինձ՝ Արտոյի հետևից բարձրացավ բեմ:

-Դու անտրամադիր ես, հանգստացիր, առաջինը ես կերգեմ, -ասաց ժպտալով ու շոյելով գլուխս:

Ես մենակ մնացի նվագախմբի սեղանի մոտ իմ մտքերի հետ: Արտոյի դեմքից չէր իջնում մտահոգ արտահայտությունը: Այդ պահին, տարիներ անց, առաջին անգամ, մտածում էի այն մասին, թե ինչու երգիչ դարձա: Հայրս մերժեց կիթառ գնել, ստեց, որ փող չունի, բայց ուներ, որովհետև մեկ ամիս չանցած քրոջս համար դաշնամուր գնեց: Ես նախանձով լցվեցի Արտոյի նկատմամբ, երբ մի օր ինձ կանչեց իրենց տուն ու երջանիկ դեմքով պատյանի միջից հանեց փայլփլուն կիթառն ու մատով հպվեց լարին: Այդ ձայնը կախարդական ներգործություն ունեցավ ինձ վրա: Այդ օրվանից սկսվեցին մեր «փորձերը»: Արտոն նվագում էր, ես նմանակում էի հայտնի երգիչներին ու դա լավ էր ստացվում ինձ մոտ: Բոլորը գովում էին իմ ձայնային տվյալները: Փոխեցի մազերիս հարդարանքը: Տանը շարունակվում էր կռիվ-կոտորոցը...Երկրում նոր բարքեր էին, տղաները չէին սովորում, սովորող տղաներին ծեծում էին չսովորողները: Այդ ծեծե՞լը... անպատիժ ծեծելը... Գոռը ծեծում է քրոջս, նույնիսկ երեխաներին, ծեծում են, ինքնակամ դատաստան տեսնում ուրիշների հետ, ծեծելով՝ սպանում... Չէ՞ որ դա վայրենություն է, վայրենիներին կամ նախամարդուն բնորոշ արարք: Ո՜ւխ, ինչքան եմ այսօր հիշում նախամարդուն, երանելի ժամանակներ են եղել:

Սոնայի հետ ծանոթացանք պատահաբար, երբ արդեն առաջին

ելույթներն էինք ունենում մի հասարակ սրճարանում: Նա էլ էր երգում: Ես առաջին հայացքից սիրահարվեցի Սոնային, ինձ հմայեց իր կրծքային ձայնը, ճիշտ իմ ուզածն էր, իմ երազանքների աղջիկը: Սկսեցինք հանդիպել մենակ կամ Արտոյի հետ: Երբեք չեմ մոռանում մեր առաջին գրկախառնությունն ու համբույրը, սավառնում էի երկինքներում... Ակամա ցուցամատով շոշափեցի վիրավոր շրթունքս ու քիչ էր մնում ցավից գոռայի: Չէի կարողանում ուտել, թեև սառնարանը լի էր ուտելիքով: Խոհանոցի գզրոցում մի եղեգ գտա ու դրա օգնությամբ նռան հյութ խմեցի:

Սոնան ցած իջավ բեմից. իմ հերթն էր: Պետք է երգեի, փախուստի ճանապարհ չկար: Սա մեր արհեստի անմարդկային կողմն է: Պաշտոնյան հիվանդ լինելիս բացակայում է աշխատանքից, ու այդ բացակայությունը «հարգելի» է համարվում, բայց ոչ ոք չի մտածում այն մասին, որ երգիչը կարող է բացակայել, երբ հոգին է հիվանդ, հոգու հիվանդությունը հարգելի պատճառ չէ՝ ֆիզիկապես առո՞ղջ ես, պետք է երգես, ուզես-չուզես պիտի երգես... Գոնե գործդ երգելը չլիներ, լիներ օրինակ ասմունքել, պարել կամ պարզապես գլուխ հարդարել: Երգը, այն էլ սրճարանում, ուրախության արտահայտություն է, երգում ես, որ մարդիկ պարեն, ուրախանան, ու պիտի երգես այն, ինչը նվագում են... Ինձ զգում էի վանդակն ընկած թռչունի պես: Մի կերպ բարձրացա բեմ ու սկսեցի երգել մեքենայորեն, ռոբոտի նման. մի քանի պարող զույգեր լքեցին պարահրապարակը...

Հնչեց դռան զանգը. կաղալով վեր կացա ու դուռը բացեցի: Արտոն էր: Լուռ կանգնել էր դռան շրջանակի մեջ ու շշմած ու նույն մտահոգ արտահայտությամբ նայում էր դեմքիս:

-Ներս արի, ինչ ես ցցվել, -ասացի անվույթ:

-Արա՛, էս ի՞նչ ես արել... էս ի՞նչ վիճակ է:

-Ծեծել են:

-Ո՞վ, նրա՞նք...

-Հա:

-Ես էդպես էլ մտածում էի, պատվի հարց էր, մեր աբուռն էլ գնաց:

Իրավացի էր, բայց գոնե գիտակցո՞ւմ էր, որ ինքն էր այս ամենի գլխավոր պատճառը... Ճիշտ այն պահին, երբ այդ կինը մոտեցավ ինձ ու հանրածանոթ «Ամենալավը դու ես» երգը պատվիրեց, նկատեցի, որ Սոնան նայում է Արտոյին ու ժպտում: Զարացել էի, Սոնայի կարմիր կոշիկներն ու բացված ոտքերը չէին հեռանում աչքերիս առջևից: Կինը գեր էր, մինի հագած՝ տգեղ, թմփլիկ ոտքերով ու պատկառելի հետույքով, թանկարժեք վզնոցների խուրձը վզից կախ, թանձր շպարով: Փոքր աչքերը շաղվում էին գինուց. երգը պատվիրելիս՝ թեթև օրորվում էր ու բերանից տհաճ հոտ էր բուրում: Ոչնչից հարստության հասած ու դրա փայլից կուրացած մարդու տիպար ներկայացուցիչ էր՝ մի խոսքով օլիգարխի կին. դա էր վկայում հեռվում կանգնած երկու թիկնապահների գոյությունը: Ինձ չարացնում էր նաև կնոջ կեցվածքը, ասես աշխարհի ու տիեզերքի տերը լիներ... Այդ երգը քիչ առաջ երգել էի, բայց կնոջ պատվերը փոխանցեցի Արտոյին: Սկզբում ամեն բան լավ էր ընթանում. անավյուն ու ռոբոտի պես, բայց երգում էի ու հազիվ էի հասցնում բարձր նոտաները: Ու չհասկացա, հիմա էլ չեմ հասկանում, թե ո՞նց այդ բառը դուրս մղվեց կոկորդիցս: Չէ՞ որ երգում էի ռոբոտի պես, իսկ ռոբոտը վերարտադրում է այն, ինչը տրվել է իրեն: Բայց այդ պահի՜ն... այդ պահին ռոբոտից վերածվեցի ինքս ինձ... Վիրավոր հոգով, մուռը սրտիս, ընդվզած աշխարհի, Գոռի, Արտոյի ու Սոնայի դեմ՝ սրտիս մեջ կուտակ-

ված ողջ դառնությունն ու լուտանքը մի բառով թափեցի կնոջ գլխին... և այդ չարաբաստիկ բառը դուրս եկավ իմ, ի՛մ, այլ ոչ ռոբոտի շրթերից, և ոչ թե մեկ, այլ կրկներգի հետ, մի քանի անգամ...

*Ամենաքոզը դո՞ւ ես,*

*Ամենաքոզը դո՞ւ ես...*

Զգացի, որ մեր ռեստորանային համալիրում գտնվող բոլոր մարդկանց հայացքները մեխվեցին ինձ վրա, սրահում տիրեց անսովոր լռություն, մի երևույթ, որ երբեք չէր պատահել սրճարանային երգչի իմ ողջ կարիերայի ընթացքում: Սրճարանը դահլիճ չէ, որ բոլորը անշշուկ քեզ լսեն, դու երգում ես, ոմանք լսում են ուշադիր, ոմանք զբաղված են ուտելով կամ խոսելով: Առաջին պահին թաքուն հրճվանք էի զգում, բայց երբ անջատեցին միկրոֆոնը ու ձայնս խլացավ, նոր ըմբռնեցի խնդրի ողջ լրջությունը: Երգը կիսատ թողած՝ դանդաղ իջա բեմից ու ներկաների զարմացած ու նախատական հայացքների տակ, վիրավոր գազանի պես, անցա զարդասենյակ ու փռվեցի նույն բազմոցին, որի վրա երեկ գիշեր Արտոն և Սոնան էին...

Հյուրերի սեղանի մոտից անցնելիս՝ տեսա կնոջ այլայլված ու ներվայնացած դեմքը...

-Քեզ ե՞նք ծեծեցին,- հարցրեց Արտոն:

-Շեֆի մոտից դուրս գալուց ու մեքենայիս մոտենալիս: Դուք գնացել էիք, իսկ նրանք ինձ սպասում էին:

-Ուշ էր, հոգնած էինք, -ձայնիս մեջ նախատական երանգներ որսալով՝ արդարացավ Արտոն:

... Ես մնացի, չգնացի, քեզ մենակ չթողեցի, երբ տարիներ առաջ դու հայիոյեցիր մի հարբած հյուրի ու դրսում ծեծկռտուք եղավ: Ծեծ կերանք, բայց որքան ուրախ էինք, որ չընկրկեցինք ու փախուստի

մատնեցինք նրանց: Հետո մեկս մյուսի վերքերը դարմանեցինք ու մի լավ խմեցինք նշելով մեր հաղթությունը...

-Շեֆն ի՞նչ ասաց:

-Շեֆը գոռգոռաց, ապտակեց ու ասաց, որ էլ աչքին չերևամ:

-Քանի՞ հոգի էին:

-Երկու. կնոջ թիկնապահներն էին: Ես չէի դիմադրում... Եթե Արամը օգնության չհասներ, կսպանեին...

-Արա՛, դու խե՞նթ ես,- ձայնը բարձրացրեց Արտոն:

Շեշտակի նայեցի նրա աչքերի մեջ՝ լուռ, երկար...

Ուզում էի ասել, որ դու, դու և Սոնան ինձ խենթ դարձրիք, բայց խոսելու հավես չկար, դրանով ի՞նչը կփոխվեր, ամեն բան վերջացած էր:

Արտոն հայացքը փախցրեց:

-Մուշ, դո՞ւ...

Չսպասեցի, որ խոսքն ավարտի.

-Հա, ծխախոտս վերցնելու համար եկա ու տեսա...

Արտոն ցնցվեց: Նայում էր ինձ քարացած: Հետո դանդաղ ու գլխիկոր քայլեց դեպի դուռը, բացեց ու առանց ետ նայելու դուրս եկավ...

Կաղալով մոտեցա ու նրա հետևից փակեցի դուռը...

*Նոյեմբեր, 2012 թ.*

## ԱՒԵՏԻՍ ՀԱՃԵԱՆ

(ԶՄՆ)

# ՀԱՐԱՒԷՆ ԵԿԱԾ ԱՂՋԻԿԸ

Այդ օրէն արդէն քսանհինգ տարի անցած ըլլալու է: Ընկերուհի մը՝ Էվա Սանամեան, Չիլէ կատարած իր այցելութեան պատկերատետրը կը ցուցնէր Նիւ Եորքի իր յարկաբաժնին մէջ: Լուսանկարներէն մէկը, որուն մէջ հաստ յօնքերով, ծովի գոյն խոշոր աչքերով, 15 կամ 16 տարեկան ժպտերես աղջիկ մը կեցած էր խոնարհօրէն, ուշադրութիւնը գրաւեց Լեւոն Պարսամեանին եւ իր կնոջ: Աղջկան մորթը սպիտակ էր, գրեթէ թափանցիկ, եւ դէմքը անձրեւի կաթիլի նման նուրբ: Շուրջը նստած էին խումբ մը տեղացիներ, որոնք իր հակապատկերն էին, ցցուած այտոսկրներով եւ թուխ երեսներով, տեղացի հնդիկներու դիմագիծով:

Խմբանկարը, սակայն, հարազատութիւն կ՚արտացոլէր: Էվա

Սանամեան սպաներէն չէր գիտեր եւ այդ մարդոց հետ չէր կրցած հաղորդակցիլ: Ոչ ալ կը յիշէր գիւղին անունը: Վստահ էր, սակայն, որ այդ ծաւի աչքերով աղջիկը անդամ էր այդ ընտանիքին, որ լեռներուն մէջ կորսուած այդ գիւղակին միակ սրճարանը կը բանեցնէր:

–Թերեւս հարսերնին է, –ըսաւ Էվան:

Ուրիշ բան մըն ալ Պարսամեաններուն հետաքրքրութիւնը դրդած էր՝ խալ մը աղջկան շրթունքին ծայրը:

–Ճիշդ Արսինէին պէս, –ըսաւ Լեւոնին կինը:

–Կը կարծե՞ս, –հարցուց Էվան զարմացած: –Ինչպէ՞ս չանդրադարձայ...

Լեւոն Պարսամեանին եղբայրը ճարտարագիտական գործով Չիլէ հաստատուած էր 1973-ին: Այդ երկրի հարաւային շրջանը ճամբորդութեան մը ընթացքին, կնոջ եւ աղջնակին հետ, 1979-ին, զիրենք փոխադրող փոքր օդանաւը ինկած էր լեռնային անտառներու մէջ: Օդանաւին կտորները երբէք չէին գտնուած, ո՛չ ալ դիակները օդանաւորդին, Լեւոնին եղբօր, կնոջ եւ փոքրիկ զաւկին՝ Արսինէին, որ այդ ժամանակ երեք կամ չորս տարեկան էր:

Էվայի լուսանկարին խորհրդաւոր աղջկան նկարը դրդեց, որ Լեւոն Պարսամեան եւ կինը Չիլէ ճամբորդեն այդ տարի –1987-ին կամ 1988-ին– աշխարհի վերջին ծայրը –Finis Terrae– Հարաւային Ամերիկայի այդ անկիւնին մէջ հետապնդելու իրենց կորսուած հարազատին հետքը: Արդեօ՞ք այդ աղջիկը իրենց Արսինէն էր, կը մտմտային Պարսամեանները: Առաջին անգամը պիտի չըլլար, որ օդանաւային արկածէ մը վերապրողներ ըլլային Չիլէի մէջ:

Ճարտարագէտին հարազատները իրենք զիրենք յուսադրեցին Անտէսի լեռնաշղթային վրայ պատահած ծանօթ արկածին յիշատակով, 1972-ին, երբ Ուրուկուայի օդանաւ մը ինկաւ, եւ վերապրողները, –քսա՞ն, երեսո՞ն հոգի– երկու ամիս լերան գագաթը տոկացին սաս-

տիկ ցուրտին, անօթութեան եւ ձիւնամրրիկներուն (սնանելով մարդակերութեամբ՝ սոսկումով կը յիշէր Լեւոն) մինչեւ որ վերապրողները գտնուեցան եւ փրկուեցան: Չիլէի բանակին եւ մամուլին օգնութեամբ, շաբաթներու որոնումէ վերջ, Պարսամեանները գտան ծաւի աչքերով երիտասարդուհին Այսէն կոչուած հարաւային շրջանի մէկ գիւղակին մէջ: Գրեթէ կասկած չկար, որ երիտասարդուհին Արսինէ Պարսամեանն էր, Լեւոնին եղբօր աղջիկը:

Թարգմանիչի միջոցով, որ Չիլէի օդուժը տրամադրած էր, աղջիկը որդեգրող ընտանիքը բացատրեց, որ իրենց շունը գտած էր փոքրիկը, անտառի մէջ կատարուած արշաւի մը ժամանակ: Աղջկան անունը Գարոլինա դրած էին եւ բոլորը զինք Գարիթօ կը կոչէին:

Ընտանիքը բնաւ ընդդիմութիւն չցուցաբերեց աղջկան վերադարձին՝ իր հարազատներուն մօտ, Նիւ Եորք, թէեւ Արսինէն (կամ Գարիթոն) խոր յուզումով բաժնուեցաւ իր չիլեցի ընտանիքէն: Իր իսկական հօրմէն եւ մօրմէն որեւէ յիշատակ չունէր: Գառնուկի պէս որ մատաղ ըլլալու ճակատագրին հաշտ է, աղջիկը իր հօրեղբոր եւ անոր կնոջ հետեւեցաւ: Սպաներէնէ զատ ուրիշ լեզու չէր գիտեր: Չիլեցի ընտանիքը մերժեց ընդունիլ վարձատրութիւն մը ընելու առաջարկը, զոր ազնուօրէն կատարեց Լեւոն Պարսամեան:

–Աղքատ ենք, բայց պատուաւոր, –ըսաւ, զուսպ բարկութեամբ, չիլեցի ընտանիքին հայրը: Չէր գիտեր հայութիւնը ի՞նչ էր եւ յայտնի էր, որ հոգն ալ չէր, թէեւ լռութեամբ մտիկ ըրաւ Լեւոնի պատմածները հայութեան մասին, Եղեռնին շուրջ, պատմութեան առաջին քրիստոնեայ պետութիւնը ըլլալուն մասին: Նիւ Եորքի անունը անգամ երբեք չէր լսած: Անտարբեր արտայայտութեամբ հետեւեցաւ Միացեալ Նահանգներու նկարագրութեան ("La Tierra Prometida", ըսաւ. Լեւոնը հարցուց թարգմանիչին ի՞նչ ըսած էր՝ "The Promised Land", պատաս-

խանեց. «Երկիր Աւետեաց». այդ պահուն. Լեւոն անդրադարձաւ անժպիտ չիլեցի մարդուն ծաղրական շեշտին):

Չբաժնուած. չիլեցի մարդը խօսք մը աւելցուց. զոր թարգմանիչը չկրցաւ կամ չուզեց անգլերէնի թարգմանել. բայց Լեւոնը մէկ բառը հասկցաւ. "destino". անգլերէն "destiny" բառին շատ մօտ: «Ճակատագիր. այո՛», մտածեց Լեւոնը. եւ գլուխը թեքեց ի նշան համամտութեան:

Նիւ Եորք հասնելուն պէս. Լեւոն եւ կինը Արսինէն տարին Թայմզ Սքուէր: Լոյսերը. բազմութիւնը. աղմուկը Արսինէն շշմեցուցած էին: Սարսափահար կը դիտէր շրջապատը:

–Քու քաղաքդ է. դուն այստեղ ծնած ես. Արսինէ.–ուրախութեամբ կ'ըսէր Լեւոնը իր եղբօր աղջկան. որ հայերէն կամ անգլերէն մէկ բառ չէր հասկնար:

Յանկարծ. անծանօթ մը Արսինէին թեւը թօթուեց կոպտութեամբ.

–Have you found yourself? Do you know who you are?

Արսինէն՝ վախցած. սկսաւ լալ: Լեւոնը հրեց անօթեւանի տեսքով գարշահոտ մարդը. աղտոտ ու խիտ մօրուքով եւ երկար մազերով. որ Յիսուսի պատկերով թռուցիկներ կը բաժնէր: Մարդը հեռացաւ. անէծքի նմանող հարցումը անգամ մը եւս զայրոյթով ուղղելով սոսկացած Արսինէին. եւ բազմութեան մէջ անհետացաւ:

Գացին Արսինէին ընտանեկան տունը. ուր ան մանկութեան առաջին տարիները անցուցած էր: Լեւոն Պարսամեանին մայրը պատուհանին ետեւ նստած էր:

–Մա՜մ. Արսինէն է. եղբօրս աղջիկն է. – ըսաւ Լեւոնը. –թոռնիկդ է. մա՜մ:

Ծերունի կինը կորսուած նայուածքով կը նայէր Արսինէին:

–Աղուորիկ աղջիկ է. – ըսաւ պառաւը.– հա՞յ է մը:

–Մամ. Արսինէն է. թոռդ:

Լեւոնը ձեռքով նշան ըրաւ Արսինէին, փորձելով բացատրել, որ մայրը յիշողութիւնը կորսնցուցած էր: Արսինէն՝ ամօթխած, գետին նայեցաւ:

–Ո՞վ ես աղջիկս, հա՞յ ես մը,– կը հարցնէր ծերունին, – անունդ ի՞նչ է:

Համեմներուն բուրմունքով հրապուրուած՝ Արսինէն մտաւ խոհանոց: Հայաստանցի սպասուհին աղտորով ճաշ կը պատրաստէր: Արսինէն զարմացած դիտեց հին կաւէ ամանը, որուն վրայ SUMAK գրուած էր: Մէկէն ճչաց:

Համեմին սուր հոտը Արսինէին հնագոյն յիշատակները արթնցուցած էր: «Մէմա՜, մէմա՜» պոռալով վազեց մեծմօր քով եւ ծերունիին շապիկին աջ թեւը սոթտելով, կնոջ Երուսաղէմի ուխտագնացութեան խաչի դաջուածքը յայտնաբերեց եւ սկսաւ յուզումով համբուրել պառաւին թեւերը, այտերը, մինչ ցնղած մեծ մայրը դատարկ արտայայտութեամբ պատուհանէն դուրս կը նայէր: Լեւոն յիշեց, որ Արսինէ, երբ լեզուն նոր սկսած էր բացուիլ, մեծմօրը «մէմա» կը կանչէր, եւ սրտին մէջ խոր գոհունակութիւն զգաց, որ մահացած իր եղբօր աղջիկը՝ Արսինէն իր հարազատ ընտանիքը վերագտած էր:

Արսինէն, սակայն, իր նոր միջավայրին չէր կրնար վարժուիլ: Լեզուներ սորվելու համար դժուարութիւն ունէր: Հայերէն հազիւ մէկ-երկու բառ գիտէր եւ տարրական անգլերէն մը կը ջարդէր մեծ չարչարանքով: Աւելի կ՝ախորժէր իրենց թաղամասի Լատին Ամերիկացի, սպանախօս գաղթականներուն բարեկամութենէն, որ զինք «Լա Չիլենիթա» (չիլեցի աղջիկը) կը կոչէին, քան իր հարազատ ընտանիքէն:

Օր մը, սպասուհին տան վերի յարկէն «Արսինէ՜, Արսինէ՜» կը կանչէր:

–Գարի՛թ, նօ՛ Արսինէ, Գարի՛թ, պատասխանեց զայրացած Ար-

սինէն: Բարկութեամբ լարուած, սպաներէնով խօսքեր աւելցուց իր իրայատուկ, քաղցրահնչիւն շեշտով:

Այդ գիշեր, Լեւոն ծերունի մօր ձեռքին մէջ պահարան մը գտաւ, վրան «Mema» գրուած: Մէջի նամակը սպաներէն գրուած էր: Լեւոն հատուկենտ բառեր միայն հասկցաւ. Dios, amor, soy chilena, destino: Նամակը ստորագրած էր Carito-ն:

Քանի մը դրացիներ ըսին, որ իրենց ապրած թաղամասի Մեքսիկացի տղու մը հետ փախած էր:

Ուրիշներ կ՚ըսէին, որ Չիլէ վերադարձած է:

–Մեքսիկա գնաց սիրահարին հետ, – կը պնդէր Լեւոնին մօր սպասուհին:

Այդ տարուան ձմռան, 1988-ի կամ 1989-ի կաղանդի օրերուն, իրենց ծանօթներէն մէկն ալ լսած էր, որ Արսինէին նման աղջիկ մը տեսած էին Շիքակոյի սպանախօս գաղութի մէկ սրճարանին մէջ: Այս ծանօթին եղբայրը պատահաբար հայ ընկերոջ մը հետ կը գտնուէր հոն: Իրենց խօսած պահուն՝ քովի սեղանը նստած ծաւի աչքերով եւ սպասուհիի տարազով երիտասարդուհի մը, հայերէն խօսակցութիւնը լսելով բացականչած էր.

–Հայ, նօ՞, բարե՛ւ...

Տղաքը դեռ չէին կրցած հակադարձել, երբ աղջիկը փողոց ելած ու բազմութեան մէջ անհետացած էր:

***Նիւ Եորք***

## ԳԷՈՐԳ ՊԵՏԻԿԵԱՆ

(ԼԻԲԱՆԱՆ)

# ՀԱԼԷՊԻՆ ԵՒ ՀԱԼԷՊՈՎ

Երեկոյ է ու «ֆէյսպուք»ին դիմաց նստած ազահօրէն կը դիտեմ ներքին հարցերու մէջ ճարճատող ծննդավայր Հալէպէս հասած, ինծի տրամադրուած եւ ցուցադրուած վերջին նկարները: Ու ինքնաբերաբար տարիներու հեռաւորութենէն յուզումով, կարօտով եւ լուսաւոր զգացումով եզակի անհանգիստ պահեր կը սկսիմ ապրիլ:

Անօրինակ տաղտուկ մը բոյն կը դնէ մտքիս մէջ: Կը զգամ նաեւ, որ ներքին ձայներ սկսած են անհանդարտ, վշտալի ու խռովալի սրտի նման ինծի բաներ մը յուշել:

Իրարայաջորդ պատրանքներ տեղի կու տան դառն իրականութեան եւ մերկ ճշմարտութեան առջեւ: Յուսախաբ ու տխրութեամբ կը մտածեմ: Չեմ ուզեր մեղքի զգացումը ապրիլ: Դարձեալ փոխան բառերու, լռութեամբ կը խօսիմ ու ես ինծի հարց կու տամ:

Հարց եւ հարցեր՝ անհատնում եւ մեծ: Կը զգամ, որ արդէն հոգիս պաշարուած է երկիւղով եւ կսկիծը կը հոսի սրտէս:

Իսլամական աշխարհի գունաւոր եւ անգոյն եղանակներով լեցուն յեղափոխութեան փոթորկալից ու արիւնոտ ալիքը պատմական այդ մեր քաղաքն ալ հասնելով, ամիսներէ ի վեր փոթորկած էր ոչ միայն իմ, այլեւ՝ ինծի նման բոլոր հայորդիներուն միտքն ու հոգին:

Կը դիտեմ քաղաքիս տխուր նկարները ու զանոնք կը բաղդատեմ Հալէպ իմ այցելութեանս ընթացքին նկարածներուս հետ: Փլատակ շէնքեր, տուներ, խանութներ, ամայացած հրապարակներ, սգաւոր մարդիկ, դիակներ, սեւցած ու ածխացած պատեր եւ աւերակ շուկաներ: Սրբուած են դարերու հետքերը, աւերուած է նաեւ պատմական բերդն ու նոյնիսկ անոր պատմական քարերը: Ամէն կողմ արիւն, աւեր եւ սուգ:

Ինչո՞ւ, հարց կու տամ: Այս բոլորը վասն ինչի՞:

Գլուխս կը շարժեմ ցաւագին եւ նոյնքան ալ յուզումով:

Ու յանկարծ կարօտը, որ հոս սենեակիս մէջն էր, ծփացող խոհերու նման վերապրումներու ցաւալի յիշողութիւն մը կը բերէ ինծի, տենդագին յուզումով եւ սրտնեղիչ տագնապով միատեղ: Ու ինքնաբերաբար ուժգնօրէն կոկորդս սեղմելով կը սկսիմ յոյս մուրալ:

Կախարդուած եմ եւ նոյնիսկ շանթահար: Սիրտս շատրուանի նման կը ցայտէ: Վերջապէս խոնաւ ու նոյնիսկ թաց աչքերովս կ՝որոշեմ «քալել», «շրջիլ», կրկին անգամ «այցելել», տեսնել ու բաղդատել:

«Կը քալեմ» նկարներուն վրայէն ու ամեն քայլափոխի սիրտս փլուզումներու ահն է, որ նախ կը զգայ ու ապա կ՝ապրի: Ու տեսակաւոր նկարներու դիմաց այս անգամ կը սկսիմ «վազել» աջ ու ձախ:

–Այս մէկուն համար պէտք է մտնեմ «ֆուլճի» Ապտոյին մօտ, մեր բնակած թաղին ծայրը, ուր ընկերներով նախաճաշի համար պիտի հաւաքուէինք:

–Այն միւսին համար՝ ոչ, ոչ, պէտք է ճեղքեմ ածխավաճառներու, փայտահատներու, ձկնավաճառներու խանութներն ու կրպակները, անցնիմ Սալիպէի նեղ թաղէն հասնելու Քառասուն Մանկանց եկեղեցի, որովհետեւ քիչ ետք Վարդանանց տօնակատարութեան առթիւ հրապարակային բանախօսութիւն կայ. պրն Էլոյեանը պիտի խօսի. ես ալ Վահան Թէքէեանէն պիտի արտասանեմ:

–Հապա այն միւսը. պէտք է շուտով մեր քաղաքի հին ակումբը հասնիմ, Եգիպտոսէն մեծ ղեկավար մը եկած է եւ անկախութեան մասին պիտի դասախօսէ: Մենք պատանիներով բակին մէջ, ժամ առաջ, աթոռներ պէտք է շարենք:

–Իսկ այս մէկը. պէտք է որ Հ.Մ.Ը.Մ.-ի պարտէզ հասնիմ, ժամադրուած եմ, հոն ընկերուհիիս հետ: Նշանաւոր տաքցուած հաց-պանիրը պիտի ուտենք ու գաղտնի պիտի բաժնենք մեր ապրումները:

Կ՚անդրադառնամ:

Սառած ու պարզ նկարներէն արդէն պարզուած են աւերակ ու ամայի ներկայ իրավիճակը իմ ծննդավայրիս:

Դարձեալ հին ու նոր նկարներս խնամքով կը շարեմ դիմացս, սեղանիս վրայ: Աստուած իմ, ամեն կողմ աւերակ եւ ամեն բան՝ քարուքանդ:

Արդարութիւնն անգամ պոռնկացած է աշխարհի վրայ, կը կրկնեմ: Ատելութիւն կայ ամեն տեղ: Հոս, հոն:

Բայց հոն, հիմա կեանքը դժոխք է. կը հաստատեմ: Ո՛չ «ֆուլճի» Ապտօ, ո՛չ պարտէզ եւ ո՛չ ալ ակումբ: Ամեն ինչ եւ ամեն բան քանդուած:

Կը զգամ, որ ենթագիտակցութիւնս արդէն բացած է կորսուած

յիշողութիւններուս ծալքերը: Սակայն գիտեմ, որ անոր արմատները ներսս են, հոգիիս մէջ ու հիմա ի տես այս նկարներուն, աճող ալիքի նման կը փշրուին ափ առ ափ:

Միշտ կարօտը սրտիս կ՝ուզեմ վերադառնալ էութեանս: Անոր համար որոշ ընդհարում եւ տառապանք մը կ՝ապրիմ:

Գիտեմ, որ այս մէկը բարդ զգացում մըն է: որ ցնցումը ներսս է, նոյն այդ անիծեալ ենթագիտակցութեանս մէջ: Քալելս կը շարունակեմ...:

Խորքին մէջ կարծես անիմաստ իրականութեան մը փնտռտուք մըն է ըրածս: Այդ երկրին եւ կամ այդ պատմական քաղաքին մէջ քաղաքական աղտոտ պատճառներով, հաշիւներով, պատմական մեր մայր գաղութը այս օրերուն դատապարտուած է ամենօրեայ Աւարայր մը մղելու: Թէեւ ամեն մարդ իր ճակատագիրը ժառանգած է, կ՝ըսէին մեր մեծերը, սակայն այնպէս կ՝երեւի, թէ հոն այս օրերուն մարդն է, որ դարձած է մարդուն ճակատագիրը:

Ինչո՞ւ այս բոլորը, ինչո՞ւ, կրկին հարց կու տամ ես ինծի յուզուած, վախով եւ դողով:

Կը քալեմ համարձակ, բայց վախս կը մնայ:

Ետեւս է երազս, որ իր տէրը կը փնտռէ: Կը փնտռէ այն դէմքերը, որոնք գաղթեցին: Դէմքեր, որոնք նաեւ ոչնչացան կամ ալ պահուեցան ճակատագրին տակ: Դէմքեր, որոնք կերտեցին գաղութը ու բարեբախտաբար չտեսան այս օրերուն իրենց իսկ կերտած գաղութին փլուզումն ու քանդումը:

Կը քալեմ փնտռելու համար մեր բոլոր թաղերն ու փողոցները, որոնք քիչ ժամանակ առաջ մարդոցմով եւ ինչու չէ նաեւ հայ աղմուկով կը վխտային:

Կը քալեմ՝ փնտռելու համար նոյնիսկ մեր փողոցներուն ծառերը: Փնտռելու նաեւ կեանքի տերեւները, որոնք վերջերս ինկած էին մարդասպաններու ոտքերուն առաջ եւ տակ:

Աչքերովս կը շարունակեմ քալել յամառօրէն փնտռելով դրացիներս, թաղեցիներս, հայն ու արաբը, քրիստոնեան եւ իսլամը, մեր տան մերձակայ վաճառատունները, անուշավաճառները, մսավաճառներուն ճանճերով լեցուն խանութները, «հոտաւէտ» ձկնավաճառները, նոյնիսկ գիշերային պահակը, նոյնիսկ թաղիս անպիտան կատուները, ու նաեւ աղտոտ ու փոշոտ քարերը, փոքր նստարաններով պարտէզն ու երիտասարդներու սիրային փսփսուքները, փողոցին մէջ դպրոցականներուն անմեղ ճիչերը, կանչերն ու քաղցր երգերը:

Ոչ մէկ շունչ եւ կեանք:

Տակաւին մօտիկ անցեալին հոն միշտ արցունքէն անջատ, ժպիտ ալ կար, եւ ուրախութիւն՝ վիշտէն աւելի:

Հոն խաղաղութիւն կար: Ու յանկարծ այդ խաղաղութիւնը սուտ դարձաւ:

Կը փորձեմ ես ինծի վերլուծում մը կատարել–եթէ մեր այդ հինը նոյնիսկ իր մէջ դառնութիւն ունենար, այդ մէկն ալ հաճելի էր մեզի համար: Այդ մէկը մեզի ուրախութիւն կը բերէր: Հոգի կը դնէր մեր օրերուն, մեր ժամերուն եւ շունչ կուտար մեր առօրեային:

Մեր հինը իր աղուոր անկեղծութեամբ ու պարզութեամբ իմ կեանքս ալ արժեւորած էր:

Սփիւռքը վկայ, հոն այդ գաղութին մէջ անցեալ մը կար յաւերժական ու նախանձելի եւ այդ անցեալը անբաժան մասնիկն էր մեր ազգի կեանքին, մեր ուրոյն եւ սակայն պատմական մտածողութեամբ, սովորութեան ուժով եւ միշտ հաւատքով ու յոյսով:

Հո՛ն մենք, այս ամբողջութեան մէջ կը շարունակէինք ապրիլ

իբրեւ հայ մարդ, խաղաղ եւ հաշտ, հարազատ քաղաքացի, նոյնիսկ երկիրը համարելով իբրեւ երկրորդ հայրենիք: Մեր կենսունակութիւնը դրօշ հռչակած էինք:

Համարձակ կը հաղորդակցէինք մեր ժառանգած տառապալի անցեալին հետ: Անոր համար հոն մե՛նք մահուան եւ անմահութեան սահմանին վրայ նոյնիսկ մեր մահը կը զարդարէինք: Մեր գերեզմանները կապուած էին մեր կեանքին: Հո՛ն թաղուած մեռելները չէին մեռներ, այլ մեզի հետ կը շրջէին ու մեզի կ՚այցելէին:

Թէեւ իրարու հակասական երկու կեանք կ՚ապրէինք, սակայն ուրախ էինք: Դրացնութեան բարի օրինակը ունէինք: Իսլամ դրացիին հետ հաց կը կիսէինք հաշտ ու համերաշխ:

Գիտէինք, որ հո՛ն մեր բոլորին աստուածները տարբեր չէին: Ու մինչեւ այսօր, մինչեւ հիմա կը հաւատամ, որ հոն տակաւին կ՚ապրին այդ աստուածները եւ անոնք մեզ կը սպասեն:

Հալէպի մէջ ամեն ինչ պատմութիւն էր եւ այդ պատմութիւնը կենդանի էր: Հայը հո՛ն, ինչպէս ամեն տեղ ալ, շինարար էր ու աշխատասէր, օրինակելի էր ու հաւատարիմ:

Ուստի հիմա կարեւորն ու էականը մեր գաղութին տոկալն ու ֆիզիքականը պահելն է:

Տակաւին՝ Հալէպի մէջ նաեւ ունէինք առաքելութեան յատուկ ղեկավարներ: Գալիքին համար նոր ճամբաներ եւ լոյսեր որոնողներ ունէինք, որոնք կը վերանորոգէին մեր կեանքը միաժամանակ մեզի մեր հայրենիքին կը կապէին:

Ու այս ձեւով ժամանակը եւ մենք կը նոյնանայինք:

Հո՛ն մեզի համար ամբողջ քաղաքը հայկական էր:

Խորունկ բան մը կար այս բոլորին մէջ:

Նուիրեալներու սերունդ մը կար, օրինակելի ու նոյնքան ալ պատմական: Կար ժամանակ, որ հոն մենք երազին իսկ կը յաղթէինք: Այդ էր, որ մեզ կ՝արբեցնէր:

Միտքս դարձեալ հեռուները փախաւ:

Այս մէկը խորունկ զգացում էր եւ հաւատք: Այս բոլորով հանդերձ չեմ փորձեր աշխարհը համոզել: Ցեղիս պատգամն է, որ զիս այսպէս ազատօրէն կը խօսեցնէ, անսահման էութեամբ, ճառագայթուն տպաւորութեամբ մը, եւ յանդուգն, եւ անպարտելի:

Այս բոլորէն ետք ալ երկուղած եմ: Թէեւ ոչ արցունք կայ աչքերուս եւ ոչ ցաւ՝ սրտիս, սակայն կը զգամ, որ սենեակիս մէջ «այս անիծեալ ֆէյսպուքին դիմաց» կար միայն հոգեկան կայք մը: Հինը ապրելու երանութիւնը:

Այս բոլորը լռութեամբ կը կարդամ:

Հիմա հո՛ն Հալէպի մէջ էականը տոկալն է, կը կրկնեմ: Մարմինն ու հոգին պահելն է: Ուստի պէտք է յոյս ներշնչել: Ծունչ տալ: Իրենց հետ ապրիլ: Իրենց հետ բաժնել վիշտը, ցաւը, ողբերգութիւնը: Ոգի եւ ապրելու կամք փոխանցել:

Նիւթապէս օժանդակել եւ անսակարկ զօրակցիլ: Ահա պայքարի զէնքը:

Դարերով մեր յոյսն ու լոյսը մեզ պահած են: Այս մէկն ալ կը պահեն: Կը հաւատամ: Կ՝աղօթեմ: Ոգիները ինծի հետ են, սենեակիս մէջ: Թէեւ անփոխարինելի բան մը փլած է հոգիիս մէջ, սակայն ըսի. կը հաւատամ հրաշքի խորհուրդին եւ մեր ոգիի ապրելու կամքին:

Յամառ ժողովուրդ ենք, որ չուզեր մեռնիլ, կը շարունակեմ ես ինծի խորհրդածել: Կը հետապնդենք մեր պատմութիւնը, որ ինքզինք կը կրկնէ:

Հիմա այս օրերուն, ի տես այս բոլոր լուրերուն, նկարներուն եւ քստմնելի ու տխուր տեսարաններուն ու ամենօրեայ ցաւագին լուրե-

րուն հաստատ գիտեմ, որ ամեն բանէ առաջ նախ պէտք է Հալէպի մեր ժողովուրդի մորթին տակ մտնել, անոր արեան հետ հոսիլ, անոր սրտին հասնիլ:

Հեռուէն խրատականներով կարելի չէ շունչ եւ յոյս ներշնչել:

Ու կը հաւատամ նաեւ, որ այս բոլորը օր մը վերջ պիտի գտնեն եւ նոր վաղը, հեռաւոր, ծածկամիտ, ծանրաշարժ, իբրեւ անսովոր օր, պիտի գայ կորսուած հեծուորի նման ու ծննդավայր Հալէպս, պիտի գտնէ իր խաղաղութիւնն ու նոր կեանքը:

Կը հաւատամ, որ Հալէպը պիտի դառնայ Նոր Հալէպ:

Սակայն մինչ այդ, կը շարունակեմ ու պիտի շարունակեմ ամեն օր «քալել» անոր հին ու նոր «ճամբաներուն» վրայէն, անխոնջ եւ յամառ:

Անոր համար է, որ հիմա դարձեալ յափշտակուած աչքերով «կը քալեմ» թաղէ թաղ, աւերակէ աւերակ, փողոցէ փողոց, շէնքէ շէնք, շրջանէ շրջան ու կը տեսնեմ ատելութեան սեւ ու ճերմակ ծուխը, որ յանկարծ կը կուրցնէ աչքերս: Ու ինքնաբերաբար կը փակեմ զանոնք:

Օհ, ի՜նչ զարմանք...կը տեսնեմ, որ Աստուած ի՛նքն ալ իր աչքերը փակած է: Ու ես ինծի հարց կու տամ՝ արդեօ՞ք ինքն ալ այդ ծուխէն է, որ աչքերը գոցած է, թէ ոչ...:

# ՍԸԼՎԱ ԵՒ ՍԻԼՎԱ

Շատ յաճախ տարակարծիք կողմերու միջեւ ծագած անհասկացողութեան եւ կամ հարցերուն շուտափոյթ լուծման համար, տեսնուած է, որ դրական երկխօսութեան կողքին, երկզիջումն ալ մեծապէս իր նպաստը բերած է: Իմ չար բախտէս սակայն, այս անգիր օրէնքը ինծի համար գոյութիւն չունի: Չկայ: Մինչեւ հիմա չէ ունեցած:

Հիմա շատ հաւանաբար ձեր դէմքերուն վրայ յանկարծակի զարմանք մը բռնէ: Անկեղծ հերթականութեամբ մը պարզեմ: Անցեալ շաբթուան ընթացքին մեր ընտանեկան ընթրիքի ժամանակ նոր վէճ մը, չես գիտեր ուրկէ ուր, յանկարծ ընթացք առաւ: Ծագեցաւ:

Ու ինչ մեղքս պահեմ, փառք տիրոջ, դարձեալ իմ «զիջող եւ խաղաղասէր ոգիս» եւ մէջս նահանջող կամքիս՝ մեր տան մթնոլորտը դէպի ներքին հաշտութեան դուռ առաջնորդեցի:

Բայց, խօսքը մեր մէջ, նաեւ ըսեմ, որ կինս էր գլխաւոր հերոսը այս բոլոր խաղին: Հաւատացէք՝ իր ստեղծագործութիւնն ու յօրինումն էր: Դասաւորուած ու ծրագրուած:

Ան ինձմէ գաղտնի, քանի մը օրեր առաջ, տղոցս ահազանգ հնչեցուցած էր ըսելով, թէ «այս օրերուն ձեր հայրը լաւ չէ եւ թէ անոր ջիղերը շատ խանգարուած են ու չեմ գիտեր իրեն ինչեր կ՚ըլլայ»:

Անշուշտ տղոցս կ՚իյնար փոյթով մասնագէտ բժիշկ մը գտնել: Հրահանգ էր: Չէ՞ որ ըստ իրենց մօրը, «վերջերս հայրերնին շատ մտահոգիչ վիճակ մը սկսած էր ունենալ»: Իսկ մեր «խելոքներն» ալ, իրենց կիներուն հետ միասին, անմիջապէս գործի լծուելով պրպտումներ կատարած եւ այդ «անիծեալ» երեկոյեան ընթրիքի սեղանին շուրջ, հարսերէն մէկուն պարտականութիւն տուած էին օրուան գլխաւոր նիւթը բանալ եւ բացայայտել առնուած քայլերը:

– Տա՛տ, ջիղերուդ նոր բժիշկ մը գտայ: Հրեայ մեքսիքացի կին մըն

է, իսկ իր «օֆիս»- գրասենեակն ալ՝ Պէվըրլի Հիլզ. –մէկ շունչով ըսաւ հարսս, ինքնավստահ եւ բարերար ու մեծ աշխատանք մը տանողի գոհունակ հովերով:

Արագօրէն դէմքս մեծ զարմանք մը բռնեց: Երկինքէն ինկածի պէս շուարեցայ: Շշմեցայ:

Նախ, ո՞վ ըսաւ, որ ես հիւանդ էի կամ եմ եւ կամ ալ յանկարծ ջիղերու խանգարում ունեցած եմ: Յետոյ առանց իմ գիտակցութեանս ինչպէ՞ս...:

Է՜հ աշխարհ, մեր ապրած երկիրներուն մէջ ջիղերը խանգարուող մարդուն, խենթ է կ՚ըսէին ու խենթանոց կը դնէին: Այս երկրին մէջ սակայն խենթանոց ալ չկայ, անոր համար բոլոր խենթերն ալ փողոցներն են: Ամենօրեայ սպաննութիւնները, ոճիրները այս բոլորը կը հաստատեն:

Հոս, մարդ կը սպաննեն եւ յանկարծ «ուղեղի խանգարում ունի» ըսելով, «խեղճ» ոճրագործը տարիներով կը պահեն, կը կերակրեն, կը գուրգուրան:

Ահա քեզի երկիր: Ասանկ երկիր կ՚ըլլա՞յ: Ասիկա երկիր չէ, այլ՝ խառնարան: Ինչ որ է ...:

Համոզուած էի, որ այս նոր գիւտ-հիւանդութեանս «խաղին» հեղինակն ու բեմադրիչը կինս էր: Սակայն, իր ախտաճանաչումէն աւելիս, զիս «կատղեցնողը» հարսիս պրպտումներուն արդիւնքն էր:

–Հրեայ բժշկուհի եւ «օֆիսն» ալ՝ Պէվըրլի Հիլզ:

Ահա քեզի նոր հարց:

Այս պատճառով էր, որ արիւնս յանկարծ սկսած էր եռալ եւ ուղեղս բռնկեցնել:

–Իսկ եթէ իսկապէս ես հիւանդ եմ, ինչո՞ւ, Կլէնտէյլին ի՞նչ եղած է..., հայ բժիշկ մը չկա՞յ, պոռթկացի, լեցուն ու աւելցուցի, ես մինչեւ հոնտեղերը չեմ երթար, ով որ կ՚ուզէ ան թող երթայ:

–Ո՛չ, ո՛չ, հոստեղինները բան չեն հասկնար. յետոյ, յետոյ... հայերուն քով... ամեն բան «պազար» է, փորձեց համոզել համարձակ հարսս:

Իր ըսելու ձեւն ու արտասանած բառերը անժամանակ հեղեղի նման թափեցան ուղեղիս վրայ: Զարտուղի հետքերու կողքին, նոյն այդ բառերը վայրկեանին ծնունդ տուին սրտնեղիչ նոր տագնապի մը:

Այս հրեաները որքա՜ն բախտաւոր են եղեր, որ հասած են մինչեւ մեր տունը. իմաստակ, կրկին ես ինձի «առի տուի»: Ինչո՞ւ մերիններուն նկատմամբ այսքան ստորագնահատում: Չեմ հասկնար: Իսկապէս, որ հրեան օրհնուած ազգ է եղեր: Կը կարծեմ, որ հիմա «մօտա» դարձած է նման որդեգրում: Ուղղակի հիւանդութիւն: Տակաւին անցեալ օրն ալ նոյն այս հարսս, խօսակցութեան ընթացքին, հրեայ փաստաբանները սկսած էր գովել, իսկ հիմա ալ՝ հրեայ բժիշկները: Եկուր եւ մի խենթանար:

Աստուած իմ, շարունակեցի մտովի աւելի խռոված, այս ի՞նչ վիճակ է, լաւ որ այդ հրեայ բառն ալ սորված են ու անմիջապէս դարձայ կնոջս կողմը: Գիտէի, որ հարսը կամ միւսները յանցանք չունէին: Այս բոլորին հեղինակը այլեւս բացայայտնուած էր: Արեւու նման պայծառ էր:

Կողակիցս:

Հաւանաբար կնոջս մտահոգութենէն ծնունդ առած էր այս հոգածութիւնը, կը տրամաբանէր ենթագիտակցութիւնս:

Այս մէկն ալ իր կարգին:

Հաւատացէք, ի տես այս նոր տեսարանին՝ եթէ «ձեռքէս գալու ըլլար» տեղւոյն վրայ եւ բոլորին ներկայութեան զինք կը բզկտէի: Բայց... հոս Ամերիկա էր:

***

Բժիշկէն ժամադրութիւնը վերցուած էր: Ուստի ինծի համար վիճիլը անիմաստ էր: Այդ վայրկեանին յոգնած ուղեղովս կը փորձէի հասկնալ, թէ արդեօք նման բաներ, միայն մեր տան մէջ կը պատահէի՞ն, թէ ոչ ուրիշներու երդիքին տակ ալ...: Բայց ուրիշներունը իմ հոգս չէր: Կարեւորը իմս էր: Մեր տանը խաղաղութիւնը: Ուստի յանուն այս խաղաղութեան ինծի կը մնար չհակաճառել: Ուրիշ ելք չունէի:

Կը յիշեմ, ողորմած մայրս, նման պարագաներուն միշտ կրկնած էր. «եղեր ենք ուլիկ, պիտի ուտենք խոտիկ»:

Իսկապէս հիմա ես այդ խելոք ուլիկն էի դարձած, որ ինքզինք մտածելու հաճոյքէն զրկելով, հանդարտ, անվիշտ եւ անխռով ձեւացնելով, հաւանութիւն տուած էր, եւ նոր ստեղծուած վէճը հանդարտ աւարտ մը ունենար: Վերջ:

***

Թէեւ օրերս կապուած էին առօրեայ զանազան այլ մտահոգութիւններուն, բայց եւ այնպէս որոշուած օրը ճամբայ ինկայ դէպի այդ հրեայ «փրկիչ» բժիշկին գրասենեակը:

Առաւօտը լայն բացուած էր, երբ հասայ ճշգրիտ հասցէին: Շէնքին առաջին յարկի պատին վրայ ցուցադրուած ցանկէն արագ մը կարդացի իր անունն ու յարկը ու դէպի վերելակ ուղղուեցայ:

–Սիլվա. 6-րդ յարկ:

Վերելակին մէջ մինակ էի: Շուտով յարկ հասայ:

Ահա, տօքթոր Սիլվա: Կարդացի ու եզակի եւ հաստատ ինքնագոհութեամբ մը այդ օրինեալ օֆիսին դուռը բանալով, ներս մտայ:

Ի՞նչ տեսնեմ, Աստուած ի՜մ: Անթիւ «մամացու»ներ:

Ի՞նչ է, ասոնք բոլորն ալ ջղային խանգարում ունեցա՞ծ են, դար-

ձեալ ըսի մտովի ու կամաց կամաց սկսայ մօտենալ դէպի այն փոքր պատուհանը, ուրկէ արդէն կեղծ ժպիտ մը դէմքին, կապոյտ շապիկով օրիորդ մը զիս կը դիտէր:

Չորս կողմս կրկին աչք նետեցի: Սենեակին աջ կողմը մեքսիքացի կին մը նստած էր, երկու գիրուկ սակայն մանր փոքրերով ու հատ մըն ալ փորին մէջ ու ծամօնը բերնին ապշած զիս կը դիտէր: Անոր մօտ ալ՝ ամերիկուհի մը, իրմէ տարեց կնոջ մը մօտ նստած՝ մէկ ձեռքը փորին, միւսովը հեռաձայնով զբաղուած: Դիմացի պատին տակ, ուրիշ չորս յղի կիներ եւ աւելին՝ տակաւին երկու յղիներ ալ, ոտքի կեցած: Յղի, յղի եւ յղիներ: Այս ինչ բախտ...:

Այն երեկոյ մեր հարսը «բերանը մեծ բացած» էր, երբ Կլէնտէյլի համար կ՚ըսէր, թէ հոն պազար է: Թող գայ հոս եւ տեսնէ՛, թէ ինչ ըսել է «պազար», ըսի մտովի քիչ մըն ալ ջղային: Ծօ՛, հոս նստելու տեղ իսկ չկար: Չէր մնացած: Վերջապէս հասայ պատուհան: Հիւրընկալող պաշտօնեայ օրիորդը քաղաքավար բարեւեց ու ապա՝ «ժամադրութիւնդ ժամը քանի՞ն էր», ըսաւ:

Վայրկեանի մը համար կարծեցի թէ ուշացած եմ:

– 11-ին, – աճապարեցի ըսել:

– Բայց ո՞ւր է ձեր կինը կամ աղջիկը, – հարցուց, դէմքին ժպիտը լայնցնելով:

Դէմքիս վրայ նորածին զարմանք մը բռնեց: Կինս հոս ի՞նչ գործ ունէր: Հիւանդը ես էի: Ինչո՞ւ ես տարիքով այնքան փոքր էի, որ մօրս, կնոջս կամ ալ աղջկանս ընկերանալով բժիշկիս ներկայանայի:

Ուղեղս սկսած էր նման հարցումներով զբաղուիլ:

Միւս կողմէ ալ կրծող թրթուրի նման ուրիշ միտքեր սկսած էին զիս չեմ գիտեր ուրտեղերը տանիլ: Զգալի էր, թէ կասկածելի միտքեր այցի եկած էին օրիորդին ուղեղին մէջ:

–Ե՛ս եմ, – հիւանդը ըսի ինքնավստահ, քիչ մըն ալ վիրաւորուած:

Յանկարծ սրահին մէջ պայթեցաւ քրքիջը: Անհամաղմուկ: Բաւական ջղային տեսքով մը դարձայ ետեւ:

Նստողները չեմ գիտեր ինչեր կռահած էին: Միայն այն գիտեմ, որ սենեակին մէջ իջաւ բռնազբօսիկ ու անախորժ լռութիւնը:

–Հիւանդը ես եմ, – ըսի դէմքս պատուհան դարձնելով եւ աւելի բարձր ձայնով:

Բառերս մերկ էին եւ անզգոյշ: Դէմքիս վրայ կարմիր գոյնը շատոնց բոյն դրած էր:

–Ի՞նչ, – կրկին հարցուց պաշտօնեան, շրթունքի եզրին հեգնանք մը գծելով:

Տեսանելի էր, որ իր մտքին անկիւնը տակաւին կասկած մը պառկած կը մնար յամառօրէն:

–Հիւանդը ես եմ... ջիղերուս համար... ճիշդ ժամուն ալ եկած եմ, – ըսի աւելի համարձակ եւ ինքնավստահ, ու միեւնոյն ատեն մտքէս կնոջս հասցէին անկանոն բառեր շարելով:

– Բայց պարո՛ն, դուք գիտէ՛ք, թէ ո՞ւր եկած էք:

– Այո՛,– ըսի իր դասը գիտցող աշակերտի նման, արագ եւ ինքնավստահ:

Օրիորդը իր աչքերով նայուածքս կրկին անգամ որոնելէ ետք, շարունակեց.

–Հո՛ս, բժշկուհի Սըլվա Կոլպըրկին քլինիքն է. իսկ դուրսը, ճիշդ մեր դիմացը՝ բժշկուհի Սիլվա Կոնզալէսինն է: Ան ջիղերու մասնագէտ մըն է...:

Կրկին քնտինքոտ զարմանք մը գծուեցաւ դէմքիս վրայ, իսկ սենեակին մէջ ալ նոր ծիծաղ մը խառն հոսանքի նման անհանգիստ աղմուկի վերածուելով գլորուեցաւ:

Յայտնի էր, թէ ներկաներուն մօտ լրջախոհութեան պաշարը սպառած էր:

–Ի՞նչ, – ըսի շուարած, սրտիս մէջ ծաւալող ծանրութեամբ մը:

–Այո՛, այո՛,– ըսաւ արագ, շրթներուն նստեցնելով բարձր խնդուք մը:

Վայրկեանին իր բառը գլխուս փշրուեցաւ, փխրուն արձանի մը նման: Իսկապէս, որ ծիծաղելի անձ մըն էի իրենց համար: Սըլվա եւ Սիլվա, ինծի համար նոյնն էին եղած:

Յստակացաւ: Սխալ բժիշկի եկած էի:

Զգացի, որ հոգիս պաշարուած էր նոր երկիւղով մը ու յառաչանքի նման բան մը պոկուեցաւ կուրծքէս: Գլխուս մէջ բոյն դրած մետքերու շփոթին իբրեւ հետեւանք դէմքիս վրայ անմեղ զարմանք մըն ալ բռնեց: Մէկ խօսքով միտքերու քաոս:

Ու բառերս իրենց լռութենէն կամաց կամաց զատելով «սորրի» մը ըսի ցած ձայնով, իր արժանապատուութիւնը կոտրած մարզիկի մը նման: Անհուն ու ցաւագին յուզում մը փաթթած էր սիրտս: Կը զգայի: Եթէ չամչնայի պիտի լայի: Ինչ մեղքս պահեմ, իբրեւ գերագոյն սփոփանք անիծեցի կիներս, հարսերը, տղաքս, քայքայուած ջիղերս ու ճակատագիրս:

Գիտեմ, որ ոչ ոք կը սիրէ իր տկարութիւնը տեսնել:

Բայց:

Ու առ ի յարգանք քանի մը անգամներ «սորրի»ն կրկնելով դէպի դուռ ուղղուեցայ, օրուան այս նոր ծանրութիւնը շալկած:

Սենեակին դրան առջեւ անգամ մը եւս դարձայ այդ յղիներուն, յուզուած ու ջարդուած: Այդ վայրկեանին աչքերս ոչինչ տեսան: Միայն կը յիշեմ, որ կարմրած ու քրտինքոտ դէմքս ներկաներուն կրկին անգամ ցոյց տալով, սենեակին տիրող աղմուկը կրցած էի շոգիացնել:

Մխիթարուած էի:

## ԳԵՎՈՐԳ ՔՐԻՍՏԻՆՅԱՆ

(ԱՄՆ)

# ՄԻ ԼԱՎ ԵՐԵԿՈ

Սի զմայլելի ձորաբերանին կախված է նրա առանձնատունը: Նա ունի ամեն ինչ, բայց մենության մեջ է: Մենակ չէ, սակայն մենության զգացողությունը նրա ուղեկիցն է ... : Նա կին է և բանաստեղծ: Բամբասող լեզուներն ասում են, թե նա շռայլել է իր գեղեցկությունը: Բայց հիմա էլ նա գեղեցիկ կին է, խելացի, զգայուն, սթափ և մարդասեր: Հոգով և մարմնով բանաստեղծ է: Ժպիտը ծաղկում է նրա մանրիկ, կրակոտ աչքերում: Առաջին անգամ էի լինում նրա տանը: Հավաքը հիմնականում նվիրված էր Վերա Հակոբեանին: Թամադան Ստ. Թոփչեանն էր: Ամեն ինչ լավ էր: Երգ, ասմունք, անեկդոտներ, պատմություններ: Ուրախ երեկո էր: Պակասում է մի բան. նույնիսկ

մտերմական, քաղցր մթնոլորտում էլ հանկարծ գլուխ է բարձրացնում ասիական աննրբանկատությունը: Իհարկե, աշխատեցինք դա էլ հարթել: Մեր ընկերային կուլտուրան անմշակ է: Դա մեր դժբախտությունն է: Մեր ընդհանուր մշակույթը տանելի, բայց անհատական՝ կոշտ ու անհամ: Մենք չգիտենք միմյանցով հիանալ, գնահատել լավը, գեղեցիկը: Եսասիրությունը հաղթահարելու ուժ չունեն շատերը: Այնուամենայնիվ, երեկոն լավն էր:

## *ՍՈՆԱՅԻՆ*

Այսօր արևը այնքան բարի էր և ինձ մորս պես զգվեց, փայփայեց: Առավոտ ծեգին աչքերս համբուրեց և ինձ դուրս կանչեց: Հազար երազ ու սեր ինձ պարգևեց: Եվ ողջ օրը ես անցա արևի շողերի միջով: Եվ ջահելացան իմ սիրտն ու հոգին: Եվ մայրամուտին իմ դեմ դու ելար՝ իբրև նոր արև ու նոր մոլորակ: Ձեռքդ սեղմեցի և արյունիս մեջ կարոտս ծաղկեց: Եվ դու խոսեցիր, խոսեցիր անվերջ, և ողջ գիշերը մի հեքիաթ թվաց: Եվ հեքիաթի մեջ մենք հավերժացանք: Եվ հիմա արդեն ամեն ինչ լավ է. էլ չեմ կարոտում բնական լույսին, արևին, լուսնին, երկնի աստղերին: Ուզում եմ լինենք հողեղեն միայն, միասին լինել իմ տաք օջախում, որի մեջ սրտիդ կայծերն են թարթում: Սոնա, քեզ համար կապրեմ ես հավերժ՝ սիրո անարատ երգը շուրթերիս...: Ռոմանտիկան համակել է ինձ: Այս կոշտ ու կոպիտ աշխարհը արդեն խոնարհվում է մեր սիրո բագինին: Ես սիրում եմ քեզ:

## *II*

Եվ այսօր նորից երեկոն լուսնի փափուկ շողերով ինձ առաջնորդեց քեզ մոտ, սիրելիս:

Կրկին հայացքով գգվեցիր դու ինձ: Քո աչքերի մեջ աշխարհն օրորվում ու սիրո երգ էր հունցում իմ սրտում: Այսօր խոսեցինք միայն աշխարհի ցավերի մասին: Եվ այդ ցավերը կուտակվել էին իմ ու քո անուշ ծննդավայրում:

Եվ մտքով անցանք մեր Երևանի Տերյան փողոցով, որտեղ ծաղկել են բոլոր սերերս:

Կազնեցինք Կարապի լճի փոքրիկ կղզյակում ու երազեցինք մեր սիրո մասին: Այնտեղ թողել ենք մեր գարունները, մեր եփտասարդ հոգու կայծերը, և այնտեղ հիմա մի թախծություն է լճացել, ապշել: Մեր

կարոտներն են կախվել ծառերի աշնանախորհուրդ կարմիր ու դեղին թույլ տերևներից: Ես հավատում եմ՝ կգա կծաղկի օրը լուսեղեն, երբ մեր ոգեղեն բարկ խորհուրդները կկենդանանան Տերյան փողոցում: Եվ Սևանը կրկին կդառնա մեր հոգու, սրտի, մեր երազների շքեղ հանգրվանն ու մեզ կկանչի իր գիրկը փափուկ: Մենք կրկին պիտի Երևանի հետ, Երևանի մեջ, Տերյան փողոցում նորոգենք սիրո մեր հին օջախը:

## ԱՐՏԱՎԱԶԴ

Արքայորդի, Արքա, որ կարևոր ու մեծ հետք է թողել մեր մշակույթի պատմության մէջ: Իր հորից՝ Մեծն Արտաշեսից իսկապե՞ս նա դժգոհել է նրա մահվան օրը: Երևի իրավունք ուներ դժգոհելու Արտավազդը: Հեթանոս ժողովուրդը այնպիսի սուգ է սարքել թագավորի մահվան առթիվ, որ շշմել է որդին:

Նա՝ Արտավազդը, հպարտ ու զգոն է եղել, և զարմացել ու սրտմտել է՝ ի տես ժողովրդի անկայուն բնավորության: Հայրը մահից հետո չէր կարող անիծել որդուն: Սա մարդկային թուլության և թույլ երևակայության առասպել է: Եվ Արտավազդը չէր կարող դևերի բաժին դառնալ: Նա դարձավ թագավոր՝ Արտավազդ Երկրորդ: Սրանով չեմ ուզում առասպելը ջնջել: Առասպելն էլ մեր հոգու հարստություններից մեկն է: Ուր է, թե ունենայինք ավելի շատ առասպելներ: Հույները հպարտանում են իրենց հարուստ առասպելներով և աշխարհին զարմացրին իրենց մանկական հասակի վառ երևակայութեամբ:

Արտավազդ Երկրորդը մեր լավ, զարգացած, հպարտ և ուժեղ թագավորներից մեկը եղավ: Նա հիմնավորեց մեր ազգային թատրոնը:

## *ԵՐԵՎԱՆԸ ԹԱԽԾՈՒՄ Է*

Կար ժամանակ, երբ Երևանը համարվում էր լույսերի և լուսավորության քաղաք:

Քաղաքը կառուցվում ու գեղեցկանում էր: Այն մրցում էր եվրոպական առաջնակարգ քաղաքների հետ: Վերջին տասը տարում ամեն ինչ արեցին քաղաքը քանդելու, ավերելու, թալանելու համար: Եվ քանդեցին, թալանեցին: Այսօր Երևանը աշխարհի ամենատխուր մայրաքաղաքն է: Երեկոյան քաղաքը ընկղմված է մթության մեջ: Առաջվա մեկ ու կես միլիոն գործուն, գիտակից, հպարտ բնակչության մեծ մասը հեռացել է երկրից: Կանգ են առել մի քանի հարյուր գործարաններ ու ֆաբրիկաներ, խեղճացել ու նվազել են ուսումնական բազմաբնույթ հաստատությունները, դպրոցները, բուհերը, գիտական հիմնարկությունները, ակադեմիայի ինստիտուտներն ու լաբորատորիաները, բուժական հիմնարկները: Մարել է երիտասարդության խանդավառությունը: Գիտնականները, երաժիշտները, գրողները, նկարիչները, ճարտարապետները, ինժեներները մատնվել են անգործության և նրանց մեծ մասը հեռացել է երկրից: Մայրաքաղաքը դարձել է մանր-մունր դեսպանատների քաղաք: Ի՞նչ են ուզում այդ օտար դեսպանները, մեռնող քաղաքի այդ նորաբնակները, որ հիշեցնում են թաղման թափորներ:

## ԱՂՈԹՈՒՄ ԵՄ

Եվ օրերի վազքն ինձ տարավ, տարավ, թռցրեց երկինքներով, ամպերի միջով, կապույտներով: Ինձ տարավ աշխարհից աշխարհ, պերճ քաղաքների մութ ու լույսի միջով, ինձ մոլորեցրեց մութ բավիղներում, կյանքի և մահվան խաչմերուկներում: Իմ դեմ ելան օտար ու անհուր մարդիկ, ինձ ցանկացան մխիթարել, բայց իմ հոգու խռովքը վանեց բոլորին: Օտարության ցավը կեղեքեց հոգիս, սրտիս մեջ և իմ երակներում արյունս բողոքեց, ընդվզեց: Հետո դարձյալ օրերի վազքը, կյանքի խռովահույզ ընթացքը ինձ գրկեց ու մոլեգնած հողմապտույտի մեջ առավ, թռցրեց ծովերի ու ցամաքների վրայով, օվկիանոսների անափության միջով և հասցրեց քո դուռը, սիրելիս: Ես քեզ վաղուց էի սիրում, իմ մանկության օրերից, երբ կարմիր վզկապով կարմրաթուշ տղեկ էի և ամաչում էի ոչ միայն իմ կարմիր թշերից, այլև քո վարդակակաչ շուրթերին նայելիս: Ամաչկոտ իմ սերը, թրթռացող իմ սիրտը, տամկացող իմ աչքերը այսօր էլ իմ մեջ են, այսօր էլ ամաչում ու տամկանում են, այսօր էլ քեզ առնչվելիս դառնում են մի անօգնական տղա, սիրուց նվաղող մի պատանի: Եվ դողում է սիրտս, տամկանում են աչքերս: Եվ հիմա, որ ամաչում եմ հիշել ու չեմ էլ ուզում և վանում եմ ինձանից այն միտքը, թե քանի՞ տասնյակ ձմեռներ են անցել իմ սրտի միջով . . . դարձյալ մանուկի նման, դարձյալ պատանու պես ամաչում եմ նայել քո աչքերին, որ իմ սիրո արևներն են, ամաչում եմ պատմել քեզ իմ հոգում բուն դրած զգացումների մասին: Ես գտել եմ քեզ ու գոհ եմ:

Միայն ծնկում եմ քո գեղեցկության առաջ և աղոթում եմ. ջե՜րմ, ջե՜րմ, ջե՜րմ:

## *ՏԽՈՒՐ ՈՒ ԱՆՍԵՐ*

*Կնոջս՝ ՌՈԶԱՅԻՆ*

Եվ հիշում եմ ես արձակ դաշտերը, բարձրիկ սարերը, խորունկ ձորերը, կանաչ զմրուխտը, և ծաղիկների ծովերը՝ ծիածանավառ ու բուրումնավետ, դաշտային բոլոր, լեռնային բոլոր ծանոթ, անծանոթ թևավորները: Ծաղիկների հետ շփոթում էի քեզ, իմ սրտի թռչնակ, թռչունների հետ շփոթում էի քեզ, իմ հոգու արև: Եվ ձեռքդ բռնած, և մեջքդ գրկած գնում էինք մեր կանաչ գարնան ծովերի միջով, կանաչ լեռներով, կանաչ խոտերով, մեր սիրո գարնան հմայքով տարված, վերացած: Սեր կար մեր սրտերում, սերն էր սնում մեր հոգու թևածումներին: Գեղեցիկ էր աշխարհը, անուշ էր արևը, աննման էր գարունը, և մարդիկ բարի էին, գեղջուկ ու խեղճ էին և սիրո կարոտ էին:

Ես հիշում եմ նրանց զարմացած աչքերը, սիրաթափ եղած, խամրած աչքերը, որ միայն զարմանք էին արտահայտում: Սերը, գեղեցկությունը մոռացած մարդիկ քեզ ընդունեցին ինչպես այլմոլորակային, աստղերից իջած հրեշտակի...:

Եվ հիմա, որ լիությամբ է շնչում աշխարհը, որ մարդը թռչում հասնում է աստղերին և վերադառնում՝ մի բուռ աստղափոշի իր ափերում, մարդը, որ հիմա մոռացել է, թե ինչ բան է զարմանալին, զարմանքը, այնուամենայնիվ մի բանի վրա է զարմանում, ո՞ւր ես, չկաս, ինձ հետ չես: Եվ ես տխուր եմ ու անսեր...:

## ՄԱՐԻԱՆԱ ՊԷՐԹԻԶԼԵԱՆ-ՂԱԶԱՐԵԱՆ

(ՍԻՐԻԱ)

# ԿԵԱՆՔ ԵՒ ԵՐԱՉ ՊԱՐԳԵՒԱԾ ՔԱՂԱՔԸ ԿԸ ՇԱՐԺԷ

Ռումբի պայթիւն էր ահաւոր: Յետոյ կրակոց՝ արագահարուածով: Փամփուշտներու տարափ...որոնցմէ մի քանին սկսաւ բախիլ թիթեղապատ պատշգամբին:

Տարօրինակ ոչինչ կար այս բոլորին մէջ: Քանի որ այս բոլորը՝ այսինքն ինչ որ ահարկու եւ անսովոր կը թուէր, ալ դարձած էր սովորական:Կեանքը ամէն բան կը սորվեցնէր, նոյնիսկ կարողութիւնը ունէր թշնամիները բարեկամացնելու: Իսկ սրտի հատորները որոնք այլեւս հոն էին՝ այն հեռու ցամաքամասը՝ կարծես նստած ըլլային կողքի սենեակին մէջ՝ ճիշդ պատին ետեւը: Ինչ էր անուանումը այս զգացումին որ կամչնար անգամ ինքզինքին խոստովանիլ: Անտար-

բերութիւն կեանքին նկատմամբ՝ նոյնիսկ իր իսկ կեանքին:

Օրերը կը գլորէին մէկը միւսին ետեւէն, անիմաստօրէն: Զանոնք արժեւորելու փափաքն ու անկէ ստացուած բաւականութիւնն անգամ, դարձած էին անիմաստ:

Պայքարիլ նպատակի մը համար եւ անոր տիրանալէ ետք՝ մի քանի օրեր, նոյնիսկ ժամեր կը տեւէր առթուած հրճուանքը, ետքը կորսուելու ցնդելու, շոգի դառնալու համար օդին մէջ: Երկրաւոր փառքը այս էր:

Ամենէն գէշ բանն էր սակայն ապրիլ աննպատակ: Մտածեց՝ այսպէս պիտի շարունակու՞ի, թէ՝ կեանքի մէջ շրջաններ են՝ կամ պահեր որոնք կու գան ու կ՚երթան:

Խորապէս բաղձաց մտածելով՝ երանի վերջին նպատակիս իրագործման դեռ ճամբուն վրայ ըլլայի. երանի զաւակներուս մօտս չըլլալու կսկիծը զգալի ըլլար ինծի եւ իրենց տեսնելը մեծագոյն ուրախութիւն պատճառէր. երանի տակաւին իսկական սիրոյն ինչ ըլլալը համտեսած, եւ ցնծացած չըլլայի եւ նոր բաներ պահուած ըլլային ինծի համար: Երանի... ինչպէս մանկութեան օրերուն՝ նոր հագուստով կամ կօշիկով մը ուրախանալու ատակ ըլլայի եւ մեծ-մեծ բաներ չ՚սպասէի կեանքէն: Երանի ամէն բաղձանքներս տեղն ու տեղը կատարուելով ինձմէ սքանչանալու եւ զարմանալու կարողութիւնը խլած չըլլային: Երանի դեռ նոր ճամբայ ելլէի ընկեր մը փնտռելու, ուսմանս ընթացքը որոշելու ու այսպէս բազմաթիւ տարօրինակ երանիներու շարան մը ծայր առաւ.....

Ձայն մը մէջէն՝ թէ՛ հեռուէն, «կը մնար անյայտ»: Կ՚ըսէր իրեն այն մասին թէ՝ «ինչ ապերախտ եւ անշնորհակալ է մարդ արարածը»,

մանաւանդ յաջողութիւններ ձեռք ձգած եւ շատ մը բաներ վայելած մարդը: Ապերջանիկ «քիչով չգոհացող»:

Դ-ժգոհ....

Բայց մտածեց՝ այս պարագային ինք՝ ոչ թէ գոհ՝ նոյնիսկ դժգոհ չէր իր վիճակէն՝ երբ դուրսը պատերազմ էր: Ուրեմն լճացման կամ՝ զերօ, չէզոքացած վիճակի մէջ էր որմէ պէտք էր դուրս գալ հապշտապ՝ շատ արագ... հարկաւոր էր մարդկային հոսանք՝ կամ անեռեւոյթ փոշեծծիչ մը որ կարենար չէզոքացնել իր անտարբերութեան փոշին.....

Բայց ոչ մարդկային, ինչպէս ամէն անգամուան պէս ....

Չ-Է-Զ-Ո-Ք՝ ժխտական մասնիկով իր այս վիճակէն հանող՝ երկնային գերբնական էակ մը, թերեւս ելեկտրական ցնցումի պէս բան մը, հոգիի կրակ մը՝ որ կարենար էութեան՝ նոր հոգեցունց գոյութիւն մը տալ թոյլ չտալով որ ան չէզոքանայ:

Հարազատի մահուան ցնցումը, յաջողութեան առթած ցնծութիւնը եւ իրարմէ տարբեր ցնցումներ հարուածներ կամ ուրախութիւններ բոլորն ալ եղած էին անցողիկ, ժամանակի հոսքին հետ կորսնցուցած իրենց առթած զօրութիւնն ու ուժգնութիւնը:

Նոր ուժի մը հոսանքին կարիքը կար ...

.....

Եւ այդ օր երբ մի քանի քայլ մնացած էր տեսնելու համար այն անակնկալը որ եղբայրս պատրաստած էր բոլորիս համար՝ հօրս մահուան տարելիցին առթիւ՝ իբր նուէր: Սկսանք արագացնել մեր քայլերը, մինչ կերեւէր շքեղ սպիտակ կրանիթէ կառուցուած հօրս նոր տնակը երբ մայրս բղձկալով սկսաւ յենիլ մեր ուսերուն:

-Ինչո՞ւ կուլաս մամա, դուն չէ ի՞նչ՝ որ ուզեցիր անպայման այսօր վերջացած տեսնել հօրս համար պատրաստուած իր նոր ապաստան տնակը:

Մինչ ան կը շարունակէր հեկեկալ, մենք կը փորձէինք զսպել մեր արցունքները անտարբեր ձեւացնելով մենք մեզ: Մայրս շարունակեց իր հեկեկոցը միացնելով հազիւ լսելի այս բառերուն՝ «Յակոբ ինչպէ՞ս պիտի դիմանաս այս ծանրութեան տակ»:

-Մամա ամօթ է,- յարեցի,- չէ՞ որ դուն հաւատացեալ ես...

-Բայց՝ չէ՞ որ դուն կ՚ըսէիր թէ՝ Շիրազ չէր ուզած որ իր վրայ ծանր դամբանաքար դնէին, նախընտրած էր թարմ հողաթումբը որ կարենար շնչել, պատրաստաբանօրէն ընդմիջեց մայրս:

-Բայց ով ըսաւ թէ՝ Շիրազ կամ ուրիշ որեւէ արարած պիտի կարենային շնչել հողին տակ, անոնք նոյնիսկ իրենց աճիւններուն ուր ըլլալէն անտեղեակ են,- ինքնավստահօրէն աւելցուցի ես:

Հազիւ մեր աչքերը քիչ մը անդին ուղղեցինք յանկարծ կանգ առաւ մօրս հեկեկոցը երբ նշմարեց փոքրիկ նորատունկ ծառ մը: Հայրս իր զաւակներուն չափ սիրած էր իր տան բակի այգին, պարտէզը՝ խնամած եւ հոգ տարած:

-Հօրդ հոգին որքան ուրախ պիտի ըլլայ հիմա, ի տես այս նորատունկ ծառին, ըսաւ մայրս: Մօտակայ ծորակէն ջուր բերաւ, ափերով փաղաքշեց տերեւները, թեթեւ հոգոց մը հանելով շարունակեց, - միասնաբար այս ծառին կողքին կը նստինք եւ կ՚աղօթենք իր հոգիի անդորրութեան համար:

Իրապէս ալ ժամը ուշ էր, քահանաները գերեզմանատունէն արդէն վաղուց մեկնած էին, բացի մեզմէ ուրիշ աղօթող պիտի չ՚ըլլար

հօրս նոր դամբանաքարին վրայ : Մենք չորսով՝ մայրս եւ իր երեք աղջիկները, մատղաշ ծառի սօսափիւնին հետ սկսանք շարական բարձրացնել, մինչ մեր աղօթքները երկինք կը բարձրանային մայրս մոռցած էր քարի ծանրութեան գաղափարը: Իսկ աչքերուս առջեւ կ՚ուրուագծուէր գլորած հսկայ քար մը եւ դատարկ գերեզման...:

Անցան օրեր: Հալէպեան վճռորոշ պատերազմը իր կնիքը դրաւ իւրաքանչիւրիս հոգիին վրայ, ալ դադրեցանք հետեւողականօրէն ամէն շաբաթ երեկոյ գերեզմանատուն յաճախելէ: Հրասանդերու եւ փամփուշտներու տարափը մեզ մոռցնել տուաւ ամէն բան, մեր արաբ երկրացիները նոյնիսկ երանելի կոչեցին մեռեալները:

Աստուածածնայ վերափոխման երկուշաբթին էր՝ Օգոստոս 2012ին, ամէն գնով որոշեցինք այցելել մեռելներու աշխարհը, քանի որ հօրս համար յատուկ նշանակութիւն ունէր այս տաղավարը:

Քահանայից դասը՝ ամբողջական բանակով, Սրբազան հօր նախագահութեամբ ներկայ էին արարողութեան: Կղերական դասը աշխարհականներու թիւէն աւելի կը հաշուէր:

Ամենայն ջանասիրութեամբ եւ խղճով՝ պատարագ մատուցուեցաւ այնտեղ հանգչողներուն հոգիներուն՝ նոյնիսկ դուրսը գտնուող նահատակներուն համար:

Մատուռին մէջ կայացած արարողութեան աւարտէն ետք, երբ մայրս կը մօտենար հօրս գերեզմանին՝ յանկարծ ցնցուեցաւ երբ տեսաւ, գերեզմանաքարին կողքը զետեղուած՝ մեծ հօրս ու մեծ մօրս շիրիմներուն՝ հսկայ աւերակոյտի վերածուած ըլլալը: Խոշոր տապանաքարէն միայն քարերու բեկորներ մնացած էին: Պատկերը սահմռկեցուցիչ էր, օր առաջ, ռումբ մը եկած եւ ամէն բան տակն ու վրայ

ըրած էր: Առաջին հարցումը որ մարդու միտքը կրնար գալ, արդեօք աճիւնները պահպանու՞ած էին, թ՞է անոնք ալ փշուր փշուր եղած:

Ի զարմանս բոլորիս, մայրս ոչ լաց, ոչ կական արձակեց ի տես իր հարազատ ծնողներու շիրիմներուն առերման: Միայն մէկ նախադասութիւն սպրդեցաւ բերնէն՝ «Տասնիինգի տեղահանութենէն ու թափառական պանդուխտի կեանքէն ետք, իրենց այս վերջին հանգրուանէն եւս վայրագութեամբ տեղահանուեցան...»:

Նոյն բանը իմ մտքէս ալ անցաւ, տարագրութեան դառն բաժակը ցմրուր ըմպած այս մարդիկը, գոնէ իրենց շիրիմներուն մէջ հանգիստ քնանային...

Մայրս ի զարմանս մեզ՝ աւելցուց.- «Հոգին է կենդանի ընողը, մարմինը շահ մը չ՛ըներ...» Յովհաննու հայտ., 6.64:

Եւ գուցէ մեծ հայրս ու մեծ մայրս տակաւին ընելիքներ ունէին, հանգիստ չէին իրենց շիրիմներուն մէջ, մեր միջոցաւ դեռ ինչ-ինչ անաւարտ գործեր ձգած էին կատարելու համար: Կամ ալ, այս բոլորը ծիծաղելի թատրոն էր ու խաղարկութիւն: Որքան կուզէի որ երկրորդ հաւանականութիւնը ճիշդ եղած չըլլար: Իսկ առաջինը երկնային ռումբի մը պէս պայթէր շարժելով մեր ընդարմացած հոգիները:

Հոգիի թագաւորութիւնն է, ուր մենք չենք չափեր երկրային չափերով: Թող արքնանա հիւսիսն ու հարաւը եւ փչեն մեր պարտէզներուն մէջ որպէսզի անոնց խունկերը բուրեն:

.....

Անցաւ տարի մը եւ ոչ մէկ տեղեկութիւն մեռեալներու աշխարհէն: Շէյխ Մաքսուտի գերեզմանատունը իր ամբողջ արուարձանով մնաց քաղաքի բռնագրաւուած մասին մէջ պետութեան հակադիր ուժերու

եւ ահաբեկիչներու իշխանութեան տակ, նոյնիսկ վերածուեցաւ թէժ մարտերու թատերաբեմի:

Նոր հարազատներ կորսնցուցինք: Մահուան սնարին մէջ եղող սիրելիներուս տարօրինակ մտահոգութեան ականատեսն ու բաժնեկիցը եղայ, լսեցի այսպիսի նախադասութիւններ. «Ո՞ւր պիտի թաղուինք, մեր ննջեցեալ հարազատներէն հեռո՞ւ, միսմինա՞կ, սիրելի ծնողներուս կողքին կ՚ուզէի հանգչիլ»:

Ազգային իշխանութեան կարգադրութեամբ յատկացուած՝ բոլորովին նոր տարածութեան մը մէջ թաղուեցան անոնք, պատերազմի աւարտին կրկին իրենց ննջեցեալ սիրելիներուն քով փոխադրուելու խոստումով:

Անհնարին էր այլեւս այցելել Շէյխ Մաքսուտի հայկական գերեզմանատունը ուր կը հանգչէին յետեղեռնեան շրջանէն՝ վերապրած հայերու, նաեւ մտաւորականներու աճիւնները: Մեր մեծ հայրերն ու մեծ մայրերը, մեր մօտիկ պարագաները մնացին երկաթեայ անհասանելի վարագոյրի մը ետեւ...ու ոչ միայն գերեզմանատունը դարձաւ անհասանելի, այլ ամբողջ քաղաքը մնաց աքցաններու մէջ շրջափակուած...

Մեր սրբութիւնները, ինչպէս Տէր-Զօրի յուշահամալիր մատուռը, դարձան ահաբեկչութեան քմահաճ թիրախ, փայփայուած նշխարները անպատուեցան եւ անողոքաբար կործանեցան... Մեր մարգարիտները մնացին շուներուն ձեռքը:

Նիւթական ամէն բան ենթակայ է կործանման, իսկ ոգեղէն բոլոր արժէքները կարելի է ամրօրէն պահպանել մեր հոգիներուն խորքը:

Ու մենք մասնակից կը դառնանք Կիլիկեան արքաներուն երազ-

ներուն մէջ յայտնուած ճամբորդութեան, այս ճամբաբաժանին՝ մինչ անոնք կը ձգտէին հասնիլ հարաւ եւ սրբազան տարածութիւններ մուտք գործել... Այժմ մենք՝ հալէպահայերս, կը փորձենք մեր ունեցածը ամուր բռնել, զիրենք խարսխած մեր մէջ եւ իրենց հետ շարժիլ՝ նաւապետին եւ իր նաւաստիներուն առաջնորդութեամբ:

Յունիսեան կիզիչ արեւը պահ մը՝ իր ուժէն ներարկեց երակներուս մէջ եւ ես սկսայ այրիլ այն լուսէ տեսիլքով որ դրոշմուած էր մեր քաղաքի ճակտին. կը քալենք այս փոքրիկ քաղաքի տեսիլքին մէջ, ուր տակաւին կը ծնին նոր մանուկներ, լոջութեամբ կը գործեն եւ կը գօտեպնդեն առաջնորդներ՝ փորձելով՝ յուսահատութենէ եւ թերահաւատութենէ հեռու մնալ, հաւատալու, սիրելու, գործելու հրահանգով՝ երկնային մանանայով սնուելու եւ կազդուրուելու գիտակցութեամբ օրինակ կը դառնան իրենց հօտին:

Եւ երկնային հացը որ երկինքէն իջած է, կեանք կու տայ, ապրելու ուժ եւ վճռականութիւն: Երկրէն բերած եւ այստեղ ձգած իրենց մասունքներուն հաւատարիմ կը մնան հալէպահայերը, ուժ կը ստանան իրենց անցեալէն, կը նորոգուին, կը յուսահատին, կրկին կ՚անթեղեն իրենց հաւատքն ու յոյսի վերջին նշոյլը: Մինչ անոնց գլխաւորեալին կը ծածանի տարբեր դրօշներ, օրըստօրէ կը հեռանան կը նօսրանան հարազատներու շարքերը՝ հոգիներուն մէջ դատարկութեան եւ անորոշութեան հետք մը ձգելով:

Քիչ ժամանակ անց անկէ հեռացողները կը սկսին երգել՝ «Ալ կը բաւէ Տէր Աստուած մեր տուն ու տեղ դարձուր մեզ»: Տունդ, յիշատակներդ եւ հարազատներդ ուր որ են, սիրտդ ալ հոն կը մնայ: Ու երբ որ բացուին դռներն յուսոյ նոյնիսկ՝ չբացուին, եւ այս ծննդավայրին վրայ տակաւին ձմեռը ոռնայ իր սաստկաշունչ ամրոպներով.

«Աստուած չընէ որ շարունակուի երկար, ամէն բան աւարտ մը ունենալու է», անկէ կախեալ խենթեր նոյնիսկ հեռաւոր ցամաքամասերէ պատրուակներով ճամբայ կ՚ելլեն եւ իրենց սիրելիներուն ու այնտեղ հանգչողներուն ոտքերուն փարուելու երազով կրկին կը վերադառնան անոր գոգը: Նոյնիսկ եթէ բոլոր ճամբաները փակուած ըլլան եւ փականուած՝ արահետ մը բաւարար պիտի ըլլայ հասնելու համար այնտեղ...

Գերեզմանաքաղաքը կը սկսի լուռ արտասանել բոլոր յայտնիներուն եւ անյայտներուն անունները: Գերեզմանաքարերը իրենց արձանագրութիւններուն մէջ, սակայն, տեղ-տեղ շփոթած բաց կը ձգեն անուններ, որոնք ապրեր էին մօտակայ տարածքներու մէջ, սակայն չէին թաղուած այստեղ իրենց հարազատներուն կողքին, տարբեր ցամաքամասերու վրայ յայտնուած, սփռուած եւ ձուլուած անոնց մեռելներուն աճիւններուն հետ: Ու ես պիտի չուզէի ըլլալ այդ փաղանգին մէջ, պիտի ուզէի հօրս գլխաւերեւի ծառի շուաքին տակ ըլլալ, կամ ալ բաղդաւոր պարագային՝ հայրենի երկրիս մէջ հանգչեցնել գլուխս, անշուշտ եթէ արդարացիօրէն կարենայի ապրիլ այնտեղ:

Ականջիս ձայն մը այսպէս կը շշնջայ՝ «արժանի»ին գիրքին յիշողութեան մէջ բծախնդրօրէն եւ ամենայն զգուշութեամբ արձանագրուած կը մնայ ամէն բան, նոյնիսկ ամենայետին մանրամասնութիւն:

Քուիք գետը իր ծալքերուն մէջ ծրարուած, շատ մը գաղտնիքներ կը տանի իր հետ առյաւէտ, որոնք սակայն անոր վրայ դեգերող հրեշտակներու տեսողութենէն բնաւ չեն վրիպիր. վտիտ նօսրացած գետը այլեւս բնաւ չկրնար յորդիլ ջնջելու եւ մաքրելու համար իր շուրջ կուտակուած չարն ու աղբը, այրած հին շուկայի մոխիրն ու կականը, խուլ հառաչով կ՚ընթանայ առաջ...

Հին քաղաքի ժամացոյցէն նայող ժամանակի սլաքները իրենց մէջ կ՚ամբարեն անցնող բոլոր ժամերու վաւերագրութիւնը՝ եւ լաւ, եւ վատ. եւ իցիւ թէ կարենան սրբել եւ իրենց հետ տանիլ ցաւ ու տառապանք, դիպուկահարներու չարագուշակ թպրտոցը, հրասանդներու գահավիժող բամբիւնն ու գաղթողներու անմեղեղի եւ խունացած տուներու տամկութիւնը: Կրկին մանկան աղաղակով եւ դպրոցականներու չարաճճի ճիչերով լեցնելու մեր յարկերն ու վարժարանները, ակումբներն ու հանրային պարտէզները: Ժամացոյցի ուրախ թքթքոցը հարկաւ օր մը պիտի լռուի կրկին...

Մեզի կեանք եւ երազ պարգեւած քաղաքը, անհասկանալի բնազդով մը, իր գերերկրային կրակով անգամ մը եւս կը մկրտէ հոգիս բարի լաւատեսութեամբ՝ զիս հրաւիրելով հարազատներուս բոյնը՝ իր գոգը: Եւ ես իմ ներքին սլաքներով կը վերադառնամ դէպի մօտիկ անցեալ ուր կը յայտնուի քաղաքը գիտակցութեանս, շնչառութեանս եւ սրտիս ամենանրբին հիւսկէններուն մէջ. ես իմ սեփական քաղաքի սահմաններուն եւ քարտէսին մէջ եմ հիմա:

Կրակոցն ու ջինջ երկինքէն անցնող արագավազ ուղղաթիռին աղմուկը կը ցնցեն ականջներուս խորքը, ամբողջ էութիւնս՝ եւ երկնային բառեր կը փսփսան ինծի այս նախադասութիւններով՝ «Աստուծոյ Ձեռքն է միայն որ կրնայ սաստել իշխանութիւնները, Ան կրնայ պահել մեզ ամէն տեսակի յարձակումներէ եւ իր հրաշալի միջամտութիւնը ցոյց տալ: Մինչ մենք գիշերը մեր գլուխը կը հանգչեցնենք բարձին քնանալու, ան արթուն կ՚աշխատի մեզի համար, իր հրեշտակներու գունդերով կը հսկէ մեր հարազատներուն ապահովութիւնը: Ան է որ մեզ կը պահէ տակաւին: Եթէ գիտնայինք այս բոլորը՝ ուրախութեան

արցունքներ պիտի յղէինք»: «Աստուծոյ ձեռքին յաղթութիւնը պիտի երեւի ամէն անկարելիութեան վրայ, երբ մեր բոլոր կարելիութիւններ-ը կ՚աւարտին, Ան կը սկսի գործել»:

«Կեանքը մարդագոյ չէ եւ ոչ ալ ինքնագոյանոր գոյութեան աղբիւրը Աստուած է: Հետեւաբար ան պէտք է ապրուի Աստուծոյ համար, աստուածային ծրագրի իրագործման համար: Արամ Ա Կաթողիկոս»:

Հեռուէն եկող բառերու այս քաղցրահունչ համանուագը գերերկրային ռումբի մը պէս կը ցնցէ ամբողջ էութիւնս եւ զիս կը մղէ առջեւ...

*Յունիս 2013 Հալէպ*

# ԿԱՆԹԵՂ ԼՈՒՍԱՒՈՐՈՂ ԿԱՅԾ

Լոյսի տօն: Հոգիներու լուսաւորման տօն: Սիրոյ տօն:

Ես՝ ճամբորդս, նոր կայծով՝ կը սկսիմ նոր ճամբորդութիւնս ու կը սիրեմ նոր սիրով:

Մոմեր, մոմեր, բոցկլտացող. բոլորը բոլոր, իրենց մոմերը կը վառեն...: Ամբողջ ուժերս հաւաքած կը մօտենամ առջեւ, հոգիս յարդարած, կարկառած հաւատքի բազուկներս, աչքերս յառած լոյսին, կերկարեմ մոմս, լոյս առնելու, լոյս բերելու դէպի հոգիս ու անոր նոր տունը: Լոյսի տունէն դէպի իմ լոյսիս տունը՝ միացնելու. լոյսերու, հոգիներու տունը: Սիրոյ լոյսս կը խառնեմ փայլփլող մոմերու լոյսին: Փոքրիկ շողը միանալով պատրոյգին, վայրկենապէս կը ճառագայթէ կը բոցավառի, կը դառնայ մէկ ամբողջութիւն:

Հոգիս պահ մը կը մերկանայ մարմինէս եւ իր նման հոգիներուն հետ կը միանայ:

Ուրախ եմ այնքան ուրախ: Ուրախութիւնս նորընծայ, ուրախարար նոր ներկայութիւնս կը բաժնեկցիմ այլ հոգիներու հետ: Կերկարեմ նոր վառած մոմս դէպի ինծի ուղղուած կարկառած ձեռքեր: Արագ, արագ ջահերու պէս կը բոցավառին բոլոր շարուած մոմերը, ջահերթ է երկնային: Անոնք ալ իրենց հերթին կերթան լապտերներ վառելու: Կը սկսի լոյսի ճամբորդութիւնը, տօն է, շատ հին. բայց անանախընթաց: Հազարաւոր լոյսի տարիներու ընդերքէն եկած լոյսը, լուսաւորող կայծը այսօր կը ստանայ նոր հագուստ, նոր երանգաւորում, նոր տեսողութիւն: Կը բացուին հոգիիս մրափող աչքերը: Կանթեղները կը դառնան աստղաթաթախ, տեսիլքները բարձրաթռիչ սլացքով լոյսերու աշխարհէն կը ներխուժեն միտք, սիրտ ու հո-

գի: Խորանին դարեւանդը կը բոցկլտայ ճաճանչներով ու կանթեղին անմար կրակը կը նորոգուի սիրոյ ձէթով: Կը հոսի կեանքը հոնկէ, ջրվէժող լոյսերով, երազներով: Տօն է ցնծագին: Ես կը սիրեմ, լոյս ունիմ մէջս, ստացած սիրոյ աղբիւրէն, լոյսի, բերկրութեան օրրանէն: Ճամբորդութիւնս սկիզբ կ՚առնէ այս լոյսէն ու սիրոյ ջահը ձեռքիս կը մնայ վառած: Ով լուսերես տեսիլք, լուսաշող, լոյս փոխանցող, նուիրող, ես՝ ցարդ պատրոյգիդ ձէթէն բխող ճրագիդ լոյսն է որ կ՚օգտագործեմ, կը փոխանցեմ:

Աղօթքներով, պաղատանքով ստացուած պարգեւ: Այնքան դժուար եւ այնքան հեշտ ընկալուած նուիրական աւանդ...: Մատակարարիդ միջնորդութեամբ կը ստանամ ես քեզ:

Լոյս, լոյս, լոյս է ամէն կողմ, լուսաւորեալ փառաւոր լոյսի ճառագայթում, լոյսի ներկայութիւն, լոյսէն բխած, լոյսէն ծագած առաւօտ լուսոյ..., նոր լոյսի ճամբայ, լոյսի ճամբորդութիւն...: Հարթ ճամբայ, լուսաւոր հորիզոն եւ խաղաղ աշխարհ պարգեւէ... Լոյսի ճամբորդներուս:

.....

# ԲԱՑՈՒԻՐ ԵՐԿԻՆՔ

Ան իր բարութեան գանձը՝ երկինքը պիտի բանայ:

Ես ալ բարձր եղեւինին ամենաբարձր ճիւղէն պիտի առնեմ ու պիտի տնկեմ, անոր ընձիւղներուն ծայրէն մատղաշը պիտի փրցնեմ ու բարձր ու վերացած լերան մը վրայ պիտի տնկեմ: Եզ. 17. 22

Վերացած բարձր լեռ՝ ընձիւղներու ծայրէն առնուած մատղաշ ճիւղով պիտի պատուաստուիս: Վայրի եւ հարազատ քաղցր ներկայութեան մէջ ես: Աղբիւրացած իմաստութեան ցօղի շիթերով կ՚ոռոգուիս, բարութեան գանձերով՝ ծանօթէն անծանօթին երթալու համար: Ժամանակին մէջ եւ ժամանակէն դուրս: Ժամանակէն եւ տարածութենէն ալ վեր՝ առաքում: Արեւելքի ծագումէն, երփներանգ շառաւիղներէն ալ անդին կը տարածուին ընձիւղներ, արքայական փափկութեան եւ քաղցրութեան մէջ եթերէն անդին, աննիւթական այգիի՝ եղեմական աղբերացման յորդուն բաշխումին մէջ մայրական: Ցօղուելէ ետք ջուրով եւ հրեղէն անկէզ ու սրբող լեզուներով: Գ-մբեթարդ դռնէն մտիր, թափանցիկ պատուհաններէն ճառագայթելու համար: Ծառ մը ունենալու որ կեանք կարենայ տալ քեզի, եւ՝ ամայացած ու լերկ շրջապատիդ: Ճառագայթող ծառ մը որու արմատներու խորքը ամբարուած են կեանքի ճառագայթներ:

Կեանքի Ծառ: Լեցուն է սկիհը կեանքի ծառի կենարար ծինով: Սկիհին լեցուելու եւ տալու կարողականութիւնը զարմանալի է: Երախտագէտ հիացմամբ տես՝ անսպառ է օրհնութիւնն ու բերքը կեանքի: Հիացումէ հիացում, զարմանքէ զարմանք անցիր. մօտեցիր առ ու ճաշակէ, հոնկէ ուր ձրի է կեանքը: Անարգել անցիր առաջ, վերցուր բարութեամբ լի կեանքի ընձիւղէն, շառաւիղէն: Բաւական է քաղցը

ունենալ քայլ մը առնել ու մօտենալ: Երջանկանալ կեանքի ծառին արձակած ճաճանչներէն՝ ճառագայթէն:

Կը լեցուի մշտանորոգ սկիհը կեանքի ծառի արմատներու զօրութեամբ: Կը սրբագործուի կը յատկացուի կը նուիրականացուի, կը վերածուի՝ լոյսի, ստեղծագործութեան, լուսաշող զօրութեան, խօսքի, սիրոյ ոգեղէն ներկայութեան, նուիրման, ընծայաբերման, նեկտարի ու կենարար արեան:

Ոգեղէն զօրութիւններ երկինքներէն ալ վեր են ուր նուրբ է ամէն բան, փափուկ, քնքուշ եւ մերկ: Անարգել՝ վերամբարձ աներեւոյթ լեռան վրայ:

Փորձէ Քալել ծանօթէն անծանօթին՝ դէպի կրակէ շրջանակը քերովբէներու շուրջպարին, կայծ մը առ հուրէն՝ մաքուր է ամէն բան: Տաքուկ ու ապահով ներկայութեան մէջ մտիր հանդարտօրէն ուր սերովբէները կը պաշտպանեն սահմանները բարութեան երկրին:

Այդ բարութեան գանձերէն կը տեղայ հիմա, կենաց ծառի պտուղները կը լեցուին ոգեղինացած, աննիւթացած գաւաթին մէջ սկիհին:

# ԵՐԿԻՆՔԻՆ ՄԷՋ ԲԱՑՈՒԱԾ ԴՈՒՌ ՄԸ ԿԱՅ «ԸՆԴՄԻՇՏ»

Երկինքի մէջ բացուած դուռ մը փողի հնչիւնին հետ սանդուղքներէն վեր դէպի վեր փայլատակող գահը կը տանի ընդմիշտ՝ հոգիի վերացմամբ...Վեր, դէպի վեր...

Շողշողուն թանկագին քարեր կը ճառագայթեն մեծ գահին վրայ, զմրուխտեայ փայլքով շողարձակ պայծառ ու յստակ: Շրջապատուած սպիտակաթոյր գահերով: Յատկացուածներու հաւաք է տօնական՝ կամ հարսանիք: Ոսկեպսակներու փայլատակում: Ոլորտներու բացայայտում: Ահեղագոռ ձայներ, ամպրոպ, կայծկլտացող ապակեպատ բիւրեղեայ վճիտ ծով: Վեցթեւեան էակներ, բոլորապատ աչքերով օժտուած կ'երկրպագեն գահին առջեւ ըսելով՝ Սուրբ, Սուրբ, Սուրբ,.... Կ'երկրպագեն՝ իրենց պսակները նուիրաբերելով գահին: Արժանիին փառքին պատիւին ու զօրութեան... Բոլոր բաները իր կամքով ստեղծողին, գոյացնողին... ըսելով՝ Միայն դուն ես արժանին... Փառքի, պատիվի եւ զօրութեան:

.....

Ուրախութեան խայտանք Սրբութեան սիրոյ եւ կեանքի ծառի Գեղեցկութեան Մէջ

Հրեշտակներու սուրբ բանակները ահով հիացած կը զարմանային, սերովբէները կը սարսափէին, գերագոյն պետութիւններն ու վերին իշխանութիւնները՝ սքանչանալով կը զարմանային Քրիստոսի խաչելութեան խորհուրդով: Մ. Խորենացի

Իսկ հաւատացեալներուն՝ խաչով շնորհուեցաւ տունկ զուարճատեսիլ եւ նշան փրկութեան, ճիւղ՝ լի բողբոջած ծաղիկներով եւ անթա-

ռամ տերեւներով, ծառ՝ հրաշափառ տեսքով եւ պարգեւաբաշխ պտուղներով:

«Փակեալ աղբիւրը եւ կնքուած աղբերակ»ը մերը դարձաւ: Քաղցրահամ պտուղներով տունկերու պարտէզներէն ու դրախտէն կարելի եղաւ ներս մտնել:

Արթնցիր, ով Սուրբ Հոգի, որ իմ մէջս կը քնանաս, եկուր փչէ իմ պարտէզիս մէջ, օրհնութեան անձրեւներով ողողէ զայն, որպէսզի անոր խունկերը բուրեն: Կեանքի ծառեր ու ծաղիկներ բուսնին հոն:

Արագավազ ջուրեր ոչ իսկ հեղեղներ կրնան մարել քեզի հանդէպ ունեցած իմ սէրս, ոչ մէկ զօրութիւն կամ իշխանութիւն, քանի որ իմ սէրս ժամանակի մէջ չէ որ կ՚ապրի այլ յաւիտենականութեան: Անտեսանելիին մէջ կը ծաղկին ու կը բուսնին անոր ճիւղերն ու տերեւները: Ծլած պտուղները իմ սրտիս վրայ կնիքի, եւ բազուկիս վրայ նշանի պէս դրի, անոր բնակութեան նախասիրած վայրը եղայ ես, ու կը հանգչիմ անոր տերեւներուն շուքին, հովանիին քաղցրութեան եւ խաղաղութեան տակ:

Իմ սիրեկանս թող խնկաբեր լեռներուն վրայէն այծեամի կամ եղնիկի ձագի նման նռնենիներու աւետաբեր ճիւղերով եւ խաղաղութեան ձիթենիներով արտորանքով գայ իր անհատնում սէրը բաշխելու, ճաշակել տալու, իր ներկայութեամբ ուրախացնելու եւ ցնծութիւն պարգեւելու համար... .

## ԺԱԿԼԻՆ ՉԵԼԻՔ

(ԹՈՒՐՔԻԱ)

# ՀԱՄԸՆԴՀԱՆՐԱՅՈՒՄ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԻՒՆ

Նախ և առաջ կ'ուզեմ հարցնել թէ ի՞նչ է ինքնութիւնը: Իսկապէս գոյութիւն ունի՞ թէ ոչ, ժամանակի ընթացքին, ժողովուրդներուն վրան յառաջացած անտեսանելի տեւողութեան կամուրջ մըն է՞ ան: Անշուշտ ժողովուրդներու ու անհատներու ինքնութիւն նկարագրութիւնը և ինքնութենէ պահանջքները կը տարբերին իրարմէ: Բայց եթէ կը խօսիմ իմ անունովս, կրնամ ըսել թէ վերացական բացատրութիւն մը կատարել, ինքնայարաբերութիւնս կը տանի աւելի օդաւէտ մթնոլորտի մը: Այսպէսով ինծի վերագրուած կամ անձիս կողմէ ընտրուած բոլոր ինքնութիւններու դէմ սահման մը կրնամ գծել: Ասոր հանդերձ հարցաքննութիւնները չեն վերջանար: Նոյնիսկ հարցաքննել միայն այսպիսի սահմանով մը կրնայ իրականանալ:

Բնական է, որ մեզմէ շատեր անձնական կամ ժողովրդական անցեալի հանդէպ կը կրեն հարցումներ: Մեզի պէս բազմախաւ ժողովուրդներու մէջ ապրող անձեր հարցնելիք շա՜տ հարցումներ կ'ունենան: Իսկ ինքնութիւններ, ջուրի վրայ պտտող իւղի նման իրարու քսուելով, շօշափող մնալով կամ միանալով նոր խաւեր մէջտեղ կը բերեն: Յաւիտենական ընթացք մըն է ասիկա: Այս անվերջութեան մէջ կը տեսնանք թէ ոչ մէկ ինքնութիւն կը մնայ անփոփոխ, այլ կը փոխուի անդադար և այսպէսով փոփոխութեան ինքն անգամ այդ ինքնութեան պատմական արկածին մէջ կը ձեւաւորուի: Այս արկածէն չի վախնող ինքնութիւնը կը գոյատեւէ, իսկ վախկոտները իրենց սահմանները խիստ արգելքներով փակուած, տարածավախ շրջանակի մը մէջ բանտարկեալ մը մնան: Եւ անշուշտ կ'անհետանան: Որովհետեւ մարդ էակը իր բնութեան համեմատ փոփոխութեան պէտք կը զգայ: Ինքնութիւններն իսկ պէտք ունին շունչ առնելու և նախ իր անձին յետոյ ուրիշներու, իրենց գոյութիւնը հասկցնելու:

Գիտենք թէ անհատները պէտք ունին ինքնութեան: Ի վերջոյ ամէն անձ կ'ուզէ իր գոյութեան հիմ մը գտնել: Ամէնէն անտարբեր անձն անգամ իր ընտանիքին անցեալին հանդէպ քանի մը հարցում կ'ուղղէ: Սակայն ինքնութիւնը միայն անցեալը հարցաքննելու առարկայ տեսնալ սխալ է: Ինքնութիւնը մեզ կը պարզէ ներկայ ժամանակի և մթնոլորտի ծածկագիրները: Բոլորս ունինք պատմութիւն մը որ կը ձեւակերտէ մեր ինքնութիւնը: Յայտնի է թէ աշխարհը հարցաքննող որեւէ անձ, իր կամքէն դուրս, ծնիլով ստացած ինքնութիւններու հետ խաղաղ յարաբերութիւն մը չունի: Որովհետեւ կարգ մը քաղաքականութիւններով կը ջանան արգիլել այս շրջանը որ ինքնութիւնները կ'անցնեն լուրջ փոփոխութիւններ:

«Ազգային ինքնութիւն»ներ, ներկայ համընդհանրական ցանցերու մէջ պետութիւններու գոյատեւութեան օրինական պատճառները ըլլալով ցաւալի վիճակի մը մէջ են: Համընդհանրացումը ինքնութեանց թափանցութեան վրայէն կը յառաջանայ: «Ազգային ինքնութիւն»ներն ալ այսպիսի արագ փոփոխութիւնները կը տեսնեն իբրեւ վտանգ ու կը ջանան զօրացնել իրենց բերդերը: Այնպէսով ամէն մշակութային յատկութիւն կը սկսի սեպուիլ «Ազգային ինքնութեան» պաշտպանման սահմանանշանը: Համընդհանրացումը կը ջանայ այս նշանները տեսանելի և փոփոխական դարձնել, իսկ ազգային ինքնութեան ինքնապաշտպանութիւնը կը գործածէ զանոնք իբրեւ զէնք: Յարակարծեալ ձեւով համընդհանրացում, իր ստեղծած պաշտպանութեան յօրինուածքով յարձակողական գաղափարախօսութիւնները կը սնուցանէ և կը տարածէ:

Վերջապէս, ժամանակի և ուժի հոսանուտթեան հանդերձ, մեր ինքնութիւնները շրջանակի մը մէջ սեղմուած ուրուականներու կը վերածուին: Համընդհանրացման մէջ մը հալին, բայց խորհրդանշաններով դիմադրելու ալ կը ջանան: Ու իբրեւ անհատ մեր քաղաքական և մշակութային կուտակումը կարծես կը ստիպեն քարացնելու, սառեցնելու: Ինքնութիւններն են որ կը բանան տարածութիւնները այցելութեան: Ու ընդհանրապէս զբօսաշրջիկութիւնն է վաստակողը: Դժբախտաբար ամէն պարագային կորուստը անհատինն է: Որովհետեւ բոլոր այս անցուդարձին միջեւ, անհատը կը կորսնցնէ ինքնութեան տեսակէտէ իրեն պատկանող և յառաջիկայ սերունդներուն հաղորդուելիք բոլոր ունեցածը: Թերեւս պէտք է «ինքնութիւն» անունին տակ հաւաքուած բոլոր յատկութիւնները կոչել տարբեր անունով մը և ազատիլ այս թակարդէ: Տասնամեակներէ ի վեր ինքնութիւններու վրայ կատարու-

ած ճարտարագիտական աշխատանքներու շնորհիւ այլեւս մեր մշակութային տուները ապրուելու վիճակ չունին: Կարծէմ թէ այս շփացած ու թանգարանական ձեւակերպ առած ինքնութիւնները պարունակել չենք ուզեր:

Մենք՝ Թուրքիոյ փոքրամասնութիւնները երբեմն համաշխարհային քաղաքականութեան խնդրոյ առարկայ կը դառնանք: Հայերս, Յոյները, Ասորիները և Հրեայները համաշխարհային ամենափոքր շարժման հանդէպ Թրքական-ազգային ինքնութեան ուժեղ գոյութիւնը կը զգանք մտրակի մը պէս մեր կրնակը: Այս պարագային արգելք ըլլալու վիճակ չունինք, քանի որ քաղաքական ուժը –ամէն առիթով- մեզ կը տեսնէ իբրեւ ոչ-քաղաքական, բազմամշակութային, բազմակրօնական պատկեր մը: Ու կը ջանայ մեզ պահել Միջագետքի սահմաններով կրօնական տարր ըլլալով: Հայերս իրենց արհեստով և կերակուրներով, Յոյները իրենց զուարճալի բնոյթով և գինետուններով, Ասորիները Յիսուս Քրիստոսի լեզուով խօսող հին ազգ մը ըլլալով կը նկարագրեն ու պատմութեան դասագիրքերու մէջ պատմուած պետական ճառերը առանց հերքելով մեզ կը ձեւացնեն սիրուն, անվնաս, պաշտպանուելու/պահպանուելու կարօտը քաշող թանգարանական առարկաներ: Այս տեսակէտով, Հրանդը սպաննուելէ յետոյ մէջտեղ ելած «Հրանդը չի կարողացանք պաշտպանել» խօսքը կը նշանակէ ոչ թէ Հրանդին սպաննուելուն դէմ իրենց զղջումը: «Հայ լրագիր» անուան տակ իրենց նկարագրած ցուցափեղկին ալ նոյն փամփուշտով հրոյ ճարակ դառնալուն հանդէպ իրենց զղջումն է ան: Այս անճարակ զգայութիւնը մահափորձին տեղը գրաւեց: Այս դէպքն է որ հասարակ յիշողութեան մէջ կայծ մը կրակեց: Ահա այս է որ կը կոչենք ինքնութիւն: Մեզ յիշեցուց թէ այդ փամփուշտը միայն մեր եղբօր չէ, մեր բոլորին է

նետուած: Մեր հասարակ յիշողութիւնն է որ այս նախադասութիւնը մեզի կազմել կու տայ: Ինքնութեան ուրիշներուն ցաւերն ալ մեզի զգալի դարձնող կողմն՝ մեր խիղճերուն դպած կողմն է ան:

Առօրեայ կեանքը ակամայ մեզ կը յիշեցնէ մեր ինքնութիւնը ու կը խրատէ պահպանել զայն: Որովհետեւ քաղաքական ուժը մեզ կը ճանչնայ, կը սիրէ, կը նշէ, կ'օտարացնէ, կը սպաննէ կամ կ'ապրեցնէ այս հագուստով: Իսկ եթէ մենք ասիկա գործածենք տուժողի լեզուով, այն ատեն ինքնութիւնը շղթայի պէս կը կապէ մեր ոտքերը: Իսկ համընդհանրացումը կ'ըսէ թէ առանձին չենք: Երկրագունտի ամէն կողմը մարդկութիւնը ունի նման յիշատակ մը: Ուր զօրաւորը կ'ահաբեկէ անզօրը և կը գտնէ հարմար պատճառ մը իր վարմունքին: Ինքնութիւն իմաստ մը պիտի ունենայ միայն հասարակ յիշողութիւնը վեր պահելով և անոր շնորհիւ նոր ու տարբեր աշխարհ մը ստեղծելու ծառայելով: Եթէ ոչ, ազգային-ինքնութեան շուքին տակ պիտի տկարանայ և պիտի անհետանայ: Եւ մենք նոր ու տարբեր աշխարհ մը ստեղծուած շրջանին միայն մաս պիտի կազմենք անցեալի հետքերուն: Ահա այս պատճառաւ պէտք է ազատիլ տուժողի լեզուէն և հարցաքննել մեր ինքնութիւնը թէ ինչպիսի՞ աղբիւրներ պիտի հայթայթէ մեզ նոր աշխարհ մը ստեղծելու պարագային:

## ԱՆՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

(ԿՐԿՍՏԿՆ)

# ՍԻԵՍՏԱ

Երեկոյան պրեմիերան է: Ռոմեո և Ջուլիետ: Եթե նույնիսկ ներկայացումը հանդիսատեսների դուրը չգա՝ նրանք, միևնույն է, կծափահարեն: Բայց ես տարիների ընթացքում սովորեցի ճանաչել անկեղծ ծափերը:

Հիմա դահլիճում մենակ եմ: Վառում եմ ծխախոտը, ներքաշում ծուխն ու բաց թողնում ուղիղ բեմի վրա: Ծուխը անշտապ ցրվում է, իսկ բեմը լցվում է ջրով, որը բեմից հոսելով՝ հեղեղում է դահլիճը:

Բեմը ծովափ է դառնում: Հիլդան մերկ քնած է ծովափին: Ավազահատիկները տռզած մրջյունների պես իրար գլուխ հավաքվելով՝

մագլցում են Հիլդայի մարմնին: Գիշատիչ ավազը ուզում է կուլ տա նրա մարմինը, բայց խենթացած ծովը ալիքներ է շպրտում դեպի ափ՝ Հիլդային փրկելու: Ալիքները պառկում են նրա մարմնին, հետո նահանջում են՝ մաքրելով ավազը: Հիլդայի մարմինը սարսափելի սիրուն է մենակության մեջ: Հետո ավազահատիկները չհանձնվող զինվորների պես շարունակում են իրենց երթը՝ փորձելով պաշարել քուն մտած ամրոցը: Իսկ ծովը նորից է գժվում ու ալիքներ ուղարկում՝ Հիլդային ազատելու: Ալիքները նրա մարմնից սրբում են ավազն ու հաղթանակած ետ դառնում...

Ծխի նոր քուլաներ եմ ուղարկում քեմ: Ծխի բացված վարագույրից երևում է հայելին: Հայելու առջև նստած է Եվան ու հիանում է ինքն իրենով: Ինձ հիացնում է նրա անկեղծությունը հայելու մեջ:

Հիլդան ու Եվան... Ռոքսին ու Վելման... «Չիկագո» մյուզիքլում Հիլդան Ռոքսին էր, իսկ Եվան՝ Վելման: Ես միշտ կպնդեմ, որ իմ «Չիկագոն» մյուս բոլոր չիկագոներից ամենահաջողվածն է: Նրանք փայլում էին այդ մյուզիքլում, որովհետև կարողանում էին անկեղծորեն մրցել, որովհետև այդ մրցակցությունը նրանց միջև Չիկագոյում չի սկսվել, այլ ավելի վաղ՝ այն պահից, երբ թատրոնում Հիլդային առաջին անգամ ներկայացրի, որպես Ջուլիետի:

Աչքս կպել էր: Չնկատեցի, թե ինչպես ծերացավ Եվայի դեմքը հայելու մեջ: Նա շարունակում է հիանալ ինքն իրենով: Դեմքը նույն անկեղծությունն է պահպանել: Այսօր երեկոյան նա լինելու է իր երազած Ջուլիետը:

Ես մի անգամ եմ այդ դրաման բեմադրել: Հիլդային սազում էր Ջուլիետի դերը: Մի քանի տարի շարունակ ցույց էինք տալիս այդ

ներկայացումը: Հետո Հիլդայի մեջ հայտնվեց ծով կանացիություն, նրան այլևս չէր սազում տասերեքամյա աղջկա դերը: Իսկ ես ուրիշ ոչ մի դերասանուհու չէի պատկերացնում Ջուլիետի դերում:

-Դու ցնդած ծերուկ ես,- լսվում է Հիլդայի ձայնը հայելու հետևից: Նա հայտնվում է բեմին. ճերմակ մազերը հասնում են գոտկատեղին, իսկ մետաքսե խալաթի կոճակները արձակել է՝ ցուցադրելով սմքած կրծքերը:

-Ես՝ Ջուլիե՞տ, էս պառավ հալովս Ջուլիե՞տ, ծաղրում ես ինձ հա՞:

-Հիլդա, սիրելիս, վերադարձա՞ր, բա ո՞ւր էիր, սիրելիս... ատրճանակը... վախենում էի... Հիլդա, կմրսես, սիրելիս, էդ ի՞նչ ես անում, փակիր կրծքերդ, քեզ հետ եմ, պոռնիկ, փակիր կրծքերդ...

Ես քայլում եմ դեպի նա, բայց չեմ հասնում նրան: Ես քայլում եմ կանգնած տեղում: Ես արդեն վազում եմ կանգնած տեղում:

-Հիմար, հիմար, հիմար,- կրկնում է Հիլդան:

Իսկ Եվան ծիծաղում է:

-Լռի՛ր, վհուկ,- գոռում եմ նրա վրա:- Հիլդա, սիրելիս, արի մոտս, տեսնո՞ւմ ես, էնքան եմ պառավել, որ չեմ կարողանում գալ մոտդ, գրկել քեզ, համբուրել, փակել կրծքերդ... պառավել եմ, բայց ոչինչ չեմ մոռացել, ես ամեն ինչ հիշում եմ...

Հիշում եմ պոռնիկների փողոցը, բրնձի պես մանր անձրևն ու Հիլդային՝ փողոցի մեջքին կանգնած, տղամարդկանց սպասելիս. հեզ, ինչպես ցորենի հասկը, նուրբ, ինչպես աղոթքը շուրթերի վրա, երկչոտ, ինչպես ավազի մեջ խրված մոմը: Նա նստեց իմ մեքենան: Փորձում էր իսկական պոռնիկի պես իրեն պահել, բայց ծնկները դո-

ղում էին: Ես ձեռքս դրեցի նրա ծնկին: Մյուսը, երես առնելով, սկսեց ավելի դողալ: Նայեցի նրա աչքերին: Սև ներկը հոսում էր աչքերից: Նա սկսեց հարվածել իրեն մատնած ծնկներին:

Հետո նա դարձավ Ջուլիետ, իսկ հետո՝ Դուլսինեա[1]: Հիշում եմ նրա աներևակայելի սիրուն մարմինը Դուլսինեայի դերում: Նայում էիր նրան ու հասկանում էիր, որ նա տեսիլք է: Ես նույնիսկ կասկածեցի, որ նա իրականում էլ գոյություն չունի, որ նա իմ կյանքում մահից հետո շարունակվող գիտակցությունից դուրս պրծած ուրվական է:

-Հիլդա, բայց ինչ մենակ ու դատարկ էիր այն գիշեր... Իմ չկայացած պոռնիկ, իմ մոլորված լուսատտիկ, արի, մոտեցիր ինձ, իմ դողդոջուն ձեռքերով կվակեմ կախ ընկած կրծքերդ... Գրկիր ինձ՝ ինչպես Էթելն էր գրկում Նորմանին[2], սիրիր ինձ՝ ինչպես նա էր սիրում: Դա արել ես բեմին, բայց հիմա էլ արա, արա ինձ համար: Պատկերացրու, որ Նորմանը ես եմ ու խաղա:

Սակայն Էթելի պես չվախենաս, որ ծերուկդ կմեռնի, սիրելիս, որովհետև ես չեմ մեռնի, ես մի անգամ արդեն մեռա՝ կաթով լցված կրծքերդ գրկած: Ես ամեն օր մեռնում էի, որովհետև կաթը չորանում էր կրծքերումդ: Ինձ չէր հաջողվում փրկել կաթդ: Ինձ թվում էր, թե մեր տղան մեռնում էր երկրորդ անգամ ու այս անգամ դանդաղ...

Ես ուզում էի փոքրանալ կաթիդ մեջ: Երբ փոքր էի, ձգտում էի ջնջել բոլոր սահմանները՝ խմել արգելված խմիչքները, ասել արգելված բառերը, նայել արգելված ֆիլմերը: Հիմա ես կարոտում եմ այդ սահմաններն ու այն ժամանակ կաթիդ մեջ ես նաև այդ սահմաններն էի տեսնում:

Ու երբ ցերեկը քուն էիր մտել ճոճացանցում, ես շուրթերովս հպ-

վեցի կաթիդ վերջին կենդանի կաթիլներին ու զգացի մեր տղայի շունչը, հոտը, ձայնը, արյունը, ճիչը: Ատամներով բռնեցի պտուկդ, ու իմ երակների միջով հոսեց մեր տղայի ապագան: Դրանից հետո մեր տղան ապրում է շուրթերիս վրա: Դրանից հետո որոշեցի չմեռնել, որ տղաս շարունակի ապրել շուրթերիս վրա, հոսել երակներիս մեջ...

Պարզապես գրկիր ինձ, սիրելիս, գրկիր ցնդած ծերուկիդ... Համբուրիր ինձ, համբուրիր տղայիդ... Բայց ինչ անողոք ես դու, իմ ծերացած պոռնիկ. դու գնում ես, լքում ես ինձ, անհետանում ես...

Հիլդան չկարողացավ խաղալ Ջուլիետի դերը: Նա առաջին անգամ թույլ գտնվեց, չհամարձակվեց, վախեցավ: Սկզբում մի կերպ համոզել էի:

-Հետո՞ ինչ, եթե իմ Ջուլիետն ու Ռոմեոն ծեր են, իմ թատրոնի բոլոր դերասանները պառավել են, մեկը հո պիտի՞ Ջուլիետ խաղա: Հոգնեցի պառավ ծաղրածուներ ու պառավ բոզեր ցույց տալուց: Ի՞նչ, փակե՞մ թատրոնս: Պառավել եք, բայց հո չե՞ք մեռել: Թող մի անգամ էլ Ռոմեոն ու Ջուլիետը պառավեն, վերջապես դերասաններ չե՞ք, ինչ է, գրողը ձեզ տանի, պիտի խաղաք, պիտի ձևացնեք, պիտի երևակայեք... Իմ Ռոմեոն ու Ջուլիետը ցույց կտա, որ մայրամուտը ինչքան էլ տխուր լինի, միևնույն է այն սիրուն է, սիրուն է թեկուզ միայն իր տխրության մեջ, իր միայնության մեջ...

Իմ թատրոնի բոլոր դերասանները ծեր են: Ու նրանք չեն մեռնում, ինչպես Սարամագոյի երկրի բնակիչները՝[3] չէին մեռնում: Ես ինձ նավապետ եմ զգում, որի նավակազմի յուրաքանչյուր անձ պառավել է, բայց ոչ մեկից չի հրաժարվում, որովհետև ամեն մեկի հետ

կապված է ծովի զգայարաններով, կնճիռներով, թրթիռներով, հանդարտությամբ, մոլեգնությամբ ու խելագարությամբ... Նա զգում է, որ իր նավը ուր-որ է բեկվելու է, քաշվելու է խորքերը, անհետանալու է ծովի երեսից, բայց նա պայքարում է, փորձում է փրկել նավը: Ու անսահման հպարտ է իր նավակազմով, որովհետև ոչ մեկը չի լքում նավը, չի նահանջում ու չի էլ մեռնում...

Հիլդան ինձ խեթ-խեթ նայելուց հետո հանկարծ գոռաց.

-Ուրեմն դաշույնով սպանեմ ինձ հանուն մի քավթառի՞...

-Դու հանուն ինձ, սիրելիս, դաշույնով չե՞ս սպանի քեզ...

-Օ՜ աստվածներ, ինչո՞ւ եք ինձ էսքան խելառ մարդ տվել...

-Հը՞, սիրելիս...

Հիլդան անթարթ նայում էր աչքերիս: Հանկարծ նրա ձեռքերը դողացին, ինչպես շատ վաղուց դողում էին նրա ծնկները: Ես նրա ձեռքերը պահեցի բռիս մեջ: Հիլդան նայեց ուղիղ աչքերիս: Նրա շուրթերը թեթև թրթռում էին: Հետո ձեռքը հանեց բռիցս ու սկսեց շոյել դեմքս: Նա ժպտաց:

Առաջին փորձին Հիլդան ուշացավ: Երբ նա ներս մտավ բեմ, բոլորս հանկարծ լռեցինք, կարծես բոլորիս միանգամից գնդակահարեցին: Հիլդան հագել էր Ջուլիետի այն նույն զգեստը, որով շատ վաղուց խաղում էր նրա դերը: Տարիների ընթացքում նրա մարմինը կարծես չէր փոխվել, միայն մաշկն ու երակներն էին գունափոխվել: Նրա ճերմակ մազերը ջրվեժի պես հոսում էին մեջքի վրայով: Գլխին չորացած ծաղկեպսակ էր դրել: Եթե Ջուլիետը ծերանար, կլիներ ճիշտ այսպիսին: Նա վստահ քայլերով առաջ եկավ, կանգնեց բեմի կենտրոնում ու ինձ նայելով՝ խռպոտ ձայնով հայտարարեց.

-Դո՛ւ կլինես իմ Ռոմեոն: Պառավ Հիլդան միայն իր մարդու հետ կհամբուրվի:

-Դա լինելու բան չի,- չոր-չոր կտրեցի ես:

-Այդ դեպքում թատրոնից կհեռանամ:

Հիլդան հանդիսավոր խոնարհվեց ու երերուն քայլերով սկսեց հեռանալ: Նրա քայլերը զգում էի ձեռնափերիս վրա: Երբ նա հեռացավ՝ ձեռնափերս մնացին մերկ ու մենակ...

Ինձ նորից ծխել է պետք: Ուրիշ ի՞նչ կարող ես անել, երբ կինդ լքում է քեզ: Ներքաշում եմ ծուխը, ապա բաց թողնում բեմի վրա, որը սպասում է իր Ջուլիետին:

Եվան այնպես մտավ դերի մեջ, ասես իրականում ինքը ոչ թե յոթանասունն անց կին է, այլ՝ տասերեքամյա սիրահարված աղջիկ: Նա կարողանում է համբուրել ծեր Ռոմեոյին, որովհետև միշտ երազել է լինել Ջուլիետ, որովհետև ժամանակին Ջուլիետի դերը հասավ Հիլդային, որովհետև նորից ուզում է սիրել ու սիրվել, որովհետև իրականում չի էլ ծերացել...

Հիմա ծխի քրքրված վարագույրից երևում է Հիլդան՝ Սառայի[4] դերում: Նայում եմ շուրջս, դահլիճում հատուկենտ մարդիկ են նստած: Հետո հայտնվում են նորերը: Դահլիճը հետզհետե լցվում է: Ես նույնպես հանդիսատես եմ: Ես ինձ արքա եմ զգում չարչու շորերով:

Սառան առաջ է գալիս ու կանգնում բեմի եզրին: Չեմ հասկանում, թե ուր է նայում: Ծնչում է հանգիստ, զգույշ ու քնքշորեն, բայց նրա շնչառությունը զգացվում է նաև ամենահետևում: Չեմ հասկանում, թե ինչ է մտածում այս պահին:

Հանկարծ նրա գլուխը պայթում է ու բացվում է մի ամբողջ աշ-

խարի՝ իր խեղճ ու փառահեղ շենքերով, նեղլիկ ու լայն փողոցներով, գունեղ ու մանր ձկներով: Ֆանտաստիկ հրավառությունից գլուխս պտտվում է: Ես չեմ հասկանում՝ քնա՞ծ եմ, թե՞ արթուն: Կնոջս անգլուխ մարմնի վերևում քաղաքների ու ծովերի հրավառություն է, որը հետզհետե մարում է, ու երևում են կնոջս աչքերը, քիթը, շուրթերը:

Ատրճանակը... Սառայի ձեռքին ատրճանակ է... Նա հայացքը պտտում է դահլիճում, գտնում է ինձ ու հայացքը հառում վրաս: Նա ատրճանակն ուղղում է ճակատիս: Մարդիկ սարսափած փախչում են: Ես սեղմվել եմ աթոռի հենակին: Ատրճանակը ամեն պահ կարող է պայթել, ինչպես քիչ առաջ պայթեց Սառայի գլուխը:

Յուրաքանչյուր մարդ հղի է պայթյունով... Յուրաքանչյուր մարդու գլխում մի ատրճանակ կա... Յուրաքանչյուր մարդ կրակում է, կրակում է տեղի-անտեղի, կրակում է, երբ սիրում է, կրակում է, երբ ատում է, կրակում է, երբ ուզում է կրակել, պայթել, սպանել, պայթեցնել...

Ես բեմին տեսնում եմ ինձ՝ շրջապատված մարդկանցով, որոնց վզներից ատրճանակներ են կախված: Նրանք ժպտում են, ծիծաղում են, պարում են, բայց միշտ պատրաստ են ձգանը քաշել: Ես վախենում եմ յուրաքանչյուր մարդուց, այդ թվում՝ Հիլդայից: Ես փորձում եմ փախչել, բայց ապարդյուն:

Սառան իջնում է բեմից, մոտենում է ինձ ու ատրճանակը հպում քունքիս: Ես արդեն զգում եմ իմ արյան հոտը: Ուղեղս արդեն ցավում է մոտալուտ ճայթյունից: Սառան կրակում է, բայց միայն թույլ չխկոց է լսվում:

-Քանի՞ անգամ ես դու այս ատրճանակը ձեռքիդ ինձ համոզել, որ կարող ես հանուն ինձ ինքնասպան լինել,- Սառան խոսում է Հիլդայի ձայնով,- ես հավատում էի, որ դու իսկապես ընդունակ ես նման հիմարության: Բայց հետո պարզվում է, որ ատրճանակդ դատարկ է: Մեջը բան չկար, ինչը կարող էր քեզ սպանել հանուն ինձ: Ու միշտ դատարկ է եղել: Բայց դու ինձ համոզում էիր, որ ամեն վայրկյան կարող ես ինքնասպան լինել, եթե միայն կամենամ, որովհետև սիրում ես ինձ: Ատրճանակը ձեռքիդ համոզում էիր ինձ: Իսկ ես վախենում էի, որ դու հանկարծ կարող ես նման բան անել, որովհետև աննորմալի պես սիրում ես ինձ: Ու ես մի օր որոշեցի դատարկել ատրճանակդ, որ փրկեմ քեզ, բայց պարզվեց, որ ատրճանակդ դատարկ էր, գրողը քեզ տանի, դու խոսում էիր, համոզում էիր, իսկ ատրճանակդ դատարկ էր, դատարկ էր...

Հիլդան արտասվում է: Նա մի կողմ է շպրտում ատրճանակն ու դեմքը թաքցնելով ափերի մեջ՝ լալիս է: Հիլդան այնքան երիտասարդ է, իսկ ես՝ այնքան ծեր, որ չեմ համարձակվում հպվել նրան, գրկել ու սիրել:

Հանկարծ Հիլդան ծիծաղում է: Նա նայում է ինձ ու ծիծաղում է: Նա ներում է ինձ: Սպասում է, որ գրկեմ նրան: Իսկ ես չեմ շարժվում տեղից, որովհետև նա երիտասարդ է, իսկ ես՝ ծեր: Բայց նա ինքն է նետվում գիրկս: Նա պրկված կրծքով սեղմվում է ինձ: Նա ուզում է համբուրել շուրթերս, իսկ ես գլուխս հետ-հետ եմ տանում: Նա ձեռքը սահեցնում է ներքև, բռնում է անդամս ու նորից ծիծաղում: Ես բարկանում եմ, որ նա ծաղրում է տարիքս, բայց նաև աներևակայելի հաճույք զգում նրանից, որ անդամս նրա ձեռքի մեջ է: Ես այլևս

չեմ լսում նրա ձայնը: Մարմինս այնքան է ջերմացել, որ ամեն պահ կարող է պայթել...

Արթնանում եմ ինչ-որ պայթյունից: Ծալվարիս մեջ թացություն եմ զգում: Աստվածնե՛ր, երբեք չէի մտածի, որ այս տարիքում նման բան կպատահեր հետս: Նոր գլանակ եմ վառում ու նայում բեմին:

Ծխի բացված վարագույրից երևում է ծովափը: Ծերացած Հիլդան մերկ քնած է ծովափին: Ավազը դանդաղ կլանում է նրա մարմինը: Սակայն այս անգամ ծովը հանգիստ է: Նա այլևս ալիքներ չի շպրտում դեպի ափ՝ Հիլդային փրկելու: Ավազահատիկները մոլեռանդ մրջյունների պես իրար գլուխ հավաքվելով՝ մագլցում են կնոջս մարմնին՝ նրան կուլ տալու, բայց ծովը անտարբեր է: Կնոջս ոտքերը այլևս չեն երևում: Ավազը միշտ փախցնում է ոտքերից: Իսկ ծովը շարունակում է անտարբեր մնալ: Ծովը հիշողություն չունի: Նա չի հիշում, որ սա այն կինն է, որին մի ժամանակ ինքը մոլեգնած փրկում էր մարդակուլ ավազից: Սակայն ես հիշում եմ ու ինքնամոռաց վազում եմ, որ գրկեմ ու փրկեմ նրա մարմինը...

Ատրճանակը... Հիլդան ինձ լքելով՝ տարավ իմ ատրճանակը: Ես չեմ կարողանում հասկանալ, թե ինչու. արդյո՞ք նա վախենում է, որ ես ինքնասպան կլինեմ, քանի որ գիտի՝ աննորմալի պես սիրում եմ նրան, ու ատրճանակը հեռացնելով՝ փրկո՞ւմ է ինձ, թե՞ ինքն է ինքնասպան լինելու:

Ամեն դեպքում ես վազում եմ, վազում եմ, որ փրկեմ Հիլդային, որ փրկեմ ինձ... Վազում եմ, բայց չեմ հասնում նրան... Քնա՞ծ եմ, ինչ է... Եվ ո՞ւր եմ ես, երբ երեկոյան պրեմիերան է, գրողը տանի... Ռոմեո և Ջուլիետ... Սա վերջին պրեմիերան է...

Ես նետվելու եմ ծով ու լողալու դեպի ափ, որովհետև ծովափին ատրճանակը ձեռքին պառկած է Հիլդան: Նա չի շտապում կրակել: Նա հույս ունի, որ ես կգտնեմ նրան: Իսկ եթե նա մեռած լինի, ապա ես կպարպեմ ատրճանակն ու թեկուզ ինձ դժվար լինի լքել ծովը, ավազը, գունեղ ու մանր ձկները, խեղճ ու փառահեղ շենքերը, մի խոսքով հրավառությունը՝ յուրաքանչյուր ատրճանակով մարդու ֆանտաստիկ հրավառությունը՝ իմ հաջորդ հնարավոր ներկայացումը, ես կկրակեմ, աստվածներ, կկրակեմ ուղիղ գլխիս վրա:

Իսկ մինչ այդ արևը մի անգամ էլ մայր կմտնի, վարագույրը մի անգամ էլ կբացվի, ու ծեր Ջուլիետը կմեռնի ծեր Ռոմեոյի գրկում:

***2013 թ.***

1 «Դոն Կիխոտ», Սերվանտես (1547-1616):

2 «Ոսկե լճի վրա» (պիես), Էռնեստ Թոմփսոն (ծնվ. 1949թ.):

3 «Ընդհատումներ մահվան մեջ», Ժոզե Սարամագո (1922-2010):

4 «Սպանված աղավնի», Նար-Դոս (1867-1933):

# ԹԱՏԵՐԳՈՒԹՅՈՒՆ

## ԽՈՐԵՆ ԱՐԱՄՈՒՆԻ

(ԼՄՆ)

# ՇԻՆԱՐԱՐ ՔԵՌԻՆ

**Ըստ Նասեր Թաղվայիի «Սպիտակ էջ» ֆիլմի**

### ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԴՐՈ – 35-40 տարեկան
ՌԻՄԱ – Դրոյի կինը
ՔԵՌԻ – Դրոյի քեռին
ՓԱԹԻԼ – Հարևան
ՇԱՀԵՆ – Դերասան

*Սենյակ Ամերիկայում: Երեք դուռ, բաղնիքի, ննջարանի և ելք: Խոհանոց:*

ԴՐՈ - /Ննջասենյակից դուրս է գալիս/ Քեռին ո՞ւր ա:

ՌԻՄԱ - */Բաղնիքի դուռն է ցույց տալիս/* Կես ժամ ա, մտել, դուրս չի գալիս:

ԴՐՈ - */Բաղնիքի դռան մոտ/* Քեռի՞, էդ ի՞նչ ես անում, քեռի:

ՔԵՌԻ - */Ձայնը/* Ասե՞մ ինչ եմ անում:

ԴՐՈ - Չէ, բայց ի՞նչ ես անում:

ՔԵՌԻ - Էս ա, պրծնում եմ:

ՌԻՄԱ - Թելեֆոն անե՞մ, էմերջենսի գա:

ՔԵՌԻ - Չէ, շնորհակալ եմ, դուրսի կերակուր չեմ սիրում, հենց էդ փիծա-միծաներն են, որ չեն թողնում մարդավայել...

ՌԻՄԱ - Լավ, հասկացանք, մի՛ շարունակիր, շուտ արա, Դրոն ուշանում ա...

ՔԵՌԻ - Գուցեև էստեղի ջրից ա, ասում են էստեղի ջուրը փորկապություն ա բերում:

ԴՐՈ - Հա, ճիշտ են ասում, Հայաստանի ջուրը լուծ, էստեղինը՝ փորկապություն ա բերում: Քեռի, ջանմ նստիր, հանգիստ նստիր:

ՌԻՄԱ - Էս շինարար քեռիդ, աչքիս ալաբուլա ա երևում, ճաշից հետոները լուծ ա, առավոտները թորմոզ ա անում...

ԴՐՈ - Ջրից ա, Ջերմուկ տուր, Հայաստանի «Ջերմուկ»:

ՔԵՌԻ - */Բաղնիքից դուրս է գալիս/* Բարի լույս, հարս ջան, Դրո ջան, բարի լույս: Ինձ մի բաժակ էն ջրից կտա՞ք:

ՌԻՄՍ - Ո՞ր, Փերիե՞ր:

ԴՐՈ - Հա էլի, փերիա ա, ինչ ա, էն ֆրանսիականից:

ՌԻՄԱ - Հա, քեռի ջան, ինչու չենք տա, նստիր, նստիր, ես էլ եմ ուշանում, նախաճաշը պատրաստ ա:

ԴՐՈ - Ես հիմա կգամ */մտնում է բաղնիք/*:

ՔԵՌԻ - Հարս ջան...

ՌԻՄԱ - Էս ա, չայ եմ բերում...

ՔԵՌԻ - Հարս ջան...

ՌԻՄԱ - Էս էլ քո փերիան, բայց ավելի լավ ա, ջերմուկ խմես:

ՔԵՌԻ - Ինչո՞ւ, էս թանկ ա: Ասում եմ հարս ջան...

ՌԻՄԱ - Խորհուրդ կտամ հավկիթ չուտես՝ քոլեսթրոլը շատ ա, վարենիից էլ հեռու մնա, շաքար ունի, հացն ու պանիրն էլ չաղացնում են, կոֆեն ճնշում ա բարձրացնում, ինշուրանս չունենք, որ հանկարծ, Աստված չանի, մի բան լինի... Լավ կատակ եմ անում, բայց ավելի լավ կլինի դառը չայիի հետ սև հաց ուտես */ստամոքսն է ցույց տալիս/*, համ էլ սրա համար լավ ա:

ՔԵՌԻ - Հարս ջան, դառը չայի ու սև հաց 46 թվականին ուզածիդ չափ խմել ենք ու կերել ենք: Չեմ հասկանում, իմ խոլեստերինի, արյան ճնշումի ու շաքարի մասին որտե՞ղ ես կարդացել:

ՌԻՄԱ - Ղուրբանդ էթամ, քեռի ջան, մի ժամ ա զուգարանից դուրս չես գալիս, երեսդ սպիտակ գաջ ա դառել, սրտիդ թփթփոցն էլ էստեղից լսվում ա...

ՔԵՌԻ - Ռիմա ջան, արի մի բան պայմանավորվենք, թույլ տուր ես էս բոլորից էլ ուտեմ՝ տեսնենք ի՞մ խոլեստրինը կբարձրանա, թե՞ քոնը, ի՞մ շաքարը կբարձրանա, թե՞ քոնը: Ի՞մ ճնշումը կբարձրանա, թե՞ քոնը: */կատակով ու բարձր ծիծաղելով/* Վայ

դեռ համտես էլ չարած, սրտիդ թփթփոցն եմ լսում...

ՌԻՄԱ - Քեռի, մի բաժակ ջուր կտա՞ս:

ՔԵՌԻ - Վախեցա՞ր, ի՞նչ ա... կռանդի՞ ջուր, ջերմո՞ւկ, թե՞ փերիա /*ջուր է բերում*/ խմիր, խմիր գույնդ սպիտակ գաջ դառավ, խմիր, ես ոչինչ էլ չեմ ուտի, Ռիմա ջան, խոստանում եմ...

ԴՐՈ - /*Ներս է մտնում*/ Քեռի՞, քեզ ի՞նչ էղավ, հե՞ր պիտի չուտես, վախենո՞ւմ ես նորից...

ՔԵՌԻ - Հա, բալես, շատ եմ վախենում...

ԴՐՈ - Ինչի՞ց, քեռի:

ՌԻՄԱ - Ինձանից ա վախենում, ես էս տան մեջ, իմ տան մեջ դարձել եմ հրեշ:

ԴՐՈ - Վստա՞հ ես:

ՌԻՄԱ - Հա՛:

ԴՐՈ - Չէ, չեմ կարծում, Ռիմա ջան, դու պիտի գրող դառնայիր, ոչ թե հրեշ...

ՌԻՄԱ - Դրանց մեջ ոչ մի տարբերություն չկա, երկուսով էլ էրեխա են վախցնում:

ԴՐՈ - Բայց չէ, հա, մի՛ կասկածիր, դու լավ գրող կդառնաս, դու ոչինչից կարող ես մի մե՜ծ բան սարքել, ինչ որ մի սուտ բան այնպես նկարագրես, այնպե՜ս պատկերես, որ ամենաանհավատ մարդն էլ հավատա... Ռիմա ջան, ախր հե՞ր ես էս մարդու հետ գլուխ-գլխի դնում, էս մարդը Հայաստանից ա եկել, ոչ քոլեսթրոլ ունի, ոչ շաքար, ոչ ճնշում, ոչ ստրես, ոչ սրտի փրաբլեմ, ոչ էլ կյանքն ուտող կնիկ, թող ինչ ուզում ա, էն էլ ուտի, հե՞ր ես փիլե անում, ունեցած-չունեցածը փորկապություն ա, մի քանի օրից կանցնի, չէ՞, քեռի...

ՔԵՌԻ - Դրո ջան, դու ինձ լավ ես հասկանում, ցավդ տանեմ, դիր, մի բան դիր սեղանին, բարիլույսը բարի անենք, էն ժամանակ էլ ամեն ինչ լավ կլինի, թե չէ հացով, պանիրով ու քաղցր չայով էս ստամոքսը չի դզվի, խելքի չի գա:

ՌԻՄԱ - */Փոստը ձեռքին մոտենում է Դրոյին/* Վերցրու, մոռացել ես: */Դիմում է Քեռուն ու մի փոքրիկ բաժակ է դնում սեղանին/* էս էլ քեզ, բարիլույսդ բարի արա:

ՔԵՌԻ - Ռիմա ջան, հարս ջան, մենք սրան ասում ենք մատնոց, սրանով աչք էլ չես լվանա, մի բան բեր՝ գոնե աչքերս բացեմ:

ՌԻՄԱ - Լավ, քեռի, ինչո՞վ ես ուզում բարիլուսդ բարի անես, գինի՞ բերեմ, մարգարիտա՞, վիսկի՞, թքիլա, կոնյակ, թե՞ օղի...

ՔԵՌԻ - Պա,պա,պա, պա... Օղի, ցավդ տանեմ, օղի, օ-ղի:

ՌԻՄԱ - Ի՞նչ տեսակի օղի, քեռի, ցորենի՞, խաղողի՞, թթի՞, հոնի՞, քարահունջի՞, թե՞... Կներես քեռի, դեռ լավ չեմ սովորել, մնացածն էլ հետո:

ՔԵՌԻ - Լավ էլ սերտել ես, շատ լավ էլ սովորել ես... Մի բան բեր, էլի, որը կպատահի բեր, միայն թե չդարձնես «Տերն ու ծառայի» ոչխարները...

ՌԻՄԱ - Ծառա չեմ, ի՞նչ եմ */գնում օղին բերում, դնում է սեղանին/*:

ՔԵՌԻ - */Դրոյին/*: Լավ էլ ապրում ես: Էս վերջին քսան տարում, մենք էսքան նամակ չենք ստացել, ինչքան՝ դուք մեկ օրում եք ստանում */Բաժակը լցնում է/* Բարիլուսներդ բարի լինի */խմում է/*:

ՌԻՄԱ - Դեմ չեմ, քեռի, նամակ չեք ստացել, բայց ամեն ամիս

փող եք ստացել, էս բոլոր նամակներով մեզանից փող են ուզում, երանի մենք էլ էս նամակները չստանայինք ու մի տեղ ապրեինք, որ ամեն ամիս հարազատից փող ստանայինք: Հեքիաթներում էլ էսպիսի բան չի լինում, մարդիկ էդպես մուփթա չեն ապրում: Հա՛, Դրոն ճիշտ ա ասում, ես լավ գրող կդառնայի. «Լինում է չի լինում, մի երկիր է լինում, որտեղ մարդիկ չեն աշխատում, բայց ամեն ամիս ինչ-որ տեղից փող են ստանում: Այդ երկրի մարդիկ, բոլորն էլ սելֆոն ունեն, այփադ, գունավոր թելեվիզիոն... Ասում են, որ այդ եկրում մարդիկ իրենց արտասահմանյան մեքենայի առաջին ապակին անգամ՝ թինթ են անում, այսինքն սևացնում են...

ԴՐՈ - Ռիմա ջան, արի ու դու գնա էդ հեքիաթային երկիրը, ամոթ ինձ, թե ամիսը հինգ հարյուր դոլար չուղարկեմ: Քեռին վկա, մի հատ առջևի ապակին թինթ արած մերսեդես կուղարկեմ, որ ում վրա ուզես քշես, էստեղ միայն ինձ վրա ես քշում, այսինքն ավելի ճիշտ, ինձ ես քշում, լավ էլ մեքենավար ես...

ՌԻՄԱ - Էն Աստվածն, Դրո ջան, շատ լավ կլինի, բայց հեքիաթն ասում ա, դրա համար պետք ա Հայաստանում էլ ծնվես, թե չէ, էդ սև մեքենան, հենց վարելու ժամանակ կդարձնեն քո իսկ դագաղը... Վերցրու, Դրո ջան, էս քո օրաթերթը, էս քո պնակը, դանակը, պատառաքաղը, էս ջրի բիլը, էս հեռախոսինը, էս մեքենայինը, էս թելևիզիոնինը, էս սառցարանինը, էս ինշուրենսդ... Խավիարը ինչո՞վ ես ուտում, պարոն Դրո, լիմոնո՞վ, թե՞...

ՔԵՌԻ - */Մի բաժակ էլ է խմում/* Էն սովետների ժամանակ...

ԴՐՈ - Էսպես որ դու ես սկսել... Քեռի ջան, բարիլուսբարին անելուց հետո պիտի կարողանաս բարի կեսօր ու բարի երեկո

էլ... /*նայում է հեռախոսի հաշվին*/ Ես հեռախոսը ինչքան շատ ա եղել:

ՔԵՌԻ - Դրո ջան, ցավդ տանեմ, ես մեկ անգամ եմ զանգել, ընդամենը երեք րոպե... Էն սովետների ժամանակ...

ՌԻՄԱ - Պարոն Դրո, կոֆե՞ կխմեք, թե՞յ, թե՞ նեսքաֆե... Կոֆեն կաթով ու շաքարո՞վ, պարոն Դրո, թե՞...

ԴՐՈ - Ես ո՛չ նեսքաֆե եմ ուզում, ո՛չ էլ կաթ ու շաքար, սուրճ ու կարագ չեմ ուզում, վարենի էլ՝ ասլան, անունը մի տա, ոչ ալբալուի, ոչ էլ անջիրի, մի հատ չայ տուր ու վերջ, էսքան էլ գլուխս նրանցից մի արա...

ՔԵՌԻ - Մեզ մոտ ասում են՝ գլուխ մի...

ՌԻՄԱ - Քեռի՞...

ՔԵՌԻ - Հա՛, ասում եմ՝ էն սովետների ժամանակ:

ԴՐՈ - Լավ էլի, քեռի, սովետները գնացին, պրծան, ասա, քեզ ի՞նչ տամ:

ՔԵՌԻ - Ես էլ ո՛չ ներս քաֆե եմ ուզում, ո՛չ էլ կաթ ու շաքարով սուրճ, կարագ չեմ ուզում, մուրաբա էլ՝ ասլան, ո՛չ անջիրի, ո՛չ էլ ալբալուի, այսինքն սովոր չեմ, դրանց ծանոթ էլ չեմ, հեքիաթային մեր եկրում, էդպիսի բաների մասին գրքերում ենք կարդացել, հարս ջան, Ռիմա ջան, ինձ էլ մի թեյ տուր, պրծի, թե չէ, էն սովետների ժամանակ...

ՌԻՄԱ - Լավ էլ իրար բերան եք թքել: Էն սովետների ժամանակ չայը շաքարավազո՞վ եք խմել, թե՞ շաքարով, շաքարը բելջիքակա՞ն էր, թե՞ քալլե...

ԴՐՈ - Դու որ էդքան բալա-բալա ես խոսում, ինչու ի՛մ հետ ամուսնացար, ես սովորական նաղշեքեշ էի, հիմա էլ նույն գործն եմ անում: Ի՞նչ ես ուզում ինձանից:

ՌԻՄԱ - Քեռի, հիմա Հայաստանում ի՞նչ գործ ա հարգի:

ՔԵՌԻ - Ի՞նչ... Որ ասեմ, չե՞ք նեղանա:

ԴՐՈ - Չէ, քեռի, չենք նեղանա:

ՔԵՌԻ - Էլի ոնց որ նաղշեքեշը, «քեշով» ա վերջանում, բայց հայերենով դրան ասում են կավատություն... Հիմա Հայաստանում դա շատ հարգի գործ ա, պոռնիկները շա՜տ, շա՜տ են, երկիրն էլ կավատներն են ղեկավարում, բայց սովետների ժամանակ...

ՌԻՄԱ - Ովքե՞ր են ղեկավարում, չհասկացա:

ԴՐՈ - Հե՞ր չես ուզում հասկանաս, խոսքը էն մարդկանց մասին ա, որ երբ տղամարդիկ տուրիստ են գնում, դրանք, էդ տուրիստների համար կնիկ են բերում, պարսկերենով ասում են */ականջին/* ... քեշ:

ՔԵՌԻ - Հա՛, էսօր մեր երկրում կավատատիրական կարգեր են:

ԴՐՈ - Քեռի, ոչ թե կավատատիրական, այլ՝ ավատատիրական, յանի ֆեոդալիստական, ֆեոդալական...

ՔԵՌԻ - Հասկանում եմ, բալես, գիտեմ, կավատատիրականը, ավատատիրականի զարգացած, ժամանակակից ձևն ա: Էն սովետական ժամանակներում...

ՌԻՄԱ - Դեռ նշանված էի, կարծում էի ապագա նաղշեքեշ ամուսինս, կարող է փող էլ քաշի, բայց պարզվում ա, որ ամեն «քեշ» չի, որ փող ա բերում:

ՔԵՌԻ - Համբերի, Ռիմա ջան, համբերի, դա էլ կլինի, համբերությունը կյանք ա, մի վռազի, վռազող կնիկը տղա չի ծնի...

ՌԻՄԱ - Քեռի, ոչ թե վռազող կնիկը, այլ վռազողի կնիկը, համ էլ աղջիկ կամ տղա բերողը ես եմ ու եթե խաչը իմն ա, ես գիտեմ

զորությունը: Տեղից թքուն չի գալիս, հարաքաթ չկա, մեռած ա, գլուխ չի բարձրացնում իմանա աշխարհն ում ձեռն ա:

ՔԵՌԻ - Ի՞նչը գլուխը չի բարձրացնում, ի՞նչն ա մեռած...

ԴՐՈ - Քեռի ջան, ճիշտ ա ասում, շարժվելու համար, շարժիչ ուժ ա պետք, առանց դրան... Ռիմա ջան, Աստված քեզ փող չտվեց, գոնե խելք տար...

ՌԻՄԱ - Դե որ խելք տար, փողն էլ կլիներ...

ՔԵՌԻ - Չեմ հասկանում, բացի փողից ուրիշ թեմա չունե՞ք:

ՌԻՄԱ - Ես չեմ խոսում մի բանի մասին, որ ունենք, ես խոսում եմ այն բանի մասին, որ չունենք:

ՔԵՌԻ - Ռիմա ջան, էնքան եք փողի մասին խոսում, որ ինչ ուտում եմ, փողի համ եմ առնում:

ՌԻՄԱ - Երանի քեզ, քեռի, էդ ի՞նչ համ ա...Քոլեջ եմ գնում՝փող չկա, մարքեթ եմ գնում՝ փող չկա, գալերիա եմ գնում... Էս հայաստանցիները ոտքները դեռ օդանավից ցած չդրած, գնում են Հավայի հանգստանալու, ասում են քսանհինգ ժամ թռել, հոգնել ենք, հանգստանալ ա պետք:

ՔԵՌԻ - Թող Աստված ուժ ու կարողություն տա, ես մի օր ձեզ էդ բախտին կարժանացնեմ... Էն սովետների ժամանակ...

ՌԻՄԱ - Աստված բերանիցդ լսի, թե չէ, էս քույրիկիդ տղայի պայուսակը դարձել ա ճիշտ հորանցս գյուղի ջրհորը, Հայաստանից սկսած մինչև Պարսկաստան, բոլորն էլ էնտեղից են ջուր հանում, ցամաքել է, բան չի մնացել:

ԴՐՈ - Կա-չկա, էս չինական ֆալսաֆե ա,

ՌԻՄԱ - Չէ, Դրո ջան, ամրիկական ա: */Մատներին ատրճանակի տեսք է տալիս և ուղղում է ամուսնուն/* Էդ քիֆիդ /պայուսա-

կիդ/ մեջ ինչ-որ կա հանիր ու կամաց դի սեղանին: Ձեռներդ՝ վեր, դեմքդ՝ պատին: Մի՛ վախենա, փողդ եմ ուզում. չէ որ՝ կյանքդ:

ԴՐՈ - Արի կյանքս տամ՝ պրծիր:

ՌԻՄԱ - Փուչ, դատարկ կյանքը ինձ պետք չի:

ԴՐՈ - Փողը ուզում ես՝ ինչ անես:

ՌԻՄԱ - Այ, էդ արդեն չեղավ, ամրիկական ֆիլմերի մեջ չեն ասում ուզում ես ինչ անես, հարցնում են՝ ինչքա՞ն ես ուզում:

*/Քեռին ուշադրությամբ հետևում ու մի բաժակ ևս խմում է/:*

ԴՐՈ - Լավ, ինչքա՞ն:

ՌԻՄԱ - Դեռ չեմ իմանում, գիշերը կասեմ:

ՔԵՌԻ - Տեսա՞ր, Ռիմա ջան, չեղավ: Սա ամերիկյան փիլիսոփայություն չի, ինչքան ես գիտեմ ու ամերիկյան ֆիլմերում եմ տեսել, ջարդում, փշրում, ինչքան փող ուզում՝ վերցնում, վերջում էլ կրակում են գանգին, ճիշտ ուղեղի վրա: Թե չէ, գիշերով ո՞ր կնիկը չի կարող ամուսնուն թալանի: Հայաստանում, օրինակ, մի գիշերվա մեջ պոռնիկները իրենց կավատ ղեկավարների հետ, ողջ երկիրը թալանեցին, հենց այդ օրերին էլ հաստատվեց կավատատիրական հասարակարգ:

ՌԻՄԱ - Քեռի, գուցե մաջիք են արել:

ՔԵՌԻ - */Խմում է/* Չգիտեմ, միայն գիտեմ, որ բարեպաշտ ու բարոյական կինը, անկողնու մեջ ամուսնուց փող չի ուզի: Դրոն ասում էր լավ գրող կդառնաս, բայց սկսեցի կասկածել...

ԴՐՈ - Քեռի ջան, անկողինները իսկական առևտրի կենտրոններ են, մեկը ուզում է, մյուսը տալիս է... Ռիմա ջան, մեքենայիս բանալին չե՞ս տեսել:

ՌԻՄԱ - */Բուռը բացելով/* Տեսել եմ:

ԴՐՈ - Որ շա՜տ խնդրեմ, կտա՞ս:

ՌԻՄԱ - Չէ՛, էս բանալին, պարոն Դրո, էսօր իմն ա, դասի պիտի գնամ, ուշանում եմ... */Դնում է սեղանին/*:

ԴՐՈ - Թող քոնը լինի, բայց լավ իմացիր, որ հորանցդ գյուղի ջրհորը այլևս ջուր չունի, չորացել ա, ես գնացի, քեռուն լավ կնայես...

ՔԵՌԻ - */Թեթև գինովցած, ավելի շուտ բարձր տրամադրությամբ/* Ռիմա ջան, մենք իմաստուն ազգ ենք, հենց որ անկախացանք ու սկսեցինք ինքնուրույն մտածել, անմիջապես մեր փողի միավորը ռուբլուց փոխեցինք ԴՐԱՄ-ի... Լավ ուշադրություն դարձրու, ԴՐԱՄը եթե թարս ես կարդում դառնում է ՄԱՐԴ, ասածս այն է, որ դու ճիշտ ես, ցավդ տանեմ, առանց դրամի, մարդ դառնալ հնարավոր չի, դրամն է, որ... ժամանակ կար, որ ասում էին փողը ձեռքի կեղտ ա, սովետների ժամանակ...

ՌԻՄԱ - Հա, քեռի ջան, ճիշտ ես ասում, մենք խելացի ազգ ենք, դրամմարդ, մարդ-դրամ... փողը սապոն ա, ձեռի կեղտը մաքրում ա, մաշկդ թարմացնում ա, քիթդ, քամակդ, պռոշներդ, կրծքերդ մեծացնում-փոքրացնում ա, մազերիդ տարբեր գույն ա տալիս, կաշիդ քաշում ա, բայց չի պոկում, չի թողնում գալերիաներից տուն գաս, հագուստդ էլ նորոգում ու օրը մի քանի անգամ փոխում ա, այո, փողը ամեն ինչի մաքրության գրավականն ա...

Չնայած ուշանում եմ, քեռի ջան, բայց բերեմ՝ տեսնեմ ամրիկական բառարանը ինչպես է բացատրում փողը: */Բառարան է բերում/* Տես՝ «Մանի» կողքին գրած է դիգնիթի, այսինքն՝ պատիվ, ռիգարդ, ռիսփեքթ, այսինքն՝ նամուս, թու աներ, վեներէյթ,

այսինքն՝ հարգանք, փրայդ, այսինքն՝ հպարտություն, քար՝ մեքենա... տեսա՞ր, քրոջդ տղան էսօր օթոբուսով գնաց... Հիմա որ հորանցս գյուղի հորը ցամաքել ա, իմ նախկին ազնիվ ու բարի ամուսինը կդառնա փալաս... Քեռի ջան, բայց ես շատ փող չեմ ուզում, էնքան, որ էս անտեր քոլեջս ավարտեմ ու մի կարգին գործ գտնեմ, չեմ ուզում Դրոյին նեղացնեմ, բայց ես էլ իմ ծրագրերը ունեմ, ուզում եմ իմ սիրած գործն անեմ.... Ուշանում եմ, կներես, քեռի, պիտի գնամ, բայց թող էս էլ լինի քո առաջին դասը, եթե պիտի մնաս Ամրիկայում, ասածներս ականջիդ օղ արա... Որ շա՜տ խնդրեմ, նախաձաշի սեղանը կհավաքե՞ս...

ՔԵՌԻ - Կհավաքեմ, բա ոնց, միայն թե դու էլ ականջիդ օղ արա, սովետների ժամանակ....

ՌԻՄԱ - Հետո, հետո, քեռի, ես գնացի... /*Ելքի մոտ*/:

ՔԵՌԻ - Հարս ջան, բանալին մոռացար: /*Վազում իրեն է տալիս*/:

ՌԻՄԱ - Որ ասում եմ՝ հուշ չի մնացել... /դուրս է գալիս/

ՔԵՌԻ - /*Ինքն իրեն*/ Ես էլ հենց դա եմ ասում, էս բոլորը փողի խնդիր ա... Չէ՛. հացի խնդիր չի, հաց կա, հացի համար փող կա, հացի խնդիրը մեզ մոտ ա՝ Հայաստանում: Էնտեղ մի պատառ հացի խնդիր ա, էստեղ՝ մի տոննա փողի...

ԴՐՈ - /*Շփոթված*/ Ռիմա, Ռիմա...

ՔԵՌԻ - Գնաց:

ԴՐՈ - Ո՞ւր:

ՔԵՌԻ - Փողի հետևից:

ԴՐՈ - Տան բանալիների փոխարեն, մեքենայի բանալիներն եմ վերցրել: /*Բանալիները դնում է սեղանին, դուրս է գալիս*/:

ՔԵՌԻ - Ուր որ է, կգա:

ՌԻՄԱ - */Շփոթված ներս է մտնում/* Որ ասում եմ...

ՔԵՌԻ - Ես էլ եմ ասում... Էս ա, վերցրու...

ՌԻՄԱ - Ուշացա, քեռի, ուշացա */վերցնում դուրս է փախչում/*:

ԴՐՈ - Քեռի, մոտս փող չկա, կարո՞ղ ա մանր...

ՔԵՌԻ - Ինչ թե, դու փող չունե՞ս:

ԴՐՈ - Օթոբուսի համար ա, քաշ չունեմ, մանր չունեմ...

ՔԵՌԻ - */Գրպանից որոշակի գումար է հանում, խոթում է Դրոյի գրպանը/* Իմ ունեցածը էս ա, գնա չուշանաս:

ԴՐՈ - Մերսի, քեռի, արդեն ուշացել եմ */դուրս է փախչում/*:

ՌԻՄԱ - */Ներս է մտնում/*: Նույն պատմությունն է, երբեք մեքենան բենզին չունի, ինքը գիտի՝ երբ եմ մեքենա պետք ունենալու, բենզին չի լցնում: Շարժվել, դեռ գառաժից դուրս չեմ եկել, լույսը վառվել ա: Չի ուզում, չի ուզում դասի գնամ... Մեկ ա, ես իմ ուզածը կանեմ, ես պիտի քոլեջս ավարտեմ և վերջ */մտնում է ննջասենյակ, դուրս է գալիս/*: Քեռի, ես գրող եմ դառնալու, մեծ գրող... */Դուրս է գալիս/*:

ԴՐՈ - */Ներս է մտնում/* Այ քեռի, ինձ փող ա պետք, դրամ ես տվել:

ՔԵՌԻ - Ինչի՞, դրամն ու փողը նույն բանը չե՞ն:

ԴՐՈ - Դու Հայկական փող ես տվել, իմ ուզածը դոլար ա, էստեղ ով ա դրամին բանի տեղ դնում...

ՔԵՌԻ - Ունեցածս դրամ էր, դրամ տվի, դոլար լիներ՝ դոլար կտայի: Դոլարի պատերազմը իրաքյան սահմաններից ներքաշվել է մեր տները, մենք տանուլ ենք տալիս, մեր օջխները քար ու քանդ են լինում...:

ԴՐՈ - Քեռի, խոսքը մեր մեջ, դու էլ վատ ֆիլսուֆ չես, հա... Էսպես որ երևում ա, էսօր գործի չեմ գնա, պարտավոր եմ տանը գործեմ...

ՔԵՌԻ - Չէ, Դրո ջան, լավ եղանակ ա, արի միասին դուրս գանք, գնանք խանութ:

ԴՐՈ - Ի՞նչ խանութ, ես խանութներ մտնելու հալը չունեմ:

ՔԵՌԻ - Գործիքներ եմ ուզում, չեմ կարողանում անգործ մնալ, ուզում եմ քարտաշություն անել:

ԴՐՈ - Ի՞նչ:

ՔԵՌԻ - Քար տաշել, շինարար եմ, համ էլ քարտաշ եմ, չէ՞:

ԴՐՈ - Ինչո՞ւ, մարդ ա մեռել:

ՔԵՌԻ - Չէ, Դրո ջան, գաղտնիք ա... Ճիշտն ասած, ես էլ եմ փող ուզում, ուզում եմ իմ ձևով փող շինել:

ԴՐՈ - Փո՞ղ շինել:

ՔԵՌԻ - Հա՛:

ԴՐՈ - Դրա համար ի՞նչ ա պետք:

ՔԵՌԻ - Քար:

ԴՐՈ - Քար էր պետք, էն ա, քարի երկիր Հայաստանից բերեիր...

ՔԵՌԻ - Լավ, հանաքը մի կողմ դիր, քար ա պետք, ուզում եմ քարից դոլար շինել...

ԴՐՈ - Դու ասա շինելու բան լինի... Բայց որտե՞ղ:

ՔԵՌԻ - Հենց էս սենյակի մեջ...

ԴՐՈ - Այ քեռի, դու լրիվ գժվել ես, բա Ռիման...

ՔԵՌԻ - Ռիմային ես կհամոզեմ, նրան փող ա պետք, կհամոզեմ ու հենց էստեղ էլ կշինեմ, միայն մի պայմանով...

ԴՐՈ - Քեռի, ամոթ ա, քեռի...

ՔԵՌԻ - Ի՞նչն ա ամոթ, երեքով կպայմանավորվենք ու գործը գլուխ կբերենք: Գնանք, գնանք քար տենալու: */Քեռին բռնում է Դրոյի ձեռքից ու քարշ տալով դուրս են գալիս/:*

*Երեկո է, Դրոյի ձեռքին մի ծաղկեփունջ է, Քեռու ձեռքին մի քանի գործիք ներս են մտնում: Ռիման հոգնած, գլուխը սեղանին ցրված գրքերի ու տետրերի վրա ննջում է:*

ՌԻՄԱ - Էս ի՞նչ հոտ եմ առնում:

ԴՐՈ - Աչքերդ փակ ասա, ինչի՞ հոտ ա:

ՌԻՄԱ - Ժավել, թայդ կամ աջաքս:

ԴՐՈ - Չէ, տիկին Ռիմա, իմ վառված սրտի հոտն ա:

ՔԵՌԻ - */Գլուխը բարձրացնում է/* Վայ, Դրո՞, չէ աջաբ, ո՞ր սարի գելն ա սատկել, էս ի՞նչ ա էլե...

ԴՐՈ - Բան էլ չի էլե:

ՌԻՄԱ - Ուզում եմ իմանալ, ինչպե՞ս է ձեռդ ջեբդ մտել, ի՞նչ ա պատահել: Դու մենակ մեռելների համար ես ծաղիկ առնում, ես դեռ... Հա՜, գուցե քեռին ա բարեհաճել...

ՔԵՌԻ - Չէ, հարս ջան, ես էդպիսի թիթիզ բաներ չեմ սիրում:

ԴՐՈ - Ռիմա ջան, էսօր մեր ամուսնության տարեդարձն ա, համ էլ քոլեջիդ առաջին օրը, տիկին Ֆորուղե Ֆարրոխզադ:

ՔԵՌԻ - Ի՞նչ:

ԴՐՈ - Ֆորուղե Ֆարրոխզադ:

ՔԵՌԻ - Էլի բան չհասկացա:

ԴՐՈ - Նա էլ պարսիկների Սիլվա Կապուտիկյանն ա, չէ, ավելի ճիշտ՝ Վիոլետ Գրիգորյանն ա, առանց ամաչելու ինչեր ասես, որ չի գրում, համ էլ պարսկահայ ա, պարսկահայերի պատիվը տարել ա: Լավ, Ռիմա ջան, արի քեռուն գրականության դաս չտանք, ավելի լավ ա քո երջանկությունն ու իմ դժբախտությունը տոնենք:

ՔԵՌԻ - Էսօր բոլորիս համար էլ տոն ա, ձեր ամուսնության տարեդարձն ա, Ռիմայի ավարտական տարին ա, ու ես որոշել եմ փող շինեմ:

ՌԻՄԱ - Ի՞նչ անես:

ՔԵՌԻ - Փող շինեմ, փող:

ՌԻՄԱ - Դե արի առաջինը խմենք քո որոշումի կենացը, որ շատ կարևոր ա, մանավանդ որ շինելու հետ ա կապված:

ԴՐՈ - Չասեցի՝ դարձել ա Վիոլետը...

ՔԵՌԻ - Թող տեսնենք ի՞նչ ա ասում, խի՞ ես խանգարում:

ՌԻՄԱ - Հա, քեռի, նաև շնորհակալ եմ, որ նախաճաշի սեղանը հավաքել ու սենյակը կայծի ավել ես արել:

ՔԵՌԻ - Որ սեղանը հավաքեի, հիմա նորից պիտի բացեիր, չէ՞, Ռիմա ջան:

ՌԻՄԱ - */Ծաղիկները տեղավորելով ծաղկամանի մեջ/* Լավ, չերկարացնենք: Վիսկի՞, շամպա՞յն, գինի՞, թե՞ կոնյակ:

ՔԵՌԻ - Օղի, բայց ոչ մատնոցով:

ՌԻՄԱ - Թե ինչի՞ եմ հարցնում, չեմ հասկանում:

ԴՐՈ - Ես տանն եմ, էստեղ կանգնած եմ, ծաղիկ բերողն էլ ես եմ:

ՌԻՄԱ - Մեր ամուսնության տարեդարձն ա, ամուսինս դու ես,

ես տանն եմ ու քո կինը: Անցյալ տարի ծառայողդ սևամորթ էր: Հալա մի սենյակի վիճակը նայիր, ծաղիկ ես բերել, որ ի՞նչ, շուտ տուն գայիր՝ սենյակը կարգի բերեիր:

ԴՐՈ - Էսօր աշխատանքի չեմ գնացել, քեռու հետ գնացինք քար տեսնելու:

ՌԻՄԱ - Ճիշտ ես արել, այսօր ոչ թե ամուսնացել, այլ մեռել եմ, թաղումս ա, քեռին կա, քարը կա, ծաղիկները բեր վրան դիր, քեռին էլ վրան կգրի՝ Ռիմա Սարդարյան, 1955-1980:

ՔԵՌԻ - Ռիմա ջան, քարը տեսել ենք, բայց դեռ չենք առել:

ՌԻՄԱ - Ինչի՞, պահում ես քառասունքի՞ս, թե՞ ուզում ես՝ ես հավանեմ:

ԴՐՈ - Բայց ինչո՞ւ 1980, ի՞նչ ա, դու 25 տարի՞ ես ապրել:

ՌԻՄԱ - Հա, մինչև ամուսնանալս: Եկեք, եկեք կենդանի հոգուս կենացը խմեք, պրծեք: Քեռի ջան, դուդուկ չե՞ս բերել...

ՔԵՌԻ - Լավ, լավ, վերջ տվեք, կատակն էլ սահման ունի: Ես ուզում եմ այս բաժակով ձեր ամուսնության տարեդարձը շնորհավորել, հենց այս առիթով, այսօր, խոստանում եմ ձեզ նվիրել այնպիսի փող, որին տեղից շարժել չկարողանաք:

ՌԻՄԱ - */Կատակի տալով/* Աստված բերանիցդ լսի, քեռի, թե ոչ, էս մեր Դրոն միայն պատմության մեջ ա հերոս, հայրը դաշնակցական էր, ինքը դարձել ա թեյական, օրը քսան բաժակ թեյ տաս՝ կխմի:

ԴՐՈ - Ռիմա ջան, կենացդ, բայց լավ իմացիր, քո հետ ապրելը, ինքը մեծ հերոսություն ա, իսկական Դրոն էլ չէր դիմանա:

ՔԵՌԻ - Աղջիկս, Ռիմա, մի բան խնդրեմ, չե՞ս մերժի:

ՌԻՄԱ - Ի՞նչ, փո՞ղ...

ՔԵՌԻ - Չէ, ցավդ տանեմ, մի բան եմ ուզում խնդրել, որ փող շինեմ:

ՌԻՄԱ - Քեռի ջան, առանց խնդրելու, կյանքում էդ ա մնում, դու շինի, ոնց ուզում ես շինի, էս քույրիկիդ տղային էլ սովորեցրու:

ՔԵՌԻ - Պիտի բերեմ տուն:

ՌԻՄԱ - Ո՞ւմ:

ՔԵՌԻ - Ոչ թե ո՞ւմ, այլ ի՞նչը:

ՌԻՄԱ - Ի՞նչը:

ՔԵՌԻ - Էն...

ՌԻՄԱ - Մե՞ծ ա:

ՔԵՌԻ - Հա, մեծ ա:

ՌԻՄԱ - Օրինակ ինչքա՞ն մեծ, քսան սանտիմետր, երեսուն, քառասուն...

ՔԵՌԻ - Այ, էս սեղանի չափ:

ՌԻՄԱ - */Ապշած/* Էս սեղանի չափ ի՞նչ:

ՔԵՌԻ - Քար:

ՌԻՄԱ - Քարը բերես տո՞ւն:

ՔԵՌԻ - Հա, բալես, ի՞նչ պիտի լինի որ...

ՌԻՄԱ - Քեռի՞...

ՔԵՌԻ - Ռիմա ջան, մի հատ էլ խմենք նոր */լցնում խմում է/*:

ՌԻՄԱ - Քեռի ջան, հինգ անգամ հինգ, քանի՞ կանի:

ՔԵՌԻ - Քսանհինգ, Ռիմա ջան */մի հատ էլ է խմում/*:

ՌԻՄԱ - Դրո՞:

ԴՐՈ - Հա, ի՞նչ ա էլե:

ՌԻՄԱ - Քեռին ճի՞շտ ա ասում, փանջ փանջ թա, էլնում ա

բիստոփանջ թա...

ԴՐՈ - Հա՛:

ՌԻՄԱ - Ուրեմն ես եմ գժվել: Քեռի, էս սեղանի չափ քարը բերես տո՞ւն:

ՔԵՌԻ - Հա...

ՌԻՄԱ - Իրակա՞ն քար, ճշտի՞ց:

ՔԵՌԻ - Հա՛...

ՌԻՄԱ - Էս սեղանի չափ քար, Ամա՜ն, տունս սարքեցին գերեզմանատուն */ուշքից գնում է/*:

ՎԱՐԱԳՈՒՅՐ

## ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

*Նույն սենյակն է, սեղանը տեղավորված է սենյակի մի անկյունում, վրան շոր է փռվել, վրանի տեսք է ստացել, ներսի լույսը ավելի շատ է: Սենյակը կիսամութ է: Քեռին տակը նստած է, ստվերն է աշխատում:*

ՔԵՌԻ - */Դնդնում է՝ «Թռչեի մտքով տուն...» մուրճի հարվածների ձայնն է լսվում/* Է՜, որ իմ գործիքները լինեին, գործը գործիքն ա անում, մարդը ուղեղն ա օգտագործում, առանց գործիքի... */Հեռախոսի զանգ, դուրս է գալիս պատասխանում է/*, ալո, չէ, տանը չեն, Այո, ես եմ... Ի՞նչ, չէ ջանս, ասացի մինչև չավարտեմ... չէ, բան չի մնացել, անպայման տեղյակ կպահեմ, անպայ-

ման, այո, վստահ եղեք... Էս ոնց միանգամից շուխուր ընկավ, մարդիկ փող շինելու համար հազար ու մի փորձանքի են գնում, ես ինձ համար հանգիստ աշխատում եմ, ում ի՞նչ գործն ա, հեռուստացույց, թերթ, ո՞ւմ են պետք... Լավ, հլա մի թողեք բարով, խերով պրծնեմ՝ նոր... Ասենք թե եկան, պիտի ասեն՝ նստիր ու աշխատիր, պիտի նկարեն, սաղ գաղտնիքս պիտի բացեն, չէ՛, չեմ ուզում, չէ՛: */Մտնում է խոհանոց թեյ պատրաստելու/*, հլա մի փորձեմ ինքս ինձ հետ հարցազրույց անեմ, տենամ կստացվի՞: */Երկու աթոռ է դնում դեմ-դիմաց, հարց ու պատասխանի ժամանակ մի աթոռից մյուսն է գնում/*:

-«Ձեր մասին, խնդրում եմ»:

-«Պապերս Վանեցի են...»:

-«Ինչպե՞ս եք հայտնվել Սովետական Հայաստանում»:

-«Պապս եղել է Անդրանիկ Զորավարի աջ թևը»:

-«Դուք, որտե՞ղ եք ծնվել»:

-«Պապիս եղբայրը եղել է նրա, այսինքն՝ Անդրանիկի ձախ թևը»:

-«Ո՞ւմ»:

- «Անդրանիկ Զորավարի: Պապս աջակողմյան էր, իրա եղբայրը՝ ձախակողմյան: Էսպես, աջ ու ձախ քաշքշելով, էդ անպարտելի մարդուն շպրտեցին Ամերիկա... Հա, ասում էիք ես որտե՞ղ եմ ծնվել, Թեհրանում...»:

-«Քարտաշությունը ումի՞ց եք սովորել»:

-«Երբ հայրենադարձվեցինք, մեր գյուղի գերեզմանատանը մի հալևոր կար, գերեզմանաքար էր տաշում, հանգուցյալների պատկերները էնպես է հանում, ոնց որ ֆոտո: Էդ ողորմած վար-

պետս էլ էր ախպար, սարքելուն «շինել» էր ասում, լեզուներս փոխվեց, տեսակներս փոխվեց, դարձանք սովետահայի տեսակ, բայց էդ շինել-ը պահինք, իմ արևմտահայից միայն էդ ա մնացել, շինելով ենք ապրում... Բայց մեր շինելն ու մեր այսօրվա Հայաստանի ղեկավարների «շինելը» տարբեր է... Լավ, շատ եղավ, գնամ մի բաժակ թեյ շինեմ...

*/Գնում խոհանոց, թեյը վերցնում, ականջներին բամբակ է խոթում ու մտնում է սեղանի տակ, մի քիչ աշխատում ու շտապ դուրս է գալիս, սեղանն ու գործիքները հավաքում, սենյակի փոշին առնում, քարը խնամքով ծածկում ու մտնում է խոհանոց/*:

ՌԻՄԱ - */Ներս է մտնում, սենյակի շուրջ-բոլորը պտտվում, մատի ծայրով փոշին է ստուգում, գոհունակության նշան է անում, մոտենում է քարին, շոյում է/*: Բարև, քեռի:

ՔԵՌԻ - */Ձեռքը դնում է ականջին, որպեսզի լավ լսի, հարցական նայում է Ռիմային, բղավելով/* Քեռին ես եմ, էդ քեռու քարն ա:

ՌԻՄԱ - Քեռի՞...

ՔԵՌԻ - Հը՞...

ՌԻՄԱ - Տես ինչ եմ բերել, խաչքար, փետի վրա ա, խաչփետ: Նայիր, սիրուն ա, չէ՞...

ՔԵՌԻ - Հա, շատ սիրուն ա:

ՌԻՄԱ - Կարո՞ղ ես քարի վրա էսպիսի բան սարքես:

ՔԵՌԻ - Չէ, ես ուզում եմ փող շինեմ: Ես ուզում եմ բիզնես անեմ: Խաչքարը՝ Հայաստանում, էստեղ չի ստացվի:

ՌԻՄԱ - Էս հո ծիրանի ծառ չի, որ էստեղ չի աճի...

ՔԵՌԻ - Համ էլ խաչքարը չեն ընդօրինակում, էդ արդեն մեկը

արել ա, ես իրավունք չունեմ, չգրված զակոն ա, այսինքն՝ օրենք ա, ես պիտի իմը հորինեմ, ոչ մի խաչքար մյուսին չպիտի նման-վի: Ես պիտի իմը շինեմ:

ՌԻՄԱ - Երանի Դրոն քեզ քաշած լիներ, նա ոչ իրանն է շի-նում, ոչ էլ ուրիշինը:

ՔԵՌԻ - /*ինքն իրեն*/ Դրոն ճիշտ էր ասում, Վիոլետից բեթար ա: /*Ռիմային*/ Դրոն էլ ա չարչարվում, ցավդ տանեմ, հալբաթ մի օր կստացվի, հույսդ մի կտրի:

ՌԻՄԱ - Էշ, մի՛ սատկիր, գարուն կգա: Դու էն ասա, ե՞րբ ես վերջացնելու:

ՔԵՌԻ - Ի՞նչը:

ՌԻՄԱ - Էս ինչի՞ ես գոռում, քեռի, ասում եմ գործդ ե՞րբ ես վերջացնում:

ՔԵՌԻ - /*Ականջներից բամբակը հանում է*/ Ինչո՞ւ, փո՞ղ ա պետք:

ՌԻՄԱ - /Բղավում է/ Փող միշտ էլ պետք ա, քեռի...

ՔԵՌԻ - Էդ ինչո՞ւ ես գոռում:

ՌԻՄԱ - Որ շատ խնդրեմ՝ կթողնե՞ս նայեմ:

ՔԵՌԻ - Չէ՛, սուրպրիզ ա, համ էլ որ նայես, ձեռս կթուլանա, հավեսս կերթա, լավ չի ստացվի:

ՌԻՄԱ - Ի՞նչ ես եփել, քեռի:

ՔԵՌԻ - Անունը չեմ իմանում, եսիմ... էդ էլ ա սուրպրիզ:

ՌԻՄԱ - Քո ամեն ինչն էլ սուրփրայզ ա, բայց մի սուրփրայզ էլ ես ունեմ, չեմ իմանում, գուցեև խնդրանք ա:

ՔԵՌԻ - Ասա, ցավդ տանեմ, առանց խնդրելու:

ՌԻՄԱ - Քեռի, դու գիտես, որ ես ֆիլմ եմ սովորում, պիտի

քննություն հանձնեմ, պիտի մի հատ կարճ թատրոն բեմադրեմ:

ՔԵՌԻ - Լավ ես անեմ բալես, լավ ես անում:

ՌԻՄԱ - Դու պիտի խաղաս, քեռի:

ՔԵՌԻ - Ե՞ս:

ՌԻՄԱ - Հա՛, քեռի:

ՔԵՌԻ - Ինձնից ի՞նչ դերասան, քեռին մեռնի...

ՌԻՄԱ - Քեռին հալա թող չմեռնի, շուտ ա, դու շատ էլ լավ էլ դերասան ես:

ՔԵՌԻ - Ես անգլերեն չգիտեմ:

ՌԻՄԱ - Կարևոր չի, քեռի, էս փասա-փուսեդ հավաքիր, արի սենյակը կարգի բերենք, հիմա դերասանները կգան, ինչ ասում եմ, էն էլ արա:

ՔԵՌԻ - Որտե՞ղ ենք խաղալու:

ՌԻՄԱ - Հիմա փորձ ենք անելու, փորձելու տեղ չունեմ, ստիպված տանն եմ անելու, եթե լավ խաղացիր ու քեզ հավանեցի, հետո ֆիլմ կսարքենք...

ՔԵՌԻ - Բա որ հանկարծ Օսկար շահեմ, ինչքա՞ն են տալու:

ՌԻՄԱ - Դրա մասին Դրոյին բան չասես, փողը կվերցնենք ու...

ՔԵՌԻ - Ռիմա ջան, կարո՞ղ ա ինձ ձեռ ես առնում:

ՌԻՄԱ - Ամոթ ա, քեռի, ամոթ, լուրջ բան եմ ասում, հիմա դերասանները կգան, ինչ կասեմ, էն էլ կանես:

ՔԵՌԻ - Թող քո ասածը լինի:

ՌԻՄԱ - Ուրեմն էն փոքր սեղանը բերում ես էստեղ, ես կօգնեմ: Իբր թե գրախանութ ա, մի աթոռ էլ դիր հետևը, այ էդպես:

ՔԵՌԻ - Հետո ես ի՞նչ պիտի անեմ:

ՌԻՄԱ - Համբերի, քեռի, համբերի, Շահենը որ գա, ամեն ինչ կիմանաս:

ՔԵՌԻ - Շահենն ո՞վ ա:

ՌԻՄԱ - Դերասան ա /*դռան զանգ*/:

ՔԵՌԻ - Վայ թե էդ դերասանն ա: /*Գնում, դուռը բացում է*/:

ՇԱՀԵՆ - Բարև ձեզ:

ՌԻՄԱ - Շահեն, եկա՞ր, ապրես, չես ուշացել:

ՔԵՌԻ - Ինձ բարև չկա՞, պարոն Շահեն, հորդ թայն եմ, այ տղա, ես էլ եմ դերասան:

ՇԱՀԵՆ - Կներես, բարև ձեզ:

ՔԵՌԻ - Էս տանը ինձ Քեռի են ասում:

ՇԱՀԵՆ - Ուրախ եմ, Քեռի:

ՌԻՄԱ - Լավ, ծանոթացա՞ք, հիմա նստեք:

ՔԵՌԻ - Ե՞ս էլ...

ՌԻՄԱ - Չէ, դու նստելու իրավունք չունես... Շահեն, կոֆե, չայ... Ի՞նչ կուզե՞ս:

ՇԱՀԵՆ - Միայն ջուր, եթե կարելի ա:

ՔԵՌԻ - Խոհանոցը էնտեղ ա, գնա խմիր:

ՌԻՄԱ - Քեռի... լավ, ես կբերեմ /*գնում ջուր է բերում*/:

ՇԱՀԵՆ - Կներեք, տիկին Ռիմա...

ՔԵՌԻ - Ինքդ գնայիր բերեիր ու ներողություն էլ չխնդրեիր, ջահել տղա ես:

ՌԻՄԱ - Քեռիիիիիիի. Շահեն ջան, տեկստը կարդացել ես, չէ՞:

ՇԱՀԵՆ - Այո:

ՌԻՄԱ - Հիմա կփորձենք կարդալ, մեծ բան չի, Քեռի, դու այ էնտեղ նստի, չխոսաս, մինչև կասեմ:

ՔԵՌԻ - Բայց նստեմ, ի՞նչ անեմ:

ՌԻՄԱ - Նստի, ձևացրու, որ գրքեր ես դասավորում, փոշի ես առնում, մեզ լսիր, էսօր մենակ կարդում ենք, չենք խաղում: Աշխենը զանգել ա, էսօր չի գալու, ես նրա տեղը կկարդամ: Ուրեմն էսպես, Շահենը գրող է, նաև գրախանութի սեփականատեր, նստած է համակարգչի մոտ, զբաղված ա... դուռը բացվում ա, մի անծանոթ կին ներս ա գալիս, ձեռքին մի պայուսակ, մյուս ձեռքում նպարատան նայլոնից մի տոպրակ: Գրող ա: Ասեցի անունը Աշխեն ա:

ԱՇԽԵՆ- Բարև ձեզ:

ՇԱՀԵՆ - Բարև ձեզ */ոտքի է կանգնում/*:

ՔԵՌԻ - */Քեռին միջամտում է/* Բարև ձեզ:

ԱՇԽԵՆ- Քեռի, մի խանգարի, դու մի խոսա, լուռ գործդ արա, երբ պետք ա, էն ժամանակ կասեմ:

ՔԵՌԻ - Դե որ ասիր բարև, ես էլ ասի՝ բարև, կարծում եմ էդպես ավելի ճիշտ ա, ոնց կլինի մարդ բարևի պատասխան չտա, անհարմար է, չէ՞:

ԱՇԽԵՆ- Քեռի, էս թատրոն ա, նոր ենք սկսում, կարդում ենք...

ՔԵՌԻ - Ներողություն, գրողն էլ ես դու, ռեժիսորն էլ, դերասանն էլ, բա ե՞ս:

ԱՇԽԵՆ- Ավելի լավ ա դու գնաս խոհանոց, երբ պետք լինի կկանչեմ:

ՔԵՌԻ - Լավ, թող քո ասածը լինի: */Հեռանում է/*:

ՌԻՄԱ - Նորից: Ներս եմ մտնում:

ԱՇԽԵՆ- Բարև ձեզ;

ՇԱՀԵՆ - Բարև ձեզ, ինպե՞ս կարող եմ օգտակար լինել:

ԱՇԽԵՆ- Գիտե՞ս ինչ, բալես, ես մի գիրք եմ գրել, այ, սա է */սուպեր մարկետային տոպրակից մի գիրք է հանում ու մեկնում է Շահենին/:*

ՇԱՀԵՆ - Պատմվածքնե՞ր են:

ԱՇԽԵՆ- Հա, շատ լավ բաներ են, Հայաստանում մտածել եմ, էստեղ՝ գրել, ուզում եմ վաճառել, որպեսզի կարողանամ վերադարձի տոմս գնել:

ՇԱՀԵՆ - Ասացիր Հայաստանում մտածել ես, էստեղ գրե՞լ:

ԱՇԽԵՆ- Հա:

ՇԱՀԵՆ - Չեմ հասկանում:

ԱՇԽԵՆ- Այսինքն՝ լավ բաներ են, Հայաստանում որ մտածում էինք, լավ բաների մասին էինք մտածում:

ՇԱՀԵՆ - Ամերիկայում վատ բաների մասին ես մտածում, հա՞:

ԱՇԽԵՆ- Այստեղ, բալա ջան, չես էլ մտածում:

ՔԵՌԻ - Ռիմա ջան, ճիշտ ես ասում, էստեղ ո՞վ ա մտածում որ...

ՌԻՄԱ - Քեռի, մի՛ խանգարի... Շահեն ջան, շարունակիր, հա...

ՇԱՀԵՆ - Ուզում ես ասել, այստեղ՝ Ամերիկայում, մարդիկ չե՞ն մտածում:

ԱՇԽԵՆ- Էստեղ մարդիկ ամբողջ օրը վախի մեջ են, 24 ժամ աշխատում են, երբ ուզում են մտածեն, մտքով թռչում են Հայաստան: Ցավը տանեմ Հայաստանի, ամեն ինչն էլ լավն էր: Ճիշտ է, մի քիչ խեղճ էինք ապրում, բայց մարդկություն կար, արվեստ

կար, հարգանք ու պատիվ կար, հարևանություն կար, պետություն կար, խոսքդ լսող կար, տաքսի ու ավտոբուս կար, լավ ջուր ու մաքուր օդ կար...

ՔԵՌԻ - Ռիմա ջան, ճիշտ ես ասում էլի, քանի շաբաթ է էստեղ եմ, ոչ մի հարևան դուռս չի խփել, ասի ղալաթ ես արել եկել ես, հել ռադդ քաշի գնա...

ՌԻՄԱ - Քեռի, խանգարում ես, համ էլ էս ես չեմ ասում, էս թատրոն ա, թե ով կասի, դեռ չգիտեմ, լավ կլինի, դու սուրճ դնես: */Շահենին/* շարունակիր, Շահեն, շարունակիր...

ՇԱՀԵՆ - Թոշակ առնո՞ւմ ես:

ԱՇԽԵՆ- Հա, տվածներն էլ մի բան չի, հազիվ տան վարձ ու մի պատառ հաց...

ՔԵՌԻ - Ռիմա՛, բա ասում էիր թոշակ չենք ստանում...

ՌԻՄԱ - Քեռի, խանգարում ես, սուրճ ուզեցինք:

ՇԱՀԵՆ - Գիրքդ ինչի՞ մասին է:

ԱՇԽԵՆ- Հայաստանի, Հայաստանի ժողովրդի, Հայաստանի բնության, Հայաստանի նիստ ու կացի, Հայաստանի մարդկանց, ցավը տանեմ հայաստանցիների...

ՔԵՌԻ - Ես էլ, թե չէ... */Ռիման հայացքով սաստում է/*:

ՇԱՀԵՆ- Ամերիկայի, կամ պարսկահայերի, լիբանանահայերի, սիրիահայերի մասին չե՞ս գրում:

ԱՇԽԵՆ- Ինչի՞ս ա պետք, դրանք «մաս» ունեն, որ գրեմ:

ՇԱՀԵՆ - Ասում ես թոշակ ես ստանում, բա չե՞ս աշխատում, էնենց՝ ՔԱՇ:

ԱՇԽԵՆ- Այ տղա, դու կա-կե-բեշնիկ ե՞ս, ի՞նչ ես: Դե որ աշխատեի, ինչո՞ւ պիտի գիրք գրեի:

ՔԵՌԻ - Լավ, հանգստացեք, կոֆե խմեք: Ռիմա ջան, էս դո՞ւ ես գրել:

ՌԻՄԱ - Շնորհակալ եմ, քեռի, բա ով ա գրել, ասի, չէ՞, դիպլոմայինս ա:

ՔԵՌԻ - Բա իմ դե՞րը:

ՌԻՄԱ - Սպասիր, կհասնենք: Քո համար կոֆե չե՞ս դրել:

ՔԵՌԻ - Ես խմել եմ:

ՌԻՄԱ - Լավ. Շահեն շարունակենք:

ՇԱՀԵՆ - Որ աշխատեիր, երևի չէիր գնա, հա՞:

ԱՇԽԵՆ- Եսիմ...

ՇԱՀԵՆ - Առաջի՞ն անգամ ես տպագրվում:

ԱՇԽԵՆ- Այո, սրանք որ վաճառեմ, մի վեպ եմ գրելու:

ՇԱՀԵՆ - Ինչի՞ մասին:

ԱՇԽԵՆ- Վիկտոր Համբարձումյանի:

ՇԱՀԵՆ - Աստղագե՞տ ես:

ԱՇԽԵՆ- Չէ, ցավդ տանեմ, լիմոնադի ցեխի վարիչ եմ եղել:

ՇԱՀԵՆ - Լավ, ի՞նչ արժի գիրքդ:

ԱՇԽԵՆ- Տաս դոլար:

ՇԱՀԵՆ - Քանի՞ էջ ա:

ԱՇԽԵՆ- Վաթսունչորս:

ՇԱՀԵՆ - Կազմը ինչո՞ւ գունավոր չես արել, ավելի թանկ կվաճառվեր:

ԱՇԽԵՆ- Փողս չհերիքեց, ցավդ տանեմ:

ՇԱՀԵՆ - Բայց ինչքա՞ն ես ծախսել այս գրքի համար:

ԱՇԽԵՆ- Ախպեր ջան, ուզո՞ւմ ես, փողը տուր վեկալ, չե՞ս ուզում, էլ ի՞նչ ես գլուխս արդուկում, քննի՞չ ես, ի՞նչ ես...

ՇԱՀԵՆ - Ոչ, տիկին, չէի ուզում վիրավորել, պարզապես ես էլ եմ գրում, ինքս էլ հրատարակում եմ, դրա համար էլ... Լավ արի չերկարացնենք, եթե երկու դոլարով կտաք, հինգ հատ կվերցնեմ:

ԱՇԽԵՆ- Այ տղա ջան, դու իսկականից ինձ ձեռ ես առնում, մորդ թայն եմ բալամ, չե՞ս ամաչում:

ՇԱՀԵՆ - Տիկին, արի իմ գիրքը կես գնով քեզ տամ, ընդամենը հինգ դոլար, 250 էջ ա, կազմն էլ գունավոր, ասացի, որ թուղթն էլ ավելի հաստ է, քան քո գրքի:

ԱՇԽԵՆ- Ո՞ւր ա, հլա մի տուր նայեմ:

ՇԱՀԵՆ - Համեցեք:

ԱՇԽԵՆ- Օ՜, ճիշտ ես ասում, ինչքա՞ն է նստել:

ՇԱՀԵՆ - Հինգ հազար դոլար:

ԱՇԽԵՆ- Բա ինչքանո՞վ ես ծախում:

ՇԱՀԵՆ - Տասներկու դոլար, քեզ հինգով կտամ:

ԱՇԽԵՆ- Տեսքից լավ գիրք ա երևում, բայց ափսոս, որ փող չունեմ, համ էլ էս անտեր երկրում ով ա գիրք կարդում որ...

ՇԱՀԵՆ - Բա ինչո՞ւ ես քոնը վաճառում:

ԱՇԽԵՆ- Ասի չէ՞, գնալու փող չունեմ:

ՇԱՀԵՆ - Դրա համար ես գրել, հա՞:

ԱՇԽԵՆ- Բա ուրիշ ի՞նչ անեի, պարապ-սարապ թրև գայի՞...

ՇԱՀԵՆ - Էս... գիրքդ նվիրել ես Քըրք Գրիգորյանին, հա՞:

ԱՇԽԵՆ- Հա՛, վա՞տ եմ արել:

ՇԱՀԵՆ - Ինչո՞ւ:

ԱՇԽԵՆ- Ես իմ... Բալա ջան, մի բաժակ ջուր կտա՞ս:

ՇԱՀԵՆ - Քեռի, քեռի ջան, մի բաժակ ջուր բեր, խնդրում եմ:

ՔԵՌԻ - Վայ, իմ հերթն ա, էկա, էկա... Հիմի իսկականից ջո՞ւր եք ուզում, թե՞ թատրոն եք խաղում:

ՌԻՄԱ - Չէ, թատրուն ենք խաղում, քեռի, բայց հիմա պիտի գաս, ձեռքիդ մի բաժակ ջուր:

ՔԵՌԻ - Լավ, գնամ բերեմ:

ԱՇԽԵՆ- Արագացրու, Քեռի...

ՇԱՀԵՆ - Շնորհակալ եմ:

ԱՇԽԵՆ- Էս մարդն էլ ա Հայաստանի՞ց:

ՇԱՀԵՆ - Այո, ժամանակավոր է, կգնա:

ԱՇԽԵՆ- Կգնա, դուք էլ կուրախանաք, Հայաստանից եկող տուրիստները, բոլորն էլ հիմնական են, գալը կա, գնալը՝ չհավատաս...

ՇԱՀԵՆ - Քըրքը քեզ փող չի՞ տվել:

ԱՇԽԵՆ- Հարուստները բոլորն էլ էդպես քծիբ են, անունը մեծ-մեծ տպեցի, բայց...

*Այստեղից ընթերցանությունը աստիճանաբար փոխարինվում է լուրջ խաղի*

ՇԱՀԵՆ - Գիրքդ ինձ նվիրեիր, գոնե 100 դոլար կտայի:

ԱՇԽԵՆ - Լավ, ձեզ, պարսկահայերիդ էլ գիտեմ, բրինձը հավի պես՝ հատիկ-հատիկ եք ուտում, չվերջանա... Դու գիրք առնող չես: Ի միջի այլոց, գրքիդ կազմի վրա երեք հատ ուղղագրական սխալ ունես:

ՇԱՀԵՆ - Ի՞նչ սխալ:

ԱՇԽԵՆ - Գրքիդ անունը: «ԿԱՐՕՏ»-ը ոչ թե Օ-ով ա, այլ՝ Ո-ով:

ՇԱՀԵՆ - Բայց մենք Օ-ով ենք գրում:

ԱՇԽԵՆ- Որ ասում են պարսկահայերը անգրագետ են, ճիշտ են ասում էլի, ո՞վ է տեսել, որ կարոտը Օ-ով գրեն: Ես եմ հայկական դպրոց գնացել, դո՞ւ ես ասում: Յանի ուզում ես ասել ամբողջ Հայաստանը անգրագե՞տ ա, ամոթ ա, ամոթ... Նայիր անգամ անունդ գրել չգիտես, Շահենը, ոչ թե Է-ով է, այլ Ե-ով, դեռ չեմ խոսում ազգանունիդ մասին, որի մեջ երկու սխալ կա...

ՔԵՌԻ - */Միջամտում է/* Տիկին Աշխեն, ինչո՞ւ ես ջղայնանում, պարսկահայ են, ոնց ուզում են, թող գրեն...

ՇԱՀԵՆ - Հարգարժան տիկին, մենք Սփյուռքում հին ուղղագրությամբ ենք գրում, դա սխալ չի...

ԱՇԽԵՆ- Հին ու նորս ո՞րն ա, ակադեմիա կա, լեզվի ինստիտուտ կա, օրենք կա, կարգ կա, ամոթ ա, սերունդ եք փչացնում, ձեզ էլ գրագետի տեղ դնում, որ ձար ունենայի, էս բոլոր գրքերդ կառնեի ու կվառեի:

ՔԵՌԻ - Վայ, վայ, սրանք իսկականից կռվում են, տիկին ջան, արի, արի...

ՇԱՀԵՆ - Տիկին...

ԱՇԽԵՆ- Էլ ի՞նչ տիկին, ի՞նձ էիր ձեռ առնում, հլա մի գրագետիս նայիր, տո՛ւր էդ գիրքդ */սեղանից վերցնում, սկսում է պատառպատառ անել/* այ սենց, հերիք եղավ մեր լեզուն փչացնեք...

ՔԵՌԻ - Տիկին ջան, էս ի՞նչ ես անում, էս Դրոյի գիրքն ա, հիմա կգա, բա ի՞նչ ենք պատասխանելու...

ՇԱՀԵՆ - Տիկին, հե՞ր ես...

ԱՇԽԵՆ- Ի՞նչ՝ հեր, ի՞նչ մեր, մեր մայրենի լեզվին չդիպչես, թե չէ...

ՇԱՀԵՆ - Տիկին, մենք սովետական ուղղագրությամբ չենք գրում, տիկին...

ԱՇԽԵՆ- Սովետին բան չասես, թե որ սովետը չլիներ, հիմա Հայաստանն էլ չէր լինի, դուք էլ, հասկացա՞ր: Սփյուռքի հայերդ իրավունք չունեք սովետի մասին խոսելու, հասկանո՞ւմ ես, մի քանի դոլար փող եք ուղարկում, ուզում եք այբուբենն էլ փոխեք, հա՞... Չե՛ք կարող, շատ միամիտ եք...

ԴՐՈ - */Ներս է մտնում, ձեռքին մի մեծ փաթեթ/* Ես ինչ ա էլե, ո՞վ ա էս մարդը, ի՞նչ ա ուզում:

ՔԵՌԻ - Փորձ են անում, էս որ փորձ ա, ուրեմն բեմի վրա պատերազմ է լինելու, Դրո ջան:

ՌԻՄԱ - Քեռի, դու հոյակապ խաղացիր, բեմի վրա էլ որ էսքան անկեղծ լինես, հաստատ Օսկարը կշահես: Էնտեղ մի քանի ձշտում կա, որ անեմ, ամեն ինչ լավ ա լինելու:

ԴՐՈ - Ես տունս դարձրել եք փորձադա՞շտ:

ՇԱՀԵՆ - */Դրոյին/* Բարև ձեզ:

ՌԻՄԱ - Ծանոթացիր, ամուսինս է՝ Դրոն:

ՇԱՀԵՆ - Բարև ձեզ:

ԴՐՈ - Կներեք, ես առանց տոմսի եմ մտել, կարելի՞ է:

ՇԱՀԵՆ - Բարև ձեզ, ես Շահենն եմ:

ՌԻՄԱ - Քեզ հետ է, բարևում է:

ՇԱՀԵՆ - Բարև ձեզ, Շահեն:

ԴՐՈ - Ես Շահենը չեմ, եթե հիմա խելքս գլուխս ա, ես Դրոն եմ:

ՇԱՀԵՆ - Ուրախ եմ:

ԴՐՈ - Ես թատրոնը ե՞րբ եք սկսում...

ՔԵՌԻ - Արի, արի, Դրո ջան, էս թատրոնը շուտ ա սկսել, դու խաբար չես, արի, արի տենամ էդ ի՞նչ ես բերել:

ԴՐՈ - Լավ, գնանք, տես ինչ եմ բերել, */ մի քիչ հեռանում են/* էն զիբիլները կթափես, նայիր, շատ հեշտ բացվում ա */ձեռքի իրը վրան է, ցույց է տալիս, թե ինչպես է բացվում/*, էս միլեքը սենց խրում ես էս ծակերի մեջ ու այ, էսպես, բացվում ա, մենակ պիտի էն քարի չափ տակը ծղես, որ հավաքելը հեշտ լինի:

ՔԵՌԻ - Քեռին ցավդ տանի, սրանից լավ բա՞ն, ոչ սեղան կշարժեմ, ոչ էլ... */վրանը տանում է ննջասենյակ, վերադառնում է/*:

ԴՐՈ - Ի՞նչ կա ուտելու, սոված մեռնում եմ:

ՔԵՌԻ - Վայ, Դրո ջան, խանգարում ես, ցավդ տանեմ, ես դեռ դերիս մեջ եմ: Էս ա, սեղանը պատրաստ ա, դու մինչև մտնես բաղնիք...

ԴՐՈ - */Մոտենում է Շահենին/* Լավ կասե՞ք հեր էիք կռվում...

ՌԻՄԱ - Նախ բարև, հետո մարդավարի ծանոթացիր՝ Շահենն ա, դերասան ա, իմ գործն ենք կարդում:

ԴՐՈ - Դե ասեք բնակարանս սարքել եք մշակույթի տուն: Թատրոն, արձան, խաչքար... Լավ եք անում, բայց էս գիրքս ինչի՞ եք ...

ՌԻՄԱ */Սկսում է հավաքել/* Հետո, հետո կասեմ: Էդ ի՞նչ լավ բան էիր առել քեռու համար:

ԴՐՈ - Զոնթիկ, ցույց տվեցի ինչպես ա բացվում, ինչպես փակվում, անձրև ա... Վայ, կներես պարոն Շահեն, ես Ռիմայի ամուսինն եմ՝ Դրոն:

ՇԱՀԵՆ - Ուրախ եմ:

ԴՐՈ - Լավ ձեզ չեմ խանգարի /*մտնում է լվացարան*/:

ՌԻՄԱ - Քեռի, մեկ ա, դու տնից դուրս չես գալիս, տանն ես, փող ես շի... Էդ բառը ամաչում եմ ասեմ, քեռի, չի՞ լինի ուրիշ բառ ասես: /*Օգնում է, սեղան են գցում*/:

ՔԵՌԻ - Ես շինելուն եմ սովոր, հին արևմտահայ եմ, վարժվել եմ, շինել, շինարարություն, շինանյութ, շեն, շենք, էստեղ ի՞նչ վատ բան կա, որ... դու ասա՝ սարքել, աշխատել...

ՇԱՀԵՆ - Տիկին Ռիմա, ես գնամ, հա՞:

ՌԻՄԱ - Չէ՛, ի՞նչ եք ասում, միասին կընթրենք, նոր...

ՇԱՀԵՆ - Անկեղծ ասած, սոված չեմ, մի քիչ էլ զբաղված եմ:

ՌԻՄԱ - Լավ, չեմ ստիպում, դու գիտես, կզանգեմ, Աշխենին էլ գտնեմ, կպայմանավորվենք: Մերսի, որ եկար:

ԴՐՈ - /*Ներս է մտնում*/ Բա էդ բեյրութցիները ո՞նց չեն ամաչում, ասում են՝ շինիչ մարդ, շինիչ գործ ա անում, հլա դրանց բարերար էլ ասում են:

ՌԻՄԱ - Հենց դրանք են բարերար, քեռի ջան, էդ քրոջդ տղային հասկացրու, որ եթե տղամարդը շինիչ չեղավ, տունը կքանդվի...

ԴՐՈ - Քեռի ջան, իրան ասա, որ էսօրվա կանայք, միայն փողով են բավարարվում, կնկան որ փողով բավարարես, բեյրութցու, թեհրանցու ու հայաստանցու մեջ տարբերություն չեն դնի... բոլորի լեզուն էլ կհասկանան:

ՔԵՌԻ - Է՛, էս Ամերիկան ձեզ շա՛տ ա փոխել... Էսքան, որ դուք եք աշխատում ու փողի հերս ուտում... Գոնե լավ սնվեք, ախր բան չեք ուտում, ոչ ճաշ եք եփում, ոչ մարդավարի ուտում, ոչ սնվում եք... կերեք, խմեք, քեֆ արեք, երեխան հո օդից չի գա, ոչ

էլ արագիլն ա բերում... Գոնե էդքան բան գիտե՞ք... Հավատացեք, սուտ են ասում, Մարիամ Աստվածածինն էլ Սուրբ հոգով չի հղիացել... /*խաչակնքում է*/ Կերեք, խմեք, ծխեք ու մեկդ մյուսին բարություն արեք, աշխարհից բան չեք տանելու...

ՌԻՄԱ - Քեռի, լավություն անելու համար հոր ա պետք, էն մեր գյուղի հորի պես մի հոր, որ ով ինչքան ուզում էր քաշում, տանում էր:

ԴՐՈ - Քալիֆորնիան ձեր գյուղը չի, էստեղ որ հոր փորես, ոչ թե ջուր, այլ նավթ ա դուրս գալու, սև նավթ:

ՌԻՄԱ - Գիտեմ, Պարսկաստան էլ նույնն էր, հերդ քանի՞ նավթի հոր ուներ:

ԴՐՈ - Յոթ, երբ քեզ հետ ամուսնացա, բոլորն էլ չորացան: Ասում եմ, Քեռի, հարսիդ ասա, էդ թատրոնի մեջ իմ համար դեր չկա՞:

ՌԻՄԱ - Կա, լավ էլ դեր ա, մեջը փող չկա, թե չէ, անպայման դու կխաղայիր:

ԴՐՈ - Քեռի՞:

ՔԵՌԻ - Հա ջան:

ԴՐՈ - Ասում են դու հայաստանցի ես դարձել ու հայերենդ էլ մեզանից լավ ա, բռնաբարել, այսինքն՝ բռնի ձևով մեկին բարությո՞ւն անել... Ես իմ Ռիման, հենց էդ էլ անում ա:

ՔԵՌԻ - Հա, քեռին քեզ մատաղ, հենց էդ էլ նշանակում ա, ուրիշ հարց ունե՞ս:

ԴՐՈ - Հա, քեռի ջան, ասում եմ, Հայաստանումը էնպիսի խանութներ կա՞ն, որ... էստեղ սեքս շափ են ասում:

ՔԵՌԻ - Հա, խի չկա, Հայաստանում դրանց ասում են շինանյութի խանութ:

ՌԻՄԱ - Քեռի ջան, շատ պիտի ներողամիտ լինես, էս անգամ որ Հայաստանից էկար, մեզ ո՛չ լավաշ ա պետք, ո՛չ ավելուկ, ո՛չ ծիրան, ո՛չ Արարատի ու Էջմիածնի նկարները, խնդրում եմ մի քիչ շինանյութ բեր, շինանյութ...

ԴՐՈ - Ուզում ես ասես՝ վայագրա՞:

ՔԵՌԻ - Էդ ի՞նչ բան ա:

ՌԻՄԱ - Էդ սնունդ ա, բայց հիմա ուրիշ սնունդ ա մեզ պետք, սովից մեռնում ենք, իրան ասա՝ թող մի բան օրդեր անի ուտենք, թե չէ սոված փորին շինանյութն էլ չի օգնի: */Սեղանից վեր է կենում/* Քեռի, իրոք, որ սուրփրայզ արիր, էսօր ես սոված կմեռնեմ, էն քարը շուտ տաշիր, պրծիր, ժամանակն ա...

ԴՐՈ - Քեռի, քո էփածը չի սիրո՞ւմ, ասա թող ինքը էփի...

ՌԻՄԱ - Քեռի, իրան ասա, որ չեմ հասցնում, աշխատանքի, դպրոց...

ԴՐՈ - Ասա, շապիկ էլ չունեմ, քանի՞ շաբաթ ա լվացք չես արել:

ՌԻՄԱ - Քեռի, ինքը լավ գիտի, որ լվացքի մեքենա չունենք, համ էլ անձրևներ են, լվանամ, որտե՞ղ փռեմ:

ՔԵՌԻ - Ռիմա ջան, դու լվացքդ արա, ես գիտեմ որտեղ կփռեմ: */Պարան է բերում, կապում է սենյակի մի անկյունից մյուս անկյունը/:*

ՌԻՄԱ - Քեռի ջան, էս ձեր կոլխոզն ու սովխոզը չի, մենք հիմա Ամրիկայում ենք:

ԴՐՈ - Քեռի ջան, մի՛ լսի, ավելի լավ է մարդ կոլխոզում ու սով-

խոզում մաքուր ապրի, քան Ամրիկայում սենց կեղտոտ, համ էլ իրան ասա՝ հանկարծ Հայաստանին բան չասի, էնտեղի գյուղերը էստեղի քաղաքներից ավելի զարգացած են, ամենը կրթված են, լրիվ երգիչ են, գրողներ են, պարողներ են, ջութակ են նվագում, փիանո... դպրոցներում շախմատի դաս են տալում, ասա քոջաե քարի...

ՔԵՌԻ - Իրան ասա, որ փիանոյի փոխարեն, դուդուկ ես բերի, թող մի քիչ էլ համբերի, խաչը կվերջանա, դու դուդուկ կնվագես, ես էլ լաց լինողներ կբերեմ:

ԿԱՐՈ - Քեռի, իրան ասա, որ ագար /եթե/, ինքը Աստծո հույսով գլորվի, ես ինքս մեծ ուրախությամբ, բարձր ձայնով, կզռամ, լաց լինող պետք չի...

ՔԵՌԻ - Ռիմա ջան, Դրո ջան, իրար միս ուտելով քեֆ չի լինի...

ՌԻՄԱ - Այ քեռի ջան, ինչ քեֆ, ինչ բան, տունս սարքել եք քարտաշանոց, հարևանների ձենը դուրս ա էկել, ո՞վ ա տեսել Ամրիկայի նման տեղում, ափարթմանի մեջ քար տաշեն: Էգուց էլ թազավրանդ կխփես ու... Խարո բիար օ բաղալի բար քոն... Բայց չէ, լավ ես անում, իմը պրծի, էսպես որ էրևում ա, երկար չեմ ապրի...

ԴՐՈ - Քեռի, ասա թող հանգիստ մնա, ասա, որ էդ իմ համար ես սարքում: Իրան թվում ա, որ ես պիտի երկար ապրեմ... Քեռի ջան, մահվանս թիվը դիր հենց էս տարի...

ՔԵՌԻ - Բալես, որ իմանայի էսքան սիրով եք, երկուսինդ մեկ կանեի: Իրարից ինչ եք ուզում, չեմ հասկանում:

ԴՐՈ - */Բղավելով/* Փո՜ղ....

ՌԻՄԱ - Հա՛, փող, տղամա՞րդ ես, բեր...

ՔԵՌԻ - Ասի շինում եմ, էլի...համբերեք, մի քիչ էլ որ համբերեք, էդ էլ կլինի:

ՌԻՄԱ - Քեռի ջան, ինչ կլինի, մտնենք վրանի տակ, ցույց տաս տեսնեմ էդ ինչպե՞ս ես շինում: Էս քրոջդ տղից հո խեր չտեսանք...

ԴՐՈ - Քեռի, իրան ասա, ավելի լավ կլինի էրթա մի քանի հատ շապիկ լվանա:

ՌԻՄԱ - Ես դաս ունեմ, քեռի, իրան ասա, էգուց տանի լանդրի գցի, ասա, որ Ռիման ասում ա, ես լվացքի մեքենա չեմ, ես մարդ եմ, էն էլ կինարմատ: */Մտնում է ննջարան, քեռին մի քանի շապիկ է վերցնում, մտնում է բաղնիք/*:

ԴՐՈ - Քեռի՞:

ՔԵՌԻ - */Ձայնը/* Հա՞:

ԴՐՈ - Էդ ի՞նչ ես անում:

ՔԵՌԻ - */Ձայնը/* Լվացք:

ԴՐՈ - Ամոթ ա, քեռի:

ՌԻՄԱ - */Ձայնը/* Ամոթ ա, դու արա... Քեռի, իրան ասա, որ ես երեք օրով գնում եմ Սան Դիեգո, գործով եմ գնում:

ՔԵՌԻ - */Ձայնը/* Գնա, ցավդ տանեմ, մինչև գալդ ես էլ կվերջացնեմ ու սուրպրիզ կլինես:

ԴՐՈ - */Ննջարանի դռան մոտ/* Էդ ո՞ւմ հաշվին ես գնում, ո՞ւմ փողով, ո՞ւմ հետ...

ՌԻՄԱ - Մի՛ վախեցիր, քոլեջի հաշվին ա, էթում եմ, որ վաղը մյուս օրը փող աշխատեմ, փողի համար եմ էթում, լավ փող են տալու, ուզում եմ մեքենա առնեմ, արդեն ամաչում եմ, տեսե՞լ ես

մեկը մարդ ունենա, բայց մեքենա չունենա: Ավելի լավ չէ՞ր լինի՝ եթե քեզ առնելու փոխարեն մեքենա առնեի...

*Բեմի լույսերը դանդաղ մարում են, նորից աղոտ լուսավորվում է: Սենյակի պարանին լվացք է փռված, քեռին լվացքը հավաքում է, վրանը դնում է քարի վրա, հայկական մի փոքրիկ դրոշ է դնում վրան, Արարատի մի պատկեր է հենում վրանին, երկու ծաղկաման մեծ ու փոքր եղևնիներ դնում Արարատի կտավի առաջ, մտնում է վրանի տակը, լույս է միացնում, երևում է աշխատող մարդու ստվերն ու լսվում է մուրճի ձայնը: Դուռը թակում են, հապաղումով մուրճը ձեռքին քեռին վրանից դուրս է գալիս:*

ՓԱԹԻԼ - Հոգնեցանք, ջանըմ, կբավե, աս ի՞նչ տեսակ մարդիկ եք. խենթացուցիք:

ՔԵՌԻ - Ո՞վ ա:

ՓԱԹԻԼ- Ի՞նչ կարևորություն ունի, հոգնեցանք, կբավե...

ՔԵՌԻ - Միթե՞ մի բան եմ տվել, որ բավական ա:

ՓԱԹԻԼ- Դուռը բաց, հիմա:

ՔԵՌԻ - Տանը չեն:

ՓԱԹԻԼ - Բաց ըսի, փոլիս պիտի կանչեմ:

ՔԵՌԻ - Ես էլ ասում եմ՝ տանը մարդ չկա, կանչում ես՝ կանչիր, ես անգլերեն չգիտեմ, նօ էնգլլիշ...

ՓԱԹԻԼ- Ես հայերեն կխոսիմ:

ՔԵՌԻ - Ես շուտ եմ եկել, հայերենս մոռացել եմ, մանավանդ ձեր հայերենը, բան չեմ հասկանում, գոոորրր...

ՓԱԹԻԼ - Ուրեմն ինձմե մի՛ նեղվիր...

ՔԵՌԻ - */Դուռը բացում է, դեմը տեսնում է կիսամերկ, տան շորերով, բայց չափից շատ շպարված մի կին/* Չէ, որ գնաս ինչու պիտի նեղանամ, մի քանի օր էլ ժամանակ տուր, վերջացնում եմ, էլի, հայ չե՞ս, ինչ ա... Հարցին պետք է ըմբռնումով մոտենալ, ընտանիք է քայքայվում:

ՓԱԹԻԼ - Հայերենդ լավ է եղեր:

ՔԵՌԻ - Լավ եմ խոսում չես հասկանում, բա որ վատ խոսեմ, ընդհանրապես չես հասկանա...

ՓԱԹԻԼ - */Առանց հրավերի ներս է մտնում/* Օ՜հ, մայ գադ, աս ի՞նչ է:

ՔԵՌԻ - */Դուռը փակում է/* Արի, արի ցավդ տանեմ, հարևան ջան */կինը զարմացած, վախենալով վրանի շուրջ պտտվում է/* ասենք հարևան էլ չկա, երեք ամիս ա դեռ ոչ մի հարևան մեր դուռը չի բացել, չեն ասում՝ հարևան ա, տուրիստ ունի, մի գնանք, բարի գալուստ ասենք, մի-մի թաս բան խմենք... Չէ, չեմ զարմանում, ամուսինները իրար չեն ճանաչում, մի տան մեջ ապրող երեխաները իրար չեն ճանաչում, կարծում եմ էս բոլորը գալիս է փողից, շատ են աշխատում, տանը չեն լինում, միասին են նախաճաշում, ճաշում, կամ... Լավ երկիր ա, բան չունեմ ասելու, բայց փողը, փողը... Ինչքան շատ են աշխատում, ավելի են մտնում պարտքի տակ, քառասուն տարի աշխատում, հավաքում են, քառասուն տարի էլ վազում են՝ հավաքածը չկորցնելու համար, թե ե՞րբ են ապրում՝ չեմ հասկանում... Չե՞ս լսում, հարևան...

ՓԱԹԻԼ - Չեմ հասկնար, ի՞նչ կխոսիս:

ՔԵՌԻ - Բա ասում էիր լավ հայերեն եմ խոսում...

ՓԱԹԻԼ - */Վրանին մատնացույց անելով/* Ասի ի՞նչ է:

ՔԵՌԻ - Հարևան ջան, դրա հետ գործ չունես, դու էն ասա, սուրճ, կոֆե, յանի ղահվե, կխմե՞ս:

ՓԱԹԻԼ - Դուն խե՞նթ ես, ի՞նչ ես... Ես վրանը ինչո՞ւ սենյակին մեջ լարած ես: Ամա՜ն, ափարթմենթը քեմփինգի վերածած է աս մարդը... /*Ուզում է փախչել, քեռին բռնում է թևից*/:

ՔԵՌԻ - Էս ո՞ւր, հարևան ջան:

ՓԱԹԻԼ - Ձեռքս ձգե, հոս Ամերիկա է, ինձի դպնալու իրավունք չունիս, ձգե քեզի կըսեմ, ձգե, թե ոչ...

ՔԵՌԻ - Ձգում եմ, բա ինչ եմ անում, հարևան ջան, ձգելը ուրիշ ինչպես ա լինում... Արի քեզ բարություն անեմ:

ՓԱԹԻԼ - Լավ, կրնա՞մ գիտնալ, հոս ի՞նչ կընես:

ՔԵՌԻ - Փող կշինեմ, կուզե՞ս քեզ էլ...

ՓԱԹԻԼ - Կուզիս ըսել դրա՞մ կշինես...

ՔԵՌԻ - Հա՛:

ՓԱԹԻԼ - Ինչպե՞ս:

ՔԵՌԻ - Գաղտնիք ա:

ՓԱԹԻԼ - Ամա՜ն, դուն աս բոլորը անօրե՞ն կընես:

ՔԵՌԻ - Հարևան, եթե ձենդ դուրս չգա և ուզես, մի հատ էլ քեզ կշինեմ, միայն թե...

ՓԱԹԻԼ - Դուն խե՞նթ ես, ինչ է...

ՔԵՌԻ - Չէ, ցավդ տանեմ, մտիր վրանի տակ՝ ցույց տամ, գնա, մտիր, մի՛ վախենա /*հարևանը վախենալով մտնում է վրանի տակ, քեռին հետևում է նրան*/:

ԴՐՈ - /*Հանգիստ, անաղմուկ ներս է մտնում, հետևում է վրանի տակ տեղի ունեցող գործողության, ինքն իր հետ խոսում է*/ Տեր Աստված, ամեն ինչ կմտածեի, էս չէ, մեղա քեզ, Աստված...

ՓԱԹԻԼ - Օ՜ մայ գադ, օ՜հ մայ գադ, ես ասանք բան չեմ տեսած, ինչ աղվոր է ասիկա, օ՜հ մայ գադ, պարոն, որ շատ խնդրեմ ինձի կշինե՞ս:

ՔԵՌԻ - Բա որ ասում էի, քեզ էլ, բոլոր հարևաններին էլ կշինեմ, միայն ձեններդ դուրս չգա...

ԴՐՈ - */Ինքն իրեն/* Ավելի լավ է ես դուրս գամ: */Մատերի ծայրով մոտենում է դռան, այդ պահին քեռին վրանից դուրս է գալիս/*:

ՔԵՌԻ - Դրո ջան, էս գալի՞ս ես, թե՞ գնում ես:

ԴՐՈ - Գալիս եմ, գալիս եմ, քեռի ջան:

ՔԵՌԻ - Արի, արի, հյուր ունենք */հարևանն էլ է դուրս գալիս/* Հարևանդ է, ծանոթացիր, ծանոթացեք: Հարևան ջան, անունդ ի՞նչ է:

ՓԱԹԻԼ - Փաթիլ

ՔԵՌԻ - Չէ մե, անձրև, բուք բորան, կարկուտ... Անունդ ասա, անունդ:

ՓԱԹԻԼ - Ըսի՝ Փաթիլ:

ՔԵՌԻ - Լավ, ես Քեռին եմ, սա էլ Դրոն ա՝ քո հարևանը, ծանոթացեք մինչև ես սենյակը կարգի բերեմ:

ԴՐՈ - Մի գնա, քեռի, արի, արի դու տիկին Փաթիլի հետ զրուցիր, մինչև ես...

ՓԱԹԻԼ - Պարոն Դրո, ես կաճապարեմ գոր, ներողամիտ եղեք, ես պիտի երթամ:

ԴՐՈ - Քեռի, ղոնաղդ էրթում ա...

ՔԵՌԻ - Չէ, էդ չեղավ, տիկին Փաթիլ, էնենց սուրպրիզ ունեմ, որ տեղում կհալես */բռնում է ձեռքից քաշում է/* Նստիր, նստիր,

խորոված՝ միս եմ բաստուրմա արել, հիմա, մի քիչ համբերեք, Դրո ջան, մանղալը բալկոնում ա, դու գնա կրակ վառիր /*սփռոցը գցում է վրանի կողքին*/:

ԴՐՈ - էդ ի՞նչ ես անում, քեռի:

ՔԵՌԻ - Բա հաց չուտե՞նք, մի-մի բաժակ չխմե՞նք, վրան կա, Մասիսները կան, բարդիները կան, դուք էլ, փառք Աստծո, Մասիսակարոտ մարդիկ եք... ես հիմա ցույց կտամ, թե Հայաստանում ոնց ենք քեֆ անում:

ՓԱԹԻԼ -Աս մարդը իրավ խենթ է:

ԴՐՈ - Քեռի, տիկին Փաթիլը ճիշտ ա ասում, վալլա դու գժվել ես:

ՔԵՌԻ - Հա, դու մանղալը թեժացրու, ես իսկականից գժվել եմ, միայն տիկին Փաթիլին կրակից հեռու պահիր, չհալչի... ես հիմա արաղը կբերեմ, բաստուրմա էլ կա, ամեն ինչ կա /*սփռոցին ուտելիք է լցնում*/:

ԴՐՈ - Տիկին Փաթիլ, քեզ քեռի՞ն ա հրավիրել:

ՔԵՌԻ - Հա, ես եմ հրավիրել: Էս շշերը վերցրու, միսը քաշի: Չէ, հլա մի-մի բաժակ խմենք՝ նոր: Տիկին Փաթիլ, քեզ ի՞նչ լցնեմ:

ՓԱԹԻԼ - Օ՜, նո, ես կաճապարեմ...

ՔԵՌԻ - Պարեմ-մարեմ չկա /*օդի է մեկնում*/, վերցրու, էս զակուսկին էլ վեկալ ու ...

ԴՐՈ - Քեռի, սոված փորի՞ն...

ՓԱԹԻԼ - Կրնամ գինի ուզել...

ՔԵՌԻ - Հա, բա ոնց, տիկին Փաթիլ, էս էլ քեզ կարմիր գինի, Հայաստանից եմ բերել, նռան գինի ա:

ՓԱԹԻԼ - Շնորհակալ եմ, պարոն Քեռի:

ԴՐՈ - Քեռի, բա որ գա... Վախենում եմ:

ՓԱԹԻԼ - Ուրիշ հյուրեր ա՞լ պիտի գան:

ՔԵՌԻ - Չէ, Փաթիլ ջան, էս մեր Դրոն գել ու գազանից ա վախենում /*բարձր ծիծաղում է*/: Այ դրա համար էլ ասում եմ խմիր, խմիր վախդ կանցնի, գիտեմ ումից ես վախենում, դա թող ինձ վրա, չի գա, խմենք մեր Հայաստանի կենացը, կուզե՞ս գնամ մյուս հարևաններին էլ կանչեմ, հիմա որ խորոված ի հոտը ընկնի հարևանների տուն, չե՞ն ասի. «Էս ի՞նչ մարդիկ են, մենակ խորոված են ուտում: /*Բոլորը միասին խմում են*/:

ՓԱԹԻԼ - /*Դատարկ բաժակը լցնելու ակնկալիքով մեկնում է Քեռուն*/: Աս նուռի գինին իրավ Հայաստանե՞ն բերած եք:

ՔԵՌԻ - Անուշ խմեցիր, տիկին Փաթիլ, Դրոն դեռ շա՜տ բան պիտի քեզանից սովորի, բեր, բաժակդ բեր, ցավդ տանեմ: Դրո ջան, սովորիր, Փաթիլից սովորիր, էս ա, մի բաժակ էլ որ խմի, կտաքանա ու հալումաշ կլինի, կհալչի, կդառնա անմահական ջուր: Գնա կրակին տեր կանգնի, Դրո ջան, գնա, ես հիմա շշերը կքաշեմ /*շշերն է քաշում*/: Ասում եմ, Դրո ջան, հարսս ի՞նչ ա սովորում: /*Ռիման անձայն ներս է մտնում, շվարած կանգնում է դռան մոտ*/:

ԴՐՈ - Ֆիլմնամեհ, այսինքն՝ ֆիլմի համար պատմություն գրելու արվեստ, որ մի բան գրի. ֆիլմ սարքեն, դուք ասում եք կինո:

ՔԵՌԻ - Դե թող ձեր կյանքի պատմությունը գրի, լավ էլ ֆիլմ կլինի /*Փաթիլին*/: Հարս ջան, ներողություն, տիկին Փաթիլ, ինչի՞ ես շվարել, մոտիկ արի, դու լավ հարևան ես երևում, խնդրանքդ անպայման կկատարեմ, խոստանում եմ, քեզ էլ կշինեմ, մյուս հարևաններին էլ...

ՌԻՄԱ - /*Զարմացած. դանդաղ մոտենում է*/ Ձեռներուն չցավա, Քեռի՞...

ՔԵՌԻ - Վայ, ցավդ տանեմ, Ռիմա ջան, եկա՞ր...

ԴՐՈ - /*Ինքն իրեն*/ Ասի չէ՝ կգա:

ՓԱԹԻԼ - Ասի ո՞վ է:

ՌԻՄԱ - Բա դու ո՞վ ես...

ՔԵՌԻ - Երկուսդ էլ հարևաններ եք, այսինքն՝ դուք... Դուք մեղավոր չեք, հիմա ամեն ինչ պարզ կդառնա: Ռիմա ջան, Փաթիլն ա, մեր հարևանը, այսինքն՝ ձեր, ձեր հարևանը: Փաթիլն ա...

ՌԻՄԱ - Դե ասա «գարուն ա ձուն ա արել», էս ի՞նչ ա կատարվում, ասում են մի ծաղկով գարուն չի գա, բայց մի փաթիլով ձմեռ ա եկել: Տիկին սառնամանիք, կասե՞ս դու իմ տանը, ամուսնուս կողքին ի՞նչ գործ ունես:

ՓԱԹԻԼ - Ես Քեռիին կճանչնամ, ամուսինիդ չեմ ճանչնար, Քեռին խոստացած է ինձի շինել, ես ալ կսպասեմ գոր...

ՌԻՄԱ - Ի՞նչ անի: /*Ոտքերը թուլանում են, մի կերպ նստում է աթոռին*/:

ՓԱԹԻԼ - Ինձ պիտի շինի:

ՔԵՌԻ - Հանգստացիր, Ռիմա ջան, հանգստացիր, հիմա ամեն ինչ կպարզեմ, անհանգստանալու ոչ մի բան չկա:

ՓԱԹԻԼ - Քեռի, գինիս կնորոգե՞ս:

ՔԵՌԻ - Այ տղա, Դրո, էդ ինչի՞ ես շվարած կանգնել, չե՞ս տեսնում Ռիման վատ ա զգում, Փաթիլին գինի լցրու:

ԴՐՈ - /*Մոտենում է*/ Քեռի, դու Փաթիլին տիրություն արա, շինում ես, գինի ես լցնում, ինչ ես անում, արա պրծի, ես Ռիմային սառը ջուր կտամ, գնա, գնա... /*գնում, ջուր է բերում*/ Քո կենացն

էինք խմում, բայց դու պիտի վաղը գայիր չէ՞:

ՌԻՄԱ - Կներես, ես մի օր շուտ եմ եկել, մեղավորը ես եմ, գնա, գնա Փաթիլդ չհալչի:

ԴՐՈ - Ռիմա ջան, ես տուն մտա, տեսա քեռին հարևանի հետ...

ՌԻՄԱ - Հասկանալի է, ես ուզում եմ հանգստանամ: */Մտնում է ննջասենյակ/:*

ԴՐՈ - Քեռի՞...

ՔԵՌԻ - Մի՛ անհանգստացիր, հիմա տիկին Փաթիլին կձանապարհեմ ու ամեն ինչ լավ կլինի, թող պառկի...

ՓԱԹԻԼ - */Գինովցած և ջերմ/* Քեռի, բայց դուն ինձի բան մը խոստացած էիր... */Հատուկ դիրք է ընդունում/:* Քեռի, կրնա՞ս ինձի ասանք շինես:

ՔԵՌԻ - Հա, ցավդ տանեմ, ոնց որ ուզես կշինեմ, միայն թե հիմա ժամանակը չի, երբ մենակ լինեմ, ժամանակ ունենամ, քեզ ձեն կտամ, ամեն ինչ իր ժամանակն ունի, համ էլ տրամադրություն ա պետք, տեսնո՞ւմ ես, չէ՞...

ՓԱԹԻԼ - */Որորվելով/* Քեռի, Ռոդենին կձանչնա՞ս, իր սիրուհուն ասանք է շինել */դիրք է ընդունում/* դուն կրնա՞ս:

ՔԵՌԻ Հա, ցավդ տանեմ, հա, հիմա՝ գնա, գնա, Փաթիլ ջան, բայց զգույշ հա, մինչև մեր նոր հանդիպումը՝ չհալչես, հլա ո՞ւր ես: */Փաթիլին տանից հանում, մտնում է Ռիմայի սենյակը/:*

ԴՐՈ - */ինքն իրեն/* Վայ քեռի-քեռի, էս ինչ բալա բերեցիր մեր գլխին, բա ասում էիր փող եմ շինելու...

ՔԵՌԻ - */Ռիմային կիսագրկած ներս է մտնում/* Ռիմա ջան, նորից եմ ասում, Դրոն էստեղ ոչ մի կապ չունի, աշխատում էի,

չակուձի ձենից հարևանը ներվայնացած դուռն էր ջարդում, ես էլ ստիպված բացեցի, առանց հրավերի մտավ ու սկսեց գոռգռալ, ձենը գցել էլ գլուխը, վախեցա մյուս հարևաններն էլ միջամտեն, մի բանով պիտի բավարարեի, տարի վրանի տակ, ցույց տվի, հավանեց, զարմացավ, ասաց. «Ինձ ալ կշինես», ես էլ ասի այո՝ որ ձենը կտրի, հետո Դրոն եկավ, գործս թողի... Ուրիշ ի՞նչ պիտի անեի, ասի հարևան է, մի բանով հյուրասիրեմ, նոր էինք սկսել՝ դու եկար, լավ էլ ժամանակին ես հասել, հիմա խորոված՝ կլինի, նստիր, ցավդ տանեմ, նստիր, Արարատյան դաշտ եմ սարքել, Մասիս սար, դրոշ, եղևնի, համարիր Փաթիլն էլ արագիլ էր, եկավ ու թռավ: Այ տղա, Դրո, գինի լցրու, նռան գինի, հարսիս ներվերը պիտի թուլանա... Ռիմա ջան, քո կենացն էինք խմում, Դրոն ճիշտ է ասում, դու պիտի վաղը գայիր, չէ՞, վատ բան հո չի՞ պատահել...

ՌԻՄԱ - Չէ, Քեռի, ինձ հանգիստ թող հա՞, խնդրում եմ:

ԴՐՈ - Հա, հասկացանք, բայց ինչի՞ ես շուտ եկել:

ՌԻՄԱ - /*Գոռալով*/ Լավ եմ արել, էս իմ տունը չի՞, երբ կուզեմ՝ կգնամ, երբ էլ կուզեմ՝ կգամ:

ՔԵՌԻ - Ռիմա ջան, Դրոն ասաց, որ գնացել էիր սցենար գրելու, կարո՞ղ ա պրծել էկել ես...

ՌԻՄԱ - Հա՛, պրծել եմ:

ՔԵՌԻ - Ես էլ եմ պրծել, ցավդ տանեմ: Ես կարամ իմ շինածը քեզ ցույց տամ, բայց մեր քեֆը շարունակենք՝ նոր: Էսօր քեֆի օր ա, քո գրքի ու իմ շինածի օրն ա, խմենք իմ ու Ռիմայիս կենացը...

ԴՐՈ - /*Գնում Ռիմայի պայուսակը բացում է, թղթեր է վերցնում, քաշվում է մի անկյուն և սկսում է ինքը իր համար կարդալ*/.

- «Թելեֆոն անե՞մ էմերջենսի»:

- «Չէ, շնորհակալ եմ, դրսի կերակուր չեմ սիրում»:

- «Դե արագացրու, պարոն Դրոն ուշանում ա»:

- «Էստեղի ջրից ա, փորկապություն ա գցում»...

- « Հա, էդպես ա, Հայաստանի ջուրը լուծ ա գցում, Ամրիկա յինը՝ փորկապություն: Քեռի ջան, նստիր, հանգիստ նստիր»: */Ռիմային/* Էս ինչ ա, մեր կյանքն ես գրել:

ՌԻՄԱ - */Կոպիտ/* Հա՛, ինչի՞ց ես վախենում, այսօրվանով էլ պիտի ավարտեմ:

ԴՐՈ */Շարունակում է կարդալ ու թերթիկները մեկ առ մեկ մանղալի մեջ վառում է/.*

- «Էս ինչի՞ հոտ եմ առնում»

- «Աչքերդ փակ ասա՝ ինչի՞ հոտ ա»:

- «Ժավել, թայդ կամ աջաքս»:

- «Իմ վառված սրտի հոտն ա»:

- «Վայ, Դրո, էս ինչ ա էլե»:

- «Բան էլ չի էլե»:

- «Էսօր ձեռդ ջեբդ ա մտել... Դու մենակ մեռելի համար էիր ծաղիկ առնում, չլինի թե Քեռին ա վելխարջի արել»:

ՌԻՄԱ - Հանգիստ վառիր, դրանք քափի են... Դրո, սիրելի ամուսինս, առիթից օգտվելով, ուզում եմ Քեռու ներկայությամբ, այս երեկոն մի քիչ ռոմանտիկ դարձնել: Դրա համար մեր այս սենյակը բավականին ապահով տեղ ա, մեր դժվարությունները ոչ մի տեղ, բացի այս տանը, չեն լուծվի: Ես ուզում եմ մի գաղտնիք ասեմ: Գաղտնիք, որ մինչև հիմա դրա մասին չեմ խոսացել: Չվիրավորվես, խնդրում եմ: Դրո, դու կամ աստառ ես, կամ՝ երես, կամ լույս ես, կամ՝ խավար: Երբ մի բանի հետ համաձայն ես, չես

ասում ինչո՞ւ, երբեք կարծիքդ չես կիսում: Երբեմն մի ուրիշ մարդ ես դառնում, խոսում ես անծանոթի պես, դու քո սեփական կարծիքը չունես, բայց տան քոմփյութերի պես, դարձել ես մեր ուղեղը, բոլոր գործերս ֆրիզ ես անում, արդեն հոգնել եմ էս անելուց ու էն չանելուց: Ո՞վ է ասել, որ դու ավելին ես հասկանում, որ դու ավելի խելացի ես, էս բոլոր իրավունքները որտեղի՞ց ես ձեռք բերել: Այն, ով ասել է՝ ամուսինները ժամանակի ընթացքում նմանվում են միմյանց ու մեկ մարմին են դառնում, կա՛մ կատակ է արել, կա՛մ էլ ապուշի մեկն ա եղել...

ԴՐՈ - Աստված չանի, ես քեզ նմանվեմ...

ՌԻՄԱ - Լավ, մի՛ նմանվիր, բայց իմացիր, որ առաջին անգամն է որ մի բան եմ գրում: Երբ սովորական մարդկանց մասին եմ գրում, ասենք՝ հորս, քո մոր, ծանոթ ու անծանոթի, բարեկամների, հանգիստ գրում ու անցնում եմ, բայց երբ հերթը հասնում է քեզ, գրիչս չորանում ա, մելանս վերջանում ա, առաջ չեմ գնում... Եթե ֆիլմում քո իսկական կերպարը ցույց տամ, սինեմայում հանդիսատեսների սիրտը կխառնի: Հարյուր անգամ քեզ ջնջել եմ, հանել, ձեռդ բռնել գրքից դուրս եմ շպրտել, գցել եմ զիբիլի ամանը, բայց վերջում, ինչ որ ձևով, չորս ձեռ ու ոտով, նորից ներս ես մտել: Ախր քո կյանքը, իմ կյանքն էլ ա, իմ լրիվ կյանքը քեզնով ա լցվել, բայց հենց ուզում եմ քո մասին գրեմ, տեսնում եմ մտքիս մեջ չկաս, գոյություն չունես...

ԴՐՈ - Հա՛, իմանում եմ, ես երբեք քո մոտ ներկա չեմ եղել, բայց էսօր ուզում եմ խմես իմ ներկայության կենացը, ուզում եմ ես քո մեջ ապրեմ, ուզում եմ դու ինձ քո մեջ զգաս, ախր, առանց քեզ... Կարծում եմ Քեռին էլ կմիանա մեզ:

ՔԵՌԻ - Ես ձեր երկուսի ցավն էլ տանեմ, Ռիմաս ճիշտ ա ասում, ձեր դժվարությունները ոչ մի տեղ, բացի այս տանը՝ չեն լուծվի, ես էլ եմ նկատել, որ երկուսդ իրար կողքի, միմյանց համար բացականեր եք, ինձ շատ պիտի ներեք, բայց ինձ թվում ա, ձեր հիմնական խնդիրը փողն ա, միայն դուք չեք, աշխարհի պատերազմները, տեռորները, սպանությունները, ինչքան այլանդակություններ ու խռովություններ կան, բոլորի հիմքում ընկած ա փողը... Խմենք իսկական սիրո կենացը, միայն սերն է, որ կարող ա դիմակայել այդ չարիքին... Ռիմա ջան, խմիր, գիրքդ անպայման կտպագրվի, գուցեև ֆիլմ կլինի, ինչ իմանաս, խմենք մեկս մյուսի կենացը /*Դրոն մոտենում, Ռիմային գրկում ու խմում է*/: Դե, ես գնացի պառկելու, հոգնած եմ, դուք վայելեք, բարի գիշեր: Ի միջի այլոց, սեղանը չհավաքեք, վաղը ազատ եմ, ես ինքս...

ՌԻՄԱ - Քեռի, կարո՞ղ ենք տեսնել ի՞նչ ես շինել, քեռի:

ՔԵՌԻ - Իհարկե, ես գնացի, լավ մնացեք:

*Քեռին գնում է, Դրոն ու Ռիման քանդակը բերում են հանդիսատեսի տեսադաշտի մոտ, լուսարձակը ընկնում է վրան, բացում են: Քանդակը ԱՄՆ-ի մեկ դոլարանոց է... Ամուսինները նստում են վրան ու միմյանց աչքերի մեջ են նայում:*

ՎԱՐԱԳՈՒՅՐ

# ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## ՀՐԱՉՅԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

# ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Վահան Թեքեյանի «Լեզուն, որով գրեցի» բանաստեղծության հնչեցրած տագնապն այսօր, կարծես թե, մարգարեական հնչեղություն է ստացել.

Լեզուն, որով գրեցի՝ երկրի երեսը քիչեր
Կը կարդային զայն արդէն ու պակսեցա՞ն անոնք ալ...
Հարիւր տարի ետք միայն, իր այս ձեւով, այս սըխալ
Կամ ճիշդ ձեւով ու հնչմամբ՝ լեզուն անուշ զոր խօսեր

Էին անուշ տըղաքներ, գուցէ խօսող չունենայ,
Եւ քերթուածները որոնց մէն մի բառին ու վանկին

Վրրայ ես սիրտ հատցուցի՝ գուցէ անկիւն մը պառկին
Առանց որ մէկը դրնէ իրենց բուն շեշտն անոնց վրայ...»[1]:

Արդեն բոլորին հայտնի փաստ է, որ 2012-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ն արևմտահայերենը դասել է մեռնող լեզուների շարքին: Թեքեյանի արտաքուստ անձնական-բանաստեղծական վիշտը խորքում համազգային ողբերգություն է ամփոփում. վտանգված են նաև այդ լեզվով ստեղծված գրավոր մշակույթի ժառանգությունն ու հեռանկարները: Սա այնպիսի վտանգ է, որ կանխելու համար պետական-քաղաքական համալիր ծրագրերի մշակում է անհրաժեշտ: Վերջին ժամանակներս ինչ-որ բաներ արվում են, բայց «մեծ ծրագրերի իրագործման ժամանակը կարծես դեռ չի հասել: Վտանգաւոր սպասման միտում է նկատւում. ինչքան սահի ժամանակը, այնքան արեւմտահայ մշակոյթի ճանաչելիութեան դիրքերը թուլանալու են: Չէ՞ որ հիմա էլ չքմեղանալու փարիսեցի փորձեր են կատարւում, լա՜ւ կը լինէր, բայց արդէն մասնագէտներ կարծես չունենք այս ասպարէզում: Ուսուցիչներին վերապատրաստող ուսուցչապետեր չունենք: Մեզանում արեւմտահայ մշակոյթի պաշտպանութեան ամբողջական համալիր ծրագիր մշակուած չէ, քանի որ նրա կորստեան տագնապները ահազանգի հնչողութիւն դեռեւս չունեն»[2]: Անհրաժեշտ է սկսել հանրակրթական ծրագրում արևմտահայերենի դասընթաց ներառելուց, քանի որ վերաբերմունքն արևմտահայ լեզվի և գրականության հանդեպ ձևավորվում է հենց դպրոցում: Անհրաժեշտ է նախաձեռնել մի կողմից սփյուռքահայ լավագույն գրողներին թարգմանելու և աշխարհին ներկայացնելու, մյուս կողմից՝ Հայաստանում հրատարակելու քաղաքականություն, որովհետև սփյուռքահայ գրողն օտար-

ված է թե հայաստանյան, թե համաշխարհային գրականության ընթացքից, և առաջին հերթին այս օտարվածությունն է, որ նրան մղում է օտարագրության, նա օտարված է հայաստանյան գրական դաշտից, ցավոք, սփյուռքահայ գրականությունը հայաստանաբնակ գրագետի համար տակավին չունի այն կարևորությունը, ինչ արևելահայ գրականությունը, իսկ առանց հայրենիքի գրականություն չկա. հայրենիքի և ինքնության գիտակցումը նույնական բաներ են: Պատահական չէ, որ սփյուռքահայ գրողները միշտ էլ իրենց հայացքն ուղղել են հայրենիք և սփյուռքահայ գրողների կողմից Հայաստանի ներբողման մեջ ոչ պակաս ողբերգություն է թաքնված, այլ բան է, որ Հայաստանում ընդունվել և ճանաչում են ստացել հատկապես սփյուռքահայ այն գրողները, ովքեր ներբողներ են ձոնել հայրենիքին: Այս պարագայում է, որ առաջանում է մեր հայացքը սփյուռքահայ գրականությանը դարձնելու. մեր ազգի երկու հատվածների գրականության ընթացքները միասնական հունի մեջ ընկալելու, արևմտահայ և արևելահայ գրականությունը տարբեր լեզուներով թարգմանելու և որպես հայ գրականություն աշխարհին ներկայացնելու, գրողին հայ լինելու հպարտություն և իր թիկունքում պետություն ունենալու գիտակցում ներշնչելու, սփյուռքահայ գրականության համար արմատներ ձգելու համար ազգային հող ստեղծելու հրամայականը. սա է օտարագրության կանխման, արևմտահայերենով ստեղծվող գրավոր մշակույթի շարունակականության ապահովման գրավականը: Բաներ, որոնք իրականացնելու համար առաջին հերթին անհրաժեշտ է ուսումնասիրել ու գնահատել, արժևորել ու վերարժևորել այդ գրականությունը:

Սփյուռքահայ գրականության ուսումնասիրությունը, արժևո-

րումն ու վերարժևորումն արդի հայ գրականագիտության այն խնդիրներից է, որի կարևորությունն ըստ ամենայնի դեռ չի գիտակցվում, և որի իրագործման հրամայականը պետք է բխի հրատապության գիտակցումից: Սփյուռքահայ գրականության ուսումնասիրությունը խնդիրների մի ամբողջ հանգույցի բաղկացուցիչ է: Բազմաթիվ դժվարություններ ու կնճռոտ հարցեր են առաջանում սփյուռքահայ գրականության պատմաբանի և ուսումնասիրողի առջև. այդ դժվարությունների մի մասն էլ նյութական բնույթի է: Արևմտահայ և նրան շարունակող սփյուռքահայ գրականության մի ստվար մասը մամուլի էջերում է, բայց չկա գրապահոց, ուր պահվեր սփյուռքահայ մամուլի ամբողջական հավաքածուն. չկա սփյուռքահայ մամուլի մատենագիտություն. չկա սփյուռքահայ մամուլի ամբողջական պատմություն, չկան բավարար թվով գիտակներ: Նյութական մյուս դժվարությունն այն է, որ սփյուռքահայ գրականության հրատարակությունը համակարգված չէ. սփյուռքահայ գրողների գործերը տպագրվում են արտերկրում, մեծ մասը նվիրատվություններով և հիմնականում չեն հասնում հայաստանյան ընթերցողին: Չկա սփյուռքահայ գրականության գիտական պատմություն, մենագրություններ դեռ քիչ են, չկան խոշոր կամ ներկայանալի գրողների ակադեմիական. լիակատար հրատարակություններ, որոշ գրողների լավագույն գործեր դեռ Հայաստանում չեն հրատարակվել: Զավեշտալի է, բայց Հակոբ Օշականի նման անընդգրկելի մեծության վիթխարի ժառանգությունից քիչ բան է հրատարակվել Հայաստանում, Օշականը մեր գրականագիտության կողմից մնում է տակավին չհաղթահարված, գրեթե չուսումնասիրված գրող, իսկ նրա գրակա-

նագիտական մտածողության, ոճի, հարցերի շրջանակների, գեղագիտական հայացքների յուրացումը շահեկան կարող էր լինել արևելահայ գրականագիտության համար. այնպես որ՝ օշականագիտությունը սփյուռքահայ գրականության ուսումնասիրման ամենամեծ բացերից է: Օշականի կողքին կա նաև խոշոր ու ներկայանալի գրողների մի ամբողջ փաղանգ, որոնց բնագրերն անհրաժեշտ է նախ գիտական հրատարակության պատրաստել, ապա ուսումնասիրել, իսկ հրատարակությունը ենթադրում է արժևորում՝ ովքե՞ր են այն գրողները, որոնց գիտական հրատարակության պատրաստումն առաջնահերթություն է և կա՞ արդյոք այն գիտական խումբը, որ կարող է հրատարակության պատրաստել դրանք: Առաջին խնդիրն արժևորումն է, քանի որ սփյուռքահայ գրականությունը խորհրդային տարիներին մշակել է արժևորման այնպիսի համակարգ, որից ներկայիս գրականագիտությունն էլ կարծես դժվար է ազատվում:

Սփյուռքահայ գրականությունը խորհրդային գրականագիտության կողմից գնահատվում էր բացառապես բովանդակային արծարծումներով և այսօր էլ արժեքայնության չափանիշները հստակեցված ու որոշարկված չեն. խորհրդային իներցիայով սփյուռքահայ գրողի ստեղծագործությունը հաճախ այսօր էլ շարունակում են գնահատել, արժևորել ըստ հայրենասիրական բովանդակության: Գրիգոր Հակոբյանն իր «Դարձ» հոդվածում գրում է. «Գաղտնիք չէ, որ խորհրդային շրջանում Սփյուռքի գրականության հրատարակության չափանիշը միշտ չէ, որ արվեստի հրամայականն էր, բազմաթիվ հեղինակներ ու գրքեր էին տպագրվում արտագեղարվեստական պատճառներով և դեռ փորձում էին հրամցնել իբրև ներկայանալի

գրականություն, արտերկրի մշակույթի այցեքարտ: Սիտալները տարբեր դահլիճներում փառաբանվում էին, իսկ Հակոբ Օշականն ու Նիկողոս Սարաֆյանը, Շավարշ Նարդունին ու Կոստան Զարյանը, Արամ Հայկազն ու Էդուարդ Պոյաճյանը, Նշան Պեշիկթաշլյանը, Ղևոնդ Սելոյանը, Կարապետ Փոլատյանը, Ահարոն Տատուրյանը և շատ շատերը արգելված էին, մոռացված և որ ամենաահավորն ու նողկալին է, ընթերցողի փոխարեն որոշել էին, որ կարդալու, հրատարակելու չեն»[1]: Գրիգոր Հակոբյանի այս դիտարկումից տարիներ անց պատկերը գրեթե չի փոխվել, համենայն դեպս՝ տեղաշարժն աննկատ է, այսօր էլ հայաստանյան գրական մամուլում տպագրվում և գրական շրջանակներում ճանաչում են ձեռք բերում հիմնականում գրամոլները և անտեսումի ստվերում են մնում Զավեն Պիպեռյանի, Իշխան Ճինպաշյանի, Վահե Պերպերյանի, Վահե Օշականի, Գրիգոր Պըլտյանի և Մարկ Նշանյանի նման տաղանդավոր հեղինակները: Այնպես որ՝ իսկապես հանգրվանային արժեքների որոշման անհրաժեշտությունը մեր գրականագիտության հրատապ խնդիրներից է, և հայ գրականագիտությունը սփյուռքահայ, մասնավորապես՝ արդի գրականությունն արժևորելիս պետք է ազատվի նաև բովանդակային գնահատման նախկին կաղապարումների կիրառման փորձից, այդ թվում՝ «կարոտի գրականություն» և «նահանջի գրականություն» բանաձևումների գայթակղությունից. «ժանրի խիստ կայուն կառուցվածքներ ու ձևեր, բառապատկերային համակարգի կայուն գործառնություններ»[4] պայմանավորող այս կաղապարները, որոնցից սփյուռքահայ գրականությունը հասկանալի պատճառներով խուսափել չէր կարող, վտանգ կա, թե արդեն կարող

են վերածվել գրականագիտական սխեմաների, նեղացնելով գրողի ներառած խնդիրների շրջանակը, ինչպես Գեղամ Սևանի «Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր» երկհատորում:

Սփյուռքահայ ժամանակակից գրականությունը նախկին սխեմաների մեջ քննվել այլևս չի կարող, որովհետև կա այդ կաղապարները հաղթահարած գրողների սերունդը, «կարոտի գրականությունն» սփյուռքահայ գրականության անցյալի իրողություն է այլևս, կաղապարներն սպառել են իրենց, «կարոտի գրականությունը» վերածվել է Հայաստանը պատկերային նույն միջոցներով գովերգողվիառաբանող գրականության, իսկ նահանջի գրականությունն այլևս օտարագրությունն է. արևմտահայ գրականության այսպիսի զարգացման արդյունքում է նաև, որ սփյուռքահայ գրողը թեքվում է դեպի օտարագրություն, որտեղ հնարավորություն է ստանում բացվել ոչ միայն ավելի մեծ լսարանի, այլև լայն խնդիրների առջև, որովհետև օտար լեզուն այդպիսի խնդիրներ արծարծելու հնարավորություն է ընձեռում, իսկ արևմտահայերենը որպես գրականության լեզու նրա համար նույնացվել է որոշակի թեմաների, կաղապարների մեջ ամփոփված, որոշակի գործառույթ կատարող լեզվի հետ, դրա համար էլ կա այդ գրականության վրայից հայապահպանության գործառույթը վերցնելու և այդ լեզուն իսկական գրականությանը վերադարձնելու անհրաժեշտությունը, ինչն էլ անում են այսօրվա Սփյուռքի լավագույն գրողները, ինչպես՝ Գրիգոր Պըլտյանը:

Սփյուռքահայ գրականության արժեքայնության իսկական չափանիշը մեզ համար պետք է լինի ազգային խնդիրների ձգողությունը հաղթահարած ու համաշխարհային խնդիրների առջև իր դարպաս-

ները բացած, համաշխարհային գրականության լավագույն ավանդույթներին իր նորարարությունը հավելող և արևմտահայ գրականության հույսերն արդարացնող Սփյուռքի նորագույն գրականությունը: Ահա այդ գրողների ընկալման համակարգում լեզուն արդեն իսկ ընկալվում է որպես հայրենիք, և այս գրողները հարկ չունեն իրենց ստեղծագործություններում հայրենիք երգելու. «Ամենեն գեղեցիկ երկիրը հիմնյալ երկն է քեզ կրող»,- գրում է Գրիգոր Պըլտյանը[5]:

Սփյուռքահայ գրականության ուսումնասիրությունը ենթադրում է նաև արևմտաեվրոպական գրականության իմացաբանական հենք, որովհետև Հակոբ Օշականը, Շահան Շահնուրը, Կոստան Զարյանը, Վազգեն Շուշանյանը, Շավարշ Նարդունին, Զարեհ Որբունին չեն կարող քննվել արևելահայ գրականության մեկնաբանական չափանիշներով, հայ գրականության իմացության սահմաններում, իսկ ներփակ, համեմատական գրականագիտությունից խուսափող ուսումնասիրություններով սպառել այդ գրողների քննությունը, հնարավոր չէ: Եթե մեր գրականության երկու թևերի համեմատական քննության խնդիրների որոշարկման հարցում հայ գրականագիտության մեջ որոշակի տեղաշարժ է նկատվում, ապա արևմտաեվրոպական գրականության և սփյուռքահայ գրականության համեմատական քննությունը տակավին լուրջ բաց է: Եթե արևելահայ գրականության մեջ առավել գերակա էին ռուսական գրականության ավանդույթները, ապա արևմտահայ գրականության առջև եվրոպական և մասնավորապես՝ ֆրանսիական գրականության հարուստ ավանդույթն էր, ազդեցությունների այս անջրպետը շարունակվեց նաև խորհրդային տարիներին:

Արդի հայ գրականագիտության կողմից ափյուռքահայ գրականության ուսումնասիրության բացերից մեկը գրական օտար ազդեցությունների քննությունն է: Այս իրողությունը նկատում է նաև Սուրեն Դանիելյանը, որ մասնավորապես գրում է. «Սփիւռքահայ եւ օտարագիր գրական ընթացքները 20-րդ դարում լաւ հնարաւորութիւն ընձեռեցին հայ գրականութեան ընկերային մտածողութիւնը շրջել նոր հուն, ճանաչողութեան նոր ոլորտներ, որոնց մէջ ամէնից կենսականը հայ ընդհանուր գրականութեան հիմնահարցերի փորձաքնութիւնն է համաշխարհային գրական համապատկերում: Նման տեսանկիւնով աշխատանքներ մեզանում այնքան էլ մշակուած չեն կարծես, եւ գրական հայեացքի գլխաւոր ուղղութիւնը մնացել է ներհայական պատուհանը»[6]: Այնպես որ՝ սփյուռքահայ գրականության ուսումնասիրման ճանապարհին համեմատական գրականագիտության անելիքները շատ են: Շատ են նաև ընդհանուր տեսական խնդիրների ուղղությամբ անելիքները: Այսպես կարող ենք առանձնացնել Հակոբ Օշականի և «գիտակցության հոսքի», Շահան Շահնուրի և գերիրապաշտության, Զարեհ Որբունու և ֆրանսիական գոյապաշտության առնչությունները և այլն, խնդիրներ, որոնք կարող են դառնալ առանձին ուսումնասիրությունների նյութ: Խորհրդային գրականագիտությունն այդօրինակ համեմատական քննություն, հասկանալի է, որ չէր կարող իրականացնել, քանզի, գաղափարական պարտադրանքից բացի, կարմիր պատով անջրպետված էր արևմտաեվրոպական գրականության իսկական արժեքներից:

Սփյուռքահայ գրականության այսօրվա պատմաբանն ու քննադատն, ահա, պետք է հաշվի առնեն արևմտահայ գրականու-

թյան և եվրոպական գրականության աղերսների անշրջանցելի այս իրողությունը: Բայց տարընթաց զարգացում ունեցավ նաև սփյուռքահայ գրականագիտական դպրոցը: Խորհրդահայ գրականագիտությունը, ընդհանուր առմամբ, նկարագրական բնույթ ուներ և քչերին էր հատուկ իսկական ակադեմիզմը, բայց, այսպես կոչված, ակադեմիական գրականագիտությունն էլ չզբաղվեց սփյուռքահայ գրականության լուրջ ուսումնասիրմամբ, և ահա սփյուռքահայ գրականության տեսական, գիտական խնդիրների ուսումնասիրման հարցում արևելահայ գրականագիտության անելիքները նույնպես շատ են: Սփյուռքահայ գրականագիտությունը (Հակոբ Օշական, Գրիգոր Շահինյան, Գրիգոր Պըլտյան, Մարկ Նշանյան) զարգանում է արևմտյան տպավորապաշտական գրականագիտության ուղիով, յուրաքանչյուր գրականություն, կարծես, գրականագիտական իր համակարգն էր մշակել և այդ համակարգերից մեկը մեր գրականության մյուս թևի հանդեպ անկիրառելի էր. դրանով է նաև բացատրելի Օշական-գրականագետի արևելահայ գրականության հերքումները, հաճախ էլ ծայրահեղության հասցված մոտեցումները: Ահա թե ինչու խորհրդային գրականագիտությունն էլ իր մշակած համակարգով անզոր էր Սփյուռքի գրականության ճանաչողության հարցում և այն, ինչ կարող էր անել, դիպաշարային վերապատմումների մակերեսայնությամբ սահմանափակվելն էր, և միայն հետանկախության շրջանում կայացավ գրականագիտական այս երկու տարբեր՝ արևմտյան գրականագիտական դպրոցներից ածանցվող սփյուռքահայ գրականագիտության և ակադեմիական ոճերի համադրումը, որ մասնավորապես հատուկ է գրականագետ Գրիգոր

Հակոբյանին՝ դեպի գիտականությունը հակման գերակշռությամբ, իհարկե, և ինչ-ինչ չափով Սուրեն Դանիելյանին՝ գուցե հակառակ բևեռի որոշակի հակումով: Նրանց համադրական ոճը մեզ առավել արդյունավետ և հեռանկարային է ներկայանում սփյուռքահայ գրականության ուսումնասիրման գործում: Եվ ուրախալի է, որ այս ոճով է շարադրվում սփյուռքահայ գրականության ամբողջական, լիարժեք, գիտական պատմություն ստեղծելու առաջին լրջագույն փորձը, որ ներառում է արևմտահայ գրականության դեգերումների շրջանը: Անշուշտ, սփյուռքահայ գրականության ամբողջական պատմության ստեղծումը բավական բարդ աշխատանք է, որ ենթադրում է սփյուռքահայ գրականության պատմաբանի առջև կանգնած և մեր գրականագիտության կողմից տակավին լուծում չստացած այնպիսի խնդիրներ, որոնց լուծումները հաճախ տանում են իրարամերժության և անլուծելի թվացող հակասությունների: Այսպես, Սուրեն Դանիելյանը սփյուռքահայ գրականության պատմության ներածության մեջ նկատում է, որ սփյուռքահայ գրականության պատմության շարադրումը «պահանջում է, նախ պարբերացման հետ կապված հնարաւոր վերարժեւորումներ՝ տեսաբանական քննութեան նոր, արդիւնաւոր որոնումներ՝ ձերբազատ խորհրդային կամ ազգայնական կարծրատիպերի յաճախանքից, բովանդակային անհրաժեշտ ուրուագծեր եւ շարժման հետ կապուած ընդհանրական դիտարկումներ, բնագրերի ճանաչողութեան նոր հայեացք: Սփիւռքի ազգային-քաղաքական եւ մշակութային ընդհանրական միջավայրի ձեւաւորման, զարգացման, գրականութեան միասնութեան եւ տարանջատման հանգոյցներին առնչուող օրինաչափութիւնները անհրաժեշտ է քննել

Սփիւռքի ազգային-քաղաքական եւ մշակութային հայրենիքի, Սփիւռքի եւ իրական Հայաստանի, արեւմտահայ եւ արեւելահայ, Սփիւռքի եւ համաշխարհային գրական զարգացումների փոխներթափանցումների լոյսի ներքո»[7]:

Առաջին հերթին առաջ է գալիս սփյուռքահայ գրականության նոր եզրի անհրաժեշտության խնդիրը: Դանիելյանն առաջ է քաշում «արևմտահայ նորագույն գրականություն» հասկացությունը՝ սփյուռքահայ գրականության պատմությունն սկսելով արևմտահայ գրական ղեգերումներից և առանձին ենթագլուխներով անդրադառնալով օտարագիրներին. «Մեզ հիացնում է արեւմտահայ գրականութեան զարգացման գծին հաւատարմութիւնը՝ ժանրերի, գեղարուեստական մտածողութեան եւ գրական գաղափարների յաջորդականութեան սկզբունքների ընկալչութեամբ: Դուրս շպրտուելով աւանդական միջավայրի ենթահողից, սփռուելով աշխարհով մէկ՝ բառիս տարածական առումներով, սփիւռքահայ գրականութիւնը հնչում է իբրեւ ահազանգ ազգային միասնական կեանքի եւ մշակութային համապատկերի աւերման»[8]:

Սփյուռքահայ գրականություն հասկացության և դրա բովանդակային սահմանների որոշարկման խնդրի այսպիսի ձևակերպումը հակասությունների առաջ է կանգնեցնում. այդ պատմության մեջ կարո՞ղ ենք, արդյոք, ներգրավել արևելահայերենով ստեղծագործող հեղինակներին, եթե այո, ապա պարսկահայ գրողը ևս սփյուռքահայ գրող է, եթե ներառում ենք արևելահայ գրողին, ապա ինչպե՞ս վարվել Հայաստանից հեռացած և Սփյուռքում հաստատված հեղինակների հետ, կամ այսպես կոչված՝ օտարագիր գրականությունը դի-

տարկելի՞ է, արդյոք, սփյուռքահայ գրականության համապատկերում, եթե գրականության պատկանելության ընդունված չափորոշիչը լեզուն է. եթե բացառություն ենք անում, ապա ինչո՞վ է հիմնավորելի բացառությունը, եթե մեկ լեզվի տարբեր գրական մակարդակներով ստեղծված գրականությունը չենք դարձնում միասնական գրականության պատմության նյութ, ուրեմն ինչպե՞ս ենք օտար լեզվով և ծագումով հայ գրողին քննում արևմտահայ նորագույն գրականության համապատկերում, ինչպես վարվել է գիտնականն իր իսկապես արժեքավոր աշխատության մեջ, որքան էլ միջավայրը, արծարծված խնդիրների ազգային բնույթն ընձեռի այդ գայթակղիչ հնարավորությունը:

Կա նաև այլ ընդհանրական խնդիր, հայ և սփյուռքահայ գրականության միասնական պատմություն ստեղծելու խնդիրը: «Հայ նորագույն գրականության պատմության ստեղծման-համակարգման բարդություններից մեկը կապված է հայաստանյան և Սփյուռքի գրականությունները միասնության մեջ դիտարկելու հետ, մի խնդիր, որն անշուշտ դեռ երկար քննարկումների առարկա է լինելու, և, ըստ էության, որքան տևեն այդ քննարկումները, այնքան կհետաձգվի գերխնդրի իրագործումը»[9],- գրում է Արքմենիկ Նիկողոսյանը: Խնդիրն այն է, որ գրականության պատմության ստեղծման ձևաչափը ևս դեռ խորհրդային գրականագիտությունից է գալիս և իբրև մեկ միասնական գրականության պատմության ստեղծման մեկնակետեր մենք ընդունում ենք միասնական պատմական միջավայրը, նույն ազգի երկու հատվածների ճակատագրերի հնարավոր զուգահեռները, իսկ գրականության պարագային՝ երկու գրականությունների բո-

վանդակային ընդհանրությունները կամ պարբերացման ընդհանուր օրինաչափությունները, ինչից էլ իհարկե բխում է զուգահեռների անհրաժեշտությունը, որին դիմում է Ազատ Եղիազարյանը «Հայոց նորագույն գրականություն. պատմության ուրվագիծ» ուսումնասիրության մեջ, որտեղ գրականագետը փորձում է գտնել միասնական պատմության ստեղծման մեկնակետերը: Սա նշանակում է, որ հայ նորագույն գրականության միասնական պատմության ստեղծման նոր մեկնակետեր, ըստ էության, դեռ չեն մշակվել և խնդրին դարձյալ խորհրդային իներցիայով մենք մոտենում ենք գրականության պատմության ստեղծման այնպիսի մտայնությամբ, որը չափազանց մեծ տեղ է հատկացնում պատմականությանը, մինչդեռ այս երկու գրականությունների միասնական պատմության ստեղծման հարցում պատմականությունն առաջին խոչընդոտն է, քանի որ պատմական տարբեր զարգացումներն են հենց հայության երկու հատվածներն օտարել իրարից. դարձել նրանց ճակատագրերի, հետևաբար՝ նաև գրականության խնդիրների բաժանարար: Սա պետք է հաշվի առնել, ուստի հայ նորագույն գրականության միասնական պատմության ստեղծումը կամ պետք է ընթանա առանձին պատմությունների ստեղծման ուղիով, կամ պետք է մշակվեն այլ մեկնակետեր: Այս պարագային հայ նորագույն գրականության միասնական պատմության ստեղծման համար լիարժեք կերպով չի արդարացնելու իրեն նաև պատմական ակնարկի և առանձին դիմանկարների համադրման մեթոդը, որ առայժմ վտանգավոր է թեկուզ այն բանի համար, որ գրականության պատմության տեսանկյունից երկրորդական մի գրող կարող է իրոք նշանակություն ստանալ, քանի որ պատմական ակ-

նարկի մեջ կարող են և պետք է հիշատակվեն երկրորդական հեղինակների անուններ, մինչդեռ չափորոշիչների տարտղնվածության պատճառով դիմանկարի կարող են չարժանանալ գուցեև ընդհանուր առմամբ պատմական կոնտեքստից դուրս, բայց գեղարվեստական մեծարժեք գործեր ստեղծած սփյուռքահայ գրողներ, քանզի սփյուռքահայ գրականության գնահատման և արժեքայնության չափանիշները դեռ հստակեցման կարոտ են. դրանց հստակեցման համար ժամանակ է հարկավոր, իսկ երբ չկան այդ ժամանակի փոխարեն չափանիշներ կայացնողները, ժամանակը դարձյալ գործում է ի վնաս մեզ:

---

1 Վահան Թէքէեան, Հայերգութիւն. Գահիրէ, 1943. էջ 148:

2 Սուրէն Դանիէլեան, Միջուկի տրոհումը. սփիւռքահայ գրականութեան պատմութիւն, հ., Ա. Եր., 2011. էջ 27-29:

3 Գրիգոր Հակոբյան. Հոդվածներ և ուսումնասիրություններ. Ս. Էջմիածին. 2007, էջ 492:

4 Նույն տեղում, էջ 524:

5 Գրիգոր Պըլտյան, Մանտրաներ. Փարիզ. 1980, էջ 25:

6 Սուրէն Դանիէլեան, Միջուկի տրոհումը. սփիւռքահայ գրականութեան պատմութիւն, հ., Ա. Եր., 2011. էջ 18:

7 Նույն տեղում. էջ 7:

8 Նույն տեղում, էջ 9:

9 Արքմենիկ Նիկողոսյան. Կարդալով իբրև ուրվագիծ…, «Գարուն». 2005. թիվ 5, էջ 88:

## ԵՐԿՈՒ ՎԵՊ, ԵՐԿՈՒ ՀԱՅԱՑՔ. ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ ԵՎ ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ

Շահան Շահնուրի վաստակի ծանրակշիռ մասը՝ «Նահանջը առանց երգի» վեպը և «Հարալեզներուն դավաճանությունը» պատմվածքների ժողովածուն (1933 թ.) ներկայացված է ընդհանուր խորագրով՝ «Պատկերազարդ պատմություն հայոց»: Անհանգիստ, կրքոտ ու բռնկուն է նրա գրիչը, ինչպես նույն ժամանակաշրջանում ստեղծագործող գրչակից եղբայր Եղիշե Չարենցինը: Լավագույն կյանքի և լուսավոր ապագայի համար մղվող պայքար էր նրանց գրականությունը, իսկ իրենք՝ հեղինակները, այդ պայքարի ամենաթեժ կետերում էին: Շ. Շահնուրի վեպի հիմնական գաղափարը հայապահպանման և ազգային ինքնապաշտպանության անհրաժեշտությունից ծնված գաղափարախոսությունն է: «Նահանջ»—ը «իր սերունդին անդրանիկ կատարյալ վեպը» (Հ. Օշական) հետագայում

ստացավ «Սփյուռքի վեպը» պատվանունը, իսկ Չարենցն այդ նույն երկին տվեց «ամեհի գիրք» պատվանունը: Սփյուռքահայ գրողի վեպը, ըստ էության, հայ գրականության հետագա զարգացման հիմնարար ծրագիր էր առաջադրում՝ ամբողջ ուժով ծառանալով կարոտի գրական շարժման ուղղության դեմ: Այն խիստ հակասական ընդունելության է արժանացել հայրենիքում, սակայն Սփյուռքում տպագրությունից հետո (1929 թ., Փարիզ, «Հառաջ») հիացական տպավորություն հարուցեց: Հայրենիքում ստեղծագործության արձագանքները, կարող ենք ասել, թշնամական էին, վեպն անխնա քարկոծման էին ենթարկում, խարազանվում էին նրա «ազգային» հերոսները: Բավական ժամանակ այն խոսակցության առարկա էր գրական միջավայրում և նման ուշադրություն մեծապես ներշնչում էր Ե. Չարենցը: Հենց Ե. Չարենցն է մեղադրել վեպը քարկոծողներից մեկին՝ Վ. Նորենցին, խորհուրդ տվել վերջինիս նորից կարդալ «Նահանջն» ու լավ մտածել, թե որն է գրքի էությունը և մանավանդ ինչպես է այն գրված: Երբ 1962 թ. վեպը հայտնվեց հայրենիքում, նրանից կրճատվեցին որոշ հատվածներ, սակայն ազգային-հայրենական հին ու նոր բազմաթիվ արժեքների կողքին հետագայում վերագնահատվում է նաև Շ. Շահնուրի այս ստեղծագործությունը: Նշենք, որ վեպից հանվել էր «Պատկերազարդ պատմություն հայոց» խիստ ազգային խորագիրը, նաև բուն պատմական իմաստով ամենավտանգավոր այն նախադասությունը, որի մեջ ակնարկվում է Կարսի անկման ողբերգական հետևանքները՝ «Անկախության մը հույսը հալեցավ, կորսվեցավ հանձնված բերդաքաղաքին հետ»: Ե. Չարենցի «Պատմության քառուղիներով» պոեմի գնահատողներից ոմանք

հակված են հայոց պատմության չարենցյան գնահատականները ուղղակիորեն կապելու այն հոգեբանության հետ, որի արտահայտությունն էր արձակագրի վեպը՝ ազգային նահանջի տագնապալից ահազանգով: Նրանք ապացուցում են, թե Ե. Չարենցը Ծ. Շահնուրի, ինչպես նաև Կ. Զարյանի ոգով ազատագրության հայկական միֆերի կործանումից հետո դավանում է «անպտուղ, ամուլ», անհեռանկար հայկականության տեսությանը: Ազգային ճակատագրի նկատմամբ մտահոգությունների, նահանջի տրամադրություն ենք տեսնում բանաստեղծի «Գիրք ճանապարհի»-ի մեջ. Չարենցը համառորեն բողոքում էր հայի պատմական հիշողությունը խլացնելու դեմ և ապավինելով հարազատ ժողովրդի ոգու կորովին ու վաստակներին՝ կերտում նրա անցնելիք ճանապարհի գիրքը:

Շահնուրի հերոսներից Սուրենը հայ երիտասարդների մեջ առանձնանում է մտավորականի իր նկարագրով և իմացական տարերքով, ինքնատիպ դատողություններով, սուր մտքերով ու անակնկալ վերլուծումներով, նա մի տեսակ իմաստավորում է գլխավոր հերոսի ապրումը: Ազգային հոգեկերտվածքի գլխավոր գիծը գրողը համարում է անհատապաշտությունը: Ես-ի եզակի որակների բացարձակացումը, ըստ նրա, հայությունից խլել է «էականի, բարձրագույնի, գեղեցիկի» գլխավոր չափանիշը՝ միասնականությունը: Հիշենք Սուրենի նշանավոր ասույթը. «Հայը ունի լավ նկարիչներ, բայց ոչ նկարչություն, Հայը ունի լավ դերասաններ, բայց ոչ թատերգություն. Հոգնիլ չգիտցող ճամփորդներ՝ բնավ նավապետ. Հայը ունի զմայլելի բանաստեղծներ, բայց ոչ գրականություն, Աստվածներ, բայց ոչ հեղափոխություն. Հայը ունեցած է ազատություններ, երբեք՝ անկա-

խություն»[1]: «Խորամանկ, հանճարեղ են եղել նրանք (նահիրցիները - Ա. Ա.), բայց, դժբախտաբար, եսական ու անմիաբան, և այդ էր, որ կործանեց երկիրը հնամյա-հազարամյա Նահիրին»,- գրում է Չարենցը[2]: Շահնուրի ըմբոստությունն անհամեմատելի է իր թափով և ծայրահեղությամբ, սակայն նա երբեք չի կորցնում դատումի վերլուծական հիմքը: Վեպում գլխավոր թիրախ է Նարեկացին, որը մարմնավորում է հոգու և մարմնի թյուր հակադրությունը, ինչն իր ծայրահեղ բնույթով ջլատել է ազգը, թուլացրել նրա ոգին, և Շահնուրն ամբողջ հայությանը «Նարեկով թունավորվածներ» համարելու հակում ունի: Զուգահեռը կտեսնենք նաև Ե. Չարենցի հայեցողության մեջ, որ «մռայլախոս դպիրներ» է անվանում Նարեկացուն ու Շնորհալուն:

Սփյուռքահայ արձակագրի վեպը հայրենի ընթերցողին մղում է ինքնաճանաչման: Ներքին ձայնակցումի լավագույն վկայությունը ստեղծագործական այն խոր կապերն են, որ ցուցաբերում է Շահնուրի գրականությունը հատկապես Ե. Չարենցի ստեղծագործության հետ: Տիպաբանական աղերսներով ձևավորվում է մի ընդհանուր գրական միտում, որը պայմանականորեն կարելի է բնորոշել իբրև ազգային ինքնավերլուծություն: Երկուսն էլ իրենց վեպերը գրել են այն ժամանակ, երբ գալիքի խնդիրը հրատապ էր դարձել ազգի համար: Չարենցն անվերջ մտածում էր Հայաստանի մասին, Շահնուրին հետաքրքրում էր սփյուռքացած հայության գալիքը՝ կմնա՞ նա հայ, թե՞ սերունդներ հետո նույնիսկ կմոռանա իր արմատները: Չարենցին հուզում էր Երկիր Նահրիի ծագման, ճանապարհի և գոյության առեղծվածը. ո՞վ ենք մենք՝ նահրցիներս, ու՞ր ենք գնում, ո՞վ ենք եղել երեկ և ո՞վ ենք լինելու վաղը, գուցե թե սու՞տ է Նահրին: Վե-

պի առաջաբանում Չարենցը գրում է. «Վաղուց, վաղուց մտորում է իմ մեջ մի անհուն ցանկություն: Վաղուց ելք է փնտրում կուտակված մի կարոտ: Մթի մեջ, գիշերի կեսին, կամ ցերեկը, երբ ես զբաղված եմ լինում առօրյա հոգսերով, կամ անգամ, երբ ես տարված եմ լինում գինով կամ կնոջ հմայիչ հաճույքով,- ներսը, սրտիս խորքում, գողի պես զգույշ, կամացուկ շարժվում է նա»[3]: Իսկ ահա Շահնուրը Սուրենի բերանով ասում է, թե հայրենիքի գաղափարը մեզ համար շատ անգամ «ավանդավեպ մըն է»:

Չարենցի վեպի ամենամեծ արժանիքներից մեկը գրականագետ Հրանտ Թամրազյանը համարում է այն, որ հեղինակը, որպես տարեգիր, որպես մտածող, որպես կյանքը դիտող գրող արտացոլել է հայկական իրականության, քաղաքական դրամայի իրական ընթացքը, մեծ տաղանդով կազմակերպել նյութը, հերոսների վարքի ու գործի պատմությունը: Իսկ գրականագետ Գրիգոր Շահինյանը «Աքսոր և արվեստ» գրքում նույն մեկնակետով է ներկայացնում Շ. Շահնուրի գրականությունը. «Շահնուրը իր նկարագրած կյանքի հերոսը չէ, բայց նրա վկան է, խոսում է այն բանի մասին, ինչը որ ճանաչում է: Նա նույնանում է իր հերոսներից ոմանց հետ, կամ մանրախույզ լրագրողի պես ներկայացնում է ճակատագրի իր ընկերների կյանքն ու մահը: Ինքը ներկա է պատմված յուրաքանչյուր դեպքի հետ: Նա վկայում է այդ ամենը, դրանով հանդերձ՝ ապրեցնում, ներկա դարձնում անցյալի դեպքերը, վավերականության կնիքը դնում իրականության վրա: Շահնուրի գրականությունը մի տեսակ օրագրություն է»[4]:

Չարենցի հերոսներից ոչ մեկը չի դառնում վիպական լարումների կենտրոն, հերոսները մի տեսակ հարադրվագային են և որոշակի

դեր են կատարում ընդհանուր մտահղացման մարմնավորման ճանապարհին, Չարենցն իր գաղափարները տարածում է բազմաթիվ հերոսների միջև: «Իմ այս վեպում չկա և չի լինելու երևի և ոչ մի «հերոս» և այս տխուր հանգամանքում կարծում եմ, ոչ թե ես եմ մեղավոր, այլ նաիրյան այս քաղաքը...»[5]: Շահնուրը դեմ է «մեկ հերոսի վրա ազգային ծանր բեռը կենտրոնացնելու» ավանդույթին, ուստի ստեղծում է Սուրենի կերպարը՝ իր գաղափարակրին, և իրեն տրոհում է երկու հերոսների՝ Պետրոսի ու Սուրենի միջև: Շահնուրի հերոսների անունները՝ Խնդամյան, Լոխում, թվում է երգիծական են: Իսկ Չարենցն իր հերոսների անվանն ավելացնում է գոյական որոշիչներ, որոնք նույնպես երգիծական են՝ Մազութի Համո, Տելեֆոն Սեթո, Մեռելի Ենոք, Բոչկա Նիկոլայ, Դոխտուր Արշակ և ուրիշներ: Սակայն նշենք, որ Չարենցի երգիծանքը խիստ կտրուկ էր ու չարնաև ցավոտ:

Այնպես, ինչպես Չարենցի հերոս Մեռելի Ենոքն է փնտրում իր ընկերոջը՝ Քոռ Արութին, գնում կայարան, միանում նրան, նրա ետևից ընկնում գնացքից, և նրանց ճակատագրերը միանում են մեռնող քաղաքի ճակատագրին, այդպես էլ Սուրենն է միանում իր ընկերներին՝ Պետրոսին, Հրաչին և այլոց, ու գնում դեպի ուծացում, որի վկայությունը նրա՝ ֆրանսերենով գրած գիրքն է: Ազգային բոլոր տագնապները, անհանգստությունները, ցավերը Շահնուրը վստահում է Սուրենին: Հիշենք Չարենցի հերոս Մազութի Համոյին՝ «կենտրոնաուղեղասարդին», որն իր ուղեղի մեջ էր տեղավորում Երկիր Նաիրիի գաղափարը: Սակայն ազգապահպանությամբ զբաղվող Սուրենը ևս մյուսների նման գնում է դեպի օտարացում, նա նահան-

ջում է ոչ միայն լեզվով, այլև գաղափարով, էությամբ: Իսկ ահա Չարենցն այսպես է արձագանքում. «Հայրենիքը տվյալ ազգության մարմինն է, իսկ «Լեզուն»- հոգին: Վաղուց, վաղուց է արդեն, որ բաժանված է մեր հոգին- կենդանի է միայն մարմինը»[6]:

Շահնուրի հերոսներից միայն Լոխումն է, որ հոգով չի նահանջում: Սուրենի խոսքը երբեք չվերածվեց գործի և, ինչպես Միսակն է ասում, «անծին ու անպտուղ էր», իսկ Մազութի Համոն «անհեթեթ հայրենասիրության» թանձրացումն է: Այս դեպքում պե՞տք էր արդյոք ուժաթափվել, ի՞նչ կարիք կար խոսել այնպիսի բաների մասին, որոնք չափվում են միայն բառերի ուժով:

Մազութի Համոն, թեև մինչև վերջ մնաց քաղաքում, բայց բոլոր նահրցիների պես գնաց դեպի կործանում: Շահնուրը չէր կարող իր հերոսին՝ Պետրոսին ետ դարձնել դեպի հայկական միջավայր, հերոս, որն արդեն նույնիսկ տերունական աղոթքը՝ «Հայր մերը» չէր կարող մայրենի լեզվով արտասանել: Նա տառապում է իր անհատի ողբերգական ճակատագրով: Չարենցն էլ չէր կարող անխուսափելի կործանումից փրկել իր հերոսներին ու Երկիր Նաիրին, որը նրան նվիրական ու սիրելի մեռել էր պատկերանում, և որին դամբանելու համար նա տանում է խոհերով լի դագաղը: Ինչպես Պետրոսն է թաղում նվիրական ու սիրելի Նենեթին, այնպես էլ Չարենցը՝ իր Նաիրի երկիրը. «Եվ միթե այնտեղ, տքնությանս վերջում, որպես նվիրական, սիրելի մի մեռել- չպիտի պատկերանա ինձ Երկիրը Նաիրի, որին դամբանելու համար տանում եմ ես ահա խոհերիս տողաշար դագաղը- տանում եմ իմ կյանքիս հակառակ, որովհետև, այո, հարկավոր է տանել: Չէ որ, այո, թաղել է հարկավոր բոլոր մեռելներին, որքան էլ

նրանք սիրելի և հարազատ լինեն. թե որ, միևնույն է, հակառակ դեպքում կքայքայվեն նոքա՝ զազրելի և ախտաբույր, այնպես, որ անգամ սիրահարը կզզվի պաշտելի աճյունեն»[7]:

Շահնուրն իր հերոսների հետ է, պատասխանատվության խնդիր ունի նրանց վաղվա օրվա հանդեպ, Լոխումի հետ միասին հայրենիք վերադառնալու ելք է փնտրում, նրա խելագարությունն իր հոգեկանի վրա էլ է ազդում: Արձակագրի ցավը խորն է, քանի որ ինքն էլ մի Պետրոս է և վեպի հենց առաջին իսկ դրվագներից փորձում է փրկել նրան, հեռացնել և՛ Ժաննից, և օտարացումից: Նրա հերոսների համար Պոլիսն այլևս կորսված էր, նրանց և Պոլսի միջև ֆրանսիական դրոշն էր միայն, իսկ Պոլիսը մնաց իր մշուշների մեջ: Մշուշների մեջ կորսվեց նաև Չարենցի Կարս քաղաքը, ասել է, թե՝ Երկիր Նաիրին: Տարբերությունն այն է, որ Չարենցի նաիրցիները կործանվում են նաև ֆիզիկապես, իսկ Շահնուրի հերոսները որպես հայ են կործանվում, թեև շարունակում են իրենց ֆիզիկական գոյությունը, բայց օտար միջավայրը ամբողջովին կլանում է նրանց: Հարց է ծագում. ո՞րն է նախընտրելի հայի համար՝ ուծացու՞մը, թե՞ կործանումը...

Շահնուրը արձանագրում է. «Հոս կյանքը կավարտվի»: Ավարտվում է հերոսների հայեցի կյանքը, կործանվում են մի խումբ նաիրցիներ: Վերջին հավաքույթի ժամանակ Սուրենն իր ճառում ասում է. «Ապրելու իրավունք չունի ան (հայը), քանի որ չէ ծնած»: «Բեռ՛ի, օր մը թերևս ծնի, և մեր հուսացածեն տարբեր գույնով մը. կարմիր, դեղին կամ թե սև: Սակայն մենք՝ հայության այս թևը, դատապարտված ենք կորստյան»[8]:

Մեր պատմության մասին Սուրենը անում է հետևյալ եզրահանգումը. «Ներքինիներն են մեր բոլոր պապերը. Անոնք ոչինչ կրցեր են քանդակել միսին վրա»[9], ասել է, թե՝ իրական, առարկայական և հաստատուն նրանք ոչինչ չեն ստեղծել և փոխանցել մեզ, ամեն ինչ աննյութ, անորոշ է եղել: Սա նույն չարենցյան դատողությունն է մեր անցյալի պատմության, մեր «անղեկ ու անառագաստ» նախնիների մասին, որոնք սերունդներին չեն փոխանցել ամենակարևորը՝ մաքառելու ոգին: Խոսելով Կարսի բերդի մասին, Չարենցը գրում է. «Անառիկ է այդ բերդը-ամենքն այդ գիտեն, և դավաճանությունն է նենգ, ստոր, նաիրյան դավաճանությունն է այդ բերդը հանձնել եկվոր սրիկաներին»[10]:

«Պայքարի տեղ մենք դրեր ենք կռվազանություն- մեր բոլոր կուսակցությունները ապացույց»[11],- ասում է Սուրենը և դրանով իսկ միանում Չարենցի այն գաղափարին, որ նաիրցիները միասնական պայքարի դուրս չեկան, իսկ կուսակցությունները ներսից պառակտեցին երկիրը: Ինչպես Ժաննի հետ մերձեցումը պետք է տրամաբանորեն դյուրացներ Պետրոսի համակերպումը նոր միջավայրին, այնպես էլ կուսակցությունների մուտքը պետք է արագացներ Երկիր Նաիրիի կործանումը: Պետրոսին հաջողվում է համառության շնորհիվ Ժաննի մեջ արթնացնել մարդկայինը, սերը, մենք տեսնում ենք Ժաննի՝ կյանքի հատակն ընկած կնոջ հոգեփոխությունը: Պետրոսը կռիվ էր տալիս «Մայր Հայաստան»-ի համար, բայց այն շատ շուտ փոխարինեց կնոջ մարմնով, «Մայր Հայաստանն» այժմ մի քարե արձան է, իսկ Երկիր Նաիրիից մնացին քարե սյուները, քարե վկաները և մի տախտակ՝ վրան գրված «Մ.Հ.Ա.Ն.»՝ «Մազութի Համո՝ Արքա Նաիրի»: Չկա անգամ Առաքելոց եկեղեցին՝ քարե վկան նվիրական

երկրի, որի մասին Չարենցը գրում է. «Առաքելոց եկեղեցին թռչունի նման է վերից-բերոից նայելիս, բայց դեմից նայելիս նա թողնում է նստած վարդապետի տպավորություն: Քարե ծեր մի վարդապետ կարծես նստել է բլուրի լանջին ու մնացել է նստած- դարեր ու կմնա նստած, քանի դեռ կա աշխարհը և անհուն աշխարհում- Երկիրը Նաիրի»[12]:

Շահնուրին հաջողվում է բարոյափոխել մի կնոջ, իսկ Չարենցին չի հաջողվում կործանումից փրկել նաիրցիներից գոնե մեկին: Մազութի Համոն կախաղան է բարձրացվում հեռագրասյան վրա, պատկեր, որ հիշեցնում է Քրիստոսի խաչելությունը Գողգոթայում, իսկ խաչին փակցված տախտակին գրված էր՝ «Հ.Ն.Ա.Հ.»՝ «Հիսուս Նազովրեցի՝ Արքա Հրեից»: Սա ևս երկու վեպերի մերձեցման կետերից է, քանի որ երկուսն էլ վերջանում են Աստվածաշնչյան խորհրդանշաններով՝ մի հերոսը խաչվում է, մյուսն էլ տերունական աղոթքն է փորձում մայրենի լեզվով արտասանել: Երկու վեպերում էլ հանդիպում ենք բազմաթիվ խորհրդանշանների: Հիշենք այն տեսարանը, երբ Համոյի գլխին, իմանալուց հետո, որ կինը դավաճանում է իրեն, եղջյուրներ են աճում: Սա խորհրդանշում է այն, թե նրանք, ում վրա Համոն և նրա նմանները հույս էին դրել, պղծում են իրենց սրբությունները: Նրա կնոջ՝ Անգինայի պես օտարը գրավում է Կարսը և ամբողջ Արևմտյան Հայաստանը: Համատարած կարոտն ու թախիծը երևում է սովորական փայտ ծխողի աչքերի մշուշում, Աբգար աղայի դեղնափայլ մազերի մեջ: «Նահանջ»-ի ակնառու խորհրդանշաններից է Հրաչի մոր՝ իբրև հարսանեկան նվեր, ուղարկած քիսան, որով նա մաքրում է իր անմեղության վերջին արցունքները:

Փախչում է սարսափահար քաղաքը, ամայանում է ծննդավայ-

ը, կործանվում է Երկիր Նայիրին: Չարենցը դատ է անում իր հերոսների գլխին այն բանի համար, որ նրանք չեն կարողացել կազմակերպել պայքարի ու պաշտպանության գործը: Իսկ Շահնուրի հերոսները, թերևս փորձում են պայքարել օտարացման դեմ, հիշենք թեկուզ Լոխումին, թեև ի վերջո նրանք էլ են հանձնվում ու միանում օտարացածների խմբին: Չարենցը նրբանկատորեն գտնում է իր համար տրամաբանական ամփոփումը. «Պատմությունը հանճարեղ բժիշկ է և նրա փորձերն իզուր չեն անցել», «արյուն, ճիշտ է, շատ է հոսել, սակայն կենդանի մնացածներից շատերն արդեն ազատ են «ուղեղային մորմոքից» և արդեն իրենց երկիրն էին շինում», իսկ այդ երկիրը Խորհրդային Հայաստանն էր, ուր Շահնուրն իր հերոս Լոխումին այդպես էլ չի բերում, որտեղ «ճահիճներ են չորացնում, ջրանցքներ են շինում»:

«Նահանջը առանց երգի» վեպը տագնապի ու սթափեցման ազդանշան էր, «ընբոստության արտահայտություն»՝ հայ մարդուն ինքնաճանաչման, զգաստացման մղելու համար: «Նահանջ»-ը մարտահրավեր էր ընդդարմության դեմ, դառն ճշմարտության ցաստումով»[13],- գրում է գրականագետ Վազգեն Գաբրիելյանը: Իսկ «Երկիր Նայիրի»-ն կարոտի կանչ է ամբողջ հայության համար:

Պոլսից Փարիզ ընկած հայ երիտասարդները նախ նահանջում են ազգային կերպարից, լեզվով, կենցաղով, հոգով ու էությամբ, քայքայվում են նրանց ընկերական կապերը, նրանք վերածվում են անհատների և կամա թե ակամա ընկնում ուծացման հոսանքի մեջ: Սա նահանջ է, որը ջնջում, ձուլում է ամեն ինչ, անհետացնում ամեն բան, և Շահնուրը «մեղա՛» է ասում Արարատին: Մինչդեռ Չարենցն ան-

ձամբ է եղել սփյուռքահայ գաղթօջախներում, տեսել ուծացման այդ ահավոր վտանգը: Տարագիր զանգվածների ճակատագիրը չէր կարող չհուզել մեծ մտածողին և չստիպել ասելու՝ «Ո վ հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»: Իր յոթ բալլադներից երրորդը բանաստեղծն անվանել է «Անկումների սարսափից»: Անկումների և նահանջի սարսափ էր Շահնուրի վեպը, այդ սարսափն էր դրա շարժիչ ուժը: Չարենցի նահանջն ուղեկցվում է երգելու, մաքառելու, մինչև վերջին ճիգը ետ պահելու ձգտումով, իսկ սփյուռքահայ արձակագրի նահանջը՝ ափսոսանքով ու մեղաներով: «Անկախության մը հույսը հալեցավ, կորսվեցավ հանձնված բերդաքաղաքին հետ»,- հայտարարում է գրողը Սուրենի բերանով և, փաստորեն, միանում Չարենցի այն մտքին, որ նահիրցիներն իրենք հանձնեցին բերդաքաղաք Կարսը և ամբողջ Երկիր Նահիրին: Սակայն Չարենցը, բերելով իր «բրոնզե քրոջ»՝ «Մայր Հայաստան»-ի՝ մեռնող, «ուրիշ աշխարհ» հայրենիքի կսկիծը, այրական արժանապատվությամբ «բրոնզե քրոջը» հասցված անարգանքի դիմաց պատրաստ է թշնամուն շառաչուն զենքերով պատասխանել, լցված է հայրենիքի հարության և սիրասուն ժողովրդի ազգային երազներին մարմին տալու վճռականությամբ: «Հէքիաթներով սնանելու ժամանակը այլեւս անցած է, հայրենիքը խաչ-ճակատագիր է, աղօթք, այսինքն՝ սրբութիւն, ուստիւ նրա գովքը պատեհապաշտութիւն պիտի չլինի՝ այլ՝ քայլերգ»[14],- գրում է գրականագետ Սուրեն Դանիելյանն իր «Բանաստեղծութեան ազատագրումը. Չարեի Խրախունի» գրքում: Իսկ Չարենցն իր հերոսներից մեկի շուրթերով ասում է. «...օրը կգա և նորից կելնե, կիառնե մշուշից- նահիրյան ոգին: Հաղթ,

հաստատ կիջնի թշնամու գլխին- երկաթե վրեժ»[15]: «Մոտ է, մոտենում է օրը, երբ ելած մոխրից, դարերի քնից-հառնե պիտի ազատ երկիրը հազարամյա-ազատ Նաիրին»[16]:

---

1 Շահան Շահնուր, Նահանջը առանց երգի, Եր., 1994, էջ 126-127:

2 Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, 4 հատորով, հատոր չորրորդ, Եր., 1987, էջ 119:

3 Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, 4 հատորով, հատոր չորրորդ, Եր., 1987, էջ 10:

4 Գրիգոր Շահինյան, Աքսոր և արվեստ, Անթիլիաս, 1985, էջ 14:

5 Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, 4 հատորով, հատոր չորրորդ, Եր., 1987, էջ 10:

6 Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, 4 հատորով, հատոր չորրորդ, էջ 99:

7 Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, 4 հատորով, հատոր չորրորդ, էջ 57:

8 Շահան Շահնուր, Նահանջը առանց երգի, Եր., 1994թ, էջ 127:

9 Նույն տեղում, էջ 128:

10 Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, 4 հատորով, հատոր չորրորդ, էջ 13:

11 Նույն տեղում, էջ 129:

12 Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, 4 հատորով, հատոր չորրորդ, էջ16-17:

13 Վազգեն Գաբրիելյան, Սփյուռքահայ գրականություն, Եր., 1987, էջ 313:

14 Սուրեն Դանիելեան, Բանաստեղծութեան ազատագրումը, Չարեի Խրախունի, Ս. Էջմիածին, 1999, էջ 193-194:

15 Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, 4 հատորով, հատոր չորրորդ, էջ 19:

16 Նույն տեղում, էջ 86:

# ՎԱՐԴԱՆ ՖԵՐԵՇԵԹՅԱՆ

## ԱՆԵՐԵՒՈՒՅԹ ԳԱՆՁԸ

/Հակոբ Օշական/

*Արագընթաց եւ սրադարձք ի խոր եւ ի վեր,*
*Սփեղծագործող Բանին՝ սուրբ լարք...*
*Վարդան Անեցի*

*Ես գրում եմ, որպեսզի անցնեմ ինչ:*
*Անրի Միշո*

Կան գրեր, որոնք հասանելի են որոշակի ճանապարհ անցնելուց հետո միայն, եւ որոշակի բարձրությունից, ինչպես Մայաների գրերը, որ գետնատարած. խրթին խզբզոցներ են լոկ հողակիպ հայացքի առաջ, եւ խորունկ ու բազմիմաստ մեհենագրեր, երբ դրանց նայում ես արծվաթիռ բարձրությունից, բայց ոչ պատվանդանի վրայից, ինչպես դա արել. անում եւ ցավոք սրտի գուցե հավերժորեն անելու են ոչ միայն Հակոբ Օշականին ժխտողները /ում անունն է՝ լեգե-

ոն, որ նույնիսկ նրա անունը լսելիս այլայլվում եւ ծամածռվում է հանց սատանան խաչի առաջ/, այլ նույնիսկ սակավաթիվ հիացողների մեծ մասը, որ երբեմնակի իր ներսի դատարկությունը հիացմունքով ու անուններով լցնելու պահանջ ունի:

Գանձն աներեւույթ է ոչ այն պատճառով, որ թաղված կամ թաքցված է ինչ-որ հեռավոր ու անիմանալի «Գանձերի կղզում», այլ լոկ այն պատճառով, որ մենք արդեն կորցրել ենք այն տեսնելու կարողությունը, որտեղ էլ գտնվելիս լինի, դե թեկուզեւ մեր ներսում: Մայաների ամայուտներում կորսված մեհենագրերը հանկարծ խորհրդանիշից վերածվում են նիշի, երբ բացակայում է դրանք պեղող հեռահար ու սրատես հայացքի ուժը:

«Մարգարիտն աչքիս փչանում է», - ասում էր բանաստեղծներից մեկը... Սակայն ամենահմ̣ուտ ու խորը ընկղմվող ջրասուզակի հայտնաբերած, խեփորի մեջ ննջած ամենահազվագյուտ մարգարիտն էլ կարող է փչանալ, եթե չկա այն տեսնողը: Այլ հարց է, թե դրանից ով է ավելի շատ տուժում՝ մարգարի՞տը, թե՞ մենք...

Երբ հիմա անորսալի արագությամբ խաթարվում են մեր աչքի առաջ ու մեր շուրջը գոյող բոլոր տեսանելի բաները, ապա դրանից նույնքան, ու թերեւս շատ ավելի, խաթարվում են անտեսանելի, աներեւույթ բաները, եւ հանկարծ Եղիա Տեմիրճիպաշյանի հիշատակած բառ-զգայնիկները խամրափայլ ու անշնչացած, պաղած արցունքի պես, անհետում են, Ինտրայի /Տիրան Չրաքյանի/ «Ներաշխարհը» /որ նաեւ մեր ներաշխարհն է, որի մասին, փոքր ինչ վերափոխելով Նիկողոս Սարաֆյանի խոսքը, կարելի է ասել՝ ի՞նչ ասես մի ժողովրդի մասին, որ իր ներաշխարհը չի կարդում /, մեր սրտի ու հայացքի առջեւ մնում է գոց, ինչպես անտեսանելի ալյաց ծածուկ խորքերում

խեփորի մեջ փակված մարգարիտը կամ ինչպես հեքիաթի մեջ լռիկ, արքայազնի համբույրին սպասող, քնած դշխուհի-արքայադուստրը, որպեսզի ի վերջո զարթնի «ի ննջմանէ արքայական»:

Այս ամենը գրելիս նորիցնոր հիշեցի Արշիլ Գորկու, հեռավոր Ամերիկայի Շերմանի արվեստանոցում Վարդուշ քրոջը հղած նամակներից մեկի այս տողերը.«Վրձինը վայր դրեցի... կատարելություն, նկարը շնչահեղձ է լինում հաղորդակցման կարոտից»:

Հայ գրականության մեջ թերեւս չկա մեկ այլ գրող, ում հիսուն հատորն անցնող ժառանգությունը /եթե երբեւէ ամբողջությամբ տպվի/ այդքան շնչահեղձ լինի հաղորդակցման կարոտից, որքան՝ Հակոբ Օշականինը, ով մեր «Մնացորդացի» թերեւս ամեամեծ ուսուցչապետն ու գրողը եղավ, եւ ով նույնիսկ իր իսկ խոսքերով ասած «զարտուղությունների» եւ «զառածումների» մեջ շատ ավելի իրավ ու վավերական է, քան ամենուր մեծ հորջորջված շատուշատերը:

Մարգարիտն աչքիս փչանում է իր շուկայական արժեքով...

Դժվար է խոսել մեկի մասին, ով իր ամեհիությամբ, բազմադիմությամբ ու խորությամբ համարյա թե անպարագրելի է, եւ ուրեմն, անվերջանալի:

Հերմես Եռամեծին վերագրվող հնագույն տեքստերից մեկում ասվում է. «Ագռավի գլուխն անհետում է գիշերամուտին, կեսօրին թռչունը թռչում է առանց թեւերի, ծիածան է ժայթքում, նրա մարմինը դառնում է բոսորագույն եւ նրա թիկունքին մնում է մաքուր ջուրը»:

Այն մաքուր ջուրը, որի մեջ հանգչում էր այն պարող աստղը, որ արթնացնում էր բնության երեւակայությունը, եւ որին վերագրվում էր ստեղծագործ ուժի սաղմն ու թրթիռը, եւ որի մասին վաղնջական ժամանակներում ասվում էր. «Արեւը հայրն է նրա, լուսինը՝ մայրը,

քամին նրան կրեց իր որովայնում: Հողն է նրա միակ ստնտուն»:

«Մնացորդացի» ցրոնքի մեջ այդ «ոգեշունչ ջրի» մեջ թրթռացող աստղը իր մեջ մշտապես վեհորեն կրող ամենարժնավորներից մեկը եղավ նկարչության մեջ՝ Արշիլ Գորկին, /ով ըստ Ա. Բրետոնի դիտարկման, գալիս էր սպառելու «ոգեշունչ ջուրը» ծաղիկների, եւ իր մտածողության կիզակետում, շնորհիվ եզակի եւ բացարձակապես հաստատուն կորագծի, կարծես իրար էր հանգուցում թիթեռնիկի եւ մեղվի ցանկությունները/, իսկ գրականության մեջ՝ առաջին հերթին Հակոբ Օշականը, ում մենք այդպես էլ անհաղորդ մնացինք, ինչը որ հիանալիորեն գիտակցում էր հենց ինքը, որ հոգու խորքում գիտեր, որ ոչ միայն չկա մարգարե սեփական հայրենիքում, այլ շատ հաճախ եւ առավել եւս՝ հայրենիքից դուրս...

Ես հիշում եմ, հորս անվանակից, Գրիգոր անունով ավագ ընկերներից մեկին, ով ծնունդով. ինչպես եւ Օշականը, Պոլսին մերձակա Բուրսայից էր, եւ ծնողներն էլ. ճակատագրի բերումով, գրողի ծնողների ծննդավայր Սյոյոզ անվանված հայկական գյուղից էին, ուր Օշականը երկար տարիներ ուսուցչություն էր արել, եւ որտեղ տասնինը տարեկանում գրել էր իր անդրանիկ «Առաջին արցունքը» պատմվածքը, որ հետո պիտի մտներ նրա առաջին «Խոնարհները» ժողովածուի մեջ:

Եվ ահա այս տողերը գրելուց տառացիորեն մի քանի ակնթարթ առաջ հիշեցի հորս այդ ընկերոջը, ումից ես առաջին անգամ լսեցի Հակոբ Օշականի մասին, ում ձեռքը պատահաբար ընկել էր «Խոնարհները» գիրքը, եւ ով, այն օրերին, երբ ես դեռ նոր էի դպրոցն ավարտել, մեր տանը, վշտաբերկրուն արցունքներն աչքերին, թրթռուն ձայնով պատմում էր, որ ինչ-որ հրաշքով վերագտել ու վերապ-

րել էր իր կորսված մանկությունն ու ծննդավայրը, եւ որոշ ժամանակ դադար առնելուց հետո ասաց. «Ես կարծես շնչեցի իմ մանկության օդը»: Եվ հետո, երբ նա երկար, լուռ ու գլխիկոր, նստած էր մեր տան հնամաշ ու ճռճռացող աթոռներից մեկի վրա, նա ասես Օշականի վավերական ու բյուրեղացած գյուղացիներից կամ «քոքուրներից» /զարնվածներից, փախուկներից, կախյալներից ու զրկյալներից, լուսանցքին ապրողներից/ մեկը լիներ, որ հայտնվել էր այստեղ ու հիմա արդեն ոչ թե ճակատագրի բերումով, այլ, գուցե թե, հեգնանքով, բնակվում էր խուլ ու կորսված թաղամասերից մեկում՝ Բութանիայում /որի մեջ ժամանակին մտնում էին Պոլսին մերձակա Բուրսա քաղաքն ու շրջակա գավառները/, եւ ում շնորհիվ ես առաջին անգամ Հակոբ Օշական կարդացի, եւ ում աչքերի մեջ ես մի պահ տեսա այն կենդանի հոգու թրթիռը, որ այնքան ներհատուկ է Օշականին:

Գաղտնագրերի վերծանումը կարելի էր բացարձակապես անիմաստ համարել, ինչպես եւ հանգած հրաբուխների շերտերի եւ կամ թե ասենք ծառերի բների կամ կեղեւների կամ հոսանուտ ջրերի մեջ հանգչող ամպերի ծվեների ուրվագծերում կամ մարդկանց աչքերում ու սրտերում ինչ-որ բան ընթերցելու ճիգը, եթե չլիներ այդ ամենը տարազող ու պարագրկող, բայց եւ աներեւույթ կենդանի հոգու շարժումը՝ամենաներսը ամենադրսում, եւ այն սեւեռուն հայացքը, որ կամուրջ է նետում ամենատարասեռ ու հաճախ աներեւույթ իրերի ու երեւույթների միջեւ:

Իսկ ի՞նչ անի նա, ում չի տրված այդ «Անջրպետի մը գրավումը»: Դե գոնե չպարսավի նրանց, ովքեր տեսնել ու զգալ գիտեն: Բայց ինչպես ինքն Օշականն է ասում «Խորհուրդներու մեհեանը» գրքում տեղ գտած «Սֆինքսը» գրության մեջ. «Կուզե՞ս: Այս անա-

բատ ամայութիւններուն վրայ արձանագրեմ իմ քերթուածը. տարօրինակ, քու ճանչցածդ տարբեր նուագը բանամ այդ լռութիւններուն մէջ այն սարսուռներուն, որոնք կը վազեն ոսկի գրիչներէն:

Կուզե՞ս քեզ մտցնեմ տաճարը, տաճարը քեզ տակավին կէսծանոթ սրբութեան:

Մի ըսեր, թէ կը ճանչնաս զայն: Ժամուորը ե՞րբ հասկցեր է խորհուրդը խորաններուն»:

Օրերս. երբ մեջս հունցվում էր այս տեքստը ու գրի չէր տրվում, նկարիչ ընկերոջս հետ հայտնվեցի Պատմության թանգարանում, ուր հնագույն վիշապագորգերի ու կարպետների ցուցահանդես էր: Աղոտ լույսերի ներքո, շլմորուն ու սարսռուն հիացքի մեջ դանդաղ պտտվելուց, եւ շատ ուրիշ բաներ նայելուց հետո մոտեցանք Մշո Առաքելոց վանքի դռանը, եւ մի պահ ինձ շամփրեց էն զգացողությունը, որ այլեւս այդ դռնից ներս չեմ մտնելու, եւ կամ, որ այն ընդմիշտ գոց է մեր առաջ, ոչ թե այն պատճառով, որ վանքը չկա, այլ այն պատճառով, որ մենք կորցրել ենք այնտեղ մտնելու աներեւույթ ճանապարհը, որը գիտեր Հակոբ Օշականը: Կարդացեք նրա «Երբ պզտիկ են», «Երբ պատանի են», «Խորհուրդներու մեհեանը», «Երբ հիները կկարդանք», «Մնացորդացը» եւ կամ թե ցանկացած այլ մի երկ եւ գուցե թե տեսնեք վերջապես այն աներեւույթ գանձը, որ մեր խորքում է, եւ կամ թե Անանիա Շիրակացու վկայակոչած՝ վերին ու ներքին գոյացությունների անտեսանելի հյուսկենը, ընդմեջ որի թեւածում է թռչունի երգը, որ իր ներսում է՝ խազեր անմեկին, ցիրցան ու ճերմակ ամպերի վրա՝ ջրափոսի մեջ:

Երբ դուրս եկանք մեր Պատմության թանգարանից ու հայտնվեցինք բազմամարդ Հրապարակում, այն ամենը, ինչ տեսանք՝ վիշա-

պագորգերը, կարպետները, գունազարդ սափորները, հանդերձանքները, երաժշտական գործիքները, հարսանեկան գունանախշազարդ մոմերը, դռները... ամեն-ամեն բան, ինչ որ տեսանք, «իրավ» ու «վավերական» ու միաժամանակ հեքիաթունակ լինելով հանդերձ այնքան հեռու եւ անիրական էր թվում այս իրականության մեջ՝ այս արեւափառ հրապարակի շուրջը բոլորած մեռելածին ու անճոռնի, թզուկի հավակնոտությունից էլ բարձր խոյացող անճոռնի երկնաքերներով, ինքնությունից պարպված գուհունակ ու հարթակլոր դեմքերով, այս ամենին արդեն անհարիր իրենց անկար ու աննկատ գեղեցկությունից ու նազանքից խրտնող աղջիկներով, արեւլուսի պես այս համասփյուռ գորշությունը պատռող մոլորված մանկանց ժպիտներով, չալպտուրիկ ու անհարկի մեծ մեքենաների միջից ականջ սղոցող սրտմաշուկ երգերով, իր միապաղաղ ու տաղտկալի ռիթմով... Եվ այդ պահին հիշեցի Օշականի այն խոսքը, ուր ասվում էր, որ կար ժամանակ, երբ մեր հոգին ավելի մոտ էր մեր մարմնին, քան հիմա...

Ողջ գիշեր քունս չէր տանում, լուսամփոփի լույսի ներքո մոտեցա գրադարակներից մեկին, հանեցի Օշականի «Սերմնացանը» գիրքը եւ սկսեցի կարդալ «Երբեմն» վերնագրված գլխի ահա այս հատվածը.

«Ո՞ւր է այն տարօրինակ, հետզհետէ անհասկնալի, եղերափառ փաղանգը մարդոց, որոնք դարեր շարունակ կավէն ու հողէն վարդեր հանեցին, լեռները խնդացուցին մատուռներուն ճերմկոտիկ շուշաններովը, դաշտերը ողողեցին խարտեաշ մեղրովը ցորենին, բայց որոնց զաւակները անապատներուն խորը անօթի կամ ողջակէզ մեռան...

Գիշեր է իմ հոգին. – Կաղանդի ու Ծնունդի: Կնունքի ու մեռելոցի: Պարի ու հեքիաթի:

Ամէն մէկ եզր, սա թուումէն ընդարձակ է իմ մէջ, լեցնել, յորդումի հանելու չափ գիշերը իր շրջուած, անհունասփիւռ սաղաւարտով, ճիշտ այնպէս՝ ինչպէս կը լեցնէր ու զեղումի կը հանէր ադ գիշերները մեր ժողովուրդը խաղ ու խնդումով, երկինքները կը բանար ու Աստուծոյ Որդին կ՝իջեցնէր մսուրքի մը գաղջ ընտանութեան:

Բառերը տապանաքարերն են, որոնց տակ մէկի տեղ ցեղ մը կը պառկի երբեմն:

Երբեմն...»:

Երբեմն ամենավավերական բաները ամենաանիրականն են թվում, քանի որ միաժամանակ իրականության խորքում ու նրանից շատ ու շատ վեր են: Առանց այդ իրավից անդինի, իրականությունը դադարում է, Դոստոեւսկու ասած, ամենաֆանտաստիկ բանը լինելուց: Գուցե սա նկատի ուներ Գեղամ Բարսեղյանը, ում ինքը Օշականը իր բազմահատոր «Համապատկեր արեւմտահայ գրականութեան» վերջին՝ «Վկայութիւն» վերնագրված ստվար ինքնավերլուծումի մեջ, անիրական տղա է անվանում, ով իր հերթին, իրենց մտերմության առաջին իսկ օրերից այդպես էր որակել Օշականին, հաջողությամբ բանաձեւած լինելով տպավորությունը Օշականի գրականությունից, ուր «իրականն ու երազը քովէ քով կ՝ապրին, առանց նեղելու եւ նեղուելու»:

Եթե երազն իրոք որ սնվում է իրականությունից, ապա ես չգիտեմ, թե այսօր ինչ երազ պիտի ծնվի մեր իրականությունից եւ կամ թե ինչ իրականություն պիտի ծնվի մեր մեջ թմրած երազներից...

Նույնիսկ իրականության եւ երազի միջեւ սեպի պես խրված

Աղետից հետո Հակոբ Օշականը չկորցրեց վերին ու ներքին գոյացությունների անտեսանելի հյուսկենը եւ իր մեջ բուն դրած աներեւույթ գանձը:

Այս տողերը գրելուց քիչ անց ձեռքս վերցրի Օշականի «Երբ հիները կը կարդանք», մեկնարվեստի ամենաանմոռանալի աննման նմուշներից մեկը հայ գրականության մեջ, եւ սկսեցի կարդալ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» հատվածներից մեկի «Աղաչեմ զանփոփոխելի...»-ի քառասուն էջանոց մեկնությունը, որը Օշականի ամենանրբին գրություններից մեկն է. եւ իր նրբարվեստ բանվածքով ու կատարման անթերիությամբ, ինչ-որ բանով հիշեցնում է մեր միջնադարյան մամռապատ բարձրաքանդակները. եւ իր տպավորության ուժգնությամբ, անմոռանալիությամբ համեմատելի է միայն, միանգամայն տարբեր լինելով. միայն Մեծարենցի «Նարեկացիին հետ» գրության հետ:

Հիմա, երբ ամեն մի գեղեցիկ ու խորունկ բան վիրավորում ու կուրացնում է մեզ եւ անողոքաբար հիշեցնում է նաեւ. թե ինչքան ենք հեռացել մեր ինքեկությունից, հիմա, երբ մեր սաղմի ու բջիջների մեջ բուն է դրել ոստոստուն ու ամենակուլ Ներքին Աղետը, այնքան տխուր եւ ճշմարիտ են հնչում Օշականի այս խոսքերը. «Քիչ բան յուսահատեցնող է այնքան որքան գեղեցկությունը: Բայց աւելի տառապագին է հանդուրժել հոգեկան գեղեցկություն մը: Այս է պատճառը. որ գեղեցիկ կնոջ մը մեղքերը կը ներուին, երբ անիկա ծերանայ: Բայց հազուադեպ է. որ գեղեցիկ հոգի մը ազատի մեր հալածանքէն. նույնիսկ գերեզմանէն ալ անդին»:

Այս խոսքերը Հակոբ Օշականը կարող էր ասել եւ ինքն իր մասին:

Այս ամենից զատ, եթե կարդալու լինեք Հակոբ Օշականի «Մեր մատենագիրները», զուգակշիռները, տարբեր գրքերում հայտնվող նրա խորհրդածությունները հնդիկ, չին կամ պարսիկ սուֆիստ բանաստեղծների կամ ասենք Սթենդալի, Ֆլոբերի, Դոստոեւսկու, Տոլստոյի, Ջոյսի ու Պրուստի մասին, ապա կտեսնեք մի մարդու, ով իր ազգի կյանքն ու պատմությունը, ինչպես նաեւ ողջ համաշխարհային գրականության ընթացքն ու վայրիվերումներն ընկալում էր որպես սեփական կենսագրություն:

Երբեմն ես երկար նայում եմ Հակոբ Օշականի վերջին լուսանկարին, նրա ամեհի ու բարեգութ աչքերին, նրա, ինչ-որ բանով միջնադարյան մեր անապատականներին հիշեցնող, խստամբեր դեմքին, նրա շուրջ ու նրա խորքում ծավալվող անհուն տխրությանը, բայց եւ աննկուն բերկրանքին:

Եվ ահա մտովի պատկերացնում եմ նրան Երուսաղեմի իր վերջին խցում՝ գրադարակների մեջ պահված իր գրքերը, փոքրիկ սեղանի վրա շաղ տված «Վկայութիւնը» գրքի ձեռագիր էջերը. ես տեսնում եմ նրա դեմքի վրա իր վերջին գրությունն ավարտելու համառ ու անբացատրելի պատրաստակամությունը, եւ երբեմն դեմքը կծկող սրտի տագնապն ու դառնությունը՝ այն չավարտելու ահից:

Եվ ահա, բացի այդ ես տեսնում ու զգում եմ նաեւ, որ այդ պահին նույնիսկ մենությունն այնքան մենակ չէ, որքան Հակոբ Օշականն ու իր մեջ ապրող աներեւույթ գանձը:

# ԱՆՀԱՅՏ ԲԼՅՈՒԶ ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԻ ՀԱՄԱՐ

Վիլյամ Սարոյանը առաջիններից մեկը եղավ, որ լինելով զարմանալիորեն բեղուն ու առատագիր, ասես շրջեց Էմիլ Զոլայի «Ոչ մի օր առանց տողի» անտանելիորեն անհողդողդ ու հայտնի արտահայտությունը, եւ «Խիզախ պատանին թռչող ճոճաձողի վրա», լավագույն ջազային իմպրովիզացիաները հիշեցնող պատմվածքից հետո, կարող էր ասել՝ «ոչ մի տող, առանց օրվա»... Առանց՝ այդ պարգեւված օրվա կենդանի հոգու շարժման, թրթիռի, վետվետումների,, թիռթեւ բերկրանքի ու անհուն տրտմության:

Ոչ մի գրողի ստեղծագործություններում այնքան բլուզ /ու նաեւ ջազ/ չի հնչում , որքան Սարոյանի պատմվածքներում, եւ ոչ մի գրողի պարզունակությունը այնքան թվացյալ չէ, որքան հենց լավագույն բլուզների խաբուսիկ միապաղաղությունը. որոնց ներքո ծաղկում է նախնական ու անկորնչելի սարսուռը:

Ինչպես ասում էր բլուզային կիթառահար Ալբերտ Քոլինզը, «Պարզ երաժշտություն նվագելն ամենադժվարն է, իսկ բլուզը՝ պարզ երաժշտություն է»: Նույնը կարելի է ասել Վիլյամ Սարոյանի գրականության մասին, որի աներեւակայելի պարզությունն ու անսքողությունը շատ հաճախ խրտնեցնում եւ վիրավորում է պատվանդանի վրա կանգնած՝ «բարձր» հոգեւոր արժեքներով ապրող մարդկանց, որոնց հայացքի առջեւ միշտ փռված է արժեքների սյունակավոր ու կանխորոշ ցանցը, որի մեջ ոչ մի «պատահական» ձուկ չի որսվում, եւ որոնց անհաղորդ են մնում գետի խորքում քլթքլթացող այն հնչյունները, որոնք ասես ստեղծվում են ինչ-որ այլ տարերքնե-

ից, եւ դա է հենց ջազի /ինչպես նաեւ բլյուզի/ հարստությունը՝ «նոր հնչյունների ներառումը», որի մասին իր զրույցներից մեկում, ջազի, բլյուզի եւ սփիրիչուելսի մասին խոսելիս, եւ 20-րդ դարի մեծագույն կոմպոզիտորներից մեկի՝ Իգոր Ստրավինսկու սերն առ ջազը հիշատակելով, Բորխեսն ասում է՝ «Երբ ես ջազ եմ լսում, ինձ ամենից շատ գրավում է այն, որ ես լսում եմ ձայներ, որոնք ես չեմ լսում ոչ մի այլ երաժշտության մեջ»:

Ահա այդ «նոր հնչյունների ներառումը» եւ միանգամայն նոր տոնայնությունը, ռիթմն ու ձայներանգն անվերջորեն առկա են Վ. Սարոյանի ստեղծագործություններում, եւ հատկապես պատվածքներում ու էսսեներում, կամ որեւէ դասակարգման չտրվող յուրահատուկ հուշախոհագրություններում / «Կյանքի եւ մահվան օրերը ու փախուստ դեպի լուսին», «Ահա եկավ, ահա գնաց ինքդ գիտես, թե ով», «Պատահական հանդիպումներ», «Մահազդներ», «Ծնունդներ» եւ այլն/:

Եվ այն արմատախիլ արված եւ այլ հողերում ու քաղաքներում, երկնաքերների եւ անհաղորդ հայացքների տակ բուն դրած՝ օտար ու շփերթ քամիների տակ բվվացող ծառերի անսահման կարոտն ու տխրությունը եւ երբեմն էլ տերեւների արանքում պահկտված արեւի խատուտիկ ջերմությունն ու բեկբեկուն եւ բերկրուն լույսը, որից տրտմությունն ավելի անսահման է դառնում:

Եվ ահա այս պատկերը ծավալվեց աչքերիս մեջ եւ դանդաղ վար հոսեց, երբ օրերից մի օր Բլայնդ Վիլլի Ջոնսոնի բլյուզներից մեկի ներքո թարգմանում էի Վիլյամ Սարոյանի «Չհրատարակված գրողը, իր աղջիկն ու անձրեւը» փոքրիկ պատմվածքի առաջին պարբերությունը. «Անձրեւում է, այս ամիսների ընթացքում առաջին անգամ

մեր փողոցի սալահատակը տրտում է իր ցոլացրած տներով, եւ ժամանակ առ ժամանակ լուսավորվում է անցնող մեքենայի լուսարձակով, որ տամուկ ու սուլող ձայնով ընթանում է փողոցն ի վեր: Նստած եմ մեր տան ճակատամասի սենյակում, իմ դուստր Ջոաննայի հետ: Երեք տարեկան փոքրիկ երեխա է նա, որ իր մոր մեծ աչքերն ունի եւ նույն անխռովությունը, եւ նա կանգնած պատուհանի մոտ դիտում է տրտմությունը: Սենյակում իր ներկայության եւ լռության պատճառով ես էլ մանկունակ զարմանքով նայում եմ աշխարհին, եւ ինձ թվում է, որ նրա իմաստությունը մարդկային միակ իմաստությունն է: Տեսնել, խորապես հուզվել կյանքի պատկերով եւ սակայն ոչինչ չասել: Երբ այսպես աղջկաս կողքին նայում եւ չեմ խոսում, ինձ թվում է խոսքի մասին ավելին եմ ըմբռնում, քան երբեւէ ըմբռնել եմ: Այդուհանդերձ ինձ համար անկարելի է բառերով արտահայտել այն, ինչ որ կամենում եմ ասել: Ասես զգում եմ, որ Լռությունը ամեն ինչ է»:

Ահա դարձյալ սկսում ենք լսել գետի խորքում թավալվող ու վերուվարող հոսանքների աղմուկն ու հծծյունները, իրենք իրենց ներսում ներհյուսվող ու խեղդվող ալիքների անտունիները, որոնցով այնքան լեցուն են Սարոյանի պատմվածքները:

Եվ մի պահ մտաբերվում է նրա «Գյուղացին» պատմվածքի 1908 - ին հեռավոր Ամերիկա ընկած ղուլթիկցի Սարգսի մեն մի նախադասությունը, ով իր հայրենակցի հարցմանը. «- Իսկ Ամերիկան հավանո՞ւմ ես, սրտո՞վդ է, ղուլթիկցի եղբայր...», պատասխանում է. « - Ի՞նչ իմանամ...գնա, արի, գնա արի... ու ծանոթ անծանոթ մարդկանց հետ սինիներ շուռ տուր...»:

Եվ այդ մեն մի բառով կամ նախադասությամբ սովորական պատմությունը, ասքը, խոհագրությունը, «նաղլը» մտքի թռիչքով

հրաշքի վերածելու եզակի շնորհը, որ դրսեւորվում է իր բազում պատմվածքներում / «Այն օրը», «Այո եւ ամեն», «Հայն ու հայը», «Հայ մուկը», «Խնդուքը», «Յոթանասուն հազար ասորիները», «666-ը», «Խեղճուկրակ արաբը»՝ այս թվարկումը դեռ երկար կարելի է շարունակել/ եւ հատկապես «Իմ անձը երկրի երեսին» չքնաղ պատմվածք - խոհագրության մեջ, որի, այսպես կոչված «գլխավոր հերոսը» գրամեքենան է, եւ որի շուրջ էլ հենց դառնում են բոլոր արկածները, մտորումները, իրադարձությունները եւ մտքի զարմանահրաշ թռիչքներն ու բեկումները, որ իրենց անսպասելի անցումներով ու փոքր ինչ կոտրտված ու շեղ ռիթմերով հիշեցնում են բիբոպի լավագույն դաշնակահարներից մեկի՝ Թելոնիոս Մոնքի փշաքաղեցնող «ճամփորդությունները դաշնամուրի շուրջ»:

Իր այս աննման երկի սկզբում Սարոյանն ասում է. «Ամենից դժվարը սկիզբն է, չէ՞ որ այնքան էլ դյուրին չէ լեզվից ընտրել հենց այն միակ պայծառ բառը, որը պիտի ապրի ընդմիշտ, եւ յուրաքանչյուրը տենչում է արտահայտել իրեն հենց այդ անհրաժեշտ ու միակ բառով: Բանաստեղծությունը, պատմվածքը, վեպը, էսսեն, երազի հանգույն, սոսկ բառ է այն լեզվից, որից դեռ չենք սովորել թարգմանել, գիշերվա այդ մունջ եւ անհատակ իմաստությունից, հավերժության այդ քերականության ու օրենքներին չենթակա լեզվից»... Եվ այնուհետեւ շարունակելով իր մտորում-ճամփորդությունները կյանքի, մահվան, գրականության եւ իր գրողական հավատամքի շուրջ, եւ տպագրելով այդ ամենը այն գրամեքենայով, որ ծայրահեղ չքավորության մի պահի գրավ էր դրել, եւ երկար ժամանակ չէր կարողանում գրել, քանի որ նա միշտ գրամեքենայով էր աշխատում՝ նվագելու համար իր դաշնամուրը, եւ ահա մի պահի զայրացած ասելով, թե

ատում է աշխարհի բոլոր տեսակի մեքենաները, եւ հանկարծ մտաբերելով, որ առանց գրամեքենայի կորցրել էր իր ինքնության մի կարեւոր մասը, ասում է, որ չնայած ատում է ամենայն մեքենաները, բայց ահա կյանք չունի առանց գրամեքենայի, եւ ահա այստեղ իրեն ներհատուկ անսպասելի մտքի թռիչքով մեզ է ընծայում իր ամենախորհիմաստ ու հանճարավոր ձեւակերպումներից մեկը. «Ես չեմ կորցրել ինքս ինձ հակասելու իրավունքը»: Այս ձեւակերպումն ինքնին առանձին խոսակցության նյութ է, ու թերեւս ազատության ամենաղիպուկ արտահայտություններից մեկը:

Բոլոր այն մարդիկ, ովքեր իրենց անբովանդակ դեմքերին խորհիմաստության արտահայտություն-դիմակ հագնելու ճիգերից պարտակած բարբաջում են ազատության, ինքնության եւ մեր մենթալիտետի անսասանության մասին, վաղուց արդեն կորցրել են իրենք իրենց հակասելու իրավունքը, եւ դույզն ինչ չեն կասկածում, որ այդ իրավունքը գեթ մեկ անգամ կորցնելուց հետո այլեւս երբեք չես վերագտնի:

Յուրաքանչյուր մարդ կարող է այսօր մի բան սիրել, վաղը՝ այլ մի բան, կամ այսօր մի բան ընդունել, վաղը՝ չընդունել, եթե դա բխում է իր ներաշխարհի խորքերի վայրիվերումներից, զանց առնելով պատեհապաշտությունը, հարմարվողականությունը, հողակիպությունը, որոնց մենք այսօր դեմ ենք առնում ամեն քայլափոխին. եւ եթե նա չի կորցրել ինքն իրեն հակասելու իրավունքը, որ մարդուն պարգեւված ամենամեծ շնորհներից մեկն է, եւ ինչը որ օրեցօր նվազում է:

Եվ եթե դու հավատում ես ինքդ քեզ հակասելու իրավունքին, ապա երբեք չես ավերի մարդու ամբողջականությունն ու լիությունը, որ քանիցս ավերել ու խաթարել են հենց մեր աչքի առաջ. եւ որպես

կանոն, հենց այն մարդիկ, ովքեր վաղուց ի վեր կորցրել են իրենք իրենց հակասելու իրավունքը, եւ հիմա, թողության համար պարբերաբար կաթոլիկ եկեղեցի հաճախող պոռնիկների նման, շառագունած այտերով ու հորթի աչքերով նայում են մեզ...

Այս մոծավանջի հաճախանքից ազատվելու եւ անտունիների ու բլյուզի թեմային վերադառնալու համար մտաբերվեց եւս մի դրվագ այս աննման՝ «Իմ անձը երկրի երեսին» կամ «Ես այս աշխարհի երեսին» պատմվածքից, երբ երեք տարեկանում հորը՝ այդ բիթլիսցի բանաստեղծին կորցրած Սարոյանը, նրա հետ կապված բոլոր պատմությունները վերհիշելով, եւ հայերեն գրված՝ իր խորքում ննջած եւ արդեն անհաս տառերին նայելով , եւ անգլերեն գրված օրագիրը թերթելով, ասում է. «Ըստ այդ օրագրի, նա Նյու-Յորքում միայն երկու հոգեվիճակ ուներ՝ տխուր եւ շատ տխուր»: Այս «տխուր եւ շատ տխուր»-ը, որ իր խորքից եկող անտեսանելի ալիքներով փլում է փուչ լիության ու երջանկության որմերը, երբեմն հասնելով անտեսանելի բերկրանքի բարձունքներին, կարող է լինել մեր բոլոր տարագիր բանաստեղծների, նկարիչների, երգահանների, անտունիների, ինչպես նաեւ աֆրոամերիկյան բլյուզի լավագույն բնութագիրը:

«Այն, ինչ ինձ չի սպանում, ինձ ավելի ուժեղ է դարձնում»,- ասում է Նիցշեն, եւ սա երիցս ճշմարիտ է Սարոյանի պարագայում, ով ճաշակեց զրկանքի, որբության, մանկատան եւ դրսի բոլոր դառնությունները, երբեք ու երբեք չկորցնելով իր անկախ նկարագիրը, կորովն ու հանդգնությունը, եւ երբեւէ չխաթարելով ու չաղավաղելով իր միջի «ներքին մարդուն», եւ դա մի քաղաքում՝ Ֆրեզնոյում, ուր տարօրինակ ու անբնական հայատյացություն էր տիրում, ինչը նրա

խորքում ավելի էր շեշտում իր հայ լինելն ու այլությունը՝ բոլոր մակարդակների վրա: Այն «տխուր եւ շատ տխուր»-ը, որ բուն էր դրել նրա հոգում, եւ անտեսանելի բերկրանքի բարձունքներին հասնելու կարողությունը, ասես սերում էր մեր անգիր բանահյուսության ու մեր էպոսի խորքերից, որ նրա խենթուխելառության ու ծռության կորիզն է, ինչն էլ հենց նրան առանձնացնում է բոլոր ամերիկահայ գրողներից, ավելի կոնկրետ լինելու համար, ասենք՝ Մայքլ Առլենից /Տիգրան Գուլումջյանից/: Ինքը Սարոյանը բազմիցս վկայել է իր այդ տարբերությունը, եւ մի անգամ իրեն ուղղված այն հարցմանը, թե ինչ կարծիքի է Մայքլ Առլենի մասին, պատասխանել է՝ «Անիկա կրավորական հայ է, ես՝ ներգործական»: Սա թերեւս ամենափայլուն ձեւակերպումներից մեկն է: Եվ այստեղ արդեն բնավ էլ կապ չունի, թե դու որտեղ ես ծնվել կամ ուր ես ընկել, քանի որ ներգործական հայ լինելը շնորհ է եւ ոչ թե ստացվածք, որ կարող ես մսխել. ինչպես երկրիդ հարստություններն են մսխում այսօր բյուրավոր ստահակներ, որ ոչ հայ եւ ոչ էլ ընդհանրապես մարդ կոչվելու իրավունք չունենալով հանդերձ, հպարտությամբ ու թվացյալ անպատժությամբ կրում են իրենց կրավորական գոյությունը, չկասկածելով անգամ, որ դա էլ հենց ամենամեծ պատիժն ու նզովքն է, եւ այն, ինչ չի սպանում նրանց, առավել խղճուկ է դարձնում:

Ինչ վերաբերում է բլյուզին, որ ակամա կարծես այս գրության լեյթմոտիվն է դառնում, նշենք Ալբերտ Մյուրեյի ամենանրբին դիտարկումներից մեկը. երբ խոսելով այն մասին, որ Ամերիկայում սեւամորթ ստրուկների շրջանում ինքնասպանության դեպքերն ավելի քիչ էին, քան՝ ստրկատերերի, ասում է՝ որովհետեւ նրանք բլյուզ էին երգում, եւ երբ կարոտից, խոնջանքից ու անսահման տխրությու-

նից գվվալով նրանք բլյուզ էին երգում, ծերուկ դեռ Սյուիցիդը ընկրկում ու նահանջում էր, որովհետեւ նրանք գտել էին ընկճախտից ազատվելու իրենց միջոցը, իսկ նրանց գոհունակ ու անբովանդակ տերերը դա չունեին: Եվ ահա նույն Մյուրեյը Վոննեգութի հետ զրուցելիս ասում է, որ բլյուզը չի կարող ընկճախտը վերջնականապես քշել տնից, բայց սեղմում է այն պատին եւ քշում անկյունները՝ ամենուր, ուր հնչում է այդ երաժշտությունը:

Սիանգամայն այլ կերպ եւ այլ տեղից Սարոյանը գտել էր բառերով, մինչ այդ անհայտ բլյուզներ /որոնց շատ հաճախ միախառնվում են մեր անտունիները/ եւ զարմանահրաշ ջազային իմպրովիզացիաներ գրելու իր եղանակը: Ահա մի հատված նրա «Ջազը» պատմվածքից..

«Մեր քաղաքում սիմֆոնիա էր հնչում, սակայն այն ձեւից ու նրբագեղությունից զուրկ էր: Այն սկիզբ էր առնում լռությունից, խավարից ու երազից: Եվ քաղաքի արթնանալուն համընթաց բացվում էր օրը, սիմֆոնիայի երաժշտությունն ու ռիթմերը դառնում էին ավելի բարձրագոչ ու արագաշարժ: Օրը օրին երաժշտությունը հորինվում էր զանազան հնչյուններից ու ռիթմերից: Ավելի ուշ, մեկ, երկու տարի առաջ մտաբերելով մեր բոլոր օրերը, մենք հասկացանք, որ դրանք ամենքը միասին միահյուսվելով վերածվում են մի սիմֆոնիայի, եւ դա մեր կյանքի սիմֆոնիան էր՝ մեր ողջ հոգիների, մեր շարժման, երկրի երեսին մեր ներկայության»:

Բառերով կատարյալ երաժշտականության հասնելու կարողությունը Սարոյանի ամենաապշեցուցիչ առանձնահատկություններից մեկն է, որն արտահայտվում էր ոչ միայն իր գրություններում, այլեւ բանավոր խոսքում, երբ իր գիտցած հինգ կամ վեց հարյուր հայերեն

բառերով ինչ-որ մոգական մթնոլորտ էր ստեղծում, նույնիսկ երբ բառերը չէին բավում, ինչպես բարձունք հաղթահարող լեռնագնացին՝ օդը, երբեմն նմանվելով վաղնջական ժամանակների ասացողներին, եւ իր դաղարներն էլ նույնքան հագեցած ու հնչեղ են, որքան որ լավագույն երաժշտության մեջ են լինում, երբ ամենանոսր ու անորսալի բաները խուլ զնգում են խորքում եւ սկսում ես ունկնդրել չին իմաստունների հիշատակած «Տիեզերքի սրինգը», որի մեջ միաձուլվում են երկինքն ու երկիրը, նախածին վավերականությունն ու գիսավոր աստղի պես անհետող ակնթարթը:

Սարոյանն ունի պատմվածքներ, որոնք ասես ծնվում են ոչնչից, եւ որոնցում ամեն ինչ կարծես նոր անուն ու տեսք է առնում, եւ դրանցում պարզորոշ դրսեւորվում է նրա ադամական շնորհը:

Դրանցից մեկն է «Ձյուն» պատմվածքը, որը Ֆրեզնոյից Նյու-Յորք նրա ուխտագնացության պատմությունն է: Սովորական թվացող մի պատմություն, որն ահա այսպիսի տեսք է առնում, երբ նա ասում է.

- Ինչո՞ւ ես եկա Նյու-Յորք:

Որովհետեւ բոլոր գաղթականները գալիս են Նյու-Յորք: Ինչո՞ւ ես պետք է բացառություն կազմեմ: Նաեւ ես գնում էի այնտեղ, որ գտնեմ իմ ոճը: Ավտոբուսային ոդիսականը ինձ զգացնել տվեց երկրի թափը: Նյու-Յորքը ինձ զգացնել տվեց մեծ քաղաքի թափը...- Նույնպիսի կյանք էր ինչ-որ Ֆրեզնոյում, բայց Նյու-Յորքում նոյեմբերին հանկարծ ձյուն եկավ:

Ես մեր ցրիչ Պիտեր Բոֆրերին ասացի.

-Ա՜յ սա ոճ է, իսկական ոճ, այս ձյունը՝ ամենակատարյալ ոճն է, նման բան ես երբեք չեմ տեսել, եւ եթե ես երբեւէ սովորեմ գրել այն-

պես, ինչպես այս ձյունն է տեղում, ապա ես կհասնեմ թե՛ փառքի եւ թե՛ հարստության»:

Եվ թեպետ վերջում ասում է, թե ինքն այդպես էլ չկարողացավ ըմբռնել այդ տեղացող ձյան գաղտնիքը, բայց քսանվեց տարեկանում լույս տեսած «Խիզախ պատանին թռչող ճոճաձողի վրա» առաջին իսկ ժողովածուն, որ երեսունվեց պատմվածք էր պարունակում, որ գրել էր մեկ ամսում, նոյեմբերին տեղացած ձյան պես զարմանալի անակնկալ եղավ, եւ մեկեն նրան հայտնի դարձրեց ողջ աշխարհում:

Ճիշտ այդ նոյեմբերին տեղացած ձյան պես զարմանալի անակնկալ էր ինձ համար, երբ տասնինը թե քսան տարեկանում Երեւան քաղաքում, կեսգիշերին, փոքր ինչ գինովցած, մանրամաղ անձրեւի տակ զբոսնելիս եւ հրապարակի մոտով անցնելիս, տեսա հյուրանոցի երկրորդ հարկում փափախը գլխին, իր տխուր եւ շատ տխուր հայացքը հեռու մի կետի հառած Վիլյամ Սարոյանին եւ ակամայից մեխվեցի տեղում, մինչեւ որ նա հանկարծ ինձ նկատելով ժպտաց, ձեռքը պարզեց ու վեր ելնելու նշան արեց: Թե ինչ էինք խոսում եւ առավել եւս լռում՝ լավ չեմ հիշում, գուցե անակնկալն ու հիացմունքը խանգարեցին, բայց ահա մի պահի ձեռքը ծոցագրպանը տարավ, հանեց նոթատետրն ու դատարկ մի էջի վրա բացելով հարցրեց.

- Է՞հ, տատիդ սիրած խոսք կամ զրույց ո՞րն էր.

- Ամենամեծ մեղքը սուտ դարդն է.- ասացի:

- Է՞հ, կհասկնամ, Լյուսի Ղարաղլանյան մեծ մայրս ալ երբեմն ատանկ տխուր, աղվոր ու ահագին բաներ կըսեր:

Հետո գրիչը հանեց եւ նոթատետրի դատարկ էջի վրա դանդաղ ու անգլերեն տառերով գրի առավ տատիս խոսքը: Եվ տարօրինակ

էր, տատիս ձայնը լսելով, տեսնել նրա խոսքը Սարոյանի գրչի տակ՝ անգլերեն տառերով ու հայերեն բառերով:

Իսկ հետո, երբ դուրս եկա, անձրեւը սաստկացել էր, եւ մեկեն թրջվելուց հետո, արդեն դանդաղ սկսեցի քայլել մթին ծառուղիներից մեկով:

Եվ հիմա, ամեն անգամ, այդ մեն միակ «պատահական հանդիպումը» վերհիշելիս, եւ առավել եւս նրա գրքերն ընթերցելիս, մեջս հնչում է մի անհայտ բլյուզ Վիլյամ Սարոյանի համար:

# ՎԱՀԵ-ՎԱՀՅԱՆԻ «ՈՍԿԻ ԿԱՄՈՒՐՋ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Վահե-Վահյանի՝ 1945 թվականին Բեյրութում լույս տեսած «Ոսկի կամուրջ» ժողովածուն սփյուռքահայ մարդու հոգեբանության ու աշխարհընկալման մեջ տեղի ունեցած փոփոխությունների արձագանքն էր: «Գիրքին ընդհանուր խորագիրը,- բացատրում է Վահե-Վահյանը,- «Ոսկի կամուրջ»՝ հղացք մըն է, որ կը փորձե կամարել ինչպես անձնական, նույնպես մեր կյանքին տարբեր շրջանները և զանոնք լեցնող հուզումները, իբրև ոսկեղեն կամուրջ մը, նետված անցյալի մռայլ, մղձավանջային, աստեղահև գիշերին խորեն դեպի ծիածանագեղ ամպերու լեռներուն վերև դղրդագին բացվիլ խոստացող Սեծ օրվան մը փառքը»[1]:

Ոչ վաղ անցյալի ցավն, իհարկե, չէր մոռացվել, հիշատակներն անընդհատ երևակվում էին ամենատարբեր թեմաներ արծարծող

բանաստեղծություններում, սակայն ողբերգական ապրումին փոխարինելու էր գալիս կարոտը, «անբանաձևելի կարոտը» (Գեղամ Սևան), որ սգալու փոխարեն գեղեցիկ հիշատակներն ապրեցնելու էր մղում: «Դա արևելյան կենսափիլիսոփայություն էր,- նկատում է Գեղամ Սևանը,- միաժամանակ «դեղատոմս», նորովի արձագանք, որ մինչև այդ սփյուռքահայ պոեզիայում չասված ինքնատիպ նոր զգայություն էր բերում և ցույց էր տալիս, առաջարկում նախ և առաջ... ՁԳԱԼ»[2]:

Այս առումով թե՛ մարդկայնորեն, թե՛ բանաստեղծական իրացումի տեսանկյունից միանգամայն բնական ու հուզիչ են Վահե-Վահյանի տենչանքներն ու կարոտը «Մղձաւանջ» քերթվածում.

Դառնայի ետ մէկ անգամ, ու լեցուէին իմ աչքերս
Լեռներու լուրթ կողն ի վար հոսող թոյրովն արեւին:
Աչքերս, աչքե՜րս բուրվառ, ուր կծխա դեռ իմ սէրս,
Հանդիպէին աչքերուն, իբրեւ շնորհ մը վերջին:

Արտօնէի՞ր ինձի, կեա՛նք, գէթ վայրկեանի մը համար,
Ըլլալ կրկին բարեկամ՝ ծաղկած ծիծղուն ծառերուն,
Ստուերներուն, բոյրերուն, զեփիւռներուն դաշնալար,
Եւ ամայքին մեջ կոծող առուակներուն պաղպաջուն...[3]

Ժողովածուի կառուցվածքն էլ այնպիսին է, որ տրամաղրությունների փոփոխականություն է ենթադրում, հանգամանք, որ վկայում է, թե Վահյանի գաղափարական բարեշրջությունը հեշտ ու միանգամից կատարված ընթացք չէ, այլ՝ ապրումային ու ստեղծագոր-

ծական տևական ու տանջալից խոկումների արդյունք: «Այգաբաց», «Աստղալույս» և «Աղջամուղջ» վերնագրված բաժիններից յուրաքանչյուրն իր թեմատիկ ընդգրկումն ունի, հոգեվիճակների պեղման իր տրամաբանությունը, նույնիսկ՝ իր ռիթմը:

Օննիկ Ավետիսյանին ուղղված նամակներից մեկում (Նիկոսիա, 6 հոկտեմբեր, 1945) Վահե-Վահյանը սպառիչ բնութագրում է անցումների այդ առանձնահատկությունը. ««Աղջամուղջ»ը... ունի մռայլ, հիւանդագինօրէն մելամաղձոտ խորք մը, որ սակայն լաւատէս է ոգիով որքան ալ վիրաւոր ըլլայ այդ ոգին: «Աստղալոյս»ը... անձնական ու հասարակական նոյն յատակին վրայ, կը ներկայացնէ հոգետեսուած, հեռազգացուած պայծառութեան մը՝ միգամածային, ամպաստուեր, աղօտափայլ, խռովիչ ու տրտում, բայց ոգեշնչող խոստումներով ողողուն կաթնալոյսը: ...«Այգաբաց»ը... իբրեւ յատակ, անձնականէն աւելի ունի ազգ[ային] հասարակական կեանքի երեւոյթները եւ հոգեվիճակները: Անցեալը ներկայ է հոն իր ստուերովը, բայց ներկան կու տայ հարուստ տեսիլքներ՝ աւելի մօտեցած, ամպերու լեռներուն մէջէն դղրդալից պայթիլ խոստացող արշալոյսի մը փառքին»[4]:

Ինչ վերաբերում է ռիթմին, ապա եթե «Այգաբաց» բաժնի բանաստեղծությունները երկարաշունչ են, քառատող տներով, 30 և ավելի տողերից բաղկացած, իսկ տողերի տաղաչափական կառուցվածքը՝ 16 վանկանի (4+4+4+4 սկզբունքով), ապա՝ «Աստղալույս» բաժնում, հիմնականում պահպանելով տաղաչափական նույն սկզբունքները, Վահե-Վահյանն իր ասելիքն իրացնում է համեմատաբար կարճ տարածության մեջ՝ առավելապես 16-20 տողանոց բանաստեղծությունների պարագծում: Այստեղ գերակշռող է դառնում

***սոնետը*** սփյուռքահայ գրողների կողմից այդքան սիրված ***հնչյակը*** որպես ներժանրային իրացում: «Աղջամուղջ» բաժնում հիմնականում սոնետներ են ընդգրկված, որտեղ Վահյանը բազմազանությունն ապահովում է սոնետի տարբեր տաղաչափական ձևեր կիրառելով՝ 3+3+4+4, 3+4+3+4, 4+4+3+3 սկզբունքներով:

«Արեւ-Անձրեւ»-ում սկիզբ առած սիրային թեման իր ողջ հմայքով շարունակեց ծավալվել «Ոսկի կամուրջ» ժողովածուում, որտեղ արդեն դրսևորվեց գեղեցիկ մանրամասների մեջ ոչ միայն ապրումի, այլև վայելքի պատկերման տեսքով:

...Եւ յիշատակն աղուաջեր՝ քու մատներուդ խոռվքին
Իմ միսերուս ու միտքիս մէջ կը շրջի՞ վերստին:

Մեռցընող բոյրը մազիդ, տենդն արիւնիդ տրոփուն,
Կայծը կէս-խուփ աչքերուդ, հեւքն հոգիիդ շնչահեղձ՝
Կ՚ըլլան խենդ բոց մը, կ՚առնեն զիս թեւերուն մէջ իրենց...[5]

(«Կախարդ գիշեր»)

Եթե մահվան թեման Վահե-Վահյանի «Արև-Անձրև» ժողովածուում պայմանավորված էր ժամանակի տիրապետող ընդհանուր տրամադրություններով, ապա հետագայում դրա ներկայությունը ինչ-որ տեղ տարօրինակ է: Այն առիթ է տալիս մտածելու, թե չնայած ժամանակի ընթացքում կրած փոփոխություններին՝ ստեղծագործական անընդհատ դեպի լավատեսություն միտվող բարեշրջության մեջ կային կասկածի, տագնապի վայրկյաններ, որոնք, ժամանակ առ ժամանակ դուրս էին հորդում տողերի արանքից: Վահե-Վահյանի

դեպքում դա պայմանավորված էր նաև նրանով, որ «Արև-Անձրև»-ի հրատարակության տարում (1933) գրված, բայց տարբեր պատճառներով գրքում տեղ չգտած որոշ բանաստեղծություններ ընդգրկվեցին «Ոսկի կամուրջ»-ում՝ հետին թվով վերարծարծելով նախկին տրամադրություններն ու խոհերը: Ահա 1933 թվակիր «Եղերաձայն փող մեկնումի» բանաստեղծությունը, որտեղ հուսահատ բանաստեղծը, այլևս ոչ մի ափոփանք չգտնելով, կորցնելով իրեն կյանքի հետ կապող բոլոր կենսական ազդակները, լուռ համակերպվում է ամեն ինչ թողնելու և հպարտ հեռանալու ծանր մտքին.

Յոյսն արեւոդ ոչ մէկ գարու՛ն, ոչ մէկ ժպի՛տ՝ ծաղիկներէն...:
Ինչ շահ երկար մաքառելէն, երբ հոգիիդ մէջ կը մարին
Վերջին մոմերն ալ հաւատքիդ, ու գիտես թէ պիտի արդէն
Չմատուցուի քու աչքերուդ՝ երանութիւնն արշալոյսին...

Հեռացիր հաշտ ու ժպտադէմ, ինչպէս արեւն՝ հովիտներէն...
Եւ միգամած լճակներու անարշալոյս ու ցուրտ ափին
Թող յաւիտեան եղերերգէ յիշատակիդ գորշ ուռենին՝:

Եթե այստեղ սառը և ցուրտ աշխարհում ջերմություն ու սեր չգտած բանաստեղծի հուսահատ հոգու պոռթկումն է, որ առաջ է բերում մեկնումի, հեռացումի զգացողություններ, ապա «Հոգենուագ» բանաստեղծության մեջ, որ 1934 թվակիր է, մեկնումի վայրը միանգամայն ճշտված է. այստեղ արդեն գործ ունենք սեփական մահվան թափորի նկարագրության հետ, որտեղ թեպետ մարդկային, բնական

ցանկություններ կան, հուզիչ ու գեղեցիկ պատկերներ *(Երբ ես մեռնիմ, վա՜ղդ մը միայն՝ դագաղիս // Մորս հոգիին ցողը վրան...*[7]*)*, սակայն բանաստեղծությունը տեղիք է տալիս խորհելու, որ նման մռայլ մտածումները՝ որպես ներքին ազդակ, սփյուռքահայ մարդու գերակա հոգեվիճակն էին: Գեղամ Սևանի ձևակերպմամբ՝ «Գոյատևման մասին մտածելիս նրանց մտքին ու երևակայությանը... կյանքից ավելի մահն էր հուզում ու չարչարում, և դրա համար էլ հանուն կյանքի, ապրելու համար ստեղծված գրականությունը իր քայլերն սկսեց մահվան մասին խորհրդածություններով»[8]:

Մահվան թեմայի՝ նույնիսկ այս պայմանով գերակշռությունն ամեն դեպքում այլընտրանքի գիտակցությունն ունի, և սթափ գնահատումի տարերքը հետզհետե դառնում է գերիշխող: Արդեն 1938 թվակիր «Տեսիլք կապոյտ կատարէն» բանաստեղծության մեջ Վահե-Վահյանը փարվում է կյանքի, ապրելու, արարելու և կյանքով մահին հաղթելու գաղափարին.

Երանութի՜ւնն այս է լոկ, տառապանքին մէջ այս ծով –
Թօթափել բեռն աւելորդ՝ փառքին, յոյսին ու վախին
Ու կորուսեալ դրախտին դուռը բախել վերստին,
Անմահութեան նետել քայլ՝ մահկանացո՜ւ ոտքերով...[9]

Հրաժարվելով մահվան ընկերակցությունից և շրջադարձ կատարելով դեպի կյանքը՝ մեկ այլ բանաստեղծության մեջ բանաստեղծը յուրօրինակ կերպով ներողություն է խնդրում կյանք կոչված հրաշքից իր հոռետեսության և ամեն ինչ մռայլ գույների մեջ տեսնելու համար.

Եթէ աչքերս եղան կոյր՝ քու լոյսերուդ դէմ կապոյտ,
Թէ մօտեցար դուն ինծի, ու փնտռեցի քեզ հեռուն,
Կեա՛նք, ահ, ներէ՞ քեզ գտնել չգիտցող սա հէք տողուն...[10]
(«Կեա՛նք, ահ ներէ՞»)

Եվ, ընդհանրապես, «Ոսկի կամուրջ» ժողովածուում, հատկապես «Աստղալույս» բաժնում կեանք-ը ամենաշատ շրջանառվող բառն է դառնում՝ իր բովանդակային ամենաբազմազան ընդգրկումներով (-*Կեա՛նք, կեա՛նք, կեա՛նք,*- այսպես է ավարտվում բաժինը բացող «Շեփոր» ծրագրային բանաստեղծությունը[11]): Այսպիսի մոտեցումը մղում է մտածելու, որ, ըստ ամենայնի, Վահե-Վահյանը որոշակի դիտավորությամբ է ընդհանուր առմամբ լավատեսական այս ժողովածուում ներառել այսպես կոչված ***մահահոտ*** բանաստեղծություններ՝ հոգեվիճակային փոփոխություններն ավելի ակնառու դարձնելու նպատակով: Պատահական չէ նաև այն հանգամանքը, որ Վահե-Վահյանը ժողովածուի սկզբում զետեղել է իր համեմատաբար ուշ շրջանի գործերը, իսկ վերջում՝ ավելի շուտ գրած բանաստեղծությունները: Նպատակադրման տեսանկյունից անհրաժեշտ էր, որ Սփյուռքում ապրող հայերը «ճանչնան նախ այն մթնոլորտը, ուր հիմա ինք կը շնչե, և ուր կան՝ որքան տրտմությունը անցյալին, նույնքան հույսն ու խանդավառությունը ներկային ու հավատքը գալիքին»[12]:

«Ոսկի կամուրջ» ժողովածուում, ինչպես այլ առիթներով արդեն նշել ենք, գաղափարական կարևոր նպատակադրում էր Սփյուռք-Հայրենիք կապի ամրապնդումը, մայր հայրենիքն իբրև աշխար-

հասփյուռ հայության վերջնական ու միակ հանգրվան ամրագրելու հոգեբանության սերմանումը: Պատահական չէ, որ ժողովածուն մի քանի տարի անց, գրեթե առանց զեղչումների ու միջամտությունների (ուղղագրությունը չհաշված) նույն վերնագրով տպագրվեց նաև Հայաստանում: «...Քար առ քար, քերթված առ քերթված կամարվում և ամրանում է «Ոսկի կամուրջ»-ը Վահե-Վահյանի,- ժողովածուի իր գրախոսության մեջ գրեց Սիլվա Կապուտիկյանը,- կամուրջ երկյուղներով ու ընկրկումներով լեցուն երեկից դեպի հավատով ու վճռականությամբ հաստատվող այսօրը, կամուրջ՝ օտարության ցրտաշունչ ափերից դեպի հայրենի եզերքը»[13]:

«Ոսկի կամուրջ» վերնագիրն ինքնին հաշտեցման ու միավորման եզրեր էր ենթադրում: Համանուն բանաստեղծությունն էլ իր հերթին Գեղամ Սևանի բնորոշմամբ՝ «իր մեջ ամփոփեց թե Սփյուռքի ամբողջ պատմության ընդհանուր գծերը, նրա երեկն ու այսօրը և թե միաժամանակ դարձավ ապրող ու հասակ առնող նոր սերունդների դավանանքը»[14]:

Բովանդակային-իմաստաբանական առումով ժողովածուի կենտրոնական «Ոսկի կամուրջ» բանաստեղծությունն ունի եռամաս կառուցվածք, որոնցից առաջին երկուսի հակադրում-համեմատության մեջ էլ բացահայտվում է բուն գաղափարը, որ հստակ արտահայտվում է բանաստեղծության երրորդ մասում: Ընդ որում՝ բովանդակային այս հղացքը Վահե-Վահյանն արտացոլել է նաև կառուցվածքային և պատկերային հատույթում: Պատահական չէ, որ բանաստեղծությունը բաղկացած է 12 տնից՝ յուրաքանչյուր մաս 3 տուն: Դրանցից առաջին երեքը ներկայացնում են ոչ վաղ անցյալը

***մութ էր երէկ*** նշանաբան-արտահայտությամբ՝ իբրև անցյալի խորհրդանիշ.

Մութ էր երէկ՝ ծուխ ու արիւն, սո՛ւգ էր երէկ՝ լաց ու հառաչ...
Բացուող ամէ՛ն այգ՝ նոր անէծք, ամէն գիշեր՝ նոր մղձաւանջ,
Նորաբաբախ ամէն հայ կեանք թշվառութի՛ւն մըն էր անտուն
Ու ծնելիք ամէն մանուկ՝ վերահաս վիշտ մը հավելուն...[15]

Երկրորդ մասի խորհրդանիշ-նշանաբանը հղացված է նախորդի յուրաքանչյուր բառի հականիշ նշանակությամբ՝ ***յոյս է այսօր:*** Եվ, ընդհանրապես, բովանդակությունը առարկայացնող ամեն մի նշանակիր արտահայտություն կոնկրետ հականիշների վրա է կառուցված.

Լո՛յս է այսօր՝ արեւ բոսոր, հո՛յս է այսօր՝ խինդ ու խոստում...
Ու կողջունենք ցայգն ու ցերեկն՝ առանց ահի եւ անտրտում,
Ծնող ամէն մանուկ պիտի վաղն ըլլայ շէն տունի մը սիւն
Ու ծնելիք ամէն մանուկ՝ ճառագայթո՛ւմ և օրհնութիւն...[16]

Եվ, վերջապես, ամփոփադրող, գաղափարական առումով կարևոր հատվածի իմաստային խտացումը ***չենք մոռնար*** մեկնակետային ձևակերպումն ունի այն առումով, որ ***ոսկի կամուրջ*** արտահայտությունն իբրև բովանդակային հատույթ, իբրև ***մութ էր երէկ-ի*** ու ***յոյս է այսօր-ի*** յուրօրինակ հաշտություն, իբրև նախապայման պետք է ունենա ***չենք մոռնար-ը:*** Լինելով միասնության կոչ՝ «Ոսկի կամուրջ» քերթվածը միևնույն ժամանակ նաև յուրօրինակ կտակ է.

հավատք-պատգամ, որում մայր հայրենիքի հանդեպ դրական վերաբերմունքի ամրագրման հետ մեկտեղ շատ կարևոր է անցյալի փորձը մշտապես աչքի առաջ ունենալու հանգամանքը:

Չենք մոռնար մենք վէրքերը հին, երկիրն աւեր՝ սեղան զոհի,
Չարիքն անսանձ, եւ հայ կեանքի անպատիժ հունձքն
իր ամեհի...

Ահա այսպիսի մոտեցումն է, որ Վահյանի բանաստեղծությունը պարզ գաղափարաբանությունից դուրս է բերում ավելի լայն ու ընդհանրական ոլորտ:

Ամէն տունի պիտի ապրի՞ հին աւերի մը յուշն հավերժ,
Ճարտարագործ ամէն մէկ ձեռք պիտի ըլլայ լուծուած վրեժ
Ու նորախինդ ամէն հոգի՝ անկապտելի ավանդատուն
Մշտաբորբոք յիշատակին՝ մեր անմուրազ վկաներուն...[17]

Գրեթե նույն խորհրդածություններ են ամփոփված ժողովածուի մյուս՝ «Հրաժեշտ» բանաստեղծության մեջ, որտեղ ***երեկվա*** և ***այսօրվա*** հակադրամիասնությունը նույնչափ իրական է ու շոշափելի, որքան նախորդ՝ «Ոսկի կամուրջ» քերթվածում: Հեղինակը հրաժեշտ է տալիս ***երեկվա*** անլույս ու տրտմալար երգերին, որոնք ցավի, հալածանքի ու արյունաքամ հարվածների ծնունդ են: Այդ ամենը մնացել է մութ անցյալում, իսկ ***այսօրը*** լույս է բերում, պայքարելու և տևելու ուժ տալիս.

Դուռս միշտ փա՛կ պիտի մնայ վերադարձին ձեր չարաբաստ.
Քանզի բացեր եմ ես հոգիս նոր երազի մը բոցավառ...
Միտքս ըրած ղե՛կ, հաւատքըս՝ կա՛յմ, կամքըս՝ յոյսո՛վ
լի. առագաստ.
Ես կը նաւեմ անվերադարձ դէպի ափեր արփիափառ[18]:

Բանաստեղծի՝ հայրենի երկիրը որպես հովանի ունենալու վաղեմի երազանքը այլևս դարձել է իրականություն, և նա փայփայում է այդ երազանքը, կոչ անում չնահանջել ու չվարանել՝ քաջ գիտակցելով, որ դեպի միասնություն տանող ճանապարհը լի է դժվարություններով, որոնք հաղթահարելու համար մեծ կամք է հարկավոր.

Հարկ է լքել ամէն վարանք, եւ անտրտում եւ անարգել՝
Հոգիդ դրօշ մ՛ իբրեւ պարզել, ու տիրաբար ու քաջօրէն,
Մարտիկներու վայել շուքով մեծ գալիքին դուռը բախել[19]:

Նման մտայնությունն իհարկե խրախուսվում էր Խորհրդային Հայաստանի կողմից, սակայն հատկապես խորհրդահայ գրականագիտության մեջ երևույթի միայն մեկ կողմն էր «նկատվում» ու մեկնաբանվում՝ զանց առնելով սփյուռքահայ գրականության իրական տագնապներից ևս մեկը՝ ինքնության կորստի վտանգը արդեն մայր հայրենիքում:

«Արեւմտահայ գրագէտը,- գրում է Սուրեն Դանիելյանը,- դէպի հայրենիք նման վերադարձի ճանապարհին կարող է կորցնել լեզուի անաղարտութիւնը, մշակութային աւանդոյթի յատկանիշները, այսինքն՝ տեսակի՛ ինքնութիւնը: Թերեւս այս ամէնն իր մէջ գերաճել է

անորոշ տագնապի ենթագիտակցական յախտոռն ընթացքների արդիւնքում»[20]: Ահա, թերևս, սփյուռքահայ գրականության մեջ, այդ թվում՝ Վահե-Վահյանի պոեզիայում առկա անորոշ տագնապների իրական բացատրությունը:

Նմանատիպ ընդհանրացումների տեսանկյունից պետք է ընկալել ու մեկնաբանել նաև Վահե-Վահյանի բոլոր այն բանաստեղծությունները, որոնցում խորհրդահայ գրականագետներից շատերի բնորոշմամբ՝ բանաստեղծը «ռեալիստորեն» երգում էր Խորհրդային Հայաստանը: Նմանատիպ ընկալում-մեկնաբանություններն, ի դեպ, ոչ միայն արհեստական, «փրկիչ» վերագրումներ էին դառնում Սփյուռքի իսկապես տաղանդավոր գրողների համար, այլև երբեմն միտում էին ծայրահեղության, որտեղ հետին պլան էին մղվում սփյուռքահայ գրականության զարգացման ընթացքի ազդակներն ու ներքին օրինաչափությունները: Ի վերջո, այդ գրականության նպատակը «սոցիալիստական ռեալիզմի» «նվաճումներին» հասնելը չէր, ոչ էլ ամեն կերպ մայր հայրենիքի հետ գաղափարական հաշտության եզրեր փնտրելը: Սփյուռքահայ գրականությունն իր էության մեջ ողբերգական իրողություն է, հանգամանք, որ չգիտակցվեց ու շատ հազվադեպ է գիտակցվում նաև այսօր: Իրավացի է Սուրեն Դանիելյանը, երբ գրում է. «Հայաստանակենտրոն գեղարուեստական հայեացքը, թում է, ածանցեալ է, թոյլ բացահայտուած, շատ դէպքերում՝ քաղաքական տեսակէտից շահարկուած»[21]:

Վերը նշվածի առումով ուշադրության է արժանի Վահե-Վահյանի երկու՝ «Երկրի կարօտ» (Խորհրդային Հայաստանին) և «Տղուս» (Ցոլակին) բանաստեղծությունների գաղափարական և իմաստաբանական զուգադրումը: Այսպես, եթե առաջինում (գրված, ի դեպ,

1941 թվականին) մայր հայրենիքի ընդհանուր շենացմանը և բարգավաճմանը, նրա խաղաղ գոյության համար պայքարին միանալու կոչ-պահանջ-հորդոր կա.

Եթէ հողէն քեզ քար առ քար հանող հուժկու ձեռքերուն
Պիտի չըլլան ձեռքերը մեր լծակիցներ համազօր.
Եթէ ահեղ կռիւիդ մեջ պիտի չըլլայ աննըկուն
Սեր կուրծքը՝ բե՛րդ, սիրտը՝ մարտկո՛ց, եւ հոգին՝
ռումբ ահաւոր...
Սեր կեանքն է զուր այրում մ՚անքոց, ապրիլ է մահ շնչելով...
...Երկի՛ր, Երկի՛ր, քեզմէ հեռու քեզ ապրելուն վիշտը ծով՝
Թող հատուցուի փառքովն անմահ՝ դրօշիդ տակ մեռնելուն...,[22]

ապա՝ «Տղուս» քերթվածում, որ գրվել է մեկ տարի անց՝ 1942 թվականին, այդ հորդոր-«պարտադրանքի» հետ մեկտեղ կտակային նրբերանգներ կան, որոնք հայրենիքում ապրելու գաղափարին հաղորդում են հոգեբանական ավելի խոր շերտեր՝ հիշատակի, կարոտի, չսպիացող վերքի շարունակականության ընդգրկումներով.

Տղա՛ս, դուն հա՞յրս ես նահատակ, եղբայրս՝ արեւ ու ծաղիկ
Եւ քոյրս անոյշ՝ զոր աքսորի գեհենն առաւ իմ գիրկէս...[23]

Ուրեմն՝ հեղինակի համար հայրենիքը ոչ թե լոկ ապահով ու անվտանգ կեցության, ինչ-որ տեղ՝ փախուստ-ազատագրումի տեղանք է, այլ անցյալի վերքը սպիացնելու, եղեռնազոհ սերնդին անընդհատ ոգեկոչելու առավել նպաստավոր կայան.

Եթէ, հեռո՞ւ մեր Երկիրէն, սիրտիս զարկերը կասին,
Հայրենադարձ քու քայլերուդ ընկեր քայլերս չըլլան,
Ափ մ'աճյունէս սփռէ, տղա՛ս, այդ հողերո՞ւն սրբազան,
Ըսէ՝ – Փոխան բազուկներուն տուաւ բեղո՞ւն իր փոշին...[24]

Հայրենական մեծ պատերազմը իրավիճակների որոշակի համահավասարություն դրեց Սփյուռքի և Հայաստանի հայության գոյավիճակների միջև: Ապրելու, գոյատևելու տագնապը կարծես թե դարձավ նույնական: Այս ֆոնի վրա սփյուռքահայ մարդու տագնապները սրվեցին, քանի որ թեպետ «նորամանուկ», բայց իրական հայրենիքի գոյությունը ապրելու մեծ ուժ էր տալիս: Իսկ այժմ սեփական երկրի հնարավոր չգոյությունը նրան զրկում էր վերջին հույսից անգամ: Տարագրի նրա կեցությունը սպառնում էր շարունակվել ընդմիշտ՝ վերածվելով իրական ձուլման՝ վերադարձի անհնարինությամբ:

Վահե-Վահյանի «Տաղ առ Երեւան» քերթվածում սփյուռքահայ մարդու և՛ հույսն է, և հավատը, և՛ մերժումը, և հոգեբանական բարդ կացությունը՝ ստեղծված պայմաններում, և այսպես ասած՝ «մեղքի» գիտակցումը... «Մեղք», որ սակայն սրբագրվում է մայր հայրենիքին արդեն վերջնական փարումի, ապավինումի, հավատի գիտակցումով: Այստեղ էլ Վահե-Վահյանը չի մնում մերկապարանոց գաղափարաբանության դիրքերում. նա սփյուռքահայ մարդու՝ հայրենիքին օգնելու անկարողության մեջ ևս ներբերում է դրամատիկ շեշտեր.

Տեսիլքներուդ կատարին դէմ շաչող շանթի մէն մի հարուած՝
Քեզ բաբախող, քեզ հեւացող կարծես սիրտի՛ս եղաւ տրուած.

Այլ իմ ճիշդեն կուրծքըս եթէ ռումբերու դէմ որոտաձայն
Ես չկրցի՞ կանգնել պատնէշ, պողպատակուռ դէմ ընել վահան,
Ցա՜ւս է, Երեւան, ներէ՞, Երեւա՜ն:

...Եթէ՝ ռազմի հուրով թրծված, յաղթանակի փայլով շողուն,
Չունիմ պսակ՝ փառքիդ ընծայ, չունիմ ճակատ ճաճանչաւին,
Քեզ սիրելու մեղքիս պատիժ՝ ունիմ հազա՜ր վերք ու խարան,
Ու կը դիմեմ հիմա քեզի իբրեւ ցաւի՜ս իմ բալասան...
Բուժէ՞, Երեւան. սիրէ՞, Երեւա՜ն...[25]

Տրամադրության, հոգեվիճակի նման բովանդակավորումներ են առկա նաև «Երգ պանդուխտ հայ մանուկին», «Տո՜ւն մը երազ», «Հայրենի սէր»[26] և մի շարք այլ հայրենասիրական մեծ ներշնչանքով գրված բանաստեղծություններում: Դրանք իսկապես արժեքավոր ու մնայուն գործեր են, և թերևս փոքր-ինչ տարօրինակ ու անարդար է Ազատ Եղիազարյանի այն տեսակետը, ըստ որի՝ մայր հայրենիքի հանդեպ կարոտի դրսևորման արժեքավոր երկերը սահմանափակվում են Անդրանիկ Ծառուկյանի «Թուղթ առ Երևան» և Մուշեղ Իշխանի «Հայաստան» պոեմներով[27]: Իհարկե, ճշմարիտ է այն, որ «Երկրորդ համաշխարհային պատերազմը բորբոքեց մի նոր թափով հայրենակարոտությունը, որը, պատերազմից շատ չանցած, անխուսափելիորեն սկսեց մարել, տեղի տալով ավելի սթափ, ավելի հավասարակշռված հայացքի հայրենիքի հանդեպ», բայց զանց առնել այդ կարոտի, կարելի է ասել՝ սկզբնավորողներից ու ամենից հավատավոր ներբողողներից մեկին, կարծում ենք, արդարացի չէ[28]:

Միասնականացումի գաղափարից զատ՝ չպետք է մոռանալ մի

կարևոր հատկանիշ ևս, որ նույնպես առկա է «Ոսկի կամուրջ» վերնագրի խորհրդի մեջ և ընդարձակում է նրա բովանդակային սահմանները: Խոսքը վերաբերում է ոչ միայն Հայաստան-Սփյուռք կապին, այլև այն ինքնատիպ «կամրջին», որ սահուն անցումով իրար է կապում հինն ու նորը գրականության մեջ: Այս առումով միանգամայն իրավացի է Սմբատ Տերունյանը՝ գրելով. «...Իր (Վահե-Վահյանի – Տ. Ա.) բանաստեղծութիւնը «ոսկի կամուրջ»ն է հին ու նոր քերթողութեան միջեւ»[29]: Վերցնելով արևմտահայ բանաստեղծության արգասավոր ավանդները՝ Վահե-Վահյանը դրանք վարպետորեն ներդաշնակեց արդի հայ մարդու ձգտումներին, խոհերին ու երազանքներին:

«Ոսկի կամուրջ» գրքում զետեղված քերթվածներն ընդգրկում են շուրջ տասը-տասնհինգ տարվա զանազան ապրումներ և վկայում են բանաստեղծական հույզով, ներքին զգացումով ու «հրայրքով» օժտված բանաստեղծի մասին: Զգայությունների, խռովքների, մարդկային կյանքի և իրերի խորքը տեսնելու հմտություն ունի նա, և այդ անվերջ որոնումների ելևէջումներում գրքի բնորոշող տրամադրությունը մնում է մելամաղձոտ լավատեսությունը:

---

1 Վահե-Վահյան. Ոսկի կամուրջ (ընտրանի), Երևան, «Հայպետհրատ», 1958, էջ 4:

2 Գեղամ Սևան. Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր (1920-1945), Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1980, էջ 258:

3 Վահե-Վահյան, Հատընտիր, Պեյրութ, 1986, էջ 142:

4 Վահէ-Վահեան, Բանաստեղծին սիրտը. նամակներ, կազմեց, խմբագրեց եւ ծանօթագրեց Արամ Սեփեթճեան, Պէյրութ, «Սիփան» հրատարակչատուն, 2012, էջ 94-95:

5 Վահե-Վահյան, Հատընտիր, Պեյրութ, 1986, էջ 132:

6 Վահե-Վահյան, Հատընտիր, Պեյրութ, 1986, էջ 146:

7 Վահե-Վահյան, Հատընտիր, Պեյրութ, էջ 124:

8 Գեղամ Սևան, Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր (1920-1945), Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1980, էջ 265:

9 Վահե-Վահյան, Հատընտիր, Պեյրութ, 1986, էջ 100:

10 Վահե-Վահյան, Հատընտիր, Պեյրութ, էջ 135:

11 Տես նույն տեղում, էջ 112:

12 Տես Վահե-Վահյան, Ոսկի կամուրջ (ընտրանի), Երևան, «Հայպետհրատ», 1958, էջ 6:

13 «Սովետական Հայաստան», 1959, թիվ 59:

14 Գեղամ Սևան, Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր (1920-1945), Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1980, էջ 310:

15 Վահե-Վահյան, Հատընտիր, Պեյրութ, էջ 76 :

16 Վահե-Վահյան, Հատընտիր, Պեյրութ, էջ 76 :

17 Տես նույն տեղում:

18 Վահե-Վահյան, Հատընտիր, Պեյրութ, էջ 87:

19 Նույն տեղում:

20 Սուրէն Դանիէլեան, Միջուկի տրոհումը: Սփիւռքահայ գրականութեան պատմութիւն: Գիրք 1. Ներածութիւն, Երեւան, «Զանգակ-97», 2011, էջ 184:

21 Նույն տեղում, էջ 184:

22 Վահե-Վահյան, Հատընտիր, Պեյրութ, էջ 94:

23 Նույն տեղում, էջ 91:

24 Նույն տեղում, էջ 92:

25 Վահե-Վահյան, Հատընտիր, Պեյրութ, էջ 81:

26 Վահե-Վահյան, Հատընտիր, Պեյրութ, էջ 78, 89:

27 Տես Ազատ Եղիազարյան, Հայոց նորագույն գրականություն. պատմության ուրվագիծ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2004, էջ 343-344:

28 Կարծում ենք, որ այստեղ ավելորդ չէ մեջբերել հենց Մուշեղ Իշխանի կարծիքը Վահե-Վահյանի մասին, որում ուղղակի վկայվում է վերջինիս մեծ ու կարևոր դերը. «Վահէ-Վահեանի «Արեւ-Անձրեւ»ը երեսունեակեան թուականներուն ընթացքը առնող գրական շարժումի ճամբուն վրայ կանգուն ուղենիշ մը կը հանդիսանայ, մեկնումի նոր հանգրվան մը» («Շիրակ» ամսագիր, Պէյրութ, 1980, թիւ 1-2):

29 «Զարթօնք», Պէյրութ, 30 մայիս, 1980:

## ԼԻԼԻԹ ԴԱՄԻՐՅԱՆ

# ՄԱՔՐՈՒՀԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ «ԱՆՎԵՐՋԱԿԷՏ ՁՐՈՅՑ՝ ՄԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐՈՒՆ ՀԵՏ» ԳԻՐՔԸ

*Հայաստանցի ընթերցողներիս ձեռքին է պոլսահայ գրող, լուսագրող, մանկավարժ Մաքրուհի Հակոբյանի «Անվերջակէտ զրոյց՝ մեր գրականութեան երախտաւորներուն հետ» գիրքը:*

Մաքրուհի Հակոբյանի «Անվերջակէտ զրոյց՝ մեր գրականութեան երախտավորներուն հետ» գիրքը հեղինակի երախտիքի յուրատեսակ արտահայտությունն է մեր Մեծասքանչի եւ նրա անխոնջ մշակների՝ պոլսահայ 8 մտավորականների հանդեպ՝Ռոպէր Հատտէճեան, Վարդ Շիկահեր, Արամ Գամպուրեան, Կարպիս Մուրատեան, Իգնա Սարըասլան, Արման Վարդանյան, Արթօ Ճիմպիշեան. Արայ Կարմիրեան:

Ինչպես հեղինակն ինքն է նշում. «Գիրքս կը ձօնեմ յիշատակին բազմաչարչար իմ ժողովուրդի այն զավակներուն, որոնք մեր Մեծասքանչի պաշտամունքով արբշիռ՝ գրիչ ի ձեռին անցան սարսա-

փելի հովիտէն եւ երազն իրենց աչքերուն՝ ինկան ահեղաշունչ փոթորիկի տարափին տակ»:

2013թ. գարնանը Պոլսում կայացած գրքի շնորհանդեսի ժամանակ հնչած շնորհակալական խոսքում, որը պիտի տեղ գտներ «Մարմարա» օրաթերթի մայիսի 13-ի համարում, Մաքրուհի Հակոբյանը նշել է. «Մարմարա»-ի խմբագրատունը ինձի համար եղավ իմ տեսլապաշտ գաղափարներուս եւ նախասիրութիւններուս յարմարագոյն վայրը, հայագիտութեան կաճառ մը, Իսթամպուլահայ բարձրարժէք մտաւորականներու հոյլով շրջապատուած ու հարստացած: Առիթն ունեցայ մօտէն ճանչնալու այդ մտաւորականներէն շատեր եւ վկայութիւններ ձեռք բերելու անոնց գրական աշխարհին, կեանքի փիլիսոփայութեան եւ նկարագրի գիծերուն մասին»:

Իսկ ինչ է իրենից ներկայացնում հարցազրույցների ժողովածուն, գրական ժանրի որ տեսակի մեջ պիտի տեղավորել այն:

Մի կողմից հեղինակը քաջածանոթ լինելով իր զրուցակից գրողներին՝ հոգեբանական հարցումների եւ կատարած եզրահանգումների միջոցով բացահայտում ու ընթերցողին է հրամցնում նրանց մարդկային հատկանիշների խորքային առանձնահատկություններ: Օրինակ՝ Ռոպէր Հատտէճեանին տալիս է հետեւյալ հարցը. «Դուք թէ՛ որպէս գերզգայուն անձ, նաեւ որպէս ձեր համոզիչ ու հատու գրիչով, պարկեշտ եւ քաջարի խմբագրապետ, ինչպէ՞ս հաւասարակշռած եւ հաշտեցուցած էք ձեր անձին մէջ այդ զոյգ յատկանիշները: Արդեօք գերզգայնութիւնը թշնամի չէ՞ քաջութեան»:

Այստեղ նկատելի են դառնում հոգեբանական վեպին բնորոշ գծեր:

Մյուս կողմից էլ Մաքրուհի Հակոբյանը զրուցում է կյանքի պատկառելի տարիք բոլորած գրողների հետ, փաստացի արձանագրում վերջիններիս նոթերը եւ կազմակերպում հարցերն ըստ ժամանակագրության՝ որտեղ եք ծնվել, ովքեր են ծնողներդ, որտեղ եք ուսում ստացել, ովքեր են ձեր լավագույն ուսուցիչները եւ այսպես շարունակ:

Հարցուպատասխաններին գալիս են լրացնելու հեղինակների անձնական արխիվներից վերցված լուսանկարները, որոնցից շատերը 20-րդ դարասկզբի պոլսահայ կյանքի բացառիկ վկայություններ են:

Այս իմաստով հեղինակի գիրքը պիտի տեսնել նաեւ հուշագրության ծիրում:

Մաքրուհի Հակոբյանի գործը տարբեր է Մահարու ինքնակենսագրական վեպից: Տարբեր է նաեւ Տաբլեի գիտական ինքնակենսագրությունից:

Ակնհայտ է նաեւ, որ Մաքրուհի Հակոբյանի հարցազրույցները դիմանկարային ժանրից չեն: Հիշենք նույն պոլսահայ Արշակ Չոպանյանին, ով ընդհանրացված, խորը և դիպուկ բնութագրում է Խ. Աբովյանին, Ղ. Ալիշանին, Հ. Պարոնյանին, Գ. Սունդուկյանին, Բաֆֆուն, Պ. Պռոշյանին, Ա. Շիրվանզադեին, Համաստեղին, բացահայտում նրանց ստեղծագործական մտածողության, մեթոդի և ոճի էական գծերը:

***Ուրեմն ստեղծագործությունը ժանրային որեւէ սահմանի մեջ տեղավորելու համար պետք է հասկանալ հեղինակի՝ գրիչը հերթական անգամ ձեռքը վերցնելու կարեւորագույն նպատակը:***

Որն է Մաքրուհի Հակոբյանի թիվ մեկ նպատակը.

*1. սեփական լուման ներդնել Մայրենիի պահպանման եւ Մայրենիի նվիրյալներին ներկայացնելու գործում,*

*2. աշխատել՝ մշտապես աչքի առաջ ունենալով մերօրյա երիտասարդությանը՝ միաժամանակ դույզն ինչ չմեղանչելով հայ բարեշրջարժեք գրականության առաջ:*

Ապրելով ու ստեղծագործելով իր իսկ գրքում տեղ գտած պոլսահայ մեծանուն գրողների շրջապատում՝ Մաքրուհի Հակոբյանին հուզում է եւ մտավորականներին ներկայացնելու անհրաժեշտությունը, եւ ներկայացնելու պատշաճ ու լսելի տարբերակը, ձեւը:

Երկարատեւ փնտրտուքից հետո «Անվերջակետ զրույց...» գրքի լույսընծայմամբ Մ. Հակոբյանն ապահովում է նոր ժանրի մուտք մեր գրականության մեջ, որը գտնվում է սովորական հոգեբանական վեպի եւ հուշագրության արանքում:

Մաքրուհի Հակոբյանին հաջողվում է գտնել նոր միջոց հայտնի գրողներին ներկայացնելու համար: Մենք այն կհամարեինք հարցազրույց-կենսագրություն, որտեղ, ինչպես Ռոպէր Հատտէճեանն է նշում. «Մեր Պոլսահայ գրականութեան մասին գիտական տուեալներ պիտի փոխանցուին բոլոր անոնց, որոնք 30, 40 տարի վերջ պիտի հետաքրքրուին Պոլսահայ գրականութեամբ»:

Սրա վառ օրինակն է Կարպիս Մուրադյանի հարցազրույցի վերջում զետեղված՝ Օսմանյան բժշկական համալսարանի 1918թ. հայ

շրջանավարտների խմբային լուսանկարը: Այստեղ բժիշկների մեջ է նաեւ Կարպիս Մուրադյանի հայրը՝ Էդուարդ Մուրադյանը:

Խոսելով նկարի մասին՝ Մաքրուհի Հակոբյանը ներկայացնում է պոլսահայ կյանքը 1918-ական թթ-ին. «Երեւակայել անգամ մը. միեւնոյն թուականին, միեւնոյն տարեշրջանին 47 վկայեալ հայ բժիշկներ... Անհաւատալի պիտի թուի մեզի այս իրողութիւնը, եթէ ի ձեռին չունենանք եւ աչքերու դիմաց չպարզենք պատմութեան ընդերքեն դուրս բերուած վաւերական այս փաստը»:

Մ. Հակոբյանը նկարը հուզիչ եւ կարեւոր է համարում այն պատճառով, որ Անատոլիայի չորս կողմում ապրում էին մեծաթիվ հայ ընտանիքներ, որոնք. «Այդ տաժանելի դժբախտ թուականներուն արմատախիլ եղան իրենց ծննդավայր հողերէն, կեանքի եւ ինչքի ահաւոր կորուստներու գնով»:

Իսկ 2013թ. մայիսի 2-ին «Ակունք» պարբերականում լույս տեսած «Ինչե՞ր մտածել կուտայ Արամ Սրբազանին հետ հեռատեսիլէն կատարուած հարցազրոյցը» հոդվածում Ռոպէր Հատտէճեանը պիտի ահազանգի. «Հաղորդավարը յիշեցուցեր է, որ Օսմանեան Կայսրութեան շրջանին կը գործէին 2170 եկեղեցիներ եւ աւելի քան 2000 վարժարաններ: Իսկ հիմա ի՞նչ է պատկերը, հարցուցեր է ան:

Պատկերը հիմա ահաւոր անկումի մը պատկերն է: Այդ հազարներէն հիմա մնացած է 45 եկեղեցի ու 16 վարժարան:

Ի՞նչպէս կասեցնել մեր թիւին նուազիլը: Ի՞նչ ընել որպէսզի այսօր իրարու միացուած դպրոցները վաղը դարձեալ աւելի զալ չսկսին մեզի:

Մենք որ այնքան վարպետ ենք շէնք շինելու մէջ, պիտի կարենա՞նք նոյն վարպետութիւնը ցոյց տալ մարդ շինելու գործին մէջ»:

Մաքրուհի Հակոբյան մտավորականի կերպարն ամբողջացնելու նպատակով հարկ է մեջբերել Վարդ Շիկահերի գնահատականը. «Մաքրուհի կը գրէ վճիտ, բիւրեղեայ հայերէնով ու հայրենական քաղցր ու հմայիչ ոճով»:

Այս մաքրամաքուր արեւմտահայերենը Մ. Հակոբյանը ոչ միայն 35 տարի շարունակ մատուցում է «Մարմարա»-ի, այնուհետեւ՝ «Սուրբ Փրկիչ» ամսաթերթի ընթերցողներին, այլեւ երկար տարիներ դասավանդել է դպրոցում՝ որպես բարեհոգի, բայց միեւնույն ժամանակ խստապահանջ մայրենիի ուսուցիչ: Պոլսում կայացած շնորհանդեսի ժամանակ արտահայտվում է նաեւ նրա սաներից մեկը՝ Հոգշ. Տ. Թաթուլ Ծ. Վարդապետ Անուշեանը. «Երբ Յակոբեան դասարան կը մտնէր, իր հանդարտաբարոյ կեցուածքին ներքեւ կը զգայինք թէ որքան խստապահանջ էր ու բծախնդիր, կարծես ջուրը կը մաղէր, կը սիրէինք զինքը, բայց երկիւղ մը ալ ունէինք իրեն նկատմամբ, որ մեզ կը մղէր լավագոյնս պատրաստելու մեր դասերը»:

Թերեւս սա է նաեւ պատճառը, որ յուրաքանչյուր զրուցակցի Մ. Հակոբյանն ունի երկու կարեւոր հարց. «Ովքե՞ր են Ձեր ծնողները, ուր ծնած են անոնք» եւ «Ո՞ւմ կը համարէք Ձեր ուսուցիչը»:

Այս հարցերի պատասխաններն արդեն իսկ ենթադրում են հետահայաց ակնարկ դեպի անցյալ: Դեպքերի, փողոցների, թաղամասերի, տոհմածառերի մանրամասն նկարագրություններ, որոնք այլեւս որպես սեպագիր արձանագրություններ ամրագրված են «Անվերջակետ զրույց...»-ում:

Արամ Գամպուրյանին հղած հարցերից մեկում մեր աչքերի առջեւ պատկերվում է հին Շիշլին. «Շիշլիէն անդին թթենիի անծայրածիր պարտէզներ կային, անկէ ալ անդին բաց դաշտերու վրայ թռու-

ցիկ թոցնելու կ՝երթայինք: Պօղոսեաններու քովն էր մեր տանտիրոջ Մէսթճեաններու բնակարանը, իսկ անոր քովն ալ կը բնակէին Տէր եւ Տիկին Տօքթ. Գրիգոր Ոսկանեանն ու Տիկին Ատրինէն: Այդ տունը այսօր փլցուած է: Անոր տեղ շինուած է բազմահարկ շէնք մը, որ կը կոչուի <Սապըր> Ափարթմանը...»:

Գալով այսօրվա հայկական իրականությանը, երբ այլեւս բաց են Հայրենիքի սահմանները, ավելին, երբ հայաստանցի ականավոր գրականագետները հնարավորություն ունեն ոչ միայն հավուր պատշաճի ուսումնասիրելու սփյուռքահայ եւ պոլսահայ հեղինակներին, այլեւ ներկայացնելու հայաստանցի ընթերցողին, առանձնապես կարեւոր է դառնում հայ համայնքներում գործող հայ մտավորականի դերը՝ Հայրենիք-Սփյուռք կապերի մերձեցման հիմնախնդրում:

Այստեղ եւս Մաքրուհի Հակոբյանն իր ազնիվ ու սրտացավ վերաբերմունքով կարողանում է հայաստանցիներիս ներկայացնել ոչ միայն պոլսահայ գրական շրջանակների, այլեւ մշակույթի ամենազանազան ճյուղերի շնորհաշատ արվեստագետներին, որոնք այսօր արդեն ճանաչված, սիրված ու սպասված հյուրեր են մեզանում (երգչուհի Սիպիլ, «Մարալ», «Դալար», «Վարդանանց» եւ «Սահակեան» երգչախմբերը):

***«Շնորհակալ եմ ազգիս բոլոր բարերարներուն, որոնք իրենց կարողութիւններէն բաժին հանեցին ազգիս որբերուն, անկարներուն, կարօտեալներուն եւ ծերերուն, մինչ ես անկարող կը մնայի:***

***Կը ներեմ բոլոր անոնց, որոնք կամայ թէ ակամայ որեւէ կերպով վնաս եւ ցաւ պատճառեցին անձիս:***

***Բայց չեմ ներեր անոնք, որոնք պատճառ դարձան կամ մաս-***

*նակցեցան ազգիս անմեղ զաւակները՝ Ապուծոյ ամէնէն աւելի հաւատարիմ արարածները աքսորելու եւ անարգ միջոցներով, ֆեոնակապ՝ կոտորելու...»:*

Թուրքիայի տիրապետության ներքո, բայց սեփական հողերում ապրող եւ արարող հայի համոզմունքով էլ Մաքրուհի Հակոբյանը 92-ամյա Արայ Կարմիրյանի այս խոսքով եզրափակում է «Անվերջակետ զրույցը...»՝ իր իսկ «անվերջակետ» բառով ընթերցողներիս հուսադրելով, որ եւ գրականագիտական, եւ պատմագիտական, եւ լրագրողական բարձրարժեք իր զրույցը մեր գրականության եւ մշակույթի երախտավորների հետ շարունակական է լինելու:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

# ՊՈԵԶԻԱ

## ՎԱՀԵ ԳՈԴԵԼ

Խորքերի լեզուն


լորենիների բույրը այս երեկո ..... 7
աքսորի կրակաման ..... 9
մի սենյակից մյուսը ..... 11
տատը երազում է Վենետիկի մասին ..... 13
մայրական ճյուղը ..... 14
լուսաբացին ..... 16
հավաքված սեղան ..... 17
մթնեցրած լապտերներ ..... 18
նավարկություն ..... 20
սիրելի բարեկամ, այժմ... ..... 22
մենք կույրերս ..... 24
անշտկելին ..... 25
սոսին ..... 27
այս մարմինները ..... 29


## ԷՍԹԵՐ ԴԱՎԻԹՅԱՆ


Պարուտին ..... 32
Ռումի՜, պտտվող դերվիշ... ..... 35
Մոտավորապես... ..... 36
Իմ հույսին ..... 37
... Ու հավքը դարձավ վանդակի գերին ..... 38
Քանի ուշ չէ ..... 39
Անձրևի կաթի՞լ, թե՞ ձյունի փաթիլ... ..... 40

**ԳՐԻՇ ԴԱՎԹՅԱՆ**

Հեշտաթով ..... 42

Գաղութային շուրջպար ..... 44

**ՅԱՐՈՒԹԻՒՆ ՆԱԳՈՒԼԵԱՆ**

Մեր սրբատեղին ..... 54

**ԽԱՉԻԿ ՏԷՏԷԵԱՆ**

Տագնապ եւ խռովք ..... 62

Ակնթարթ մը միայն ..... 64

Ափսոսանք ..... 65

**ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ**

Երբ արեւներ կը լերդանան... կը տիրէ կամքը մահուան ..... 66

**ԱՒԻԿ ԴԵՐԵՆՑ**

Ո՞ր դարում ենք մենք ապրում... ..... 73

Բարութեան հաւատ ..... 75

Քարէ համբերանք... ..... 76

Անորոշութիւն ..... 77

Սպասում ..... 78

# ԱՐՁԱԿ

**ՊՈՂՈՍ ԳՈՒԲԵԼՅԱՆ**

Մեկենասը ..... 81

**ԿՈԼՅԱ ՏԵՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Իմ վատ օրը ..... 90

**ԱՒԵՏԻՍ ՀԱՃԵԱՆ**

Հարաւէն եկած աղջիկը ..... 103

**ԳԷՈՐԳ ՊԵՏԻԿԵԱՆ**

Հալէպին եւ Հալէպով ..... 109

Սըլվա եւ Սիլվա ..... 117

**ԳԵՎՈՐԳ ՔՐԻՍՏԻՆՅԱՆ**

Մի լաւ երեկո ..... 124

Սոնային ..... 126

Արտավազդ ..... 128

Երեւանը թախծում է ..... 129

Աղոթում եմ ..... 130

Տխուր ու անսեր ..... 131

**ՄԱՐԻԱՆԱ ՊԷՐԹԻԶԼԵԱՆ-ՂԱԶԱՐԵԱՆ**

Կեանք եւ երազ պարգեւած քաղաքը կը շարժէ ..... 132

Կանթեղ լուսաւորող կայծ ..... 143

Բացուիր երկինք ..... 145

Երկինքին մէջ բացուած դուռ մը կայ «ընդմիշտ» ..... 147

**ԺԱԿԼԻՆ ՉԵԼԻՔ**

Համընդհանրացում եւ ազգային ինքնութիւն ..... 149

**ԱՆՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ**
Սիեստա... ..... 154

## ԹԱՏԵՐԳՈՒԹՅՈՒՆ

**ԽՈՐԵՆ ԱՐԱՄՈՒՆԻ**
Շինարար քեռին ..... 167

## ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

**ՀՐԱՉՅԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**
Սփյուռքահայ գրականության ուսումնասիրման
խնդիրների շուրջ ..... 219

**ԱՆԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ**
Երկու վեպ, երկու հայացք.
Եղիշե Չարենց և Շահան Շահնուր ..... 234

**ՎԱՐԴԱՆ ՖԵՐԵՇԵԹՅԱՆ**
Աներեւույթ գանձը ..... 247
Անհայտ բլյուզ Վիլյամ Սարոյանի համար ..... 257

**ՏԱԹԵՎ ԱՇՉՅԱՆ**
Վահե-Վահյանի «Ոսկի կամուրջ» ժողովածուն ..... 268

**ԼԻԼԻԹ ԴԱՄԻՐՅԱՆ**

Մաքրուհի Հակոբյանի «Անվերջակէտ գրոյց՝ մեր գրականութեան երախտավորներուն հետ» գիրքը ..... 285

ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԳՐԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔ 4**

МИНИСТЕРСТВО ДИАСПОРЫ РА

ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ
ИМ. М. АБЕГЯНА НАН РА

**ЛИТЕРАТУРНАЯ ДИАСПОРА 4**

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**
Նախագահ՝ Ավետիք Իսահակյան
Գլխավոր խմբագիր՝ Հրաչյա Սարիբեկյան
Խմբագիրներ՝ Արքմենիկ Նիկողոսյան
Արմեն Ավանեսյան

Ձևավորումը՝ Արմինե Քոչարյանի
Սրբագրիչ՝ Արմենակ Ղազինյան
***Տարեգրքում օգտագործվել են Սասպուր Պզտիկյանի նկարները***

Տպագրությունը՝ օֆսեթ
Չափսը 60x84 1/16
Թուղթը 80 գ.
Ծավալը 19 տ.մ
Տպաքանակը՝ 400
Գասպրինտ տպագրատուն:

[3000 տ.]

ՀԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0340904

A
100462